

«ՈՐՈՎՀԵՏԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՈՒ ԱՄԲՈԽԱՅԻՆ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՄԱՆ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱԿԱՄԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԵՆ ԼԻՆՈՒՄ»:

ԴԱՍԱԿԱՐԳԻՐՔ

«Եթե տխմար մեկը կարդա՝ կուսուցանվի եւ եթե ամենա-կատար ու իմաստուն մեկը՝ այս մատյանով իր թերին կլցնի»:

Երեւան – 2001

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ

«Եվ Քրիստոսն ասաց՝ դատաստան անելու համար եկա այս աշխարհի, եւ թե՝ Հայրը ոչ մեկին չի դատում, այլ ամեն տեսակի դատաստաններ անելը տվել է իր Որդուն»:

ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ

Գ խմբագրություն

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

Հա՛յր մեր, որ երկնքում ես, սուրբ թող լինի Քո՛ անունը, Քո՛ արքայությունը թող գա, Քո՛ Կամքը թող լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է: Մեր հանապազօրյա հացը մե՛զ տուր այսօր եւ թող մեզ մե՛ր պարտքերը, ինչպես մենք ենք թողնում մե՛ր պարտապաններին եւ մեզ փորձության մի՛ տանիր, այլ փրկի՛ր մեզ չարից, քանի որ Քո՛նն է արքայությունը եւ զորությունը եւ փառքը՝հավիտենական. ամե՛ն:

ՀԱՅՐ ՄԵՐ, ՈՐ ՅԵՐԿԻՆՍ ԵՍ, ՍՈՒ՛ՐԲ ԵՂԻՑԻ ԱՆՈՒՆ ՔՈ, ԵԿԵՍՑԷ ԱՐՔԱՅՈՒԹԻ՛Ն ՔՈ, ԵՂԻՑԻՆ ԿԱ՛ՄՔ ՔՈ, ՈՐՊԵՍ ՅԵՐԿԻՆՍ ԵՒ ՅԵՐԿՐԻ, ԶՀԱՑ ՄԵՐ ՀԱՆԱՊԱԶՈՐԴ ՏՈ՛ՒՐ ՄԵԶ ԱՅՍՕՐ, ԵՒ ԹՈ՛Ղ ՄԵԶ ԶՊԱՐՏԻՍ ՄԵՐ, ՈՐՊԵՍ ԵՒ ՄԵՔ ԹՈՂՈՒՄՔ ՄԵՐՈՑ ՊԱՐՏԱՊԱՆԱՑ, ԵՒ ՄԻ՛ ՏԱՆԻՐ ԶՄԵԶ Ի ՓՈՐՁՈՒԹԻՒՆ, ԱՅԼ ՓՐԿԵԱ՛ ԶՄԵԶ Ի ՉԱՐԷՆ, ԶԻ ՔՈ Է ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ԶՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՓԱ՛ՌՔ ՅԱՎԻՏԵԱՆՍ. ԱՄԷՆ:

- Եվ արդ, նախ այս մասին խոսենք, որ պարտավորություն է, որպեսզի դատավորները գովեստ ու պարգեւներ ստանան թագավորներից, որպեսզի չլինի թե ծանծրանան դատ վարելուց, նույնը լինի եկեղեցու դատավորների համար, որ են եպիսկոպոսները. նրանք մեծամեծ պարգեւներ ստանան կաթողիկոսից, եւ լիությամբ, որպեսզի չլինի թե աղքատության պատճառով Աստծո ուղիղ դատաստանը թյուրեն:

- Որովհետեւ ի սկզբանե ոչ թե ամենայն արվեստի գործ մեկ սկսողի կողմից ավարտվեց, այլ բազում ժառանգորդ այրերի ձեռքով, որովհետեւ մասնավոր գտնվածները հավաքվելով գոյացրեցին արհեստը, ըստ ոստայնագործների առակի: Նաեւ պատշաճ է իմ վարքի համար էլ՝ համարձակություն ստանալ սրանով, եթե ատյան եմ մտնելու անկաշառ եւ անմեղադրելի, քանի որ իմ ձեռքով իսկ եմ գրում ապագա եկողների համար այս նշանակը:

- Եվ որովհետեւ արդարների վրա կանոնական սահմանների օրենքներ չկան, ուստի դատաստաններ չկան նաեւ կենցաղում ուղիղ ընթացողների համար: Եվ որովհետեւ արդարամիտ այրը չի զարհուրում երկնավոր դատավորից, նաեւ երկրավորից չի զարհուրում:

- Խնդրում ենք մի երկրորդ բան եւս ի մտի առնել, որ մեզ ոչ քիչ չափով է օգուտ, քանզի ամենքի համար են այս գրվածքները՝ զուգընթաց նրանց զորությամբ՝ չափի մեջ դնելով մարդկանց: Որովհետեւ սրանց դիտավորությունը մեղքերը կրճատելը եւ դրանով չարին վերջ տալն է: Եվ հետեւանքը ոչ այլ ինչ է լինում, եթե ոչ այն, որ դարձնում է մեզ համամիտ եւ համակարծիք, որոնցից եւ սերն է հաստատվում, որ գլուխն է բոլոր պատվիրանների:

- Չափավոր այս գլուխներով, իմաստությամբ վարվելով՝ տվեցինք տեսակները, որոնցով դիտել ենք տալիս, թե սրանց հետեւելով որքան օգուտ ու շահ կլինի հասարակությանը, որովհետեւ ամենայն պատերազմ եւ ամբոխային խռովություններ նման իմաստությունների պակասության պատճառով են լինում: Եվ սրանք, այս օրենքները, հաստատվելով եկեղեցու կողմից, լինում են պատճառ խաղաղության եւ բազմաթիվ բարեկարգությունների: Քանի որ աստվածային շնորհներից մեկը, որ տրված է եկեղեցուն՝ եւ Հնով /կտակարանով/, եւ Նորով /կտակարանով/, այս իսկ է:

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մխիթար Գոշի կենսագիրը պատմիչ Կիրակոս Գանձակեցին է: Գոշը ծնվել է ԺԲ դարի 20-30 -ական թվականներին: Մահացել է 1213 թվականին՝ ապրելով 80-90 տարի: Ծնողները քրիստոնյաներ էին եւ նրան տվեցին սուրբ գրքերն ուսանելու: Եւ երբ Մխիթարը չափահաս դարձավ, ձեռնադրվեց կուսակրոն քահանա: Սակայն ստացած ուսմամբ չբավարարվեց եւ հանդիպելով Հովհաննես Տավուշեցի վարդապետին, որ «երեւելի էր գիտությամբ», երկար տարիներ աշակերտեց նրան եւ այլ վարդապետների էլ, այդպես, ինքն էլ քննություն բռնելով, արժանացավ գիտությունների ամենաբարձր՝ «վարդապետ» կոչմանը: Սակայն այս ուսումնառությամբ Մխիթարը չբավարարվեց, այլ՝ ելավ- գնաց Կիլիկիա՝ Սեւ Լեռան նշանավոր վանքերը, ուր թաքցնելով, թե ինքն արդեն վարդապետ է, ավելի եւս խորացավ աստվածաբանության եւ իմաստուն այլ գիտությունների մեջ: Այդպես, երկրորդ անգամ արժանանալով վարդապետի ամենաբարձր կոչմանը, վերադարձավ հայրենիք: Այստեղ Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի եւ Մխիթարի հարաբերությունները, խորն ու սկզբունքային տարաձայնությունների պատճառով, լարվեցին այնքան, որ կաթողիկոսը մեծ այրին վնաս պատճառելու համար անգամ դիմեց մահմեդական իշխողների օգնությանը: Այս անտանելի հալածանքների պատճառով Մխիթարը ստիպված էր տեղափոխվել Հաթերքի իշխան Վախթանգի մոտ: Սակայն, երբ Քուրդ անունով հայազգի իշխանը, որ Մխիթարին հարազատ հոր նման էր սիրում, վերահաստատվեց իր Կայեն գավառում, Մխիթարը տեղափոխվեց նրա գավառը եւ բնակվեց Գետիկ վանքում: Երբ երկրաշարժի հետեւանքով Գետիկը կործանվեց, Մխիթարը իր բարեկամ իշխաններ՝ Զաքարիայի, Իվանեի, Վախթանգի, Քուրդի եւ այլոց օգնությամբ կառուցեց Նոր Գետիկ վանքը, ուր եւ բնակվեց մինչեւ խոր ծերություն: Մխիթարը Հայաստանի մեծազոր, ինքնիշխան տիրակալ Զաքարիայի խոստովանահայրն էր, եւ տիրակալը Մխիթարի կարծիքն ավելին էր համարում, քան եկեղեցական մի ողջ ժողովի: Այս վկայությունը մեզ համար եւս զարմանալի չի մնում, երբ ծանոթանում ենք սուրբ այր Մխիթար Գոշի իմաստուն մշակության պտուղներին՝ Դատաստանագրքին եւ առակներին: Եւ

թող օրհնյա՛լ լինի Աստվա՛ծ, Մայր Հայաստանին նման օրհնության զավակներ պարգեւելու համար եւ թող բազու՛մ լինեն նրանք իրենց քաղցրաբառ պտուղներով, որոնցով հավատարմեցնում են մեզ Ճշմարտության եւ Լույսի գիտություններին: Ամե՛ն եւ Ամե՛ն:

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻՆ ՍՈՒՐԲ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ՄԱՍԻՆ

Այնպես պատահեց մի անգամ, որ նրա սպասավորները վանքի պետքերի համար գինի բարձած գալիս էին: Բասիլա անունով մի ոմն վրացի եկավ ու կամենում էր բռնի կերպով նրանցից գինի առնել, որովհետեւ Իվանեի գործակալն էր անտառի վրա ու պահում էր նրա իջեւանատեղը: Սպասավորները ասում են նրան. «Մեզ նեղություն մի տա, որովհետեւ մենք Գոշի մարդիկն ենք»: Մականունով այսպես՝ Գոշ էին կոչում նրան, որովհետեւ շատ քիչ էին նրա մազերը: Իսկ այդ թշվառականը հայհոյելով անարգեց նրանց ու Գոշին: Երբ հասավ հայհոյության այն տեղը, ուր Գոշի անունը պետք է անարգանքով հիշատակեր, անմիջապես համրացավ եւ կապվեց լեզուն, ծռվեցին նրա շրթունքները, եւ այդպես մնաց շատ օրեր, մինչեւ որ հառաչանքներով թողություն խնդրեց: Եւ ամեն ոք, ով տեսնում էր այդ պատժված մարդուն, գովում էր Աստծու ծառա Գոշին: Մխիթար Գոշը թողեց իբրեւ հիշատակ ու շիրմաքար՝ բազմաթիվ իմաստախոհ գրքեր:

ՄՈՒՏՔ

Մխիթար Գոշի Դատաստանագիրքը քանի որ Հին եւ Նոր Կտակարանների որդին է, ուստի եւ, աներկբայելի է, որ դրանով կարելի է կազմավորել ու կարգավորել այնպիսի արդարակյաց, Աստվածարյալ թագավորություն, որն իր կատարելության տեսակետից՝ նմանը չի ունենա ողջ մարդկության մեջ, եւ հասունանալով կդառնա մշտապես եւ՛ խաղաղ, եւ՛ ամուր եւ՛ հաղթական, եւ՛ իմաստուն պետություն, որտեղ առատորեն կարող են բազմաթիվ մեծամեծ, լուսավոր այրեր ծնվել եւ Տիրոջ լույսով հաստատել մեր աշխարհը:

Այսօր, երբ, փա՛ռք Աստծո, Հայաստան աշխարհն առանձին մի պետականություն է, ժամանակն է, որ նախ ինքն իր եռամեծար որդիներից հռչակավոր Մխիթարի այս «Աշխարհալույս» մատյանի ոսկին, որպես օրինական ժառանգորդ՝ պետականորեն օգտագործի՝ մեր բարօրության համար: Իսկ այն ժողովուրդները, որոնք կթարգմանեն եւ կգործադրեն Մխիթարի կազմած Դատաստանագիրքը՝ գրքի իմաստության լույսից մեծապես պիտի շահեն եւ օրհնվեն: Մոտ երկու տարի առաջ, իրավաբան բարեկամներիցս մեկը մի շարք հանցանքներ նշելով, խնդրեց դրանց դատավարության մասին Սուրբ Գրքից եւ սուրբ հայրերի տեսակետներից գործածական մի գրքույկ պատրաստել՝ դատավորների համար: Ես անցա գործի, հասցնելով միայն բնագրային համարները նշելու սեւ աշխատանքն անել: Այդժամ էր, որ, գործի բերումով ծանոթացա Մխիթար Գոշի Դատաստանագրքին եւ զարմանալով այդ վիթխարի մարդու Աստվածարյալ մշակությամբ, մի շարք հոդվածներ փոխադրեցի, որոնք տպագրվեցին իրավաբանական երկու հանդեսում եւ հաղորդվեցին ռադիոյով: Ստացածս արձագանքներն այնքան լուրջ էին, քաջալերող, անգամ պարտադրող, որ չսպասելով արդեն որեւէ հովանավորի հայտնվելուն, մանավանդ որ մեծ ու ճգճգվող դատավարություններ էին ընթանում մեր երկրում եւ սոցիալական պայմանների վատթարանալուց՝ հանցանքներն էին ավելացել, այս ամենը պատճառ դարձան, որ իմ սակավ ուժերը լարելով, Աստծո օգնությամբ, գործի լրջությունը գնահատող՝ ծանոթ-բարեկամներիս (մանավանդ «Լրատու» իրավաբանական թերթի խմբագիր՝ Սասուն Մամյանի եւ կրոնի ուսուցչուհի՝ Անահիտ Գեւորգյանի) քաջալերությամբ, փոխադրությունը կարճ ժամանակում ավարտեի:

Զարմանալի էր, բայց, ցավոք, փաստ, որ Մխիթար Գոշի հանրահռչակ այս մատյանը մինչեւ այսօր ժամանակակից հայերենով չկար հրատարակված: Մատյանը հայտնի է երեք հիմնական խմբագրություններով. 3-րդ խմբագրությունը առաջինի համառոտագրված տարբերակն է, ըստ երեւույթին, գիրքը

աշխարհիկ դատավորների կողմից գործածության դրվելով, հոդվածների մի մասից հանվել են հոգեւոր որոշ պարբերություններ, նախադասություններ: Իսկ երկրորդ խմբագրությունը ավելի է տարբերվում այս երկուսից էլ: Փոխադրության համար նախընտրեցի Յ-րդ՝ համառոտագրված տարբերակը, Ա եւ Բ խմբագրության թարգմանությունը ակնկալելով, որ մեր Եկեղեցին կիրականացնի կամ Ակադեմիական թարգմանություն կատարողների մի խումբ, քանի որ բազմաթիվ ծանոթագրությունները, ուսումնասիրման աշխատանքները, համեմատությունները Աստվածաշնչին եւ սուրբ Հայրերի կանոններին, հղումների առատությունը՝ օգնող ձեռք եւ արժանի ժամանակ էին պահանջում: Սակայն երբեմն կրճատումները Յ-րդում այնքան մեծ էին, պատահում էր նաեւ անհասկանալի կամ անհարկի, որ նման պարագաներում, անհրաժեշտաբար, դիմել եմ Ա խմբագրության օգնությանը: Երբեմն ինքս էլ եմ ստիպված եղել այս կամ այն պարբերությունը, նախադասությունը, հատվածը համառոտել՝ հարցի արդեն պարզության կամ այդ պահին ինձ խրթին թվալու պատճառով, համառոտությունների ժամանակ դնելով բազմակետ, որ եթե ընթերցողին բաց թողնվածը հարկավորվի կամ հետաքրքրի՝ հեշտությամբ գտնի բնագրում: Այսպես, ասածս այս վկայություններով, վերջապես պատրաստ է համամարդկային գլուխգործոցներից մեկի՝ Դատաստանագրքի Գ խմբագրության փոխադրության երախայրին: «Ներողամիտ եղեք, քանի որ մեր կարողությունն այդքանն էր»,- ասում էին մեր Հայրերը, խոսք, որ այժմ ինձ էլ է հարմար եւ ինձ համար էլ թող հնչի որպես մխիթարություն, որովհետեւ միշտ էլ ավելի կատարյալն ենք կամենում, քան կարողանում ենք իրագործել: Այս մատյանը հարկ է, որ սեղանի Գիրք լինի հոգեւոր իշխանավորների, քահանաների, թագավորների, իշխանավորների եւ բոլոր դատավորների համար: Առհասարակ, նաեւ յուրաքանչյուր մարդու, որ ունի հավատ, ըմբռնում, եւ ինչպես Գոշը կասեր. «իմաստնանալու» կամ «իր թերին լցնելու» կարիք:

Ամենայն Բարին այս մատյանի միջոցով էլ Հայոց ժողովրդի մեջ, մեր ամենքի ջանադրությամբ իրականանա: Ամե՛ն: Մեր շնորհակալությունը քույր Ազգանույշին՝ սրբագրությանն աջակցելու համար, «Ռեյտինգ» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Սամվել Մուրադյանին՝ վերջնական, նվիրաձեռ սիրով սրբագրության, տպագրությունն ու բաշխումն իրականացնելու համար, մեր հոգեւոր մշակության համաշխարհային արժեքները գնահատող եղբայր Ներսեսին՝ հովանավոր գտնելու համար եւ բոլոր նրանց, ովքեր այս կամ այն կերպ աջակցեցին այս գրքի լույս ընծայմանը: Խնդրում ենք Աստծո օրհնությունը նրանց՝ ամենքի համար էլ: Ամե՛ն:

Մաքսիմ Անդրանիկի Ոսկանյան

ՄԱՏՅԱՆԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ԲԱՆԱԼԻՆ

«Ես չեկա օրենքը կամ մարգարեներին ջնջելու, այլ նրանց լրացնելու», - ասում է Հիսուսը: Ըստ Քրիստոսի այս պատգամ- խոսքի, Գոշը յուրաքանչյուր գլխում առանձին հանցանքի համար նախ բերում է օրենքի խիստ պատժի դրույթը, ապա՝ Ավետարանի ողորմածության խոսքը, որով մահապատիժը մեղմվում է խրատով /մարմնական մասնակի պատիժ/, դրամական տուգանքով եւ ապաշխարությամբ: Դատաստանի ժամանակ Ավետարանական ողորմածությունը վերաբերվում է միայն քրիստոնյաներին: Քրիստոսին հակառակողները, իրավամբ, կոչվում են այլազգիներ եւ պատժվում են օրենքի խստությամբ, ընդհուպ մինչեւ մահապատիժ: Քանի որ. «Նրանք ի բնե /չարասիրությամբ/ ուրախանում են քրիստոնյաներիս կորստի համար»,- մեկնաբանում է Գոշը: Որոշ հոդվածների ավելի արդարացի վճռի բանալին՝ այլ հոդվածների մեջ են գտնվում, ուստի Դատաստանագրքի լիարժեք իմացությունը զերծ կպահի սխալ գործելուց եւ ավելի լիարժեք կդարձնի դատաստանը: Առավել լավ կլինի նաեւ Հին կտակարանի օրենքների եւ Նոր Կտակարանի կանոնների քաջատեղյակությունը՝ առավել Աստվածահաճո դատաստան անելու համար: Այնուամենայնիվ, քրիստոնյաներիս համար Փրկչի այն խոսքը վերհիշենք, որ ասում է ինքնադատաստանի մասին. «Եթե քո աջ ձեռքը կամ աչքը քեզ գայթակղեցնում է, կտրիր /հանիր/ այն, որովհետեւ ավելի լավ է քո անդամներից մեկը կորչի, քան ողջ մարմնով ընկնես գեհեն» /Լեռան Քարոզ/: Որովհետեւ այդժամ հանցանքը նախապես է արգելվում եւ գայթակղությունը դեռեւս հանցանքի չվերաճած՝ ավարտվում է ինքնադատաստանով, որ մեղավորի համար փրկություն է լինում նախ՝ օրենքի դատաստանից, ապա՝ գեհենից: Նեղ դռնով ապաշխարություն, որ կյանքի վարդապետության ամենակատարյալ ուղին է, Աստծո վախի եւ իմաստնության ուղին:

Դրամական մոտավոր փոխարժեքները՝ դատաստանագրքում

/Մեկ դահեկանը հաշվվել է մոտ 9 գրամ ոսկու արժեքով, մեկ դրամը՝ որպես կես դահեկան՝ 4,5 գրամ ոսկու: Ոսկե դահեկանը վեց դանգ է, պողպատինը, որ դրամն է՝ երեք, թասուն դանգի մեկ քառորդն է: 2 դահեկանով կարելի էր արտ գնել/:

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ

ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԳՐՎԱԾՔՆԵՐԻ

ԳԼՈՒԽ Ա

ՈՐՏԵՂ ՊԱՏԱՍԽԱՆ Է ՏՐՎԱԾ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԲԱՄԲԱՍՈՒՄ ԵՆ ՄԵԶ, ԹԵ, ԻԲՐ ԴԱՏԱՍՏԱՆ ՉԿԱ

Նախնիները դատաստան անելու համար գրություններ թողեցին, բայց ինչպես որ պատշաճ է, նախ ընդդիմադրելով Տիրոջ օրենքները պարսավողներին, ովքեր ասում են, թե իբր, դատաստան չկա: Իսկ նման մտածողության պատճառն այն է, որ քիչ է նրանց մասին խոսվում, որոնց գործն ու բանը եղավ պատվել այլազգիներին էլ՝ իրավացի դատաստաններ անելով: Եվ դատաստան չկա ասելով՝ նմանները իրենք իսկ գայթակղվելով, բազմաթիվ պարզամիտների էլ են նույն խոսքերով գայթակղեցնում, որոնց եւ այս ամենն ենք նախ ասում՝ թե՝ ի սկզբանե բնությունից դրված է մեզ համար ընտրելն իրավացին, ըստ որի եւ հեթանոսների միջից իմաստունները աստվածանարգներին մահվամբ էին դատում, իսկ հայրատանջների ձեռքերը հատում էին եւ այլ, այսպիսի բազում ուղիղ դատաստաններ էին անում: Իսկ անօրեններն էլ առավելությամբ են նման պարագայում վարվում՝ եւ ըստ բնության օրենքի հայրանարգին մահվամբ են պատժում, եւ այլ հանցանքների դեպքում նմանապես:

Այլ է Ավետարանը մեր Փրկչի, որ լրումն է ամենայնի՝ հնի եւ նորի, որի համար էլ հրամայում է՝ նախնիներին ասվեց այս ինչ բանը, բայց ես ձեզ այս բանն եմ ասում: Որովհետեւ ինչպես որ օրենքն ու Ավետարանը հրամայել են, մարդիկ, մոռանալով բնության օրենքները՝ այդպես են կատարում, սակայն իշխանական կամքը չեն վերացնում, որով առաջիններին էլ է ասվում՝ սիրիր ընկերոջը քո, ինչպես անձը քո, որովհետեւ բնությունից է, որ քո անձը սիրո մեջ լինի: Եվ երկրորդը, մանավանդ առաջինը՝ կամքի մեջ է աշխատությամբ ապաստան գտնում՝ այլ ուղղության մեջ մտնելով: Եվ սրանցով հաստատում է մեզ՝ ամենքի հետ վարվելու մեջ իրավացի լինելու ընթացքը, որի պատճառով էլ Ավետարանը լրումը լինելով՝ ի սկզբանե գրով չավանդվեց:

Եվ երկրորդով է, որ կատարյալ օրենքները կատարյալներին տվեց եւ չկամեցավ օրենքները կատարյալ գրի միջոցով դատաստան անելու ավանդ թողնել: Ըստ որի խրատում էր՝ ճանապարհին հաշտվել ոսոխի հետ, այդպիսով դատավորի կողմից դատաստանի չենթարկվել: Եվ երբ անիրավ դատավորի առակով հայտնի ցույց տվեց, թե ամեն ինչ խղճի մտոք պետք է հատուցել, եւ սրան դատավոր կոչեց, նմանապես եւ սրանով՝ դատաստանի իրողությունները հաստատեց: Նույն բանն արտահայտեց նաեւ տնտեսի առակում, որ թեպետ սկզբում անիրավ էր, սակայն հետո՝ գովելի էր իր զղջմամբ, որով չմտավ դատաստանի ատյան, այլ փոխարենը հաշիվ տվեց: Եվ երբ նրան ասացին, թե՝ տուր քո տնտեսության հաշիվը, ցույց տվեց դրանով, որ նա արժանի էր դատաստանի: Սակայն հետո գովեց տնտեսին, որովհետեւ հնար ուներ, եւ հնարն այդ, իմաստնությամբ գործադրելով՝ ազատվեց դատաստանից: Այս սկզբունքից ելնելով փրկիչը հրաժարվեց դատաստան անել, երբ մեկն իր եղբոր դեմ հայց ներկայացրեց, ասելով՝ ասա իմ եղբորը, որ ինձ հետ ժառանգությունը բաժանի, սրանով իբրեւ ասած լիներ հայցվորին, թե՝ կրկնապատիկ պատճառ ունեք /ըստ հնի եւ նորի/ ձեզանից իրավացին ընտրելու, ինչու՞ եք ուրիշներից դատաստան ակնկալում: Այս խոսքից ուսուցանվեց առաքյալն ասելով՝ մի՞թե ձեր մեջ դատաստան անող չկա՞, հապա ինչպե՞ս է, որ ոչ թե դուք եք զրկվում ու նեղվում, այլ ինքներդ եք զրկում ու նեղում եւ այդ անում եք նաեւ եղբայրների նկատմամբ: Եվ երրորդ՝ Քրիստոսն այսպես կամեցավ, որ չլինի թե պարտադրված միմյանց հանդեպ իրավունքներ կարգենք դատաստանի գրով, այլ՝ սիրով եւ վշտակցությամբ եւ զանազան ժամանակների անգիր օրենքներով արդարությունը պահենք: Չորրորդ՝ բավական համարեց Մովսեսի օրենքների խոսքերը, դրանք իբրեւ սերմ դիտելով իր Ավետարանի եւ մեր հոգու համար, նրանցով վարելու արժանին դատաստանների:

Հինգերորդ՝ որ նման չեն իրողությունները, ըստ օրենքների կամ ըստ մարգարեների դատաստան անելուն կամ ըստ Ավետարանի անչարժության, այլ որովհետեւ ըստ ազգի եւ աշխարհների դատաստանները հարկավորաբար փոփոխվում են, եւ այդպես, իրավացիության որոշումը թողնում, որ դատաստանների մեջ հմտագույնները փորձեն դատ անել, ըստ պատահման: Վեցերորդ՝ գրված է, երբ երդմամբ է հաստատվում դատաստանը, /երդում/, որ Տերն արգելեց, ապա այդպիսով բոլոր հավատացյալներին հանձնեց մեզ:

ԳԼՈՒԽ Բ
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԱՅՍ ԱՄԵՆԸ ԻՆՁՈ՞Ի ԳՐԵՑԻՆՔ ԿԱՄ ՈՒՄ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՔ

Որովհետեւ թեպետ ասվեց, թե Տիրոջից հարկավոր գրով մեզ դատաստան անելու ավանդ չկա, սակայն այժմ այդ կամեցանք մենք անել, որովհետեւ բազմաթիվ անգամներ պարսավանքներ լսեցինք ոչ միայն այլահավատներից, այլ նաեւ քրիստոնյաներից, որ ասում են, թե, իբր ըստ Ավետարանի բնավ դատաստան չկա, այդպես անգիտանալով աստվածային կամքին, որ իրենց ներսում է: Եվ նրանց այդպիսի կարծիքի պատճառով երկու անգամ ի հայտ է գալիս չարի ախտը, առաջինը, որ իբր օրինադիրը անիմաստությամբ է վարվել, երկրորդը, որ՝ չի կամեցել զուգահավասար կենցաղավարել մարդկային ազգերին:

Եվ երկրորդ, որ իր էությամբ մեր մեջ օրենքներով չարությունը հանգցրեց եւ կատարելություն տվեց անկատարությանն հոգու եւ տվեց վշտակցությունը սիրո՝ ատելության փոխարեն:

Երրորդ. որովհետեւ հեղգության պատճառով անվարժներ կան օրենքներին եւ մարգարեներին եւ Ավետարանին, որոնց զորությունից հեռու մնալով, հեղգությամբ ապրողները անկարող եղան ընտրել դատաստանի գիրը, որ արժանի վարքերով ապրելու ժամանակ, իբրեւ քնից կարթնացներ նրանց՝ դատաստանի գրվածքների ձեռքով:

Չորրորդ՝ որովհետեւ նվազեց հմտությունն ու փորձառությունը ըստ ժամանակի եւ ազգերի եւ աշխարհները փոփոխվեցին ըստ պատահմունքների եւ չմնացին անշարժ ՝ ըստ օրենքների, մարգարեների եւ Ավետարանի:

Հինգերորդ՝ որովհետեւ /այդ պատճառներով/ այժմ չի ներգործում Հոգին Սուրբ, ինչպես որ ժամանակին Դանիելի եւ Սողոմոնի վրա էր ներգործում եւ կամ, ինչպես Կորնթոսի հավատացյալների ու այլոց՝ Սուրբ Հոգով ճշմարիտ դատաստան անելու համար: Նրանք Հոգին առաջնորդ ունենալով՝ անկարոտ էին օրենքների գրվածքներին, որովհետեւ Հոգու շնորհիվ օրենքները նրանց սրտերում էր, ինչպես որ մարգարեի միջոցով էր խոստացվել: Ըստ որի առաքյալներն եւս նախապես չէին կամենում գրի միջոցով Ավետարանը քարոզել, մինչեւ այն ժամանակ, երբ գրով տալու կարիքն զգացվեց: Ըստ այդմ էլ գրով դատաստան չավանդեցին, քանզի այնժամ քարոզչությամբ փութաջանորեն հետամուտ էին ամենահարկավոր, ամենաանհրաժեշտ բաներին: Թողեցին նրանք բնության օրենքներով եւ քաղաքական կրթությամբ ընթանան, եւ այլոք էլ նախնիների ասածներով էին դատաստանները քննում: Իսկ գրելն այժմ պատճառ ունի, որ ամեն կողմից եղած վրիպություններն են դատաստանների հարցերում, որպեսզի այդ վրիպությունները չտկվեն:

Վեցերորդ՝ որովհետեւ դատաստանի իրողությունները երդման են հանգեցնում, մի բան, որ Տիրոջ կողմից թույլ չտրվեց, սակայն որն այժմ հաճախ, գործ ընդ գործի ետեւից եւ վայրապար վարվող դատաստանների ժամանակ կամ առանց դատաստանի հավատացյալները չարաշահում են: Նման իրողություններից ելնելով կամեցանք, ոչ թե Տիրոջ հրամանը լուծանել, այլ խնդիրները լուծելու համար դատաստանի օրենքներն ու կանոններն հաստատել, ըստ հարկավորության նաեւ՝ ներել դատաստանի ժամանակ:

Յոթերորդ՝ որովհետեւ գրով դատաստան չլինելու պատճառով, քրիստոնյաները գնում, դիմում են այլահավատներին, ըստ մարգարեի հետեւյալ հանդիմանության՝ մի՞թե Իսրայելի մեջ Աստված չկա, որ գնում հարցնում են Ճանճիկին: Այս մասին առաքյալն եւս հանդիմանում է, ասելով՝ եւ եղբայրն է եղբոր դեմ դատ բացում, այն էլ անհավատների մեջ:

Ութերորդ՝ այժմ էլ տեսնում ենք՝ բազմաթիվ են եւ եպիսկոպոսներից, եւ վարդապետներից, եւ քահանաներից, եւ գլխավոր աշխարհականներից, որ երեսանց, կաշառքի համար եւ տգիտությամբ թյուրում են ճշմարիտ դատաստանները: Եվ այս ամենի համար հոժարեցինք գրել գիրքը դատաստանների:

Իններորդ՝ որովհետեւ մարդու բնությունից ելնելով, որքան էլ շատ հոգով կամ տարբեր զբաղմունքների մարդկանցով կամ ցնորներով եթե կամենանք ուղիղ դատաստան անել՝ չենք կարողանա՝ մոռացությունից, ու եթե այդպես վարվեինք, հետո պիտի փոշմանած ետ դառնայինք, ասելով, ուղի՞ղ դատաստան արեցինք, թե՞ ոչ: Այլ. որպեսզի այսպիսի բաներ մեզանում չլինեն, այս էլ էր պատճառ, որ գրեցինք այս գիրքը դատաստանների, որպեսզի կարծիքներով դատաստան չանենք եւ ոչ էլ դիմենք այլազգիներին՝ մեզ համար դատաստաններ

անելու, այլ ընդհակառակը, նրանց բերանը կփակենք, որպեսզի դարձյալ մեզ հերձվածներ չխոսեն, նաեւ չբամբասեն, թե՝ իբր իրավունքների գիր չունենք: Եվ նրանք, այլազգիները /ոչ քրիստոնյաները/, որ մեր մեջ են ուսանել եւ գրել սովորել, մեր բարվոք գրվածքները չարաչար աղավաղելով են ընթերցում:

Տասներորդ՝ քանի որ, երբ Տեր Աստված ստեղծեց Ադամին, օր օրի շնորհները Սուրբ Հոգու զորանում էին մեզ վրա: Իսկ սատանան ասաց, թե Աստծո Հոգին էլ մարդկանց վրա չմնաց, նրանց մեղքերի պատճառով, երբ մեղանչեցին Աստծո դրախտում: Եվ այս պատճառով Քրիստոսը մարմնացավ կույսից եւ առաքյալների ձեռքով գրեց մեզ համար Ավետարանը փրկության եւ կանոններ գրեց ձեռքով մեր Սուրբ Հայրերի, ովքեր Սուրբ Հոգով գիտեցան մարմնի կրքերն ու բծերը եւ գրեցին հոգեւոր դեղերը:

Տասնմեկերորդ՝ որովհետեւ դատավորները միշտ երկնչում են Աստծուց, նրանք գիտեն, որ կանգնելու են երկնավոր դատավորի առջեւ, ուստիեւ ճշմարիտ եւ ուղիղ գրով թող կատարեն դատաստան մարդկանց համար:

Տասներկուերորդ՝ եւ մարդիկ, որ գան դատավորի առջեւ, երկյուղեն Աստծուց եւ դատավորներին չկաշառեն եւ թյուրել չտան ճշմարիտ դատաստանը, քանզի ծածկագետ Աստված տեսնում է նրանց գործերը եւ Նրա առջեւ ամենքս էլ կանգնելու ենք դատաստանի: Եվ ովքեր, որ այժմ թյուրում են դատաստանները՝ կաշառելով դատավորներին եւ դատաստանի եկածներին, Քրիստոսի առջեւ են կանգնելու եւ Նա կսեւացնի երեսը նրանց, ովքեր թյուրեն Աստծո գրվածքների դատաստանները:

Այս տասներկու գլուխները պարունակում էին այն պատճառները, որ եղան դատաստանի այս գիրքը գրելու համար: Որովհետեւ որ՝ տասներկուսը բաղկացած է երկու վեցից եւ վեցը կատարյալ թիվ է: Եվ թե ինչո՞ւ է վեցը կատարյալ թիվ.

Առաջին՝ որովհետեւ երկու երեքից է կազմված եւ ամենայն թիվ դար է, հազարամյակ:

Երկրորդ՝ որովհետեւ ժամանակն է արարչության:

Երրորդ՝ որովհետեւ չափն է մարմնի շարժման:

Չորրորդ՝ որովհետեւ թիվն է մարմնի վրա ներգործելու:

Հինգերորդ՝ որովհետեւ ծնում է այլ չափում:

Վեցերորդ՝ որովհետեւ իր երկու կողմերից բացվելով եւ կրկնվելով ծնում է տասներկու թիվը եւ տասներկուսը ինքն իր կողմերից զուգորդվելով՝ ծնում է տասնվեց թիվը՝ երկու կատարյալը եւ տասն ու վեցը: Եվ խորհուրդն է նաեւ տասներկու առաքյալների՝ աշխարհի դատավորների, որովհետեւ նրանցից ծնվեցին դատավորներն եկեղեցու: Ինչպես որ դարն ունի վեցյակ եւ կրճատ, որ է եւ ներգործական եւ կրավորական: Եվ դատավորներին է հատկանշվում եւ՛ ներգործելը, եւ՛ կրելը դատելու:

Այս թիվը նաեւ թիվն է Քրիստոսի՝ երկնավոր դատավորի գալստյան, որն եւ վեց վշտերից փրկեց արդարներին եւ նույն թվով տանջողներին ուղարկեց Իսրայելը կտրելու:

Այսքանն այս մասին բավական լինի, որովհետեւ ոչ թե խնդիր դրեցինք թվի բնությունը քննել, այլ վկայել, թե վայրապար չէր տասներկու գլուխներում ավարտել պատճառները Դատաստանագիրքը գրելու:

Իսկ այժմ, թե ու՞մ հորդորներով հանձն առանք գրել:

Երկար ժամանակ այս ամենի մասին տարակուսանքով խորհրդածում էի՝ խոցոտվելով այն նախատինքներից, որ տալիս էին մեզ եւ՛ մերոնք, եւ՛ այլազգիները: Սակայն այս գործն սկսել չէի համարձակվում, քանի որ գիտեի իմ անձի տկարության մասին: Իսկ մի այր, որ Պողոս էր անվանվում եւ հմուտ էր աստվածային օրենքների իմացության մեջ, լսեց այս խորհուրդն ինձնից եւ նա առավել եւս սկսեց հորդորել այս գործն սկսել եւ հորդորում էր մեզ Սուրբ Գրքերի խոսքերով: Եվ ես ոչ այդ բաներից զրկված կամեցա ձեռնամուխ լինել սույն գործին, այլ սկսեցի այլոց աղաչել, նրանց, որ կարող եւ գիտակ էին Աստծո օրենքներին, որովհետեւ բազմաթիվ էին նրանք, որ այսպիսի խորհրդից գլուխ կհանեին: Բայց որովհետեւ իմ ազգի անընդունելությունը գիտեի եւ տեսնելով, որ ոչ ոք հանձն չի առնում, այլեւս էլ որեւէ մեկին չկամեցա աղերսել եւ այնուհետեւ ինքս էլ լռեցի: Եվ զարմացած էի այս բաների մասին խորհելիս, թե ինչպե՞ս է, որ մեր առաջին հայրերը այս խնդիրը չեն կարգավորել: Եվ պատճառն իմացա, թե ինչու՞ առաքյալներին Տերն այս աշխատանքը չտվեց անել եւ կամ ինչու՞ ոչ մեկին չկանչեց այդ գործը գործադրելու եւ անձամբ ոչ ոքի վրա ինքն եւս իշխանություն չգործադրեց ոչ պարսավանքների եւ

զարհուրանքների եւ ոչ էլ հալածանքների ժամանակում եւ կամ այն ժամանակ, երբ այլոց՝ ընկած ազգերի տերությունների դատաստաններով վարվեցին իրենները: Եվ թեպետ այս ամենն եղավ իմ ժամանակ, բայց նույնն էր պատճառը, որպես մեր հայրերի օրերին, այն որ՝ բացի Ավետարանից դատաստանները գրով չէր ավանդվում, եւ առաքյալների ժամանակից չտրվեց մեզ, սակայն դրանք մեզ համար գրելը հարկավոր էր, որպես վերնագույն մի ցուցակ /որ դրանք արդեն կային գրվածքներում, սակայն առանձին եւ համահավաք գործելու համար Սուրբ Գրքից դուրս չէին ներկայացվել/: Եվ այս աշխատության սկիզբն այսպես եղավ:

Հանդիպեցինք եւ տեր Ստեփանոսին, որ Աղվանից կաթողիկոսն էր եւ նույն բաների հիշատակումը նրա առջեւ արեցինք: Եվ նա հորդորեց մեզ, ասելով, թե՝ այդ գործը գլուխ բերելուն ինքն էլ է փափագում: Եվ նրան եւս ասացինք մեր անկարողության մասին: Սակայն նրա հորդորելու եւ քաջալերելու ժամանակ՝ Աստծո Սուրբ Հոգու խորհուրդն եղավ մեր մեջ, որ արժան է իր հոգեւոր հրամանին անսալ, որովհետեւ Աստծու համար է լինելու կատարումն աշխատության, որ խորհում ենք իրագործել: Նույնն եւ սկզբի համար, ապա թե ոչ՝ պատճառ կլինի ոմանց համար այս բաները կատարելուն: Որովհետեւ ի սկզբանե ոչ թե ամենայն արվեստի գործ մեկ սկսողի կողմից ավարտվեց, այլ բազում ժառանգորդ այրերի ձեռքով, որովհետեւ մասնավոր գտնվածները հավաքվելով գոյացրեցին արհեստը, ըստ ոստայնագործների առակի: Նաեւ պատշաճ է իմ վարքի համար էլ՝ համարձակություն ստանալ սրանով, եթե ատյան եմ մտնելու անկաշառ եւ անմեղադրելի, քանի որ իմ ձեռքով իսկ եմ գրում ապագա եկողների համար այս նշանակը:

Եվ արդ, որեւէ մեկը թող ասածներս պարսավանքներով չդիտի, որովհետեւ եթե տխմար մեկը կարդա՝ կուսուցանվի, եւ եթե ամենակատար ու իմաստուն մեկը՝ այս մատյանով իր թերին կլցնի: Յուրաքանչյուրի համար պատրաստ ենք սիրով ընդառաջ ելնել:

ԳԼՈՒԽ Գ
ԱՅՍ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆ՝ ՀԱՆԴԵՐՁ ՆՈՐ ԱՂԵՐՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ԱՌ ԱՂՎԱՆՆԵՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԵՐ ՍՏԵՓԱՆՈՍԻՆ

Քանզի հարկավոր է այս ամենից ելնելով փոքր~ ինչ ցուցանել զորությունը առաջիկա մեր գործի, որի համար եւ աղաչում ենք քեզ, ով պատվական գլուխ Աղվանների տան սուրբ Եկեղեցու, մի համարեք ցաքուցիր այն հոգեւոր պարտականությունը, որ դրվեց մեզ վրա, որովհետեւ կանոնական սահմանները կան դատաստանի գրվածքների, որոնք պարտավորվում ենք դասակարգել, այդպիսով հայտնի կլինի չափն ամբողջի:

Եվ արդ, այսպես ենք համեմատում: Կանոնական սահմանները հոգու համար են ուղղիչ, իսկ սա՝ հոգին, ուղղիչ է մարմնի համար: Եվ թեպետ սրանք միմյանցից բաժանված են, սակայն բազում դեպքերում են միավորվում՝ որպես բնությամբ հոգի եւ մարմին, երկու անշփոթ խառնմամբ մեկ լինելով եւ բազմաթիվ անգամներ միասին մեկ կամքով են դրսեւորվում: Այս բանի համար, թեպետ պատահում է, որ մի սահմանումով են ղեկավարվում, սակայն միմյանց չեն լուծարում: Եվ օրինակ, այն, որ հմտագույնն է առաջիկա իրողությունները քննելիս, նույն բանն է եւ այստեղ: Եվ ինչպես որ հանցանքների պատիժն է մեղավորների, ըստ իրողությունների զանազանության, նույնպես է եւ այս պարագայում: Եվ որպես որ հանդգնողներին են բանտ ու կապանքներ լինում, նույնպես էլ բանտ ու կապանք են լինում այս պարագայում: Եվ որովհետեւ արդարների վրա կանոնական սահմանների օրենքներ չկան, ուստի դատաստաններ չկան նաեւ կենցաղում ուղիղ ընթացողների համար: Եվ որովհետեւ արդարամիտ այրը չի զարհուրում երկնավոր դատավորից, նաեւ երկրավորից չի զարհուրում:

Խնդրում ենք մի երկրորդ բան եւս ի մտի առնել, որ մեզ ոչ քիչ չափով է օգուտ, քանզի ամենքի համար են այս գրվածքները՝ զուգընթաց նրանց զորությամբ՝ չափի մեջ դնելով մարդկանց: Որովհետեւ սրանց դիտավորությունը մեղքերը կրճատելը եւ դրանով չարին վերջ տալն է: Եվ հետեւանքը ոչ այլ ինչ է լինում, եթե ոչ այն, որ դարձ-

նում է մեզ համամիտ եւ համակարծիք, որոնցից եւ սերն է հաստատվում, որ գլուխն է բոլոր պատվիրանների:

Իսկ չորրորդ՝ առաքինությանը համեմատած, հավասար է լինում արդարության, քանի որ իր վրա երեք մասերն է կրում եւ այդ, ըստ երրորդ խոսքի է:

Իսկ արվեստավորներիս աշխատանքն այստեղ նման է ոսկեգործների աշխատանքին, որոնց ոսկին նյութերի մեջ առաջնագույնն է, որ գործավորին անհայտ կերպով կա եւ դժվարությամբ է գտնվում գործի մեջ դրվելու համար. եւ այս այսպես է, ըստ չորրորդ բանի:

Հինգերորդ՝ քերթողը գորություն /իշխանություն/ ունի դասդասելով քերթել /հանել/ բոլոր ավելորդությունները:

Զափավոր այս գլուխներով, իմաստությամբ վարվելով՝ տվեցինք տեսակները, որոնցով դիտել ենք տալիս, թե սրանց հետեւելով որքան օգուտ ու շահ կլինի հասարակությանը, որովհետեւ ամենայն պատերազմ եւ ամբոխային խռովություններ նման իմաստությունների պակասության պատճառով են լինում: Եվ սրանք, այս օրենքները, հաստատվելով եկեղեցու կողմից, լինում են պատճառ խաղաղության եւ բազմաթիվ բարեկարգությունների: Քանի որ աստվածային շնորհներից մեկը, որ տրված է եկեղեցուն՝ եւ Հնով /կտակարանով/, եւ Նորով /կտակարանով/, այս իսկ է:

ԳԼՈՒԽ Դ
ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԵՒ ԹԵ ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ

Առաջին, ամենքի դատավորը Ինքն՝ Աստվածն է, ըստ այն խոսքի, թե՝ Տերն է դատում իր ժողովրդին /Բ Օրենք, ԼԳ-36/: Եվ Եսային մի այլ տեղ ասում է՝ Տերն է մեր դատավորը /Եսայի, ԼԳ-22/, եւ Աստված է քննում սրտերն ու երիկամները /Սաղմոս, Է-10/: Եվ դարձյալ թե՝ ե՛կ, Աստված եւ դատի՛ր Քո դատաստանները /Սաղմոս, ՀԳ-22/: Եվ որ՝ Աստված է արդար դատավորը /Սաղմոս, Է-12/, եւ այլ՝ այսպիսի, նախապես ծրագրված դատաստանի տնօրենության հաստատումներ, որոնցով հայտնի է, թե դատաստան կա մարդկանց: Եվ թեպետ գրեց Աստված Մովսեսի ձեռքով, թե այն անասունը, որ մեկ այլ անասունի սպանի, սպանվածի փոխարենը սպանող անասունը սպանվի. եւ անասունների մասին այս խոսքը՝ խրատ էր մարդկանց համար: Եվ դեւերին եւս դատաստան եղավ, քանզի նրանք երբ ամբարտավանեցին, սատանայի հետ վար նետվեցին երկնքից: Նույնն է լինելու Քրիստոսի երկրորդ գալուստի ժամանակ (եւ երկնքից վար նետված սատանան, այժմ էլ այստեղ է դատվելու, եւ նետվելու է կրկին վար, այժմ արդեն՝ դժոխք): Եվ այս բաների, եւ մարդկանց լինելիության համար, բնությամբ է, որ Տերը կոչվում է դատավոր:

Իսկ Քրիստոսն ասաց՝ դատաստան անելու համար եկա այս աշխարհ եւ թե՝ Հայրը ոչ մեկին չի դատում, այլ ամեն տեսակի դատաստաններ անելը տվել է իր Որդուն /Հովհ. Ե-22/: Եվ այս իսկ է դատաստանը, թե՝ լույսն աշխարհ եկավ, սակայն մարդիկ խավարը սիրեցին /Հովհ. Գ-19/. եւ բազում են նման վկայությունների հաստատումները: ...Սակայն դժվար չէ ցույց տալ դատելու հատկությունը Հոր եւ Հոգու, ըստ այնմ թե՝ դա՛տ արա ինձ, Աստված եւ դատի՛ր նրանց, Տե՛ր, ովքեր դատում են ինձ /Սաղմոս Է-9, ԽԲ-1/, բան, որ Հորն է պատշաճ դատել: Եվ Հոգին, որ եկավ աշխարհն հանդիմանելու մեղքերի համար եւ հանուն արդարության եւ դատաստանի համար, եւ այլ բազում խոսքեր կան սրանց նման:

Երկրորդ. քանի որ Աստված դատելու իր անունը տվեց մարդկանց, ըստ այն խոսքի, թե՝ դատ արեք որբի եւ այրու համար: Դատ արեք՝ հասարակությանն ասելով խոսքերը թագավորների, քահանաների, իշխանների եւ ժողովրդի ծերերի: Այս մասին տես Սողոմոնի օրինակում: Բաներ, որ անապատում Մովսեսը կարգադրեց, նույնն արեց եւ Դանիելը, ասելով՝ քահանանե՛ր, հսկող եղեք արյան դատաստանի համար: Եվ հասարակությանը հրամաններ տվեց, եւ սրանք մեկ են, թե՝ շնորհներով Նորի եւ թե՝ ըստ Հնի:

Առաջին՝ որովհետեւ դատարկությունից մի վերցրու դատավորին որպես մերձ գործընկեր, դրանից անիրավություններով վնասներ կլինեն:

Երկրորդ՝ թեպետեւ քաղաքի դատավորը մեկը լինի, բայց բոլոր պատվավոր մարդկանցից պատիվ պիտի ստանա: Իսկ Քրիստոսն ասաց իր առաքյալներին՝ կնստեք տասներկու աթոռներին եւ կդատեք Իսրայելի տասներկու ցեղերին /Մատթեոս, ԺԹ-28/. մի բան, որ ունեն քրիստոնյաները մինչեւ այսօր. տասներկու դատավորներ են նստեցնում իրենց դատարաններում:

Իսկ Աստված ամեն մեկին՝ ինքն իր անձի հանդեպ դրեց դատավոր՝ անիրավ դատավորի առակի միջոցով /Ղուկաս, ԺԸ-2/, որպեսզի այս խորհուրդը մեզ վրա վերցնելով, ամեն մեկս ինքն իր դատավորը լինի իր մտքում եւ հոգեւոր դատաստանների մեջ թյուրություն չանի:

ԳԼՈՒԽ Ե
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ Ի՞ՆՉ Է ԴԱՏԱՍՏԱՆԸ. ՈՒՄԻ՞Ց ԵՎ ԹԵ ՈՒ՞Մ Է ԱՎԱՆԴՎԵԼ ԴԱՏԱՍՏԱՆ ԳՈՐԾԵԼԸ

Դատաստարանը թարգմանվում է՝ դատել, որ է քննելը, իսկ աստանը այն տեղն է, որտեղ քննում են, որ է՝ դատարանը կամ քննարանը, որովհետեւ քննելով է, որ իմաստուն դատավորները պատասխանատվության են ենթարկում անուղղելի մարդկանց: Եվ արդ ցույց տանք, թե ովքեր են դատավորները: Զի դատը երեք կերպ են մարդիկ վարում՝ բարի, չար եւ միջակ: Եվ պարտավոր է, որ դատավորները քննեն ոչ չարի հորդորներով, այլ՝ իմաստությամբ: Որպես որ Սողոմոնը երկու կանանց դատաստանն արեց, իմաստությամբ քննելով կարծեցյալ իրողությունները եւ Դանիելը, որ հայտնի արեց ծերերի ստությամբ ասածները, այդպես էլ Քրիստոսը, երկրորդ իր Գալստյան ժամանակ արդարներին ասելու է. «Եկե՛ք, իմ Հո՛ր օրհնյալներ», իսկ մեղավորներին ասելու է. «Հեռացե՛ք ինձանից, անիծյալնե՛ր»: Այս բանից հայտնի է դառնում, որ միջակների համար է լինում դատաստան: Եվ այստեղ միջակները ապաշխարողներն են, որոնց ապաշխարության գործերը կշռվում են մեղքերի համեմատ, եւ ծանր կշռողն է վճիռը շահում: Երկուսն էլ ծայր առնելով, ցույց են տալիս ոմանց արժանավորությունը՝ առանց դատաստանի, քանի որ նրանց գործերն են գովաբանությամբ հիշատակվում եւ ոմանց էլ պարսավելի գործերը մերժվում են, որոնցից ուսուցանվում ենք, թե ծայրահեղներին եւ միջակներին է դատաստան լինում:

Եվ արդ, այս ամենից ելնելով, հույժ կարեւոր է, որ դատավորները լինեն իմաստուններ՝ ուսման եւ հանճարի մեջ, որպեսզի Աստծո կամքը կատարողներ լինեն ե՛ւ հոգեւորների, ե՛ւ մարմնավորների համար, որպեսզի դատաստանները ճշմարիտ կատարեն, նաեւ լինեն բարեմիտներ, որ ո՛չ երես առնեն եւ ո՛չ էլ հարկ համարեն ամաչել:

Եվ ո՞ւմ է ավանդվում դատաստան անել: Քանզի, ըստ օրենքի հատուկ են դատավորները եւ ըստ պատահմունքի էին թագավորները, մարգարեները եւ քահանաները նաեւ լինում դատավորներ, ինչպես նախապես ասվել էր: Այլ, քանի որ մեր մեջ այսպիսի կարգ է առաջացել, թե դատաստանի գրվածքները հարկ է ավանդել եպիսկոպոսների ձեռքով, որովհետեւ մեզ՝ դրսիններից ոչ մեկը իմաստության չի վարժել: Եվ որովհետեւ այժմ եպիսկոպոսներին է հանձնված հոգ տանել թե եկեղեցականներին, թե աշխարհականներին եւ եպիսկոպոսների հետ, ըստ պատահմունքի /դատավորներ/ լինեն իշխանները եւ ժողովրդի գլխավորները, նաեւ՝ քահանաներից ու վարդապետներից իմաստունները, սակայն այս բաների ավանդապահները եպիսկոպոսները լինեն: Բայց երբեք այն եպիսկոպոսները, որ տգետ են եւ արծաթասեր, այլ՝ գիտունները, որոնք ըստ Հիսուսի խոսքի՝ ճշմարիտ օրենքների եւ պատվիրանների մեջ են վարժված: Եվ եթե այս բաներում հանդիպեն տխմար եպիսկոպոսներ, այդժամ վարդապետներով, քահանաներով եւ աշխարհականներով այս գրքի իմաստություններով լցվեն ուսմամբ աստվածային, որ հերձվածողներից ամենեւին չբամբասվեն:

ԳԼՈՒԽ Զ
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՐՊԵ՞Ս Է ԱՐԺԱՆ, ՈՐ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ ԼԻՆԵՆ ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արժանը այն է, որ դատավորները լինեն անկաշառ, որովհետեւ կաշառքը կուրացնում է իմաստունի աչքերը, ինչպես որ գրված է, թե՝ իրավունք հաստատելու համար նա կաշառք չառնի, եւ ով այդպես կանի, նա հավիտյան չի սասանվելու: Եվ Քրիստոսը հրամայում է, թե՝ աչառություն մի՛ արեք, այլ ուղի՛ղ եւ իմաստո՛ւն դատաստան կատարեք:

Եվ արդ, չի կարելի թյուրել արդար դատաստանը հանուն կաշառքի, թող տխմարները չգայթակղվեն եւ չելնեն գնան այլազգիների մոտ դատաստանի, այլ համարձակ լինեն ասելու, ինչպես Քրիստոսն է ասել՝ թեպետ եւ դատեմ էլ, բայց իմ դատաստանը արդար է:

Եվ չի կարելի անձի օգուտը խնդրել, որպեսզի շատ շատերը հավատան նրան /դատավորին/ եւ ուղիղ դատաստան անեն: Եվ թեպետ

պարտավորություն է ամենայն ողորմություն հիշել, բայց դատաստանի ժամանակ ոչ միայն աղքատներին, այլ ամենքին միապես վերաբերվեն, ըստ այն խոսքի, թե՝ մի՛ ողորմիր որբին եւ այրուն դատաստանի ժամանակ, որպեսզի գայթակղության որեւէ պատճառ չլինի: Ասվել է՝ որբի համար էլ դատ արեք եւ այրու իրավունքը պահեցեք դատաստանի ժամանակ: Եվ թեպետ դատավորների կողմից այս պահպանվելու է, սակայն յուրաքանչյուրին են ուսուցանում՝ առանց դարմանման միմյանց չթողնել, այլ կարողության սահմաններում խոնարհվել՝ անկարողների հանդեպ ողորմածություն դրսեւորելով:

Միայն ամբաստանողի կամ միայն դատախազի խոսքերը չլինի, թե լսեն, եւ եթե լսեն, դրանից ուսուցում առնեն, այլեւ մեկ վճիռ կայացնեն միայն այն ժամանակ, երբ միասին քննեն հարցը կատարելապես:

Վճիռ կայացնել երկու կամ երեք հավատարիմ վկաների միջոցով, ինչպես որ օրենքներն են թելադրում: Եվ թե ի՞նչ է հավատարմությունը եւ ինչու՞ երկու- երեք վկա, այդ մասին ասենք մյուս ճառում, որ պիտի գրենք:

Իսկ ում համար որ վկա չլինի, մյուս կողմի երդմամբ վճիռը կայացնել: Եվ երդում չենք հրամայում, ըստ սովորությունների, որ ունեն անօրենները, այլ հրամայում ենք կանոնապահություն եւ ապաշխարություն: Իսկ թե ինչպես է լինում երդումը եւ ովքեր պիտի երդվեն, կասեմ համապատասխան ճառում, այն էլ ոչ թե երդումը օրենսդրելով, այլ խրատելով:

Դատավորների համար պարտավորություն եւ պատշաճություն է՝ իրենց կողքին երկու կամ երեք փորձառու այր ունենալ, որոնք հավատարիմ լինեն Աստծո ամենայն գրվածքներին, որոնք նաեւ վստահեցված եւ վկայված լինեն բոլոր բնակիչների կողմից, եւ վկաների խոսքերից ելնելով, թե ոսոխների համար լինեն հավատարմատար եւ թե դատավորների եւ դատաստանը լինի այս այրերի վկայությամբ:

Հռոմեացիք սովորույթ ունեին քննություն կատարելու համար յոթանասուներկու այրեր ընտրել որպես դատավորներ, եւ յոթանասուներկու այրերին ընտրում էին յոթանասուներկու ազգերից եւ լեզուներից, կարծելով թե, այդպես բոլոր ազգերի իմաստությունը նրանցով կունենան: Իսկ այժմ քննություն անելու համար ընտրվում են թվով տասներկու այրեր՝ տասներկու առաքյալների օրինակով, օգնականներ դատավորին եւ կարող են ոչ միայն ընտրել իրավացին՝ անսխալ պահելով արդարին, այլեւ բազում վկայությամբ ճշգրտել ատյանը դատաստանի: Իսկ հույները երեք դատավորներ են կարգում, նույնպես եւ վրացիները, որ սովորել են նրանցից, եւ այս անում են Երրորդության թվի համեմատ եւ կամ ըստ վկաների թվի: Նույնը մենք էլ ենք վկայում եւ պատվիրում մեր դատավորներին եւ եպիսկոպոսներին, որ միշտ իրենց կողքին պահեն երկու կամ երեք հավատարիմ քահանաներ, ոչ միայն որպես վկաներ դատի ժամանակ, այլեւ նրանց միջոցով կրթելու եւ կրթվելու, հմտանալու եւ հմտացնելու աստվածային գրքերի իմացությամբ եւ գրվածքներով դատաստանի ու իմաստության, այլ նաեւ որ, նրանք ժամանակին կարողանան որսալ խոսքերը այլ ազգերի իմաստունների: Եվ դատավորները իմաստություններ ասելու եւ լսելու մեջ լինեն մշտապես՝ թե՛ դատելու ժամանակ, թե՛ վճիռ հաստատելիս, ճանապարհին լինեն, թե տանը:

Դատաստանի ժամանակ /դատավորները/ երկայնամիտ լինեն, անանխանձ, անոխակալ, անհիշաչար, նման Աստծո կողմից նշանակված դատավորի եւ պարտավոր են Աստծու նմանությամբ մարդասիրություն բերել ամեն ժամանակ եւ առավել՝ դատաստանի ընթացքում:

Դատավորները լինեն երկայնամիտ եւ ներող, որովհետեւ բազում անգամներ անհայտ դիպվածներ են լինում, ուստի կարճամիտ ձեւով չլուծեն խնդիրը, այլ պահեստավորելով պահեն /փաստերը/ եւ պարապելով տեսնեն /իրողությունը/ եւ վերստին լուծեն ատյանի միջոցով, որքան էլ որ անհրաժեշտ լինի՝ նույն հարցին անդրադառնալով:

Ատյանի ժամանակ ոսոխների բանակովությունը թող սաստե՛ն, որպեսզի թե ամբոխված խռովություն չլինի եւ պատճառ չլինի դատաստանի խափանման:

Դատախազները թող իմանան, թե վիճելու համար չէ, որ պիտի գան ատյան, այլ վշտակցաբար արժանի վճիռ հանելու:

Խոսեն ըստ կարգի, երկու կողմերից էլ լռությամբ լսելով խոսողին, խոսք տան նախ մեկ կողմին, ապա մյուսին առանձին, որպեսզի ճշմարիտն երեւա:

Դատավորները իրենց սպասավորների համար զգույշ լինեն, որպեսզի հանկարծ թե նրանք վարձ չվերցնեն ու թյուրինը խոսեն, ինչպես որ սովորություն ունեն նրանք, որ գալիս են դատաստանի, քանի որ վար-

ձու առնում են դատավորի սպասավորներին, որպեսզի իրենց մասին ոչ ճշմարիտը վկայեն /դատավորի առաջ/: Արդ, պարտավորություն է դատավորի համար ճշմարիտը լսել եւ թող երես չառնի իր սպասավորների խոսքերից խաբվելով եւ արդար դատաստան չանելով, քանզի երկնային դատաստանը, որ է աստվածային, որեւէ մեկից պատրանքների մեջ չի ընկնում եւ չի ամաչում, քանզի արդար է: Իսկ երկրավոր դատավորները պարտավոր են երկնայինի նման լինել, իսկ ովքեր որ չլինեն, այդժամ Աստծո դատաստանը պիտի մնա նրանց վրա:

Դատավորները մարդկանց վրա չհպարտանան, քանզի մեկն է Դատավորը ամենքի էլ, որն է ամենքի Աստված, որպես որ գրված է, թե դատավորներից որեւէ մեկը եթե մտքով հպարտանա, թող իր մտքով անցկացնի Ամբակում մարգարեի խոսքերը, որ կոչեց Աստծուն՝ վրեժխնդիր լինել անիրավ դատավորներից:

Պարտավորություն է, որ դատավորները բանտ ունենան՝ դրանով անիրավներին խրատելու համար, որովհետեւ Քրիստոսն է հրամայում, թե՝ դահիճը նետում է բանտ: Նույնպես եւ դատախազներին է Քրիստոսը խրատ տալիս՝ ճանապարհին տալ հաշիվը եւ հաշտեցնել միմյանց, որպեսզի թե հակառակ այլ բան չպատահի:

Քրիստոսի աշակերտներին վայել չէ սուտ խոսել, որովհետեւ ստախոսի հայրը սատանան է, ասաց Քրիստոսը, որովհետեւ երբ սուտ է խոսում, ինքն իրենից է խոսում, քանի որ նրա հայրը սուտ է՝ սատանան, եւ նաեւ թե՝ կորցնում է Տերը նրանց, ովքեր սուտ են խոսում. այս Դավիթ /մարգարեն/ է ասում՝ մի՛ ստեք միմյանց, այլ յուրաքանչյուր ոք թող իր ընկերոջը ճշմարտությունն ասի: Եվ արդ, եթե ստախոսի հայրը սատանան է, արժան չէ թողնել Աստծո հայրությունն ու լինել որդի սատանայի, որովհետեւ Աստծո օրենքով չէ սուտ խոսքերով որոգայթներ դնել ընկերոջ դիմաց դատավորների առաջ, դրանով ջանալով իրավացի դուրս բերել չեղ դատաստաններն իրենց: Որովհետեւ իմաստուն Սողոմոնի միջոցով է գրվել. թե՝ ով ընկերոջ դեմ որոգայթ է դնում, իր անձով պիտի լցնի այն: Եվ Դավիթ մարգարեն էլ նույնն է ասում՝ այն փոսը, ով փորեց ու լայնացրեց, պիտի ընկնի նա ինքը, ով որ փոսը փորեց:

Չլինի, որ դատավորները անիրավություն սիրեն եւ չլինի թե հավատացյալները սիրեն անիրավ հաղթանակներ տանելը դատավորների առջեւ, որովհետեւ եթե հաղթի՝ անձ է զրկելու, եւ եթե հաղթի սուտ խոսքերով՝ ամոթանք պիտի կրի մարդկանցից: Սուտ վկաներին տեղ մի՛ տվեք, որովհետեւ իրենց ընկերոջ ինչքերն են հափշտակում, երբ Աստծո օրենքներում գրված է, թե՝ ընկերոջդ ինչքերին մի՛ ցանկանար: Արդ, եթե ցանկանալն է պիղծ, ապա, որքան առավել եւս՝ հափշտակելը:

Դատաստանի ժամանակ մի՛ վարձեք ճարտասանների եւ ճարտարախոսների, որովհետեւ չարը նրանցով է գլուխ բարձրացնում:

Ատյանի ժամանակ մի՛ կռվեք եւ մի նախատեք միմյանց:

Մի՛ կաշառեք դատավորներին, հափշտակելով ձեր ընկերների ինչքերը, ախտավորվելով արծաթասիրությամբ, որն է արմատը բոլոր չարիքների: Լսեցե՛ք խոսքը Պողոս առաքյալի, որ ասում է՝ ինչու՞ դուք չեք զրկվում եւ նեղվում, այլ զրկում ու նեղում եք անգամ ձեր եղբայրներին: Արդ զարհուրեցե՛ք առաքելական կանոնների հրամանից, որ Տիրոջ խոսքն է վկայում, թե՝ ավելի լավ է նա, ով տալիս է, քան թե նա, ով վերցնում է, եւ ավելի լավ է բամբասվողը, քան նա, ով բամբասեց:

Ատյանում մի՛ թույլատրեք վայրապար երդումները եւ թող չերդվեն, եթե դատավորը երդվել չի հրամայում, որովհետեւ Աստված չի հրամայել երդվել, այլ որ գիտենան Տիրոջ ասած խոսքերը եւ թե՝ յուրաքանչյուր խոսած դատարկ խոսքի համար հաշիվ է պահանջվելու Տերունական դատաստանի օրը: Եվ թե նման բաների համար Աստված քեզ դատաստանի կկանչի: Խորհեցե՛ք նաեւ այս, որ լավ է ինչքերի հափշտակության դատն այստեղ խնդությամբ ընդունել, խնդիրն այստեղ լուծել եւ արդեն ուղղված մտնել ատյանը ահեղ երկնավոր դատավորի: Դատավորները նաեւ խրատվեն այս բանում, որպեսզի նախ Տիրոջից աղոթքներով օգնականություն հայցեն, ապա նոր միայն մտնեն դատաստանի ատյան: Եվ երբ իրավացի դատաստանը ի բարին ավարտվի, այն Աստծունը համարվի, քանզի նա տվեց բերան եւ իմաստություն: Սակայն, եթե Տիրոջ իրողությունների մեջ հանցանք գործվի եւ արդարը անիրավվի, այդժամ զոհությամբ համբերեցեք, որովհետեւ այդպես լավագույն հատուցմանը կհասնեք՝ վրեժխնդրության նախանձը Տիրոջը թողնելով, քանզի Աստված է վրեժխնդիրը:

ԳԼՈՒԽ Է
ՎԿԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՈՒՄՆ Է ԿԱՅԱՆՈՒՄ ՆՐԱՆՑ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՄ ԻՆՉՈՒ՞ ԵՆ ԵՐԿՈՒ ԿԱՄ ԵՐԵՔ ՀՈԳԻ ԸՆՏՐՎՈՒՄ

Հարկավորությունից ելնելով դատաստանի ժամանակ վկաներ են պետք, որպեսզի դատախազներին հակառակելու ժամանակ դատավորը նրանց միջոցով կարողանա խնդիրը լուծել, որովհետեւ անհավատալի չափերի է հասնում դատաստանավորներին դատավորների ձեռքը մատնելը եւ եթե հնար ունենային նրանց հրի էլ կմատնեին: Նաեւ ոսոխները նրանցով /վկաներով/ առավել, քան դատավորներով, սկսում են զիջել, երբ վկաները կաշառքով վարձված չեն լինում եւ դատավորը նրանց ավելի հավատարիմ է գտնում:

Վկաների հավատարմությունը որոշեն նրանց վարքերից, որովհետեւ անհրաժեշտ է, որ նրանք ճշմարտախոս եւ անկաշառ լինեն եւ այդպես գան ատյան: Նրանք չլինեն դատախազի ազգականները, իսկ թե ազգականներն են դատախազի, այդժամ բազում մարդկանց վկայությամբ նախ թող հաստատվի նրանց հավատարմությունը: Ընտրվեն երկու-երեք վկաներ, այնպես, ինչպես արեգակն ու լուսինն են երկնքի կառուցված լինելու մասին վկաներ:

Երկրորդ, վկաները երբ ծերունիներ են, նրանց առավել պատիվ է տրվում: Բայց պարտավորություն է ցույց տալ, թե քանի տարեկանն է լավ վկայի տարիքի համար: Երեք տարեկան տղան նոր է խոսում, յոթ տարեկանին ուսման են տալիս, տասնչորս տարեկանին /արտ/ սերմնացանելու, քսան տարեկանին՝ զինվորության, քսանհինգ տարեկանին ձեռնադրում են քահանա: Արդ, պարտավորություն է քսանհինգ տարեկանին ընտրել վկայության համար, որովհետեւ թե Աստծու առջեւ է հավատարիմ գտնվում եւ ի զորու է վկա լինել մարդկանց համար բարու եւ չարի հարցերում եւ նաեւ առավել հավատարիմ է լինում դատավորների առջեւ:

Իսկ քսան տարեկանը, որ հասակ է որդեծնության, հավատարիմ է լինում առեւտրի, վաճառքի մեջ, որովհետեւ իր անձն ու սերմը վաճառում է կնոջը եւ այդպես է գնում իր կնոջը եւ ամուսնության մեջ հավատարիմ է: Այս տարիքը հավատարիմ է գնել ու վաճառելու մեջ:

Իսկ երբ պատահի, որ վկաներից մեկը քսանհինգ տարեկան լինի, իսկ մյուսը ծեր եւ երկուսն էլ լինեն հավատարիմներ. երիտասարդը ծերի կողքին՝ ուղիղ կլինի ճանապարհը նրա: Իսկ թե վկաներից երկուսը կամ երեքը քսանհինգ տարեկան են, ընդունելի է:

Իսկ ըստ ազգերի կրոնների պարտավորություն չէ, որ անհավատները վկաներ լինեն քրիստոնյաների վրա, թեպետեւ արդարներ լինեն եւ թվով շատ, որովհետեւ դեւերին չընդունեց Քրիստոսը եւ նրանց չլսեց, թեպետեւ արդար վկայեցին, որովհետեւ նրանց ճշմարտությունը խառնակ է եւ սուտ: Այս նաեւ Պողոս /առաքյալն/ էլ չընդունեց, որ նրանց հետ մեկ միաբանություն չկարծվի: Նաեւ հերձվածողներին եւս /քրիստոնյաների վրա վկա չընդունել/, որովհետեւ երբ Տիրոջ համար ճշմարիտ վկաներ չեն, ինչպե՞ս պիտի կարողանան մեզ համար լինել: Բայց նրանց, միմյանց վրա վկա լինելն ընդունելի է, եթե հարկ լինի:

Իսկ կանանց վկայությունը ընդունելի չէ, բացի վկայության լրաբերներից, ինչպես որ Տիրոջ հարության լուրը չորս կանայք բերեցին երկու առաքյալներին, եւ նրանք հաստատեցին Տիրոջ հարությունը, վկաներ լինելով ճշմարիտ հարությանը Տիրոջ:

Այսպես էլ, եթե այնպիսի դեպք պատահի, որ կանայք են վկաները եւ այդ կանայք ճշմարիտ վարք ունենան, ապա թող հավատարիմ այրերին պատմեն եղելությունը եւ հավատարիմ ճանաչվի վկայությունը այս կանանց այդ այրերի միջնորդությամբ:

Բայց ատյանի առջեւ չկանգնեն կանայք, այնպես, ինչպես որ իշխանություն չէ տրված նրանց ո՛չ քահանայելու, ո՛չ նվիրելու, ո՛չ հնձան գործելու, ո՛չ խանութում նստելու եւ ո՛չ էլ այրական հագուստ հագնելու, ըստ կանոնների, այդպես էլ իշխանություն չէ նրանց ո՛չ դատելը եւ ո՛չ վկայություն տալը, բացի միայն այնքանը, որ նախօրոք նշեցինք: ...Կանանց դյուրագրգռության պատճառով նրանց /վկա լինելը/ երկբայելի է: Սակայն արժան է, երբ կանայք են վկայություն տալիս կանանց վրա, քանի որ բազմաթիվ են այն դիպվածները, որ նրանց մերձ ու ըմբռնելի են, իսկ այրերի համար՝ ո՛չ: Եվ այս դեպքում էլ վկաները պարտավոր են լինել ամեն կողմի համար երկու հոգի:

Ամեն հասակում՝ լինի ծեր, երիտասարդ, թե մանուկ, որ վկայում են Աստծուն՝ ընդունելի է, ինչպես որ Բեթղեհեմի մանուկներն էին վկայում, վկայում էր սուրբ Կիրակոսը, Ստեփանոս նախավկան եւ

բազում այլոք: Բայց մարդկային վկայության առումով ավելի լավ է քսանհինգ տարեկանի եւ ծերերի վկայությունները, որովհետեւ Աստված սրտերին է նայում, իսկ մարդը՝ երեսին ու տեսքին: Իսկ թե ինչո՞ւ են երկու կամ երեք հոգի վկաներ ընտրում, ոչ թե ավելի շատն ենք խոտելի կոչում, այլ որպես ամենապակաս թիվ նրանց համար, ինչպես որ գրված է՝ երկու կամ երեք վկաների միջոցով հաստատվի ամենայն բան: Որովհետեւ դյուրին է մեկ ախտակիր վկայի համար սուտ խոսելը, իսկ երկու կամ երեքի դեպքում՝՝ ո՛չ:

Եվ որպեսզի դատավորն էլ իմանա, որ եթե երկու վկաների միջոցով է բանն հաստատվում, այդտեղից ճշմարտությունը քաղի:

Բայց պարտավորություն է վկաների համար տեսնելն ու լսելը, ապա վկայելը, որովհետեւ լավ է տեսնելը, քան լսելը եւ ճշմարիտը վկայել մարդկանց առաջ եւ Աստծուց իրենց պարգեւն ստանալ:

ԳԼՈՒԽ Ը
ԵՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՐՊԵՍ Է ԼԻՆՈՒՄ ԵՎ ՈՎՔԵՐ ԵՆ ԻՐԱՎԱՍՈՒ ՁԵՐԴՎԵԼ

Արդ, մեծ եւ տերունական հրամանն ու պատվիրանն ենք տեսնում, որ այժմ ոտքի կոխան է եղել մարդկանցից, քանի որ Քրիստոսից չունենք երդվելու հրաման: Իսկ այժմ ոչինչ բաների համար անհրաժեշտություն են կարծում հանուն Աստծու երդվել մարդիկ՝ թե ժողովների մեջ, թե շուկաներում, թե տներում: Եվ երդվում են ծերերն ու երիտասարդները, քահանաներն ու ժողովուրդները, գիտնականներն ու անգետները: Եվ նույն մարդիկ, եթե պատահում է, որ ոմանց դատաստան է լինում եւ դատավորն հրամայում է երդվել, նրանք Քրիստոսի շատ պատվերների ուշ չդնելով, այդժամ հակառակում են ու ասում, թե՝ Քրիստոսն ասել է՝ ամենեւին չերդվել.../Ծ.Թ. Ինչպես գիտենք, երդվելը, ըստ օրենքի էր, Հնի, իսկ չերդվելը, միայն այո-ն՝ այո՛ եւ ոչը՝ ո՛չ հաստատելը, ըստ շնորհի է՝ Նորի, սակայն Գոչը իմաստությամբ հաստատում է այնպիսի կարգ, օրենքից վեր՝ շնորհի՛ կարգ, որով, ինչպես այս գլխում կտեսնենք, շատեր, մեծ մասամբ իրավունք են ունենում վեր մնալ երդումից/: Իսկ եթե մեկն ասի թե անհնարին է երդվելը, ապա հայտնի է, որ Աբրահամին երդվեց Աստված՝ խոսելով հրեշտակի միջոցով՝ իմ անձով եմ երդվում, ասում է Տերը եւ Աբրահամ ծառային երդումը տվեց, եւ դարձյալ, Տերը երդվեց Դավիթ մարգարեին եւ թագավորները երդվում եւ երդվեցնում են միմյանց, որ երդմամբ խաղաղություն բերեն աշխարհին: Նույնպես եւ իշխաններն են երդվում: Արդ, եթե սրանք երդվում են, պարտավոր է ուրեմն /որոշ մարդկանց/ երդվել արդար դատաստանների ժամանակ:

Եվ արդ, /դատարանում/ այսպես են երդվում, ձեռքը դնում են Ավետարանին եւ ասում. Գիտի Աստված եւ վկա են իմ սրտին Խաչն ու Ավետարանը, որ այսպես է, ինչպես ասում եմ ու չեմ ստում: Եվ կամ ասում են /Խաչն ու Ավետարանը ի նկատի առնելով/. Փա՛ռք սրանց եւ զորություն, որովհետեւ ճշմարիտ է, ինչ որ ասում եմ եւ չեմ ստում: Արդ այսպիսի խոսքերը խոստովանություն են Աստծուն, նրա սրտագետ լինելը դիտել տալով՝ Խաչով, որ Քրիստոսի հաղթության նշանն է, Ավետարանով, որ Բանն է Աստծո եւ եկեղեցիով, որ Տունն է Աստծո: Եվ եթե պատահի, որ քրիստոնյաները անօրեն կամ այլացեղ դատավորների հանդիպեն, պարտավոր են քրիստոնեական երդում տալ, եւ եթե քո Խաչն ու Ավետարանը նման դատավորները ուրանում են, թող քրիստոնյաները հանձնառու չլինեն նմանների առջեւ, եթե անգամ մահվան հանդիպեն: Դատավորները ամենեւին չչտապեն երդվեցնել, այլ ջանք անեն առանց երդվեցնելու խնդիր լուծել, ապա, երբ այլ հնար չլինի, այդժամ միայն թող երդվեցնեն:

Եվ երդման կարգը գրված է կանոններում, թե որքան պիտի ապաշխարեն... /Ծ.Թ. Քանի որ երդվելը Ավետարանի խոսքով արգելված է քրիստոնյային, ապա եւ երդվելուց հետո հարկ է նրան այդ բանի համար ապաշխարել, մաքրել ինքն իրեն/: Իսկ եթե հարկ կա, որ կրոնավորը երդվի, նրան ընավ մի՛ երդվեցնեք: Այժմ այն մասին, թե ովքե՞ր են պարտավոր երդում տալ: Նրանք, ովքեր վկա չունեն կամ վկաների կողմից տրված վկայագիր, երդում են տալիս: ...Նաեւ եթե տեսնեն դատավորները, որ ազնվական սիրտ ունեցող մեկն է երդում տալու, նրան չերդվեցնեն, այլ ճշմարտությամբ խոսեն նրա հետ եւ երբ տեսնեն, թե վախենալով, Աստծուց երկնչում ու /Քրիստոսի խոսքի համար/ չի երդվում, թող որ դատաստանը կատարվի առանց նրա երդման: Եվ եթե բռնեն մեկին գողության կամ բոզության մեջ եւ բռնողները չունենան վկա, իրենք երդվեն, ովքեր որ բռնեցին, որովհետեւ չարագործների

երդումն ընդունելի չէ: Իսկ եթե դատավորները իմանան, թե զրպարտությամբ են բռնել, եւ ստություն է բռնողների խոսքը, ապա բռնված «գողերին» եւ «չնացողներին» չարգելել երդում տալ:

Եվ պարտավորություն չէ ամեն տարիքի մարդկանց երդվել, այլ քսանհինգ եւ ավելի բարձր տարիքի մարդիկ են իրավասու երդվել:

Պարտավորություն չէ՛ հիվանդներին երդվեցնել, նրանք կարող են չերդվել, քանի որ մահվան կասկած ունեն, գուցե եւ /երդման ապաշխարությունը չհասցնեն իրագործել/ եւ անապաշխար մեռնեն:

Երեխաներին չերդվեցնել՝ նրանց խակության պատճառով: Ապաշխարողներին չերդվեցնել. չլինի թե մի մեղք եւս իրենց մեղքերի վրա ավելացնեն: Մաքսավորների, հարբեցողների եւ նման այդպիսի մարդկանց երդումը պիտանի չէ: Եվ արդ, այս երդման գիրը գրեցինք, որպեսզի ամեն մարդ թեթեւոտն չլինի եւ չշտապի երդվել կամ սուտ չերդվի, որպեսզի չլինի թե Աստծո դատաստանի ժամանակ դատաստան կրեն:

Իսկ այս սակավը, որ գրեցինք /ոչ թե երդվելը գովելու կամ հաստատելու համար/, այլ չարության ժամանակի պատճառով, որովհետեւ անօրենները բազմացան մեզ վրա եւ նրանք հեշտությամբ են երդվում: Այդ բանի համար մեր ճառով ուսուցանեցինք ձեզ, թե որպե՞ս է պարտավոր երդվել /ովքեր կարող են երդվել կամ ոչ/,... որպեսզի չդատվեք Աստծուց:

ԳԼՈՒԽ Թ
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՊԱՐՏԱՎՈՐ ՉԵՆ ՔՐԻՍՏՈՍԻՆ ՀԱՎԱՏԱՑՈՂՆԵՐԸ ԳՆԱԼ ԱՏՅԱՆԸ ՔՐԻՍՏՈՍԻՆ ՉՀԱՎԱՏԱՑՈՂՆԵՐԻ

Ամենքին է հայտնի, որ հեռու են իրարից հավատացյալներն ու անհավատները, առաքյալի ասածի համաձայն՝ ի՞նչ միաբանություն ունի լույսը խավարի հետ, կամ ի՞նչ /ընդհանուր/ բաժին պիտի ունենան հավատացյալները եւ անհավատները: Եվ Տերն է ասում, թե՝ ով չհավատա Աստծո Որդուն, Աստծո բարկությունը պիտի մնա նրա վրա, եւ նաեւ թե՝ ով չծնվի ջրից եւ Հոգուց, չի տեսնի Աստծո արքայությունը: Եվ Հովհաննես առաքյալն է ասում, ով չխոստովանի Աստծո Որդուն մարմնով աշխարհ եկած, նա իսկ է նեռը: Եվ բոլոր մարգարեները ուրացողներ են ասում ուղիղ ճանապարհից հեռացածներին: Եվ թեպետ եւ այժմ էլ մահմեդականները Աստծուն խոստովանում են որպես Հայր, սակայն Որդուն եւ Հոգուն ուրանում են, եւ այս մեծ ուրացություն է:

Եվ արդ, եթե աստվածապաշտությանը մեզ ընկերակից չեն, ուստի, պարտավորություն չէ նրանց հետ դատաստանի գնալ... եւ ինչպես առաքյալն է գրում կորնթացիներին, ասելով. «Մի՞թե ձեր մեջ այնքան իմաստուն մեկը չկա, որ կարողանա երկու եղբոր մեջ իրավունք հաստատել, այլ եղբայրը եղբորը դատաստանի է տանում անհավատների մեջ եւ այդպես, անարգին եք եկեղեցու դատավոր նստեցնում»: Որովհետեւ նրանք, ըստ իրենց կրոնի համեմատ են դատաստան անում, որովհետեւ ինչպիսին որ նրանց գործերն ու հավատն են, այդպիսին է նաեւ նրանց դատաստանը: Թեպետ օրենքի սկզբից Մովսեսին ունեին, որին այլայլում են եւ ըստ իրենց չար մտքերի խորհուրդներով են առաջնորդվում: Սուտ վկաների վկայությամբ են առաջնորդվում եւ կեղծավոր ատյանով եւ զրպարտող ճարտարությամբ եւ անզեղջ երդմամբ: Մեռելների ժառանգությունը վերցնում եւ պատճառաբանում են, թե նրա որբերի համար են պահելու... բայց իրենք են յուրացնում: Եվ այս իրենց անիրավ արարքից էլ հավատում են, թե Աստված բարին չի կամենում մեռյալներին: Ե՛վ որբերին, եւ՛ այրիներին ամբողջությամբ են զրկում, քանի որ իրերն ու գանձերը վերցնում են, թե պահում ենք եւ երբ որբերը մեծանան, այդժամ կտանք նրանց եւ հետո սուտ են հանում իրենց իսկ այդ խոստումները:

Վարձու կանայք են պահում եւ երբ իրենց չար գործերն են հիշում, գնում են վարձու կանանց մոտ՝ իրենց որդիներին թողնելով:

Անխնա եւ անսահման են նրանց գործած չարիքները, որ նրանց մեջ է լինում: Եվ զգացմունքները մարմնի սրբության հոգուց են համարում, պատվում են մարմնի հեշտությունը եւ իրենց չարություններից ոչ մեկից ետ չեն դառնում:

Արքայությունն Աստծո՝ կին առնելով է, ասում են, իսկ դրախտը՝ ցանկալի պոռնկանոց են կոչում:

Աստծո սիրելի են ասում իրենց մոլորեցուցիչ առաջնորդին, նրան, որ պոռնկություն, արվամոլություն եւ անասնապղծություն քարոզեց:

Ասում են Աստծուն ենք պաշտում, բայց նրա խոսքերը ուրանում են: Խոստովանում են հարությունը, բայց հոգուն բաժին չեն տալիս:

Ասում են՝ հատուցումը ըստ գործերի է, սակայն ամենայն մեղք գործում են եւ միայն գերեզմաններն են դեղագործում: Գինին հարամ է, ասում են, բայց ամենքով հարբում են եւ չերկարացնեմ նրանց չարիքները: Եվ արդ, երբ այսպիսի օտարություն կա մեր եւ նրանց հավատի եւ գործերի միջեւ, ինչո՞ւ մեր ճշմարիտ օրենքներն ունենալով նրանց դատաստանի տակ մտնենք:

Եվ Քրիստոսին ուղիղ հավատացյալներիս համար պարտավորություն չէ նրանց դատաստանով ընթանալ, քանզի մենք խոստովանում ենք Սուրբ Երրորդությունը միակ Աստվածությամբ, որին փառք հավիտյանս. ամե՛ն:

ԳԼՈՒԽ Ժ
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՐՈՆՑ ԳՐՎԱԾՔՆԵՐԻՑ ՀԱՎԱՔԵՑԻՆՔ ԵՎ ԳՐԵՑԻՆՔ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔԸ ԵՎ ԿԱՄ Ո՞Ր ԱԶԳԵՐԻՑ ՔԱՂԵՑԻՆՔ: ՓՈՔՐԻԿ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Նախեւառաջ հավաքեցինք Աստծո օրենքներից, որ տրվեց Մովսեսին՝ ԱՌԱՋԻՆ - ԵԼԻՑ, ԵՐԿՐՈՐԴ - ՕՐԻՆԱՑ եւ այլ գլուխներից, երկրորդ՝ հավաքեցինք սուրբ հայրերի կանոններից եւ Ավետարանից, երրորդ՝ ամենայն սուրբ հիմնավորումներից, թե հներից եւ թե նորերից:

Եվ արդ, թեպետ համարձակվեցինք եւ գիրքը գրեցինք, սակայն եթե հանդիպի իմաստուն մեկը եւ թերություն գտնի, աղաչում ենք, պակասը լրացնի, քանզի ամենայն գիրք ոչ թե մեկ ժամանակի մեջ է գրվում, այլ տարբեր ժամանակներից հավաքած պտուղներով: Նույնպես եւ այս /գիրքը/, որ սկիզբ լինի իմաստունների համար, եւ մեր մասին բարին հիշվի:

ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ՝ ԿԱՄՔՈՎ ՀՈՐ, ՆՐԱ ՈՐԴՈՒ՝ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՎ ԶՈՐՈՒԹՅԱՄԲ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ

ԳԼՈՒԽ Ա
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Եկեք այժմ դատաստանի գործերը դիտարկենք, այնպես, ինչպես Մովսեսն էր հրամայում լինել քաղաքների դատավորներին եւ դպիրներին, որոնցից հայտնի է, թե դատաստանի ամենայն իրողությունները Մովսեսը չավանդեց, այլ ավանդեց դրանց սակավ տեսակները, դատավորների մեջ պահպանելով զանազան իրողություններ:

Եվ այդ բանի համար դպիրներ կարգեց, որպեսզի գրված դատաստանները նրանք գրով պահպանեն: Ըստ այս բանի մեզ համար էլ նույնը լինի:

Եվ արդ, նախ այս մասին խոսենք, որ պարտավորություն է, որպեսզի դատավորները գովեստ ու պարգեւներ ստանան թագավորներից, որպեսզի չլինի թե ճանճրանան դատ վարելուց, նույնը լինի եկեղեցու դատավորների համար, որ են եպիսկոպոսները. նրանք մեծամեծ պարգեւներ ստանան կաթողիկոսից, եւ լիությամբ, որպեսզի չլինի թե աղքատության պատճառով Աստծո ուղիղ դատաստանը թյուրեն:

Եվ արդ, այսպես լինի: Եթե մի այր մեռնի եւ ոչ ուստր ունենա, ոչ դուստր, եւ ոչ էլ իր հայրերի ցեղից որեւէ մեկը, նրա ժառանգությունը եպիսկոպոսներինը լինի: Նաեւ այսպես լինի: Եթե նույն օրինակի համաձայն կաթողիկոսը վախճանվի՝ ժառանգությունը նոր հայրապետինը լինի: Իսկ թե եպիսկոպոս վախճանվի նույն օրինակով, ապա նրա ժառանգությունը երեք մասի բաժանեն, մեկ մասը կաթողիկոսին, երկրորդ մասը՝ եպիսկոպոսին, երրորդը՝ քահանաներին: Իսկ աշխարհական դատավորներին մաս չտան, քանի որ եկեղեցու դատավորները հայրեր են հոգիների եւ մարմինների եւ պարտավոր են, որ նրանք ննջեցյալներից հատուցում առնեն: Սակայն հանուն սիրո, դատաստան անելու համար, ինչ որ մաս տան մարմնավոր դատավորներին, ոչ թե օրենքներով, այլ ըստ պատահմունքի:

Իսկ եթե վանքում կրոնավոր վախճանվի, նրա ինչքերը այն մարդուն տրվի, ում ընկերակիցն էր, իսկ եթե աշակերտ ունի՝ նա ժառանգի, իսկ եթե վարդապետ՝ նա, սակայն երբեք մարմնավոր ազգակիցները՝ եղբայրը կամ հայրը կամ ազգականներից, այլ հոգեւորները /չժառանգեն/: Եվ որպես հասանելիք վանահորը տան՝ մատանիներն ու հանդերձը, որովհետեւ վանականները նրա կողմից են ձեռնադրվում: Իսկ թե մահացած կրոնավորը չունի աշակերտ կամ վարդապետ, վանահայրն է նրա ինչքերը ժառանգում: Այստեղից նույնպես մարմնավոր դատավորները չունեն մաս:

Իսկ հավատավոր կանայք. թե կինը աշխարհական քահանայից է

ձեռնադրվել եւ նրա մոտ վախճանվել՝ նա ժառանգի ինչքերը նրա: Իսկ եթե վանքում է ձեռնադրվել եւ նրանց /վանականների/ մոտ վախճանվել, նրանք էլ լինեն ժառանգորդ եւ ոչ եպիսկոպոսը:

Իսկ թե օրհնված երեց է աբեղան, որ վախճանվել է եւ վարդապետ ու աշակերտ չունի, որ միաբան էին նրան նրա կենդանության ժամանակ, նրա ունեցվածքը եպիսկոպոսը ժառանգի՝ մատանիները /նշանները/ ու հանդերձը թողնելով վանքին: Իսկ թե հոգեւոր ժառանգ ունենա, ինչքերը նրան տան, իսկ մատանիները /նշանները/ ու հանդերձը՝ եպիսկոպոսին:

Այս դատաստանը հաստատուն մնա եւ տուն ունեցողների համար, իսկ մենակյացները իրենց միաբանությամբ իրենցը իրենք ժառանգեն: Բայց եթե երեց կամ աբեղա հանդիպի նրանց մեջ, հանդերձն ու մատանիները նաեւ նշանները՝ եպիսկոպոսին տան, իսկ այլ ստացվածքները /հոգեւոր/ եղբայրների մեջ հավասար բաժանեն:

Նույնպես եւ, եթե եպիսկոպոսը մահվամբ վերափոխվի առ Քրիստոս եւ աշակերտ ժառանգ ունենա կամ հոգեւոր եղբայր, սրանցից որին որ ինքը կամենա, նա էլ լինի նրա ինչքերին ժառանգորդ, իսկ հանդերձը, գավազանը եւ մյուռոնը եւ այլ ընծաները տան կաթողիկոսին, որովհետեւ նա է նրան եւ՛ ձեռնադրողը, եւ՛ դատավորը, մատանիները տան /նոր/ եպիսկոպոսին:

Իսկ եթե կաթողիկոսը վախճանվի, նրա ամենայն ստացվածքն ու գանձերը եկեղեցուն մնա, իսկ զոհաբերությունները եւ այլ հոգեւոր ընծաները եկեղեցականների վրա բաժանեն, ըստ արժանվույն:

Այս լինի իրավունքը եկեղեցու դատաստանների, եւ ոչ մեկը իր ընկերոջ իրավունքի վրա չբարձրանա, որպեսզի չմնա մեր անաչառ դատավորի՝ Հիսուս Քրիստոսի դատաստանի ներքո:

ԳԼՈՒԽ Բ
ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ԹԵ ԻՆՉ ԲԱՆԵՐ ԵՆ ՆՐԱՆՑ ՁԵՌՔՈՎ ԼԻՆՈՒՄ

Նախ շարադրեցինք վիճակն ու դատաստանները եպիսկոպոսների, որովհետեւ առաջինը լինելու պատիվը նրանցն է: Իսկ երկրորդը թագավորների դատաստաններն են:

Բայց դիտելի է, որ թագավորը Աստծով տնօրենություն ունի, իսկ մարդիկ՝ Տիրոջ անվամբ միայն:

Արդ, եթե պատահի, որ թագավորը մեռնի եւ ուստրեր ու դուստրեր ունենա, պարտավորություն է նրա ինչքերը հավասար բաժանել եւ զավակներից անդրանիկին տալ թագավորությունը, սակայն եթե որդիներից մեկը ավելի առաջադեմ եւ իմաստուն լինի՝ նրան գահին նստեցնել:

Իսկ եթե թագավորը եղբայրներ ունենա, թող նրանք նստեն գահին, քանզի իրավացի չի լինի, երբ մինչ եղբայրները կենդանի լինեն, որդիները նստեն գահին, այլ, որդիները գահին նստեն՝ եղբայրների մահից հետո միայն: Իսկ եթե արքան դուստր ունենա, նա կես եղբոր մաս վերցնի:

Իսկ եթե մեռնեն թագավորներն ու նրանց որդիները եւ թագավորի որդին որդիներ ունենա եւ դուստրն էլ որդիներ ունենա, ապա որդու որդիները աթոռը ժառանգեն եւ ոչ թե դստեր որդիները եւ որքան ծննդյամբ որդիներ ունենա կամ որդու որդիներ, դստեր զավակներից արքա չվերցնել, իսկ եթե վերցնեն՝ վերցրածները օտար թող համարվեն, եւ ոչ իսկական ժառանգորդ: Նույն բանը մեծն արքա Աբգարիոսը Պարսից տան թագավորության համար կարգադրեց... Սակայն որդիների մեջ անդրանիկները պատվվելու են՝ ընտիր վիճակ ստանալով, որ օրենքներն են հրամայում տալ...

Իսկ եթե թագավորը որդի չունենա, այլ դուստր, թագն իր դստերը թողնի ժառանգություն: Եվ օրենքներից հաստատուն վկայություններ ունենք, որ երբ մեռնողը որդի չի ունենում, իր դստերն է թողնում ժառանգությունը: Բայց դստեր մահից հետո, նրա ծնունդները օտար են համարվում եւ ժառանգություն չեն ստանում...

Իսկ եթե կտակ գրի արքան, ապա որքան ժամանակ որ կենդանի լինի, իշխանություն ունի իր կտակը փոփոխել, ըստ արժանվույն, քանի որ կտակը ետմահու է հաստատվում, ըստ առաքյալի հրամանի. այդպես վարվեց Կոստանդինոս արքան՝ կտակով թագավորեցնելով իր որդիներին, սահմանները հաստատելով լեռներով ու գետերով...

Եվ եթե ցեղի մեջ բնավ ժառանգ չլինի՝ հայրերից սկսած մինչեւ չորրորդ զարմը, այդժամ իշխանություն լինի թագը տալ օտարի, որը կրոնի կողմից օտար չէ... Բայց թագավորեցնելը առանց հայրապետի հրամանի չլինի:

Եվ եթե թագավորը կառուցելու լինի քաղաք կամ բերդ, կամ աշխարհագիր կատարելու լինի եւ կամ դրամ հատի, այդ ամենը ինքնիշխան կամքով կատարի, ըստ դատաստանի օրենքների:

Այլ իշխաններ պարտավոր չեն դահեկան կամ դրամ հատել եւ եթե նրանցից մեկը հատի, այդ թագավորի կամքով լինի:

Նույնպես եւ, մեծամեծ գետերի վրա կամուրջներ չինելը՝ թագավորների պարտավորությունն է կամ եթե որեւէ իշխան կառուցի, ըստ թագավորի կամքի լինի:

Իշխանները թագավորական զգեստներ չհագնեն, մինչեւ որ թագավորները չհրամայեն կամ պարգեւեն:

Արքայի առջեւ մեծամեծ իշխաններն էլ չնստեն, մինչեւ որ նա չհրամայի:

Արքայի սեղանին բացի հայրապետից ոչ ոք չնստի՝ առանց արքայի հրամանի:

Արքայի արքունիքում բացի հայրապետից ոչ ոք չնստի, իսկ արքան հայրապետի տանը չնստի՝ առանց հայրապետի հրամանի:

Չլինի թե քրիստոնյա թագավորը հարճեր պահի, որպես որ անօրեն արքաներն են անում, որովհետեւ արքան իշխանություն ունի հայրապետի հետ եկեղեցու բեմը բարձրանալ՝ Աստծո առաջ:

Արքան ամենայն իրողություն եւ գործ դատաստաններով վարի:

Եթե հարկադրաբար պատերազմի ելնի այլազգիների դեմ եւ պատերազմն ավարտվի, այդժամ սուրը /սպանդը/ վերանա, հրաման չտա այլ սպանդների, բացի հակառակորդ այլազգիների դեմ եղած հարկադրված պարագաներից:

Եվ եթե պաշարի այլազգիների քաղաքը, նախ նրանց մեկ անգամ, երկու անգամ, երեք անգամ խաղաղության կոչ անի, եւ եթե չկամենան խաղաղությունն ընդունել, բռնությամբ թող վերցնի քաղաքը, եւ նրանց, ովքեր քաղաքում չէին կամենում խաղաղություն՝ սրով սպանել տա, իսկ մյուսների վրա հարկ սահմանի, իսկ եթե սրանք էլ հակառակեն հարկ տալ, նրանց էլ սպանել տա:

Արքայի կողմից քաղաքը պաշարելու ժամանակ պարտավորություն չէ պտղաբեր ծառեր կտրելը:

Նրանք, ովքեր եթե առաջ, քան չարի գլուխ ելնելը, քաղաքի կամ բերդի իրավիճակը հայտնի դարձնեն թշնամուն, մատնվեն մահվան,

իսկ եթե նման մեկը գնով գնի իր անձը, փրկվի, սակայն նրա աչքերը հանեն, իսկ նրա կնոջն ու որդիներին վերցնեն որպես ծառաներ արքունիքին, իսկ մատնիչին արտաքսեն այլ աշխարհ՝ մերկ եւ անաչք: Իսկ եթե չարի հետ գլուխ ելնի, առանց ողորմության թող սպանվի. այս դատաստանները այլազգիների համար են, եթե /նման իրավիճակներ/ հանդիպեն:

Իսկ եթե քրիստոնյա լինի քաղաքը կամ բերդը անօրենների կամ քրիստոնյաների ձեռքը մատնողը, նույն դատաստանն անեն. կնոջը, որդիներին եւ ստացվածքը վերցնեն նրանից եւ նրա աչքերը խրատելով /հանելով/՝ նրան այլ աշխարհ ուղարկեն, սակայն չսպանեն նրան՝ հանուն Քրիստոսի մարդասիրության:

Եվ նա, ով տերունի գանձերը գողանա, եթե այլազգի լինի, հանեն նրա աչքերը կամ ձեռքը կտրեն, եւ նրա կնոջն ու որդիներին եւ ինչքերը նրա վերցնեն արքունիքի համար: Իսկ քրիստոնյա գողից վերցնեն գողացվածը եւ նրա տունն ու ինչքերը, որ ունի՝ իր անձի հետ ծախեն եւ գինը վերցնեն, սակայն նրա որդիներին ու կնոջը ազատ արձակեն:

Իսկ եթե այլազգիներից իր կամքով քրիստոնյայի սպանի, փոխարենը ինքն սպանվի, իսկ եթե ակամա սպանի, ապա կտրեն նրա աջ ձեռքը եւ սպանվածի գինն առնեն նրանից:

Իսկ մարդու գնի համար արժանվույն գին չկա, քանի որ Աստծո պատկերն ու գործն է Աստծո, եւ մեռելներին հարություն տալը միայն Աստծո կարողությամբ է լինում: Բայց չլինի թե որեւէ մեկը այս գինն համարի Հովսեփյան /Հովսեփին եղբայրները վաճառեցին՝ նախանձից դրդված. Ծ.Թ./ կամ գինը՝ Քրիստոսի /Հուդան Քրիստոսին մատնեց երեսուն արծաթով/՝ քսան կամ երեսուն, որովհետեւ այս վաճառողներն իրենք իսկ գողեր էին: Այլ գինը մարդու տարվա օրերի թվի համեմատ՝ երեք հարյուր վաթսունհինգ դահեկան ոսկի լինի, /Ծ.Թ. Մեկ դահեկանը, ըստ ուսումնասիրողների՝ հավասար է 9 գրամ ոսկու, իսկ երեք հարյուր վաթսունհինգ դահեկանը հավասար է այսօրվա մոտ 16.000 ԱՄՆ դոլարին, իսկ, ըստ այն ժամանակվա ոսկու հանույթի դժվարության, հաշվվում է մոտ՝ 21.000 դոլար/:

Այս գինը լինի ըստ մարդու բանական շնորհի. օրինակ, /սպանված/ քրիստոնյայի համար կրկնակին լինի եւ ըստ նրա աստիճանի ավելաց-

վի, իսկ այլազգիների համար՝ երեք մասից մեկը լինի, հարյուր քսան եւ երկու դահեկան եւ երկու քարտեզ, քանզի այլազգիները չունեն շնորհը մկրտության ավազանի: Ապա, եթե սպանողը կարողություն չունենա հատուցել, այդժամ վաճառեն հենց սպանողին եւ գինն արյան տիրոջը տան, իսկ սպանողի տունն ավար տրվի արքունիքին:

Եթե քրիստոնյան իր կամքով այլազգիի սպանի, արյան գինն առնեն նրանից՝ հարյուր քսան եւ երկու դահեկան, եւ եթե սպանությունը ակամա է եղել, ապա՝ վաթսուն եւ մեկ դահեկան, եւ գինը արքունիքը վերցնի, բայց երեք մասից մեկը տա սպանվածի յուրայիններին:

Իսկ եթե քրիստոնյան իր կամքով քրիստոնյայի սպանի, գինը արյան տիրոջը տան եւ արքայի տուգանքն իր հերթին, ըստ սպանողի կարողության առնեն: Եվ թեպետ սպանողն, ըստ օրենքների մահվան է արժանի, այլ թող նրա ձեռքն հատելով՝ նրան ապաշխարության մեջ դնեն, իսկ եթե աղքատ է, յուրայիններով վաճառվի իր ազգին եւ հատուցում անի: Բայց երբ ակամա լինի սպանությունը, ապա սպանողից կես գին առնեն եւ տան արյան տիրոջը եւ արքային էլ, ըստ կարելվույն տուգանք վճարեն, սակայն սպանողի ձեռքը չհատեն: Այսպիսի բաներում թագավորն անի դատաստան, իսկ այլ դատաստանները թողնի դատավորներին, իսկ ծածուկ մեղքերի դատաստանները թողնի բոլոր հոգեւոր առաջնորդներին:

Չլինի թե իշխանները սպանողին սպանեն, առանց թագավորի հրամանի, իսկ գողերին /պատժով/ խրատելը իշխանների իրավունքն է:

Ազատները առանց իշխանների հրամանի իշխանություն չունենան գողերին խրատել:

Եթե պատահի, որ թագավորն իր զորքով ավար առնի, ապա, երբ ավարն առնելով դառնան, գտնված ոսկին արքայինը լինի: Բայց երդմամբ չէ, որ ոսկին վերցնեն, այլ ժողովում քարոզ կարդալով, իսկ եթե որեւէ մեկն հետո գտնվի, որ թաքուն պահել եւ չի տվել, ապա, մեկի փոխարեն՝ յոթնապատիկը պիտի տուժի: Բայց թագավորն այս ստացվածքներից տասից մեկը կաթողիկոսին տա:

Գերիների եւ ավարի կեսը արքայինը լինի, իսկ մյուս կեսը՝ զորքերին: Իշխաններից յուրաքանչյուրը նույն բաժինն անեն եւ տասանորդը թող տան եկեղեցուն:

Իսկ եթե զորքերի հետ արքան չլինի, այլ միայն իշխանները լինեն իրենց զորքերով, ապա ոսկին կրկին արքային տրվի եւ գերիների եւ մնացած ավարի տասանորդը նույնպես արքայինը լինի, իսկ եկեղեցուն հիսունից մեկը տրվի, ըստ օրենքների /Թվեր, ԼԱ-30/:

Փողերը եւ դրոշները պարտավորություն է գավառի եւ բերդի վրա իշխող իշխանին տալ:

Վայել չէ թագավորի եւ իշխանի համար գողեր եւ ավազակներ ունենալ, այլ միայն լրտեսներ, որ հետախույզներն են:

Զորքերն ու իշխանները, եթե թշնամիների մեջ արքայի հրամանով ավարելու ելնեն, անկասկած, ըստ պատահման ավարի, ապա ավարի եւ գերիների կեսն արքայինը լինի, իսկ կեսը զորքերինը: Սակայն եթե առանց արքայի հրամանի երթան եւ ավարեն, ապա երկու բաժինը գնացողինը լինի, որովհետեւ իրենց կամքով ի մահ գնացին: Այս, ըստ սովորույթների ենք ասում եւ ոչ գրվածքների հրամանով, որովհետեւ, երբ պատերազմի մեջ զորականը մեռնում է, անպարտ է նրան պատերազմի առաքողը: Իսկ եթե գողին առաքեն ավարի եւ սա մեռնի, ապա արյան պարտապանը առաքողը լինի: Իսկ եթե գողն իր կամքով, որպես թե ավարի՝ գնա գողության եւ մեռնի, նրա արյունը նրա գլխին մնա: Եվ եթե արքան կամ իշխանը որեւէ մեկին ուղարկեն եւ սա բռնվի, ապա նրան փրկագնի նա, ով նրան ուղարկեց: Իսկ եթե իր կամքով, առանց հրամանի է գնացել ու բռնվել, ապա ինքն էլ իրեն թող փրկագնի:

Զորականը եթե պատերազմի ժամանակ որեւէ մեկին բռնի, ապա գերյալի զգեստը, զենքը եւ ձին՝ նրանը լինի, իսկ զրահը՝ թագավորինը:

Ոսկի, ակունք եւ կերպաս՝ ամենայն ձեւ ու տեսակներով, որ ավար է առնվել՝ թագավորների բաժինն է, իսկ արծաթն ու մարգարիտը՝ իշխանների, նույնն եւ ասրեղենը պատվական, իսկ անարգ ասրեղենը եւ՝ կտավը, եւ՝ պղինձը, եւ՝ երկաթը, եւ այլ այսպիսի բաները՝ զորքերինը լինեն:

Իսկ գավառների ու ազգերի հարկերը թագավորները եւ իշխանները արդարությամբ վերցնեն եւ ոչ ավելի, քան առաջինների սովորությունն էր, որովհետեւ այդ ամենի համար հաշիվ են տալու Աստծուն, որովհետեւ իրենք Աստծուց կարգվեցին՝ աշխարհի պահպանության եւ փրկության եւ ոչ կործանման համար:

Եվ արդ, այսպես լինի: Անդաստաններից հինգերորդ մասն առնեն, որպես որ օրենսդրվեց Եգիպտոսի համար, որ մինչեւ այսօր կոչվում է հնգյակ, որովհետեւ այն ժամանակ, երբ փարավոնի երկիրը պտուղ տվեց, այդժամ էլ հինգերորդականը կարգվեց: Հայտնի է, որ առաջ հնգյակ չէր, այլ՝ Հայրենի կտուր եւ հաշվով արծաթ սակավ ունեին: Սույնպես եւ այժմ լինի, որովհետեւ արծաթագին անդաստանից, եւ այգուց եւ դրախտից, սրանցից հնգյակ չեն առնում, նմանապես եւ ջրաղացներից եւ տներից եւ խանութներից: Այլ, եթե բնակիչները արվեստավորներ են, իրավամբ այն լինի, որ ինչ պարտավոր են, այդքանը տան: Սակայն գլխահարկը քրիստոնյաների համար չէ, այլ՝ միայն այլազգիների:

Ջրարբի արոտավայրերը, ըստ հնգյակի լինեն, իսկ դրախտներից՝ տասանորդ առնվի, որովհետեւ հողն է միայն թագավորինն ու իշխանինը եւ ոչ ջուրը: Սույնպես լինեն այգիները եւ ծառաստանները:

Այսպես եւ՝ շաբաթվա յոթ օրերից մեկը՝ թագավորների եւ իշխանների համար շինականները աշխատեն:

Առանձին այլ հարկ թագավորի կամ իշխանի կողմից չդրվի, բացի հնգյակից:

Մեկ կովի համար մեկ լիտր յուղ հարկվի:

Ոչխարները եւ գառները՝ տասանորդեն:

Ձիերի, ջորիների եւ էշերի համար հարկ չլինի եւ միայն պատահմամբ սրանք ծառայության դրվեն տերունական գործերում:

Ի տարեմուտս ըստ կարողության ծառայություն անեն թագավորի եւ իշխանի համար, եւ նաեւ տոներից առաջ: Ծանր պարտավորություններ մի դրեք քրիստոնյաների վրա, որովհետեւ բազում սահմաններ ու կարգեր անիրավ սովորությունների հետեւանք են:

Առանց դատաստանի եւ բազում քննություններ կատարելու չտուգանվեն նրանք, ովքեր տերունի հարցերում հանցավոր են դուրս բերվել: Իսկ այլոց ճշմարիտ հանցավորության չափը՝ դատավորները վճռեն:

Երբ թագավորը իշխանին գավառ է տվել եւ իշխանը այնտեղ բերդ չլինի թագավորի հրամանով, կամ գյուղ, կամ ագարակ, կամ հոգետուն եւ կամ այլ, ինչ նոր կառույց որ չլինի, նրա ժառանգությունը համարվի՝ ազգե-ազգ: Սույնի պես եւ իշխանների ձեռքով տրվածով՝ ազատները լինեն, եւ ազատների ձեռքով՝ շինականները, երբ ավերակները

վերակառուցեն կամ հողից մայրիներ հատեն, ստացվածքները նրանցը եւ ետմահու էլ՝ նրանց որդիներինը լինի:

Նոր շինված տեղերում ազատություն լինի, մինչեւ որ ամենայն բանով հաստատվեն: Երբ քաղաք ու բերդ է կառուցվում, եթե արքունի դանձը պակասի, կառույցն ավարտելու համար՝ առհասարակ ամենքը օգնեն, թե գյուղացիները, թե քաղաքացիները:

Քաղաքացիները առավել պատվվեն, քան գյուղացիները եւ գյուղացիներն առավել, քան ագարակցիները: Սույնի պես լինի բերդերի եւ ավանների համար:

Հարկավոր եւ օգտակար արվեստներն են՝ հողագործությունը, դարբնությունը եւ հյուսնությունը. եւ հողագործելը շատերի արվեստն է: Առավել են պատվվում երկաթագործն ու փայտակոփը: Իսկ առավել՝ բժիշկներն են պատվվում: Իսկ գերագույն պատիվը թագավորների եւ ամենքի կողմից՝ վարդապետներին տրվի, որովհետեւ բժիշկ են եւ հայր հոգիների:

ԳԼՈՒԽ Գ
ՎԱՆԱՀԱՅՐԵՐԻ ԵՎ ԱՆԱՊԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կարգերը ոգիների դատաստանների եւ հրահանգները՝ դրված են բարության հայրերի եւ եղբայրներ՝ սուրբ Սահակի, սուրբ Բարսեղի կողմից: Բայց մանավանդ մարմնատեսակ դատաստանների օրենքների վրա, որ նրանք դրեցին, որոշ չափով հավելում ենք անում՝ անհրաժեշտությունից ելնելով...

Եվ արդ, այսպես սկսենք: Որովհետեւ թագավորների եւ իշխանների եւ ամենայն հավատացյալների համար վանք շինելը ոչ թե մարմնավոր, այլ հոգեւոր հույսի համար է, ուստի եւ, այդ պատճառով պարտավոր չէ, որ նրանց որպես ժառանգություն մնա...

Եթե վանքին հայրապետ է նշանակվում, ապա վանքում եղած ամենայն ինչ գրով հաստատված՝ նրան տան, նույնպես եւ հայրապետը այդ ցուցակին իր նվիրատվություններն էլ ավելացնի, որպեսզի եթե պատահի, որ վանքից դուրս գա, ապա ինչ որ հանուն եկեղեցու է տվել, այնտեղ թողնի:

Իսկ հայրերի մահվան պարագայում, նրանք չլինի թե հայրապե-

տությունը ժառանգություն դարձնեն իրենց ազգ ու տոհմին, միայն եթե նրանց մեջ լինի, բարի վարքով մեկը եւ այդժամ, հաճությամբ հոգեւոր եղբայրների, նստի այդ պաշտոնում...Ապա, եթե վանահոր ազգուտոհմի մեջ չլինեն արժանավորներ, հոգեւոր իմաստուն եղբայրների միջից վանահայր ընտրվի:

Չլինի թե իշխանները կաշառք վերցնելով վանահայր կարգեն առանց հոգեւոր եղբայրակցության կամքի: Եվ եպիսկոպոսները լինեն նրանց կարգողները եւ կարգեն իրավունքներով, ոչ թե կաշառքներով:

Եվ քանզի վանքում տարբեր գործեր կան եւ գործեր էլ, որ ավելի են աշխատությամբ, սակայն հայտնի է, ամենքի հույսն ու հատուցանողը Քրիստոսն է: Բայց եթե գործավորների մեջ կարճամիտ մեկը հանդիպի, նրան ավելի վարձ տրվի՝ իր գործի ծանրության համար, որպեսզի այդ պատճառով եղբայրների մեջ նվազություն չլինի: Սակայն եթե այդ պատճառով տրտունջ լինի, դատաստան արվի եւ տրտնջացողը այդ գործը կատարի: Եվ այս, արտաքին կանոնը սուրբ Բարսեղի կողմից եղավ՝ կարճամիտների պատճառով:

Բայց գործավորները եթե վայրապարությամբ որեւէ անոթի վնաս հասցնեն, իրենք էլ վնասը վճարեն, իսկ եթե պատահմունքով եղավ՝ չվճարեն:

ԳԼՈՒԽ Դ
ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվ վարդապետները լինեն նախապես Հին եւ Նոր կտակարանների իրավունքների եւ կանոնական հրամանների մեջ կրթված: Երկուերեք վարդապետներ նույն տեղում կոչվեն՝ ի պատիվ հրամանի, եթե անգամ պատահի, որ միեւնույն վարդապետին աշակերտած լինեն: Եվ եպիսկոպոսի, եւ առավել՝ հայրապետի կամքով միմյանց հետ հաշտ լինեն, նաեւ իշխանի հետ եւ բարիով գործեր կատարեն, եթե՝ ոչ, ապա, ըստ օրենքների, երկու կամ երեք վկաներով այդ բանն հաստատվի եւ մեղավորին խրատեն կամ եթե հարկ է՝ լռեցնեն: Իսկ օրենքներով կարգված վարդապետին պատվել, որովհետեւ առաքելական աշխատությամբ եղածն է հաղորդում եւ շնորհները մարգարեների, ուստիեւ, այս բանի համար՝ ընտրյալ է կոչվում:

Իսկ նախապես մեկ վարդապետից կրթվածները, որ ամբարտավանել էին, իրավունք լինի դատաստանի՝ նրանից ուսուցանվածներին երկրորդելով, եւ կամ վերջիններս, երբ զղջալով արժանավոր ապաշխարությամբ ետ դառնան, այդժամ իրենց վարդապետի հրամանով վերստին վերականգնվեն:

Եվ նա, ով առանց իր վարդապետի կամքի է այդ պաշտոնին կոչվել, իր չզղջալու համար, պատիժներով էլ հատուցումն ստանա եւ զղջա, ի դեպ՝ ապաշավանքներով՝ թողություն առնելով նրանից, առանց որի կամքի, ինքնակամ առաջ էր գնացել:

Եվ եթե պատահի, որ վարդապետը Աստծո խոսքերով կապել է /կապել- հավատով եւ աղոթքով արված խափանման միջոց, որ հոգեւորականները Տիրոջ տված իշխանությամբ՝ իրավունք ունեն միաբանությամբ կիրառել Ծ.Թ./ աշխարհականներին կամ վանականներին կամ եկեղեցականներին, մեկ այլ վարդապետ նրա դրած կապը չլուծարի, իսկ թե ախտավորությամբ կամ տգիտությամբ է այդ կապն արվել, ապա միջնորդ լինել, որ ուղղվի, հաստատելով իրավացին, առանց հակառակելու եւ եթե չանսա, կապելու փոխան՝ ինքը կապվի, մինչեւ որ զղջա: Ապա եթե իրավացի լինի եւ այլ մեկի միջնորդությունը չանսա, այդժամ դատաստան լինի եւ նա կապվելու արժանիին, որ տգիտությամբ էր վարվել կամ ամբարտավանությամբ՝ կապի, մինչեւ նրա զղջալը, եւ վկաների առջեւ կապելու պատճառները ցույց տա եւ նրան պատասխան տալու պարտականության մեջ թողնելով, ինքն անպարսավանք մնա:

Եթե պատահի, որ միեւնույն եղբայրանոցի մեջ երկու կամ ավելի վարդապետ լինեն, նրանցից ով որ առաջադեմ լինի, ըստ առաջնորդների հրամանի՝ նրան կոչեն գլուխ եւ ավագ, որով բարեկարգություն կլինի նրանց մեջ եւ գայթակղության պատճառ չի լինի... եւ եթե մեկն ընդվզի սահմանված կարգի դեմ, եղբայրների միաբանությամբ դատաստան լինի եւ ընդվզողը նրանց միջից հեռանա:

Իսկ վարդապետները միմյանցից աշակերտներ, առանց գրի եւ իրենց կամքի չվերցնեն, ապա եթե քամահրելով մեկն ուրիշի աշակերտին առանց այս կարգի վերցնի, դատաստան լինի/ աշակերտը դարձվի իր վարդապետին/, եւ որքան որ նրանից ուսուցանված լինի, այդքան վերստին նստի եւ ուսուցանվի եւ կամ զղջալով՝ նրա կամքով մնա եւ նա ընդունի:

Ավագ վարդապետի ծառայողական վիճակը կաթողիկոսի եւ եպիս-
կոպոսի կամքով լինի... Եպիսկոպոսն ինքը վարդապետի միաբանու-
թյամբ ամեն մի կարգ գործի: Եվ այս եթե որեւէ վարդապետ չանսա,
դատաստան լինի նրան՝ եպիսկոպոսի կամ ավագ վարդապետի կող-
մից, նրանց միաբանությամբ:

Եվ նրանցից, ովքեր արդեն հրամանով աստիճանակարգի են կոչ-
վել, արժան է պահանջել տեղեկություն նրա ուսման մասին, թե որ-
տե՞ղ, ե՞րբ եւ ո՞ւմ առաջնորդությամբ ուսանեց: Եվ այս այն բաների
համար է, որովհետեւ շատերն են շրջում անգիտանալով ուսման հար-
ցում, որովհետեւ չլինի թե պատրանքով անկատարներին պատիվ
տրվի, որոնք իրենց խակության պատճառով բազում վնասներ են
գործում: Այդ իրենց իրավունքն է թեպետ, սակայն ուշադրությամբ
ընտրությունը կատարվի: Չլինի թե իրենց կամքով առաջ գան, այլ
իրենց առաջադիմությամբ, երկյուղով, իրենց հոգիները բարությամբ
կառուցելով եւ այլոցից պիտանի ընդօրինակումներ վերցնելով, հոգով
շարժվելով, այդպես՝ մաքուր խղճմտանքի մտքերով կոչվեն Բանին ի
սպասավորություն:

Եվ շտապողների համար իրավունք լինի եւ այս, որ այլոց աղաչեն,
որպեսզի իրենց փոխարեն Բանի առջեւ ծառայության ելնելու պա-
տիվն անեն, իսկ իրենք լռեն, մինչեւ իրենց ախտերից նախ բժշկվեն,
որպեսզի չլինի թե իրենց հիվանդ հոգիներով շատերին ախտավորեն.
եւ այս նկատի առնել նրանց դատաստաններն անելիս: Եվ իրավացի
չի լինի, որ նրանց վիճակվի ամեն տեղ ուղարկել, այլ եթե իրենց
գավառները կամենան գնալ, թող գնան, իսկ թե այլոց էլ վիճակվի
պանդխտանալ, ապա եպիսկոպոսների միաբանության հրամանով այդ
լինի, եւ այս առաքվածները շրջելով՝ բարեկարգողներ եւ վկայողներ
լինեն: Իսկ անգործունյա շրջողները, վարձի ետեւից ընկածները եւ
նրանք, ովքեր ցանկանում են ամեն մեկի վրա իրենց անձերը գիտուն
ցույց տալ, սրանք եղան մշակներ որովայնի եւ այլ ախտերի, եղան
բանավաճառներ եւ ճշմարիտ վկայողներին պարսավանքով դիտողներ.
այնպիսիներին թող լռեցնեն իրավացի դատաստաններով, նրանցից
վերցնելով հովվական գավազանը՝ տան ցույը թափառաշրջիկի:

Եվ եթե պատահի, որ վարդապետը հյուր լինի մեկ այլ վայրում, ուր
վարդապետ կա, չլինի թե առանց տեղի վարդապետի մեծարանքի եւ

թույլտվության խոսք ասի, այլ, ըստ տեղի սովորության, նախ թող տե-
ղի վարդապետը խոսի եղբայրների հետ, ապա, ըստ ամենքի կամքի կամ
պահանջի՝ հյուրը խոսի: Եվ եթե վկայված մեկը հյուր լինի, եւ բնական
է, որ նախ նրա կամքով լինի, նրա կամքով խոսեն, սակայն իր կամքով
չշրջի՝ իրեն շրջեցնողին ամաչեցնելով, կամ յուրայիններին նրա առջեւ
քամահրել տալով: Բայց եթե այս սահմանները լուծարի եւ հանդգնու-
թյամբ, առանց իրեն խնդրանք ուղղելու խոսի, դատաստան լինի եւ նրան
իր անպատվության համեմատ հարկ է դուրս հանել եւ ետ դարձնել:

ԳԼՈՒԽ Ե
ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվ չլինի թե քահանաները ժառանգություն վերցնեն Քրիստոսի
ժողովրդին, որպես տեսնում ենք, որովհետեւ դուստրերին ժառանգու-
թյան բաժինը տալիս են Քրիստոսի արյան գնով: Պարտավորություն
է եպիսկոպոսին՝ այդպիսիի ձեռքից վերցնել Քրիստոսի հոտը եւ տալ
նրանց ձեռքը, որ Տիրոջով են տերունականը հովվում եւ պատասխա-
նել նրանց նաեւ իրավունքներով, թե. «Որոնց որ քո սրով գերեցիր եւ
գնով քո գնեցիր, նրանց էլ վերցնես քո ժառանգության մեջ, Տե՛ր»:
Եվ չլինի թե Քրիստոսի չարչարանքներով գնվածներին ու փրկվածնե-
րին որեւէ մեկն իրեն ժառանգություն համարի, իսկ եթե հանդգնի՝
լռեցնել նրան եւ քահանայությունից հեռացնել:

Եվ եթե ժողովրդի մեջ ոմանց պատահի, որ տեղափոխվեն այլ թա-
ղերում բնակության, տեղափոխվողն այն առաջնորդի ծուխը դառնա,
որ թաղում որ բնակության տեղափոխվեց եւ ոչ թե առաջինի, քանի
որ ուղղափառների հովվությունը ամեն տեղ էլ մեկ ու միաբան են:

Քահանաների ազգակիցների մեջ աշխարհականներ կան, որ երբ ե-
րեցը մեռնում է, յուրայինները շարունակում են նրա ծխից ուտել կամ
իրենց յուրայիններից մեկին են երեց նշանակում, որ մեծ անիրավու-
թյուն է: Արդ, այդպիսիների համար պարտավոր է, եթե սարկավագներ
են՝ քահանաներ դառնալ, իսկ եթե աշխարհականներ են, նրանց ծխից
ուտելը խափանվի, իսկ եթե հանդգնեն, ապա եպիսկոպոսի կողմից
նզովվեն, մինչեւ որ զղջան: Իսկ վանքերի քահանաներին պատշաճ չէ
ծուխերից ուտող երեցներից մաս առնել:

Աշխարհականներից եթե որեւէ մեկը մատաղ անի, իր քահանայի բաժինը տա՝ գլուխը եւ... նաեւ մորթին եւ չլինի թե չարություն անելով՝ այլ քահանայի տա, ապա եթե այդպես անել հանդգնի, եպիսկոպոսը կրկին նրանից վերցնի եւ տա նրա քահանային: Եվ եթե ժողովրդականներից որեւէ մեկը նախատի քահանային կամ հարվածի նրան, ապա արժան է նրա ձեռքը կտրել, որով հարվածեց, եւ կամ հարվածողը իր ձեռքը չկտրելու համաձայնությունը գնի եպիսկոպոսից, սակայն բազում ապաշխարություններով միայն թողություն լինի նմանին:

Քահանան, երբ իր անձնական վրեժից դրդված բանադրի որեւէ մեկին, ինչ էլ պատճառը եղած լինի, թող որ ինքն իր անձը դատապարտի եւ զղջա, ապա պարտավոր է եպիսկոպոսի խրատով ապաշխարել: Եթե մեկը /վրեժից դրդված/ իր կապածը չարձակի, նրան եպիսկոպոսը կապի, մինչեւ որ նա զղջա եւ արձակի նրան, ում կապեց: Սակայն նա, ով կապվեց, թե իր կապվածությունը իրավացի լինի, թե՝ անիրավ, կապված է մնում, մինչեւ որ կապողը արձակի:

/Ծ.Թ. Կապելը՝ Աստծո խոսքով եւ Տիրոջ իշխանությամբ տրված եկեղեցու շնորհներից մեկն է, որ կապվածին /որի վիճակը հոգեւոր առումով համահավասար է «խափանման միջոցի» կամ՝ բանտարկյալի կարգավիճակին/ դարձնում է Տիրոջ Խոսքերին հատուցման պարտապան: Ուստիեւ, կապելու իշխանությունը, հանիրավի տանջանքների տեղիք չտալու համար, հարկ է միայն կատարյալ արդարությամբ գործադրել: Տես գլուխ Դ-ն եւ Առաքելական կանոններ, գլուխ ԻԳ/:

ԳԼՈՒԽ Զ
ԱՅՐ ԵՎ ԿՆՈՋ ԱՆԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ԵՐԲ ԱՅՐԸ ԱՆԿԱՐՈՂ Է ԼԻՆՈՒՄ ԿՆՈՋԸ ԿՈՒՍՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՆԵԼ, ԱՅՍ Է ԴԱՏԱՍՏԱՆԸ

Այր եւ կնոջ համատեղ ապրելու մասին ժամանակին արդեն ցույց է տրվել ամենայն պատշաճությամբ, թե որպես որ ստեղծման ժամանակից նախաստեղծը սահմանեց, թող ամեն բանի մեջ այրն իշխան լինի կնոջ վրա, ինչպես այլեւայլ բաներում, նաեւ ամուսնության պարագայում:

Եվ եթե պատահի, որ այրը չկարողանա իր կնոջը կուսությունից հանել, եթե կինը կամենա, որ միասին ապրեն, թող միասին ապրեն, իսկ եթե ոչ, թող բաժանվեն եւ կինն իր բոլոր ունեցածները հավաքելով հեռանա եւ իր համար նոր այր առնի, ում որ ինքը կկամենա: Բայց չլինի թե այս բաների համար այր մարդուց տուգանք վերցվի, որովհետեւ ախտն իր կամքով չի եղել եւ /բաժանվելիս/ ամենայն ինչ տալիս է կնոջը, բացի այն հանդերձից, որ պատրաստել էր մինչեւ հարսանիքը՝ իրենց երկուսի համար: Եվ եթե կինն իր հետ անասուններ բերած լինի, ապա որքան գլուխ որ բերել է, այդքանը եւ աճ տված կեսը վերցնի, իսկ կեսը այրին թողնի՝ աշխատության ու ծախելու համար:

Եվ օժիտն ու ծախսերը, որ միմյանց համար արել են երկու կողմերի ազգականները, թող չհիշվեն եւ չհիշվի նաեւ ծախսը հարսանիքի:

Սակայն այրն իր հավանությամբ նոր կին թող առնի, կին, որ այլ մի այր արդեն ունեցել է եւ որի այրը մեռել է: Նմանին առնի:

ԳԼՈՒԽ Է
ԱՅՐ ԵՎ ԿՆՈՋ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԶԱՆԱԶԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե պատահի, որ այրն իր կնոջը տեսնի դիվահարության հիվանդության մեջ, արժանի է, որ քննություն կատարվի, թե արդյո՞ք մինչեւ պսակը նման հիվանդություն չուներ, որ ծածկվել էր կնոջ ծնողների խաբեությամբ: Նման պարագայում ծնողները կնոջը տանեն իրենց տուն, մինչեւ բժշկվի եւ բոլոր տեսակի ծախսերն իրենք վճարեն, մինչեւ որ բժշկվի, ապա ետ դա իր այրի մոտ, եթե այրն ինքը կամենա: Իսկ եթե այրը չկամենա, իշխանություն ունենա կնոջն արձակել եւ այլ կին առնել: Եվ եթե երեխաներ լինեն, ապա թող, որ երեխաները հոր մոտ մնան, իսկ կինը հեռանա իր ինչքերով, իսկ այրը հրամանով կնոջ՝ նոր կին առնի, բայց ըստ իր կարողության հոգա նաեւ նախկին կնոջ հոգսերը /եթե դիվահարությունը այրի տանն է եղել/: Իսկ եթե կինը ծնողների տանն է դիվահարվել, ապա այրը առանց կնոջ հրամանի նոր կին առնի, առանց յոթ տարիների կանոնական սպասումը լրացնելու: Այս դեպքում կինն հեռանա իր բոլոր ինչքերը տանելով, իսկ հարսանիքի ժամանակ միասին կատարված ծախսերը, հանդերձանքները թող որ չհիշեն: Նույն դատաստանը լինի, եթե այրն

ունենա կին դողէրոցքով կամ ծաղկախտով հիվանդ եւ այդ հիվանդու-թյունը պսակից առաջ եղած լինի, որ թաքցվել է կնոջ ծնողների կողմից:

Նույնպես եւ, եթե այրն այդպիսի հիվանդություններ ունի, կինը իշխանություն ունենա թողնել իր այրին եւ այլ այրի կին լինել: Իսկ եթե պսակից հետո են այսպիսի ախտեր հանդիպում, պարտավորու-թյուն չէ միասին քնել եւ թող այր ու կին հոգան միմյանց մասին եւ դիմեն հոգեւոր ու մարմնավոր բժիշկներին՝ բժշկվելու եւ համբերեն, իսկ եթե այդպես չանեն, այրն ու կնոջը բաժանեն: Եվ նրանցից, ով որ առողջ է, ուրիշի հետ ամուսնանա, սակայն մինչեւ մահ հոգան մի-մյանց կյանքի ապահովության համար: Եվ եթե պատահի այրի կամ կնոջ համար երկարատեւ, անբժշկելի հիվանդություն, իրավունք չունենան միմյանց արձակել, եւ միայն միմյանց խղճալով կարող են միմյանց արձակել, եւ նրանցից, ով որ առողջ է, կարող է ամուսնա-նալ՝ ինչքերը հիվանդին տալով եւ մինչեւ մահ հոգան միմյանց, բայց միմյանց ծնողների տանը եւ ոչ թե երկուսով մի տան մեջ մնալով:

ԳԼՈՒԽ Ը
ԱՅՐ ԵՎ ԿՆՈՋ ԳԵՐԵՎԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Եթե տղամարդու տնից կնոջը գերեվարեն, ապա այրն իր կնոջը ետ գնի:

Եվ եթե կինը խռովելով իր ծնողների տուն գնացած լինի եւ այն-տեղից նրան գերեվարած լինեն, նրա այրն ու կնոջ ծնողները թող միասին ետ գնեն նրան: Նույնը լինի նաեւ այրի համար, եթե նրան գերեվարեն: Եվ երբ նրանցից մեկը գերեվարված լինի, թող որոնեն նրան յոթ տարիներ, եւ երբ այդ ժամանակում չգտնեն, թող որ նա, ով ազատ է մնացել՝ ամուսնանա՝ գերվածի ծնողների հրամանով: Եվ եթե իրեր են մնացել, երկու մասի բաժանելով, գերյալի մասը տա նրա ծնողներին:

ԳԼՈՒԽ Թ
ԱՅՐ ԵՎ ԿՆՈՋ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կան դեպքեր, երբ այրն ու կինը ախտավոր մի ատելությամբ ատում են միմյանց՝ առանց պոռնկության պատճառի: Եթե պսակից առաջ էր ատելությունը եւ այրն ատելով կնոջը՝ կամենա նրանից

բաժանվել, եպիսկոպոսը բաժանի՝ բազմաթիվ խրատներ տալով եւ սրանց բաժինքը այնպես լինի, որպես որ դիվահարների համար է կարգվել: Եվ ըստ դատաստանի կանոնների, այրը իշխանություն չունի կին առնել, իսկ կինն իր համար այր առնի, սակայն ինչքերի երեքից մեկն, ըստ հարկ վճարելու կարգի՝ տուգանք տա, քանի որ օրհնության /առաջին/ պսակն անարգեց:

Նույն դատաստանը նաեւ կնոջ համար լինի /եթե կինն է բաժան-վում/, ապա իշխանություն չունենա այր առնել, սակայն եթե զղջալով այր ու կին միմյանց թողություն տան, ապա իրավունք ունենան ամուսնանալ: Բայց ամեն ինչ եպիսկոպոսի հրամանով լինի: Իսկ նման պարագայում տուգանք գանձելու եւ ապաշխարություն իրագործելու մասին գրված են սուրբ կանոններում: Իսկ եթե պսակից հետո ատեն միմյանց եւ արդեն որդի ունենան, ապա խրատներով, տանջանքներով եւ մեծ ժամանակամիջոցում բաժանվեն: Եթե պատճառը կնոջից է, նրա ինչքերի կեսը որպես տուգանք տրվի այրին, իսկ եթե պատճառն այրից է՝ նույն կերպ վարվեն եւ երկուսն էլ իշխանություն չունենան ամուս-նանալ, բացի միմյանց այդ մասին հրաման տալուց հետո միայն:

ԳԼՈՒԽ Ժ
ՇՆԱՅՈՂ ԱՅՐ ԵՎ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ

Եթե մեկի կինը չնանա, նրա այրը թող նրան արձակի եւ այլ կին առնի: Սակայն եթե ամուսնուն հաճո լինի, թող միասին բնակվեն, այս է բարին, քանի որ պարտավոր է իր կնոջ համար:

Եվ ինչքերը վերադարձնի համաձայն իններորդ կանոնի, որպես որ գրեցինք՝ ատելության պատճառով:

ԳԼՈՒԽ ԺԱ
ԱՄՈՒԼ ԱՅՐ ԵՎ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ

Ամուլ կնոջն իր այրից մի՛ բաժանիր, քանի որ որդի տալն Աստծուց է կախված: Իսկ եթե հիվանդություններն են պատճառ, բժիշկների միջոցով թող առողջանա: Իսկ թե ժառանգորդ չունենալու պատճա-ռով կինն իր ամուսնուն տրտում գտնի, ինչպես Աբրահամի եւ Սառա-

յի օրինակում, բաժանությունը կինն առաջարկի: /Ամուսինը նոր կին առնի/, բայց չլինի այնպես, որ ամուլին ու ծննդականին ամուսինը միասին պահի կնության: Նույնպես, եթե այրից լինի ամլությունը, վարվիր ըստ նույն այս կարգի. սպասման ժամանակի սահմանը յոթ տարի լինի, եթե պակված աղջիկը տասնհինգ տարեկան է, իսկ կտրիճինը՝ տասնութ: Սակայն եթե տարիքներն ավելի պակաս են, ապա համբերության տարիների թիվն ավելանա:

Իսկ եթե կինը այլ այր չկամենա առնել, նրա այրը նրան այլ տան մեջ պահի /առանց նրան մերձենալու/ եւ հոգա նրա մասին՝ մինչեւ նրա մահը եւ իր ինչքից կնոջը տա՝ նյութապես լիացնելով նրան, եւ ինքն այլ կին առնի՝ իր կնոջ հրամանով: Բայց եթե առաջուց գիտեր կնոջ ամլության մասին եւ տոփանքից են միմյանց առել, նրանց բաժանություն չլինի, մինչեւ մահ:

ԳԼՈՒԽ ԺԲ
ԹԵ ԿԻՆԸ ԻՆՉ ՊԱՏՃԱՌՆԵՐԻՑ ԵԼՆԵԼՈՎ ԿԱՐՈՂ Է ԻՐ ԱՅՐԻՑ ՀԵՌԱՆԱԼ

Այն ժամանակ, երբ կինը տեսնի, թե իր այրը արվագիտության կամ անասնապղծության մեջ է կամ անօրինաբար պղծում է կամ պղծվում, կամ մարդասպանության մեջ է, այս պատճառներից ելնելով կինը կարող է թողնել իր այրին եւ ուրիշի կինը լինել: Եվ ինչքերի կեսը կինը վերցնի, եթե ամուսնուց հեռանա:

ԳԼՈՒԽ ԺԳ
ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՅՐ ԵՎ ԿՆՈՋ ՄԻՄՅԱՆՑ ԹՈՂՆԵԼՈՒ ԵՎ ՎԵՐՍՏԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Գ խմբագրությունում կրճատումը մեծ լինելու պատճառով՝ օգտվում ենք Ա խմբագրությունից/

Եթե կինը ատելությամբ իր այրից հեռանա եւ այլ մեկին կին լինի, եւ պատահի, որ իր առած այրը մեռնի, ապա դառնա իր առաջին այրի մոտ, եթե վերջինս այլ կին առած չլինի եւ զղջալով՝ նրա մոտ մնա: Թեպետ այրն իշխանություն ունի նրան չառնել, բայց նրա ոգին չահելու համար՝ առնի: Նույնը լինի, երբ այրն առնի այլ կին եւ կինը մեռնի, իսկ իր առաջին կինը այլ այր չունենա, ապա այրի ապաշխարությամբ ընդունի: Իսկ եթե բաժանվելով երկուսն էլ ամուսնացած լինեն եւ իրենց առածները մեռնեն, ապա կրկին, հարկավորաբար, միմյանց դառնան եւ ինչ որ բաժանման պատճառն էր, այդ ապաշխարելով, միավորվեն:

ԳԼՈՒԽ ԺԴ
ԵՐԲ ԱՅՐԸ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ՄԵԿ ԱՅԼ ՊԱՏՃԱՌՈՎ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ Է ԵՎ ԵՐԲ ԵՏ Է ԴԱՌՆՈՒՄ՝ ԿԻՆՆ ԱՅԼ ԱՅՐ Է ԱՌԱԾ ԼԻՆՈՒՄ

Այն ժամանակ, երբ այրը ճանապարհորդության մեջ լինի՝ տարիներով, կինը պարտավոր է համբերել: Ապա եթե նրա ստուգ մահվան մասին լսի, թող մինչեւ յոթ տարի այր չառնի, ինչպես որ գերյալների մասին սահմաններում է կարգադրված: Իսկ եթե առանց այս սահմանների կինն այլ այր առած լինի եւ երբ իր բուն այրը ետ դառնա, իշխանություն ունի իր կնոջը առնել, եթե անգամ երկրորդ այրից որդիներ էլ ծնված լինեն, քանի որ երկրորդ այրին պսակ չի հասնում: Իսկ եթե երկրորդին պսակ հասնի եւ այլ պսակ հասնի ճանապարհորդ այրին, ապա ճանապարհորդի հրամանին է մնում՝ թողնելու իր կնոջը կամ՝ ոչ:

Ապա եթե յոթ տարի հետո եւ մահվան լուրը սուտ դուրս գալուց հետո այրը դառնա, իր կնոջն այլեւս չառնի, որն արդեն այր էր առել... Ապա, եթե այս սահմանները չանսան, թող որ կինը երկու այրերից որին որ կամենա՝ նրանը լինի:

Իսկ եթե մարդն այլ, հեռավոր մի աշխարհ գնա եւ այնտեղ կին առնի, ապա կինը ուրիշին չառնի մինչեւ յոթ տարի, որովհետեւ գուցե իր մարդը զղջացած ետ դառնա: Ապա, եթե այդ ժամկետից հետո այրը ետ չգա, եւ կինն օրենքներով ստուգի ետ չգալու պատճառները, ապա իր համար ըստ օրենքների՝ այր առնի: Իսկ եթե յոթ տարի հետո այրը դառնա եւ կինն ըստ օրենքների այր առած լինի, չի կարող արդեն իր կնոջն առնել, քանի որ ինքն անարգել է պսակն օրհնության:

ԳԼՈՒԽ ԺԵ
ԵՐԲ ԱՅՐԸ ԿՌՎՈՒՄ Է ԿՆՈՋ ՀԵՏ ԵՎ ՎՆԱՍՈՒՄ Է ՆՐԱՆ

Եթե այրն իր կնոջը անընդհատ, հետեւողականորեն անարգի, եթե խորթ կա նրանց միջեւ եւ այդ բանի համար են իրար անարգում, ապա դատաստան լինի եւ պարտ է, որ այրն համբերի, իսկ եթե ոչ, ապա խորթն ուղարկվի կնոջ ազգին:

Իսկ եթե առանց երկյուղ ունենալու այրն իր կնոջը հարկադրի՝ ձեռքը կոտրի կամ աչքը հանի կամ ատամը կամ ոտքը կոտրի, նրանից վերցնեն 2000 դրամ արծաթ, սակայն այս բանից հետո էլ, եթե ինչպես օտարի՝ բռնադատի կնոջը, քանզի օտարը եթե այդպիսի վնաս տա՝ հազար դրամ տուգանք է վճարում՝ ձեռքի, ոտքի, ատամի կամ աչքերի համար: Այս չորս անդամները եւ մարդու մարմնի գինը միաչափ են եւ մարդու արյան գինն է, երբ սրանք միմյանց սպանեն, գին, որ չորս հազար դրամ արծաթ է:

Եվ երբ կնոջ մարմնի անդամներից մեկն հաշմված լինի եւ տուգանված, կնոջը կրկին այրին տան, որ նա բժիշկների միջոցով առողջացնի կամ հոգ տանի նրան: Եվ եթե կինը կամենա իր այրի մոտ մնալ եւ այրը զղջա իր արածի համար, տուգանքն այդժամ կնոջը տան: Իսկ եթե այրը կրկին աներկյուղ նույն կերպ կամենա վարվել իր կնոջ հետ, ապա բաժանել նրանց, որպեսզի թե սպանություն չլինի:

Եվ Տերն իսկ ասաց՝ Մովսեսը Ձեր խստասրտության համար էր, որ ասաց ձեր կանանց թողնելու մասին: Եվ ասաց, միայն պոռնկության պատճառով կարող եք թողնել ձեր կանանց, եւ Մովսեսը մարդկանց խստասրտության պատճառով պատվիրեց կանանց արձակումը, որովհետեւ խստասրտության պատճառով բազում չարիքներ են գործվում, եւ որպեսզի այդ չարիքները չգործվեն, հարկ է լինում կնոջն ու այրին բաժանել, քան թե թողնել, որ միմյանց սպանեն: Եվ Քրիստոսն էլ նույնն ասաց:

Իսկ բաժանվելիս ինչքերի բաժանման կարգը գրված է «Միմյանց ատելու մասին» գլխում:

ԳԼՈՒԽ ԺԶ
ԱՅՐ ԵՎ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀԻՄԱՐՈՒԹՅԱՄԲ ԹՈՂՆՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ

Եթե այրն առանց պատճառի իր կնոջը հիմարությամբ թողնի, եւ կինը յոթ տարի համբերի եւ բազում անգամներ այրին հանդիմանեն կնոջ ազգակիցներն ու դատավորները եւ չլսի եւ չամաչի, այդժամ բերեն կնոջն ու այրին իրար մոտ եւ այրի բերանով ստուգեն՝ վերստին իր կնոջը առնելու մասին, ապա թե ոչ, թող հրաման տա իր կնոջը՝ նոր այր առնել: Իսկ այրը կին չառնի, քանի որ կենդանի է իր կինը. եւ այրի ապաշխարությունը լինի կնաթողների կարգով: ...Իսկ եթե կինը իր այրին խղճալով հրաման տա, որ նա վերստին ամուսնանա, ապա նույնն է, թե կինն էր իր այրին թողել եւ ոչ հակառակը:

ԳԼՈՒԽ ԺԷ
ՈՒՐԱՑՈՂ ԱՅՐԵՐԻ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Եթե այրը նեղության կամ տուգանքների պատճառով ուրանա Քրիստոսին, նրա կինը թող նրա հետ չբնակվի, որպեսզի նրա կողմից մոլորության չենթարկվի: Իսկ եթե այրը զղջա եւ կնոջն ասի, թե՝ եկ գնանք այլ երկիր եւ դարձյալ դավանենք Քրիստոսին, կինը պարտավոր է գնալ եւ իր այրին շահել Քրիստոսի համար: Նույն կերպ վարվի եւ այրը, երբ այդ ուրացությունը եւ դարձը կնոջ կողմից լինի:

ԳԼՈՒԽ ԺԸ
ԵՐԲ ԱՅՐՆ ՈՒ ԿԻՆԸ ՄԻՄՅԱՆՑ ՀԵՏ ԿՌՎՈՒՄ ԵՆ ԵՎ ՈՒՐԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻՆ ԵՎ ՀԱՎԱՏՔԸ

Իսկ եթե այրը իր կնոջը քինախնդիր լինելու համար ուրանա Քրիստոսին, կինն այդ բանում մեղք ունի, եթե կնոջից է պատճառը: Իսկ եթե Քրիստոսին իր կամքով է ուրացել, ինքը թող Աստծո պատասխանը տա: Ապա, եթե կնոջից է պատճառը եւ եթե այրը վերստին դարձ չապրի եւ փորձանքի գայթակղվելով ինքնասպան լինի, նրա արյունը իր կնոջից խնդրվի իրավական գնով՝ հանդերձ ապաշ-

խարությամբ, եւ նրա դատաստանը Տիրոջից լինի: Նույն բանը լինի, եթե կինն ընկնի իր այրի պատճառով նման պարագայի մեջ:

Եվ եթե այրը կամ կինը ինքնակամ գնան եւ կամ գետն ընկնեն ու խեղդվեն կամ պարանով կախվեն կամ բարձր տեղից վայր ընկնելով մեռնեն, ապա, ումից որ կորստյան պատճառն եղավ, նա էլ թող արյան գինը վճարի: Ըստ դատաստանի կանոնների, կարծում եմ, երկրորդ ամուսնությունը, նման պարագայում, հարկ է խափանել:

ԳԼՈՒԽ ԺԹ
ԱՅՐ ԵՎ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ, ՈՐ ՍՊԱՆՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ

Եթե այրն իր կնոջն սպանում է պոռնկության համար, արյան դատաստան լինի նրան՝ լրիվությամբ, քանզի նման պարագայում Աստված պատվիրեց արձակել կնոջը եւ ոչ թե սպանել: Եվ եթե կինն է սպանում իր այրին դեղերով կամ այլ ցավերով, նույն դատաստանը լինի:

ԳԼՈՒԽ Ի
ԱՅՆ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԻՐԵՆՑ ԹԱԳԱՎՈՐԻ ԵՎ ԱՅԼՈՑ ԱՌՋԵՎ ՀԱՆՑԱՎՈՐ ԵՆ

Եթե իշխաններից եւ կամ թագավորական տնից նրանք, ովքեր թագավորի առջեւ կամ այլ մի իշխանի՝ հանցավորներ գտնվեն, ապա իրենք տան իրենց անձերի պատասխանները եւ ոչ թե նրանց որդիները: Այլեւ, հոր ժառանգությունը թողնեն որդիներին եւ չլինի թե հայրերի պատճառով որդիները զրկվեն, որովհետեւ յուրաքանչյուրն իր մեղքերի պատճառով է մեռնում, ըստ օրենքների / Բ Օրենքներ, ԻԴ 16, Դ Թագավորների, ԺԴ 6/... Իսկ թե համախոհներ լինեն /հանցավորների/ եղբայրներն ու որդիները, այդժամ նրանց հետ էլ դատվեն:

ԳԼՈՒԽ ԻԱ
ՇԻՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ազատ արարչից եղան մարդկային բնությունները, որպեսզի ծառայեն տերերին՝ հողից եւ ջրից պիտանի արդյունք ստանալու համար:

Եվ նրանք, որ հող ու ջուր չունեն, նրանք ազատ են եւ ուր որ կամենում են, այնտեղ էլ կարող են գնալ, բնակվել: Եվ թագավորներին կամ իշխաններին իրավունք չի տրված որեւէ մեկին բռնադատել մնալու մի գյուղում կամ երկրում:

ԳԼՈՒԽ ԻԲ
ՄԱՆԿԱՆՑ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եթե մանկանց մեջ սպանություն լինի եւ տեսնեն, թե սպանողը տասներկու տարեկանից վեր է, ապա նրա համար արյան դատաստան լինի եւ սպանողն այդպես տուժի. իսկ եթե տասնմեկ տարեկան է կամ տասը եւ կես, ապա՝ կես չափով տուժի:

Իսկ եթե տասը տարեկանից վար է, երեքից մեկ չափով լինի արյան դատաստանը:

Եվ թեպետ այլ մեղքերի համար տասնհինգ տարեկանն է հիշատակվում, սակայն այստեղ հիշատակեցինք արյան դատաստանի մասին:

ԳԼՈՒԽ ԻԳ
ԱՅՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ԽԱՂԻ ԺԱՄԱՆԱԿ ՎՆԱՍՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ

Այն ժամանակ, երբ մանուկները խաղի ժամանակ վնասում են միմյանց՝ թե պատահմամբ, թե բարկությամբ կոտրելով կամ վնասելով մարմնի որեւէ անդամ, ապա պարտավոր են բժիշկների վարձը տալ: Եվ եթե չբժշկվի եւ մեռնի, ապա պիտի արյան գինը տան:

Հարկ է հաշվի առնելով տարիքն սպանողի՝ քննությունը կատարել: Այդ մասին գրված է ԻԲ / 22-րդ/ գլխում:

ԳԼՈՒԽ ԻԴ
ԱՅՆ ՄԱՆԿԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՋՐՈՒՄ ԽԵՂԴՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ

Եթե մանուկները ջրի մեջ լողալիս միմյանց խեղդեն, եթե այդ եղել է պարզամտությամբ՝ խաղի մեջ կամ եղել է բարկության քինախնդ-

ությամբ՝ արյան գին լինի: Սակայն ակամայի դեպքում՝ կես արյան գին: Իսկ տարիքը հաշվի առնվի՝ ըստ խեղդողի տարիքի քննությամբ. որ գրված է ԻԲ / 22-րդ/ գլխում:

ԳԼՈՒԽ ԻԵ
ԱՅՆ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՐ ԳՐԱՎԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՍՊԱՆՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ

Եթե մանուկները գրավ դնեն միմյանց վրա՝ թե վազելով մրցելու կամ մեկ այլ դժվար բան իրականացնելու մեջ՝ ձյունի վրայով վար սահելու եւ այլն, եւ այդպիսի բաներում եթե մահ պատահի, գրավ դնողի տարիքը քննեն եւ կես /արյան դատաստանի/ տուգանք լինի նրա վրա, եթե վնասվածը իր տարիքով ավելի է, քան գրավ դնողը, իսկ եթե պակաս է՝ տուգանքի կեսի կեսը լինի, ասենք՝ տասը տարեկանի եւ ավելի պակասի դեպքում:

ԳԼՈՒԽ ԻԶ
ԱՅՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՎԱՅՐԱՊԱՐ ԳՐԱՎ ԵՆ ԴՆՈՒՄ

Երիտասարդներից ոմանք սովոր են միմյանց վայրապար վերաբերվել, քարերով եւ նման բաներով վնասել միմյանց: Եվ եթե միմյանց վրա գրավ բռնելով նրանցից մեկը վնասվի, ապա արյան դատաստանի կեսը լինի գրավ դնողին, որի պատճառով որ վնասն եղավ: Մանավանդ, երբ վնասվածը ամոքման կարիք ունենա, ապա մեղավորը նաեւ տուժի բժշկության համար վարձահատույց լինելով: Եվ այսպես լինի, որպեսզի ոմանք վայրապար միմյանց մահվան պատճառ չդառնան:

ԳԼՈՒԽ ԻԷ
ԳԻՆԻՈՎ ՀԱՐԲԵՑՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՎՆԱՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ
/Գ խմբագրությունում կրճատումը մեծ լինելու պատճառով՝ օգտվում ենք Ա խմբագրությունից/

Գինարբուքի ժամանակ ինչ վնաս որ լինի, ըստ հոգեւոր օրենքների՝ չլինի թե ներվի, որովհետեւ նախ Հարբեցողությունն իսկ առանձին դատաստանի է ենթակա: Իսկ եթե Հարբեցողության ժամանակ ընկերները մարտնչեն եւ միմյանց խեղեն, հավաստի դատ լինի եւ բժշկության համար էլ վնասողը հատուցի: Իսկ եթե մահ լինի, քննվի պատահմունքը՝ դիտումնավո՞ր էր, թե վրիպելու հետեւանք եւ կամ երկու՞ կողմերից դրդված եղավ, թե՞ առավել՝ մեկ կողմի, եւ ըստ այդ ամենի դատաստանը կայացվի եւ արյան գին հատուցվի եւ գինարբուքի մասնակիցներին եւս դատ լինի եւ նրանք էլ տուժեն, այդ ամենին ըստ նրանց մասնակցության չափով: Բայց երբ այս ամենի համար բուն մեղավորներն ըստ օրենքների մահվամբ էին հատուցում, այլ թող Նորով, նրանց ձեռքը խրատեն /հատեն/ եւ նրանք ըստ Ավետարանի ապրեն՝ տույժով եւ ապաշխարությամբ:

ԳԼՈՒԽ ԻԸ
ՇՆԱՑՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԶԱՐԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երբ որեւէ մեկը չնանա մի կնոջ հետ, որն այր ունի, եթե կնոջ կամքով էր կամ տղամարդու լրբությամբ, ըստ օրենքների՝ մահվան են արժանի: Եվ դատավորներից ոմանք այսպիսիների ձեռքը եւ մարմնի ծածուկն են հատում:

*Իսկ կարգն արվագետների եւ անասնապիղծերի այս է. երբ դատաստան լինի, նրանք նաեւ տուգանքներ տան, այսինքն բավական չհամարել խրատներն ու հանդիմանությունները: /Ծ.Թ. Խրատել- նշանակում՝ մահապատժի փոխարեն հատել հանցավորի մարմնի այս կամ այն անդամը, ինչպես Հիսուս է պատվիրում Լեռան Քարոզում. **«...Եթե քո աջ ձեռքը քեզ գայթակղեցնում է՝ կտրի՛ր այն ու դեն գցիր քեզնից, որովհետեւ ավելի լավ է քո անդամներից մեկը կորչի, քան թե ամբողջ մարմնով ընկնես գեհեն...»:** Այս դեպքում, հանցավորը ոչ թե ինքնադատաստանով է այդ անում, ինչպես կանեին մեր Տիրոջ՝ Քրիստոսի հետեւորդները, այլ կատարվում է սուրբգրայինը որպես արդեն արդար դատաստան իրականացնելով/:*

Եթե այլազգի հանդիպի այս գործերով, որ գործել է քրիստոնյա կնոջ հետ, հատեն նրա մարմնի ծածուկը եւ կնոջն էլ խրատեն՝ կտրելով նրա քիթը:

Իսկ եթե քրիստոնյա տղամարդը այրի կնոջը խաբի եւ նրան պղծի,

ապա կամ նրան կին առնի, երբ շնացող մարդը այլ կին չունենա /իսկ թե ունի/, կնոջը տա հարյուր դրամ արծաթ: Իսկ եթե խաբող այրը մեծատուն լինի եւ կինն էլ, տուգանքն ավելացվի:

ԳԼՈՒԽ ԻԹ
ԱՅՆ ԿՈՒՅՍԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑԻՑ ԽՈՍՔ ՉԻ ԱՌՆՎԵԼ

Կույս աղջիկը, որ այրի համար խոսք առնված լինի եւ այլ որեւէ մեկը գա ու պղծի նրան, առնակնոջ դատաստան արվի:

Ապա եթե կույս աղջիկ լինի, որ այրի կողմից խոսացված չլինի եւ որեւէ մեկը բռնաբարելով ննջի նրա հետ, այրը, որ նրա հետ ննջեց, աղջկա հորը տա հարյուր դրամ արծաթ եւ կինը իրենը լինի եւ չհամարձակվի նրան թողնել:

Այդ ըստ օրենքների է, նույնը եւ մեզ համար լինի, որ կնոջն առնի, ապա, եթե չկամենա առնել, ըստ արժանվույն եւ տույժը լինի:

ԳԼՈՒԽ Լ
ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԲԱՄԲԱՍՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԿԱՆԱՆՑ, ԹԵ ԿՈՒՅՍ ՉԵՆ ԳՏԵԼ

Եթե մեկը կին առնի եւ նրան ատի, ստությամբ բամբասելով, թե կույս չէր աղջիկը, թող կանանց ձեռքով քննություն անեն. եւ եթե այրը ստում է, խրատեն նրան՝ գանելով նրանից եւ տուգանեն նրան 100 դրամ արծաթով, ըստ օրենքների /Բ օրենքներ, 13-19/:

Մենք էլ նույնն ենք կարգադրում եւ նրան մնա իր կինը, մի՛ բաժանիր: Իսկ եթե ճշմարիտ լինի տղամարդը, աղջիկն ըստ օրենքների մահվան է արժան /Բ օրենքներ ԻԲ, 20-21/: Իսկ մենք տալիս ենք այդպիսիի համար հետեւյալ կարգադրությունը՝ նմանին բաժանիր տղամարդուց, սակայն եթե կամենան, թող միասին բնակվեն, որովհետեւ բազում վրիպությունների հետ է կապված կույսերի գործերը: ...Եվ քանի որ տղամարդու տանը չէ, որ եղել է այդ անարգությունը, այրը թե արձակի նմանին, թող ամուսնանա այլ կնոջ հետ եւ կինն էլ այլ տղամարդ առնի, քանի որ իր ամուսնու օրենքի մեջ չէր, երբ շնացավ:

Եվ եթե այրը չկամենա ուրիշին առնել, ապա նրա ստերի եւ բամբասանքների պատճառով, տուգանք դնեն նրա վրա, որպես որ կա գրվածքներում, որ թե տղամարդկանց համար են, թե կանանց:

ԳԼՈՒԽ ԼԱ
ԳԱՎԱՌՆԵՐԻ, ԳՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

Ամեն մի երկրում, որտեղ ոսկի ելնի, իրավունքը թագավորներինն է, իսկ եթե արծաթ՝ թագուհիներինը: Իսկ թե իշխանների երկրում ոսկի կամ արծաթ գտնվի, ապա իշխանը կամենա գտնվածից մաս տալ թագավորին: Իսկ եթե չկամենա, գտնվածը իրեն մնա ամբողջությամբ:

Պղինձը, երկաթը, կլայեկը եւ այդպիսի այլ մետաղները թագավորի պարգեւներով, թող մեծամեծ իշխաններինը լինեն, նույնպես էլ աղը, բորակը, նավթը, կուպրը եւ նման այդպիսի հանածոները՝ իշխաններինը լինեն: Իսկ ակն ու մարգարիտը՝ արքունիքինն են, նույնպես էլ այլ պատվավոր ինչքերը:

Իսկ ձյութը եւ խունկը եւ դեղին խունկը եւ մաղտաքին եւ գխտորը... եւ այլ այսպիսի ինչքերը, որոնք վաճառում ու շահ են ստանում, իշխանները դրանցից տասանորդ վերցնեն: Իսկ ամենայն պտուղներ, որ գտնվում են անտառներում՝ շինականներինը լինեն՝ յուրաքանչյուր սահմաններում: Իրավացի է դատաստանով տասանորդ վերցնել օտարներից, նրանց հավաքած պտուղների համեմատ, որովհետեւ գալիս ու քաղում են եւ վարձ էլ պիտի տան՝ տասից մեկը. եւ այս այն գյուղի կամքով լինի, որինն է պտղատու տարածքը: Նույնպես, տասանորդով լինի, թե շինափայտը, թե արոտի խոտը, թե հունձը եւ թե հողը վարելը:

Նաեւ գետերը, որտեղ որ գետերի ակունքն է՝ գետը նրանցն է եւ ոչ նրանցը, ուր որ գետն է հասնում: Վայրի որսերը ով որսա՝ նրանը լինի: Իսկ երբ ուրիշի հանդում են որսում, ամեն տասից մեկը գյուղի /տեղավայրի/ տիրոջը տան: Իսկ ով անտառներում որս անի, ամեն տասից մեկը նրան տա, ում սահմաններում, որսն արեց: Նույնպես եւ ծովի որսը տասանորդությամբ տան, ում սահմաններում որ որսն արվի:

ԳԼՈՒԽ ԼԲ
ԳԱՆՁ ԳՏՆԵԼՈՒ ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մեկը տուն սարքի կամ արտ վարի կամ հողը փորի եւ գանձ գտնի կարասով կամ այլ փոքր ամանով, այն թագավորներին հանձնելն է իրավունք եւ տասից մեկը գտնողինն է, երբ իրենը չլինի այն տեղը, երբ գանձը գտավ, իսկ եթե գանձը գտնի իր տան տեղում, իր այգում, իր արտում, ապա հինգից մեկը գտնողինն է, որովհետեւ իր սահմանումն է: Բայց եթե իմացվի, թե գանձն իր ազգինն է, իր հայրերինը, ապա տասից մեկը բաժին տա արքային: Իսկ եթե գանձ գտնողը վարձված մարդ է, չեմ կարծում, թե իրավացի լինի տասանորդ տալ, այլ տասանորդականից միայն մաս տալ նրան:

ԳԼՈՒԽ ԼԳ
ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԿՌՎՈՒՄ ԵՎ ՄԻՄՅԱՆՑ ՄՈՐՈՒՔ ԵՆ ՓԵՏՈՒՄ

Եթե երկու այրեր կռվեն եւ մեկը անկատար մարդ լինի, մյուսը կատարյալ եւ անկատարը ձգելով պոկի կատարյալի մորուքը, դատաստան լինի, որ կտրեն անկատարի մազերը կրկնակի, քանի որ կատարյալի մորուքն է պոկել. եւ հավելյալ, անկատարի թիկունքին յոթ փայտ հարված տան: Ապա, եթե ավագ այրն էր կռվի պատճառն եղել, այդժամ վրեժի կեսը լինի փոքրին, հանգամանքներ, որոնց մասին վերում խոսել ենք, որպեսզի այլոք այդպիսի բաներ չգործեն:

ԳԼՈՒԽ ԼԴ
ՍԵՐՄԱՑՈՒ ՊԱՀՎՈՂ ՀՈՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մեկը ցորենի կամ այլ սերմերի հորը բանա, յուրայիններից կամ օտարներից մեկին հորի մեջ իջեցնի, եւ իջեցվածը մեռնի, նրա արյունը իջեցնողի ձեռքից խնդրվի, իսկ եթե հիվանդանա՝ դեղերի գինը կամ անաշխատունակ դառնալու գինը վճարի, որովհետեւ պարտավոր էր զգուշանալ, մինչեւ որ հորի հոտը դուրս գար, ապա նոր դեպի ներս պարանով մարդ իջեցներ: Իսկ եթե մարդուն վարձել էր եւ առաջուց նրան ասել էր, թե խիստ է հորի հոտը, եւ նա այնուամենայնիվ իջել է հորը հանուն իր վարձի, ապա նրա արյունը իր /իջնողի/ գլխին լինի:

ԳԼՈՒԽ ԼԵ
ՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՇԻՆԱԿԱՆՆԵՐԻ ՎՆԱՍՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իշխանները եւ այլոք, եթե ավելի դատեն նրանց, ովքեր իրենց ձեռքի տակ են եւ եթե լինի այնպես, որ պատժվողը մեռնի, ապա արյան գին առնեն իշխաններից եւ տան մեռնողի հարազատներին կամ ազգակիցներին: Եվ եթե պատժվողի ձեռքը կամ ոտքը կոտրվի եւ կամ ատամը կամ աչքը տեղից հանեն, ապա տան գինը, իսկ եթե բժշկելի լինի՝ նաեւ բժշկի վարձերը վճարեն եւ վճարեն մարմնի անդամը խեղելու դիմաց:

ԳԼՈՒԽ ԼԶ
ՍՈՒՏ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՆԻՐԱՎ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Կարգեցին առաքյալները եւ դրեցին հաստատությանը, թե մարդկանցից ոչ մեկը, որ քահանայական օծում չի ընդունել, չհանդգնի իշխանությամբ անել որեւէ ինչ, իբրեւ քահանա: Կամ քահանան աչառություն անելով չգործի որեւէ բան, առանց օրենքների եւ իրավունքների, այլ արդարությամբ անակնառությամբ: /Առաքելական կանոններ, Իդ/:

Եվ, որպեսզի լուծվեն չար սովորույթները, առաքելական կանոնների այս հրամանը, առաջնորդները այսպես են պարտավոր դատել: Աշխարհականներն առնում են արք ու կանայք եւ ապա դառնալով վերակացուներ Աստծո եկեղեցու, մուտք արվող արդյունքներն ու պտուղներն են ուտում:

Արդ, պարտավորություն է ասել, որպեսզի լուծվեն նման չար սովորույթները: Նույն կերպ էլ եպիսկոպոսը դատի այն քահանաներին, ովքեր անկարգ ու անուղղելի են, ուտողներ եւ հարբեցողներ: Սրանց թող /եպիսկոպոսները խրատեն/, որպեսզի այլեւս այդպիսի անկարգ վարքով չապրեն, այլ՝ սրբությամբ եւ առաքինությամբ: Իսկ նմանները, ովքեր որ չմնան Քրիստոսի օրենքի խրատի համաձայն, քահանայության կարգից հեռացվեն:

ԳԼՈՒԽ ԼԷ
ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ ԵՆ ԱՆԱՐԳՈՒՄ

Կարգեցին առաքյալները եւ դրեցին հաստատությանը, թե ոչ ոք երբեք չանարգի, չանգոսնի եւ չարհամարհի քահանային: Նա, ով քահանային է անարգում, իմանա, որ Աստծուն է անարգում, որովհետեւ քահանան սպասավոր է ձեզ բարու համար եւ հաշիվ է տալու ձեր հոգիների փոխարեն, չէ՞ որ գրված է. «Քո ժողովրդի իշխանին մի՛ բամբասիր» /Առաքելական կանոններ, Իե/:

...Այժմ առաքելական կանոններով ցույց տանք քահանաներին անարգողների հանցանքի մեծությունը, որովհետեւ նրանց դատը կրկնակի է, քանի որ՝ աստվածանարգ են նաեւ, իրավացի այն դատաստանով, որ ասվել է. «Ով ձեզ է անարգում, ինձ է անարգում» /Ղուկաս, Ժ 16/: Իսկ նրանք, ովքեր ճշմարիտ քահանաներ չեն, նրանց մասին արդեն ցույց տրվեց նախորդ գլխում:

ԳԼՈՒԽ ԼԸ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կարգեցին առաքյալները եւ դրեցին հաստատությանը, թե նրանք, ովքեր դատավորի աստիճան ունեն եւ դատաստան անելու իրավունք, եթե թերանան իրենց պարտավորությունների մեջ եւ երեսանց աչառություն անելով պարտավորեցնեն արդարին, իսկ պարտավորին արդարացնեն, այլեւս չթողնվեն դատավորության կարգի մեջ եւ պատուհասի տրվելով, կշտամբվեն, որովհետեւ Մովսեսի Աստվածային ձեռքով գրված օրենքները չիմացան, որ ասում է. «Դատաստանի իրավունքը մի՛ շեղիր» եւ «իրավունք պահելու համար կաշառք մի՛ վերցրու» / Առաքելական կանոններ, Իզ/: Դատավորների դատաստանից եւ կանոնական հրամաններից ուսուցանվեցինք, թե ովքեր եկեղեցական դատավորներ են, չլինի թե ոմանց մյուսներից ավելի պատվեն դատաստանի ժամանակ, այլ եթե իշխանը դատաստանի գնա եւ նրա հետ աղքատ ոմն, երկուսին միասին կանգնեցնեն եւ Աստծո օրենքով դատ անեն նրանց միջեւ, եւ արծաթ չառնեն եւ չթյուրեն ճշմարիտ

դատաստանը, քանզի Աստված վրեժխնդիր է դատավորներից՝ իր օրենքների համեմատ:

ԳԼՈՒԽ ԼԹ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԻՆՁՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Եպիսկոպոսը, որ որեւէ քաղաքում նոր եպիսկոպոսության աթոռ դա, գրով եւ թղթով հայտնի այն ինչքերի մասին, որ ունի: Նույնպես եւ եկեղեցուն գրով տեղեկացնի, որպեսզի, երբ մեռնի, իրեն պատկանող ինչքերը նախապես կամ կտակով ում որ կամենա, նրան տա, եւ իր իշխանությունը միայն իր ինչքերի վրա լինի, իսկ ինչ եկեղեցունն է, այդ ինչքերը իրավունք չունենա որեւէ մեկին տալ...

Ահավասիկ հանդիմանում էին բամբասողները, թե եկեղեցին դատաստաններ չունի, որովհետեւ այս իրավունքը դատաստան անելու՝ առաքյալներից է կարգվել, որովհետեւ դատավորներն եւս հրամայում են դատել անիրավներին եւ առաքյալները եկեղեցիների եւ եպիսկոպոսի ինչքերի մասին իրավունքներ նշանակեցին /տես «Առաքելական կանոններ»/:

ԳԼՈՒԽ Խ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՐԵՐԻ ՎՐԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հրամայում ենք, որ եպիսկոպոսը իշխանություն ունենա եկեղեցական իրերի տնօրենության մեջ, քանզի եթե մարդկային պատվական հոգիներն են նրան վստահվել, ապա առավել եւս՝ իրերի տնօրենությունը, որպեսզի նրա իշխանությամբ խնամք տարվի կարոտյալներին եւ երեցների ու սարկավագների ձեռքով այդ խնամակալությունն իրագործվի Աստծո եկեղեցում, եւ իրենք իսկ ամենայն զգուշությամբ վերցնեն այն ամենից, եթե որեւէ ինչքի կարիքն ունեն, եւ օտար եղբայրներին եւս անհրաժեշտ պիտանին տան, իսկ նախ իրենք չլինի թե որեւէ ինչքի պակասություն կրեն, քանի որ Աստծո օրենքները հրամայում են, թե ովքեր Տիրոջ սեղանի պաշտոնյաներն են, այդ իսկ սեղանից էլ կերակրվեն, ըստ այդմ էլ, զինվորը իր թոշակով չէ, որ պատերազմի համար զենք է առնում: Եվ ինչպես վերում ասացինք,

եկեղեցու ինչքերի մասին հայտնի լինի եպիսկոպոսին, եւ եթե բաշխման պատճառներն ավելանան էլ, չկարծվի թե եպիսկոպոսը չի իշխելու եկեղեցական ինչքերի տնօրենության մեջ: Ցույց տրվեց եպիսկոպոսի իշխանությունը, սակայն կարգ եւ սահման նաեւ դրվեց այդ իշխանության համար էլ, որպեսզի վայրապար որեւէ ինչ չգործի, որն իրավացիորեն եկեղեցու դատաստանին կլինի ենթակա:

ԳԼՈՒԽ ԽԱ
ԱՅՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԵՎ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԺԱՌԱՆԳԱՎՈՐՆԵՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԱՆԵՐԸ ՉԵՆ ՏԱԼԻՍ

Եթե որեւէ եպիսկոպոս կամ երեց ժառանգավորներից նրանց, որ կրոտյալներ են, չտա անհրաժեշտ պիտանին, այդժամ նրա համար որոշվի որպես իր եղբորն սպանողի դատաստան: /Կանոններ Կղեմա, ԾԴ/:

Եվ հայրերի միաբանությամբ լսեն կանոնական դատաստանները, որովհետեւ անգութ բարքերը սպանողների դատաստանների օրենքով են դատվում եւ այս տեսակ դատաստանի համար բազում են լինում վկաները:

ԳԼՈՒԽ ԽԲ
ԱՅՆ ԺԱՌԱՆԳԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԿՌՎԻ ՄԵՋ ՍՊԱՆՈՒՄ ԵՆ ԿԱՄ ՎՆԱՍՈՒՄ

Եթե ժառանգավորներից մեկը կռվի մեջ որեւէ մեկին հարվածի եւ նրա հարվածից մարդը մեռնի, իր հանդգնության համեմատ լուծումը լինի, իսկ եթե ժողովրդականներից լինի, որոշում հանվի: /Կանոններ Կղեմա, ԿԱ/: Եվ այս կանոնական հրամանը ըստ օրենքների է, որովհետեւ եթե չմեռնի, այլ մահճում պառկելով առողջանա՝ հարվածողը անպարտ լինի, չլուծարվի, եւ ժառանգավոր լինի, թե աշխարհական, դատաստան լինի ուղղության եւ ապաշխարության:

ԳԼՈՒԽ ԽԳ
ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՁԵՌՆԱԴՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եպիսկոպոսը կամ երեցը կամ սարկավագը, եթե որեւէ մեկից երկրորդ անգամ ձեռնադրություն ընդունի, լուծարվի եւ նաեւ լուծարվի նա, ով

որ ձեռնադրեց, բայց չլուծարվի այն դեպքում, եթե ցույց տա, որ ձեռնադրվողի թերահավատության պատճառով վերստին ձեռնադրեց, քանի որ այսպիսիների համար նման հանգամանքներ՝ արդեն մկրտված եւ ձեռնադրված ոչ հավատացյալների եւ ոչ ժառանգավորների մեջ, հնար է, որ լինեն: /Կանոններ Կղեմա, ԿԳ/:

Դատաստանի կանոններով հայտնի է, որ ով ձեռնադրում է նրան, որ լուծարված չէ հայրապետից կամ ժողովի կողմից եւ դեռ աստիճանակարգի մեջ է, այդպիսին ախտացյալ ամբարտավանությամբ է գործում, նմանապես, եւ նրանք, որ ձեռնադրվեցին, ուստի իրավունք է լուծանել նրանց իրավամբ:

ԳԼՈՒԽ ԽԴ
ԵԿԵՂԵՑՈՒՑ ԳՈՂԱՑՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե ժառանգավորներից կամ ժողովրդականներից մեկը գողանա եկեղեցուց մոմեղեն, կամ ձեթ, որոշումն այսպես է՝ հնգապատիկը պիտի տուժի... Եվ չլինի որեւէ մեկը, որ կարիքի համար անգամ՝ գողանա, որովհետեւ գողությունը օրինազանցություն է եւ եթե մեկը բռնվի՝ պատուհասված պիտի դատվի:

ԳԼՈՒԽ ԽԵ
ԱՄԲԱՍՏԱՆՎԱԾ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եպիսկոպոսը, որ ամբաստանվել է հավատարիմների ոմանց կամ հավատացյալների առաջ, նրան հրավիրել, որ գա եպիսկոպոսների առաջ: Եթե գա եւ խոստովանի, հանդիմանություն ստանա եւ նրա համար իր հասանելիք պատուհասը սահմանվի:

Իսկ եթե հրավերը չնդունի եւ չգա, երկրորդ անգամ կանչեն՝ նրա մոտ առաքելով երկու եպիսկոպոսներ: Ապա, եթե այս անգամ էլ չլսի, հրավիրեն երրորդ անգամ, դարձյալ երկու եպիսկոպոսներ ուղարկելով նրա մոտ: Ապա եթե կրկին արհամարհելով չգա ժողովին, վճիռ հանվի, այն, ինչ արժան թվա...:

Ամբաստանվածների հետ ճշմարիտ է այս իրավունքով վարվել: Վճիռն այնպես ընտրեն, որ ստուգագույն պատճառը դիտելուց հետո միայն որոշումն ընդունվի:

ԳԼՈՒԽ ԽԶ
ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՎԿԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վկայության համար թերահավատ որեւէ մեկին չընդունեն եւ ոչ էլ մեկ հավատացյալի, քանի որ, ըստ օրենքների՝ երկու կամ երեք վկաների միջոցով պիտի հաստատվի ամեն բան:

ԳԼՈՒԽ ԽԷ
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՅՈՒՐԱՅԻՆՆԵՐԻՆ ՁՁԵՌՆԱԴՐԵՆ ԱՌԱՆՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՄՔԻ

Պարտավորություն չէ, որ եպիսկոպոսը իր եղբորը կամ որդուն կամ մեկ այլ ազգականի եպիսկոպոսության պատիվ շնորհի, որպես կարող է ինքը կամենալ եւ իրենից հետո իր ժառանգավորը ձեռնադրել: Արժան չէ նման պաշտոն շնորհել մարդկային սիրուց դրդված, քանզի եւ Քրիստոսի եկեղեցին ժառանգությունը չէ որեւէ մեկի: Իսկ եթե որեւէ մեկն այդ անի, չհաստատվի նրա ձեռնադրությունը եւ ձեռնադրողը դատաստանի ենթարկվի:

Այս հարցի կանոնական իրավունքն այսպիսին է, որպեսզի ոչ ոք չհամարձակվի նման ձեռնադրություն յուրայիններին տալ եւ ոչ էլ եկեղեցին դարձնել իր համար ժառանգություն: Ապա եթե մեկն հանդգնի այդ անել, հոգեւոր դատաստան լինի, իսկ եթե բազմությանը հաճո լինի, միայն այդ դեպքում մասնավոր օրհնությամբ ձեռնադրությունը հաստատել, ապա թե ոչ, անհաստատ մնա, եւ դատաստան լինի, մինչեւ մեղավորի արժանավոր ապաշխարությունն իրականանա:

ԳԼՈՒԽ ԽԸ
ԱՅՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԻՐ ԱՆՁԸ ԳՑՈՒՄ Է ԵՐԿՐԱՎՈՐ ՀՈԳՍԵՐԻ ՄԵՋ

Պատշաճ չէ, որ եպիսկոպոսն ինքն իրեն երկրավոր հոգսի մեջ գցի, այլ, որ միայն զբաղվի եկեղեցական պետքերի խնդրով, ապա թե ոչ, դուրս ելնի, քանի որ ոչ ոք չի կարող երկու տերերի ծառայել, ինչպես որ Տերունական խոսքն է հայտնել:

Եվ այս ոչ միայն իշխաններին հոգ տանելու համար ենք պարտավոր իմանալ, այլ որ, ըստ պայմանի, նմանը այլազգիի վիճակի մեջ է համարվում, բան, որ այժմ գործում են եպիսկոպոսներից եւ քահանաներից շատերը, որոնց որ Տերունական խոսքն է արժանավորապես բերում դատաստանի, ասելով՝ ոչ ոք չի կարող երկու տերերի ծառայել: Հայտնի է, որ չզղջացողներին հրաման է լուծարել իրենց կարգից:

ԳԼՈՒԽ ԽԹ
ԵՐԵՑՆԵՐԻ ԿԱՄ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԾԱՌԱՆԵՐԻՆ ՕՐՀՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ծառաներին ժառանգավորություն ընձեռելը առանց նրանց տերերի կամքի՝ չենք հրամայում, քանզի նման դեպքում տան մեջ կործանում է գործում: Ապա, եթե ծառան ձեռնադրության աստիճանի արժանի երեւա, որպես որ Ոնեսիմոսն արժանի երեւաց /Կող. Դ, 9/, եւ թույլ տան նրա տերերը եւ ազատ լինի նրանց տնից եւ պատվով ազատ արձակեն, այդժամ ձեռնադրությունը կայանա:

Կանոնների դատաստանները հրամայում են նման դեպքերում անգայթակղելի պահել եկեղեցին, որպեսզի բարեպաշտության պատճառով վնասներ չգործվեն եւ տեղի չտան մեր մեջ չարախոսությունների:

ԳԼՈՒԽ Ծ
ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻՆ ԵՎ ԻՇԽԱՆՆԵՐԻՆ ԱՆԱՐԳՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե որեւէ մեկը անիրավաբար թշնամանա թագավորի կամ իշխանների հետ, պատուհաս կրի. եթե ժառանգավորներից է՝ լուծարվի, իսկ եթե ժողովրդական է՝ դատաստանի որոշում հանվի:

Եվ այս դատաստանը հարկ է դատեն եպիսկոպոսներն ու վարդապետները, որովհետեւ նրանք պատկերն են Աստծո եւ թագավորներ են եւ իշխաններ: Եթե անարգողը ժառանգավոր է, իրավացի է լուծարել, եթե աշխարհական մեկն է՝ դատաստան որոշել, մինչեւ որ զղջա:

ԳԼՈՒԽ ԾԱ
ԱՅՆ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵՐԵԽԱ ԵՆ ԿՈՐՑՆՈՒՄ

Եթե մեկն իր երեխային խեղդի, որպես խեղ կամ շնության պտուղ, եթե իր կամքով է արել, փոխարենը ինքը մեռցվի, որովհետեւ ինչպես որ հնար չէ սպանվածին վեր կացնելը, նույնպես եւ ապաշխարելը:

Եվ որովհետեւ ըստ օրենքների հանցավորների համար սարքված ապաստարան քաղաքներում թե՛ կամավոր եւ թե՛ ակամա հանցանք գործողները իրավունք էին ստանում այնտեղ փախչելով ապրել, իսկ օրենքներն էլ հավատացյալ հրեաներին տրվածով է ամենքին, ապա եւ հետո, ըստ այդմ էլ, Տերը ապաշխարություն տվեց: Եվ նման պարագայում, կամավոր խոստովանողներին ապաշխարություն լինի, ըստ Տիրոջ, իսկ նրանք, ովքեր չեն զղջում իրենց արածի համար, նրանց համար արյան դատաստան լինի:

ԳԼՈՒԽ ԾԲ
ԳՈՂԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գողերը եւ նրանց հարողները, ըստ եկեղեցու կամքի մահվան են արժանի, որովհետեւ հնից անտի՝ ավազակներն ու նրանց պնակալեզները մահվան էին դատապարտվում: Եվ դատավորը պարտավոր է այս բանին հետեւել: Եվ այս մարդագողերի եւ ավազակների մասին է ասում եւ ըստ օրենքների հրամայում է մահվան դատապարտել նաեւ նրանց կամակիցներին, եւ եկեղեցու օրենքներում նույնն է կարգել:

Բայց, ըստ Ավետարանի եւ այս մատյանի կանոնների դատաստան անելն այս մասին եւս ցույց է տրված:

ԳԼՈՒԽ ԾԳ
ԱՂՋԿՆԵՐԻՆ ԱՌԵՎԱՆԳԵԼՈՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՊՍԱԿՎՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առեւանգված աղջիկը, եթե որդի ծնի եւ հայրն ու մայրը եւ աղջիկը չկամենան, ապա մանկանը վերադարձնեն առեւանգողին: Հայտնի է, որ թե՛ պսակված, թե՛ անպսակ, բռնի ամուսնությունը, ըստ կամքի չէ: Եթե ձեռնահաս լինեն, ապա անխղճմտանք կլինի աղջկան առեւանգողի մոտից ետ դարձնելը, այլ իրենց կամքով պսակվեն: Իսկ եթե հետո կամեցան պսակվել, ապաշխարություն կարգվի, որպես որ ցույց է տրված կանոններում:

Եվ այդ ճշմարիտ դատաստան անել է եկեղեցու կողմից:

ԳԼՈՒԽ ԾԴ
ԾԱՌԱՆԵՐԻՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եթե պատահի, որ քրիստոնյան քրիստոնյա ծառա գնի, ըստ օրենքների, թող ծառան վեց տարի ծառայի, իսկ յոթերորդ տարում՝ ազատվի: Մեզ համար եւս այդպես լինի, այն ժամանակ, երբ իր գնի համեմատ ծառայի, ազատ դառնա: Եթե միայն ինքը ծառայության մտած լինի՝ ինքը միայն ազատվի, եթե իր կնոջ հետ միասին ծառայության մտած լինի՝ իր կնոջ հետ միասին էլ ազատվի:

Իսկ եթե տերը նրան կին տված լինի, որ նրան տղաներ ու աղջիկներ ծնած լինի, ապա կինն ու որդիները տիրոջը լինեն եւ նա միայն ազատվի: Ապա, եթե ծառան պատասխան տալով ասի՝ սիրեցի իմ տիրոջը եւ իմ կնոջը եւ իմ որդիներին, այդ պատճառով չեմ ուզում հեռանալով ազատ լինել, այդժամ տերը թող նրան տանի եկեղեցի՝ քահանաների մոտ, Աստծո առջեւ եւ հավատարիմ վկաներով եւ գրի հաստատմամբ նրան մշտական ծառա վերցնի: Եվ նման ծառան հոգս չանի, թե կարող է ազատ լինել, որովհետեւ, ինչպես առաքյալն է ասում՝ Տիրոջով ծառան Տիրոջ ազատն է:

ԳԼՈՒԽ ԾԵ
ԴՍՏԵՐՆ ԱՂԱԽՆՈՒԹՅԱՆ ՎԱՃԱՌՈՂԻ ՄԱՍԻՆ

Իսկ եթե պատահի, որ որեւէ մեկն իր դստերը վաճառի, ինչ պատճառով էլ այդ լինի եւ վաճառած լինի հավատացյալ այրի, չլինի թե վաճառի որպես աղախնի, որպեսզի, եթե իր տիրոջն հաճելի չլինի, ապա հայրը փրկի նրան: Բայց իր տերն իշխանություն չունենա նրան օտարին վաճառել, որովհետեւ նրան անարգեց. իսկ եթե իր որդու հետ ամուսնացնի, ապա ըստ օրենքների դուստր կլինի նրան: Իսկ եթե ոչ իրեն եւ

ոչ էլ որդուն կնության չհասնի, ծառաների ծառայության տարիները լրանալուն պես, ձրիորեն, առանց փրկագնի՝ ազատ լինի: Իսկ եթե հայրը կանխավ կարողանա փրկագնով ազատել, թող ազատի նրան:

ԳԼՈՒԽ ԾԶ
ԱՅԼԱԶԳԻ ԾԱՌԱՆԵՐԻ ԵՎ ԱՂԱԽԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մեկն այլազգի ծառա կամ աղախին գնի, եթե նրանք հանձն առնեն մկրտվել՝ փրկության տակ կլինեն, եւ ծառայության տարիները լրանալուն պես՝ ազատ լինեն, ապա եթե իրենք /մկրտվել/ չկամենան՝ նրանց վաճառելու իշխանություն լինի: Այլ չլինի թե ծառայությունից ազատվելու համար հեղգությամբ մկրտվեն: Իսկ մկրտվածների ազատվելը կամ ծառայության մեջ մնալը լինի այնպես, ինչպես քրիստոնյաների համար է կարգված, նույնը լինի եւ այս աղախինների եւ ծառաների համար:

ԳԼՈՒԽ ԾԷ
ԻՐԵՆՑ ՀՈՐՆ ՈՒ ՄՈՐՆ ԱՆԱՐԳՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե որեւէ մեկն անարգվի իր որդու կողմից եւ կամ թե այլ անօրենություն գործեն որդիները օտարների առաջ, օրենքները անարգանքների համար հրաման են տալիս, որ հայրն իշխանություն ունի իր որդուն տանել դատավորների առաջ: Եվ, եթե որդին հանձն առնի իր մեղքերը եւ խոստանա, որ այլեւս նման բան չի անի, ապա խրատեն նրան ու արձակեն, ապա թե ոչ, պատժվի, որովհետեւ, ըստ հին օրենքների հայր եւ մայր անարգողներին երկճյուղ փայտից էին կախում:

Իսկ օտարների նկատմամբ չար գործ անող որդիներին օրենքները հրաման չեն տալիս դատավորների առջեւ բերելով՝ բողոքարկել:

ԳԼՈՒԽ ԾԸ
ՏՂԱՆԵՐ ԳՈՂԱՑՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ով գողանա Իսրայելի որդիներին եւ վաճառի նրանց, եւ կամ ում մոտ գտնեն նրանց՝ մահվան դատապարտվի: /Ելք, ԻԱ 16/:

Իսկ մեզ համար այս դատաստանը լրացվելով փոխված լինի այս-

պես. եթե քրիստոնյան քրիստոնյայի գողանա եւ վաճառի այլազգիի, եւ չար գործն այդ հայտնի դառնա, ապաշխարություն հասնելու պատճառով մահվան չդատվի, այլ բանտ դրվի եւ երաշխավորների միջոցով վերցրած գինը վերադարձնի եւ վաճառվածին ետ դարձնի, իսկ եթե հնար չլինի, գողացվածի գինը գողացվածի տիրոջը տան, եւ գողի աչքերը խրատելով /հանելով/՝ արձակեն եւ կամ նշան դնեն նրա վրա, որ չգողացողներին խրատ լինի:

ԳԼՈՒԽ ԾԹ
ԻՐԵՆՑ ՀՈՐՆ ՈՒ ՄՈՐԸ ԲԱՄԲԱՍՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ով բամբասի իր հորը կամ մորը՝ մահվան ենթարկվի /Ելք, ԻԱ- 17/:

Ծնողներին բամբասողների կամ նրանց հանցանքներն հրապարակողների մահվան ենթարկվելու մասին է ասում, իսկ ըստ մեր դատաստանների, ծնողների հետ բռնությամբ, անարգությամբ վարվողների կարգով դատվեն, ինչպես որ ցույց է տրված ԾԷ հոդվածում:

ԳԼՈՒԽ Կ
ԿԱՏԱԿՈՎ ՄԻՄՅԱՆՑ ՎՆԱՍՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե երկու այրեր կռվեն եւ մեկն իր ընկերոջը քարով կամ բռունցքով հարվածի եւ ընկերը չմեռնի, այլ ընկնի մահիճ, եթե առողջանա եւ հենակով շրջի, խփողը անպարտ լինի, բայց անդամի խափանման տուգանքն ու բժշկության գինը վճարի, իսկ եթե մեռնի, արյան գինն առնեն: Այս դատաստանը օրենքներում ասվեց եւ մեզ ամբողջությամբ պահելն արժան է:

ԳԼՈՒԽ ԿԱ
ԱՅՆ ՏԵՐԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԻՐԵՆՑ ԾԱՌԱՆԵՐԻ ԵՆ ՍՊԱՆՈՒՄ

Եթե մեկն իր ծառային կամ աղախնին գավազանով հարվածի եւ նա մեռնի, ապա նման տերերին դատաստանի վրեժխնդրություն լինի:

Տերն ասել է, թե՛ գավազանի դատաստանը, թե՛ սրի, եւ նման դատաստանները ապստամբության պատճառով են լինում: Սպանողը այ-

լազգի լինի, թե քրիստոնյա, ըստ այդմ, արյան գինը տալով տուժի:

Բայց եթե հարվածի ենթարկվածը մեկ կամ երկու օր ապրի, վրեժ չփնտրել, քանի որ ծառային իր արծաթով է գնել, սակայն տույժը, ըստ համապատասխան կանոնների /տուգանքով/ եւ ապաշխարությամբ լինի:

ԳԼՈՒԽ ԿԲ
ԱՅՐԵՐԻ ԿՌՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ
ՀՂԻ ԿԱՆԱՆՑ ՀԱՐՎԱԾԻ ԵՆԹԱՐԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եթե երկու այրեր կռվեն եւ հարված կպնի հղի կնոջը եւ հարվածից դեռ չձեւավորված սաղմը դուրս գա, ապա վնասի կես չափով տույժ լինի, որչափ որ կնոջ ամուսինը պահանջի եւ մեղավորը իր տուգանքը աղաչելով տա:

Իսկ եթե սաղմն արդեն ձեւավորված էր, ապա տուգանքը լինի՝ անձի դիմաց- անձ օրենքով: /Ելք, ԻԱ 21-22/:

Հայտնի են եւ դատաստանները աստվածային սահմանումների... Օրենքները սաղմի անձ ձեւավորված լինելու դեպքում՝ անձի փոխարեն էլ՝ անձ են պահանջում, սակայն այս դատաստանն ըստ Ավետարանի ներման միջնորդության փոխվել է եւ քրիստոնյաները տուգանքով եւ ապաշխարությամբ են վճարում, բան, որի մասին հայտնել ենք թագավորների դատաստաններում:

ԳԼՈՒԽ ԿԳ
ՀԱՐՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա՛չք՝ աչքի տեղ, ատա՛մ՝ ատամի տեղ, ձե՛ռք՝ ձեռքի փոխարեն, ո՛տք՝ ոտքի տեղ, խարա՛ն՝ խարանի տեղ, վե՛րք՝ վերքի փոխարեն, հարվա՛ծ՝ հարվածի տեղ: /Ելք, ԻԱ- 24-25/:

Եվ այս դատաստանը Ավետարանի շնորհներով /Մատթ. Ե 38-41/ տուգանքներով է վճարվում՝ համեմատած արյան բանական գնին: Սակայն առավել կամ նվազ գինը՝ քննության առնվի, ըստ անդամնե-րի եւ նրանց կատարած գործերի, յուրաքանչյուր անդամին բաժին հասնի քսանեւվեց դահեկան եւ կես դանգ:

ԳԼՈՒԽ ԿԴ
ՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐՎԱԾԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԾԱՌԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մեկն հարվածած լինի իր ծառայի կամ աղախնի աչքին եւ կու-բացնի, փոխան նրա աչքի՝ նրան ազատի եւ նա լինի ազատ: Եվ ա-տամն հարվածով հանելու դեպքում՝ նույնն անի, ատամի փոխան ա-զատելով նրան եւ նա լինի ազատ: /Ելք, ԻԱ 26-27/:

Թերեւս աստվածային այլ օրենքներ եւ զգայության /անդամները/ եւ ատամները միահավասար է դիտում, նույնպես եւ հրամայում է, որ ծառաներն ու աղախինները ծառայությունից փրկվեն նրանց ատամն հանելու դեպքում: Եվ այս դատաստանը անփոփոխ մնա քրիստոնյա հավատացյալներիս համար էլ: Իսկ եթե ծառան կամ աղախինը քրիս-տոնյա չլինի, ապա տուգանք վճարվի ըստ այդմ եւ կամ գնի կեսը: Եվ ըստ այդմ էլ լինեն դատաստանի իրավունքները:

ԳԼՈՒԽ ԿԵ
ԵՐԲ ՑՈՒԼՆ ՀԱՐՎԱԾԻ ՏՂԱՄԱՐԴՈՒ ԿԱՄ ԿՆՈՋ

ա /Եթե ցուլը հարվածի տղամարդու կամ կնոջ եւ եթե նրանք մեռնեն, ապա ցուլը քարկոծ արվի եւ ցլի տերը անպարտ մնա: /Ելք, ԻԱ-28/:

Եվ ըստ օրենքների այս դատաստանը մեզ համար հաստատուն մնա: Քարկոծելու փոխարեն ցուլը մորթել եւ միսը վաճառել այլազ-գիներին, /որ քրիստոնյա չեն/, իսկ գինը տան աղքատներին, եւ հաս-տատուն լրացմամբ ասվեց, որ ցլի տերը անպարտ մնա:

բ /Իսկ եթե ցուլն հարձակվող էր եւ բողոքել էին նրա տիրոջը եւ նա անփույթ էր վերաբերվել այդ բողոքներին եւ սպանել է որեւէ մեկին, ապա ցուլը քարկոծվի եւ ցլի տերը մեռցվի: Իսկ եթե փրկանք սահմա-նեն նրա համար, ապա իր անձի փոխան փրկանքը տա, որքան որ սահ-մանվի եւ ցլի տերը փրկվի: Եվ եթե որդիների կամ դուստրերի ցուլն հարվածի, ըստ նույն օրինակի վարվեն: /Ելք, ԻԱ 29-31/: Եվ այս օրեն-սդրական իրավունքները փրկության գին տալով ազատվելն են մեզ համար սահմանում եւ ոչ թե մահվան վճիռ կայացնելը, որովհետեւ Քրիստոսով ողորմությունն այդպես է արտահայտվում: ...Եվ փրկան-քի արյան գինը ցույց է տրված թագավորների դատաստաններում:

գ /Եվ եթե ծառայի կամ աղախնի ցուլն հարվածի, ապա երեսուն կրկնակի սատեր արծաթ տրվի տիրոջը եւ ցուլը քարկոծվի /Ելք, ԻԱ 32/:

Սակայն դատաստանի ժամանակ քրիստոնյաների եւ այլազգիների համար ընտրություն լինի:

Իսկ եթե հարվածի ենթարկվածի զգացողությունը վնասվի կամ խափանվի եւ ցլի տերը ցլի հարվածող լինելու մասին չգիտեր, նրա տերը անպարտ լինի: Իսկ եթե բողոքած լինեն եւ տերը ցլին մեջտեղից չի վերացրել, ապա տուժի՝ բժշկության ծախսերը եւ խափանված անդամների համար վճարը տալով: Եվ այս ամենը կայանա դատի միջոցով:

ԳԼՈՒԽ ԿԶ
ԵՐԲ ՑՈՒԼՆ Է ՑՈՒԼԻՆ ՀԱՐՎԱԾՈՒՄ

Իսկ եթե ցուլն է ցուլին հարվածում եւ հարվածի ենթարկվածը մեռնի, ապա կենդանի մնացած ցուլին վաճառեն եւ գինը բաժանեն ցուլերի տերերի մեջ: Իսկ սպանված ցլի միսը վաճառեն եւ բաժանեն աղքատներին:

Իսկ եթե հարվածող ցլի տերը նախապես գիտեր, որ իր ցուլը հարվածող է եւ այդ մասին արդեն բողոքել էին եւ նա ոչինչ չէր ձեռնարկել, ապա ցլի դիմաց ամբողջ ցլով տույժը լինի:

Եվ կենդանի մնացած ցուլը տան տուժողին, իսկ մեռած ցուլը սպանողի տիրոջը տան:

ԳԼՈՒԽ ԿԷ
ՀՈՐԵՐԻ ԵՎ ՋՐՀՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԵՐԲ ՆՐԱՆՑ ՄԵՋ ԿԵՆԴԱՆԻ ԸՆԿՆԻ

Եթե մեկը, որ հոր կամ ջրհոր բանա եւ չծածկի եւ այնտեղ անասուններ ընկնեն, հորի տերը արծաթով տուժի, որ տա անասունների տիրոջը եւ մեռած անասունը նույնպես նրանը լինի: /Ելք, ԻԱ 33-34/: Այս դատաստանը իրավամբ պարտավոր ենք պահել...:

ԳԼՈՒԽ ԿԸ
ՀՈՐԵՐԻ ԵՎ ՋՐՀՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԵՐԲ ՆՐԱՆՑ ՄԵՋ ՄԱՐԴ ԸՆԿՆԻ

Եթե բաց հորի կամ ջրհորի մեջ տղամարդ կամ կին ընկնի եւ մեռնի, թե ցերեկով էր, հորի տերը կես արյան գնով տուժվի, իսկ եթե գիշերով էր, բովանդակ արյան գնով տուժի: Նույն դատը լինի, երբ ընկնեն կանայք, ծառաներն ու աղախինները: Դատվի թե քրիստոնյան, թե այլազգին: Ըստ գիշերով հորն ընկածի դատ լինի կույրի, հարբածի եւ մանկան համար:

ԳԼՈՒԽ ԿԹ
ԵԹԵ ՑՈՒԼՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ Է ՀԱՐՎԱԾՈՒՄ

Եթե ցուլն հարվածի կովի, ոչխարի կամ այլ, այսպիսի ընտանի կենդանիների եւ սպանի, եթե տերը չգիտեր, թե ցուլն հարձակվող է, ապա կես արյան գնով տույժ լինի, եւ սպանված փոքր կենդանին իր տիրոջը լինի, իսկ մեծը, երբ փոքրի կրկնակի գինն ունենա, բաժանվի եւ կրկնակի գնով վաճառվի ցուլի տիրոջը: Իսկ եթե նախապես բողոքած լինեն, թե ցուլն հարձակվող է, ապա ամբողջական տույժ լինի: Նույնը լինի նաեւ անասուրբ կենդանիների, այսինքն, բեռնակիրների դեպքում:

ԳԼՈՒԽ Հ
ԳՐԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՄԻՄՅԱՆՑ ՀԱՐՎԱԾՈՒՄ ԵՆ

Եթե ձին կամ էշը կամ ջորին ոտքով հարվածելով միմյանց սպանեն կամ մի այլ վնաս տան միմյանց, ապա, եթե անասունի հարվածող լինելու մասին տերը գիտեր եւ չէր զգուշացնում, ամբողջական տույժ լինի նրան, ապա թե անասունի տիրոջ անգիտությամբ էր՝ վնասի կեսն հատուցի: Նույնը լինի, եթե անասունը այլ կենդանիների վնասի կամ սպանի:

ԳԼՈՒԽ ՀԱ
ԱՅՆ ԳՐԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀԱՐՎԱԾՈՒՄ ԵՎ ՎՆԱՍՈՒՄ ԵՆ ՄԱՐԴՈՒՆ

Եթե գրաստն հարվածում է մարդու եւ վնաս է հասցնում, եթե տերը գիտեր անասունի հարվածող լինելու մասին եւ չէր զգուշացրել, ապա ամբողջական տույժ լինի, իսկ եթե պատահականորեն կամ տիրոջ զգուշացվելուց հետո եղավ, ապա կես վնասի չափով գրաստի տերը տուժի: Այդպես լինի նաեւ, երբ անասունի հարվածից մարդը մեռնի: Իսկ եթե մարդը շատ չի վնասվել եւ ոչ էլ մեռել, գրաստի տերը խափանված անդամների համար վճարելով ու բժշկության ծախսերի չափով տուժի: Գիտենալով գրաստի հարվածող լինելու մասին եւ չզգուշացնելով, այդ-ժամ՝ ամբողջական է տույժը, հակառակ պարագայում՝ կեսն է: Իսկ ապաշխարության կերպը վարդապետները քննելով որոշեն:

ԳԼՈՒԽ ՀԲ
ԱՅՆ ԳՐԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՆՐԱ ՏԻՐՈՋ ՅՈՒՐԱՅԻՆՆԵՐԻՑ ՈՐԵՎԷ ՄԵԿԻՆ ՀԱՐՎԱԾՈՒՄ ԵՆ

Եվ եթե գրաստն հարվածելով կամ ծառային կամ կնոջը կամ աղախնին կամ տղային կամ աղջկան եւ կամ այլ մեկի սպանի կամ վնասի, թե անասունի հարվածող լինելու մասին տիրոջ անգիտությամբ լինի եւ կամ տիրոջ կողմից զգուշացնելուց հետո, ապա տերն անպարտ լինի դատաստանի: Իսկ եթե յուրայինները բողոքել էին եւ նա գրաստին չվերացրեց եւ կամ չպատվիրեց՝ այդ գրաստից զգույշ մնալ, ապա վարդապետների կողմից դատաստան լինի եւ նաեւ ապաշխարություն սահմանվի, ըստ դեպքի կամավոր կամ ակամա լինելու:

ԳԼՈՒԽ ՀԳ
ԱՅՆ ԳՈՂԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՈՉԽԱՐՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ ԵՆ ԳՈՂԱՆՈՒՄ

Եթե մեկը արջառ կամ ոչխար գողանա եւ սպանի կամ վաճառի, պարտ է հինգ արջառ հատուցել մեկ արջառի փոխարեն եւ չորս ոչխար՝ մեկ ոչխարի փոխարեն... Իսկ եթե ոչխարը /չի մորթել կամ վաճառել/ տույժը լինի մեկի կրկնակին:

ԳԼՈՒԽ ՀԴ
ԱՅՆ ԳՈՂԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՏՈՒՆ ԵՆ ԿՏՐՈՒՄ

Իսկ եթե գիշերով գողը բռնվի ու մեռցվի, այդ սպանություն չի լինի: Սակայն եթե արեւը ծագի եւ այդժամ մեռցվի, ապա սպանողը մահապարտ է եւ սպանելու փոխարեն՝ մեռցվի: /Ելք, Իբ 2,3/: Որովհետեւ խավար գիշերվա անգիտության մեջ, ըստ օրենքի, մեղք չի համարվում /գողին սպանելը/, սակայն, երբ լույսը ծագի, այդժամ իբրեւ կամավոր սպանող /սպանողը/ պիտի իրավամբ դատվի: Որովհետեւ մարդագողերին հրամայվեց սպանել, իսկ մեզ էլ հրամայվեց /հանցանքի/ կամավոր եւ ակման դիտելուց հետո՝ ապաշխարություն սահմանել եւ փրկանքը լինի, որպես ցույց է տրվել. Կորուսյալ գողոնի համար՝ չորս անգամ ավել հատուցվի: Ձկորսված գողոնի համար՝ հատուցվի գողոնի կրկնակին:

ԳԼՈՒԽ ՀԵ
ԵԿԵՂԵՑՈՒՑ ԳՈՂԱՑՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երբ եկեղեցուց գողացվածը կորել է կամ վաճառվել, եւ չի լինում ետ վերադարձնել, մեկի փոխարեն հինգը հատուցվի, իսկ եթե կորած չլինի, մեկի՝ կրկնակին: Եվ ապաշխարությունը ցույց է տրված կանոններում:

ԳԼՈՒԽ ՀԶ
ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԱՐՏԵՐՈՒՄ ՈՒ ԱՅԳԻՆԵՐՈՒՄ ԵՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ ԱՐԱԾԵՑՆՈՒՄ

Եթե մեկն արտերում ու այգիներում իր խաշինքն է արածեցնում, ըստ բերքատվության արդյունքի չափով՝ իր անդաստանից տույժը լինի: Իսկ եթե ողջ անդաստանով մեկ արածեցնի, ապա տույժը իր այգու ընտիր կողմը տալով լինի:

ԳԼՈՒԽ ՀԷ
ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՀՐԴԵՀԵԼՈՎ ՎԱՍՏԱԿՆԵՐ ԵՆ ԱՅՐՈՒՄ

Եվ եթե մեկը կրակ վառի փուշն այրելու եւ դրանից այրվի նաեւ վաստակը կամ կալը կամ անդաստանը եւ այլն. տուժելով՝ տուժի նա, ով կրակը արեց: /Ելք, Իբ 6/:

ԳԼՈՒԽ ՀԸ
ԵՐԲ ԻՐ ԵՆ ՊԱՀ ՏԱԼԻՍ ՄԱՐԴՈՒՆ, ԻՍԿ ՆԱ ԿՈՐՑՆՈՒՄ Է ԿԱՄ ԳՈՂԱՆԱԼ Է ՏԱԼԻՍ

Եթե մեկն ընկերոջն ավանդ տա արծաթ կամ կարասիներ եւ ավանդ վերցնողի տնից եթե ավանդը գողացվի եւ գողը գտնվի, ապա, թող կրկնակի հատուցի, իսկ եթե գողը չգտնվի, Աստծո տան մեջ ավանդառուն երդվի, թե իր ընկերոջ ավանդ տրվածի հետ նենգությամբ չի վարվել, ինքը չի յուրացրել:

Արջառի, էշի, ոչխարի եւ հագուստի եւ այլ բաների կորուստների դեպքում, երկուսով Աստծո առջեւ դատաստանի գան, եւ նրանցից ով Աստծո ձեռքով բռնվի, նա էլ կրկնակին հատուցի ընկերոջը: /Ելք, ԻԲ 7-9/:

Անփոփոխ պահել այս դատաստանը: Գողը երբ գտնվի՝ կրկնակին հատուցի: Իսկ երդմամբ օրինակ է տրվել, որ երդվյալը, երբ անմեղ լինի՝ չտուժի:

Ով Աստծո ձեռքով բռնվի՝ կրկնակի տուժի, կամ եթե սուտ երդում է տվել եւ հայտնի է դարձել, կամ չերդվելով ցույց տվեց, թե ստում է, իսկ մյուսը, երբ զրպարտող լինի, կրկնակի տույժ լինի:

ԳԼՈՒԽ ՀԹ
ՁՈՐՔՈՏԱՆԻՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եթե մեկն իր ընկերոջը էշ, եզ, ոչխար կամ այլ անասուն ի պահ տա եւ բեկում լինի կամ մեռնի, կամ գերի տարվի եւ ոչ ոք չիմանա ուր լինելը, ապա երկուսի միջեւ Աստծո երդումով հարցը լուծվի: Եթե նենգություն չկա ընկերոջ ունեցվածքի հանդեպ, տույժ չլինի:

Իսկ եթե գողանա ընկերոջ պահ տվածը, տույժ լինի: Իսկ եթե գազաններից հոշոտված լինի, հոշոտվածի մնացուկները տիրոջը ներկայացնի, եւ կրկին չլինի տույժ:

Իրավամբ է այս դատաստանը կարգել, քանի որ անասունները ի պահ տալը՝ վարձով է, որի համար չորքոտանիներին գողանալու դեպքում հարկ է վարձով հանձն առնողը տուժի:

ԳԼՈՒԽ Ձ
ՆՐԱ ՄԱՍԻՆ, ՈՐ ՈՐԵՎԷ ԲԱՆ, ՈՐԵՎԷ ԻՆՁՔ ՎԵՐՑՆԵԼՈՎ՝ ՎՆԱՍՈՒՄ Է

Եթե որեւէ մեկը իր ընկերոջից անոթ կամ անասուն կամ որեւէ իր խնդրի եւ վնասի, կամ սատկեն, կամ հափշտակեն, իսկ տերը այդտեղ ներկա չլինի, ապա ավանդ վերցնողը վնասն հատուցի, իսկ եթե ներկա լինի, ավանդ վերցնողը՝ չհատուցի: Եթե վարձով է դրանք փոխ առել՝ վարձով էլ թող հատուցի:

ԳԼՈՒԽ ՁԱ
ԽՈՍՔ ԱՌՆՎԱԾ ԿՈՒՅՍԻՆ ԽԱԲՈՂԻ ՄԱՍԻՆ

Եթե մեկը խոսացված կույսին խաբի եւ նրա հետ քնի, ապա թող նրան կնության առնի, խոսացված լինելու դիմաց տուգանք, գլխագին տալով: Իսկ եթե աղջկա հայրը չհամաձայնվի նրան կնության տալ, ապա աղջկա հորը վճարի այնքան, որքան որ գլխագին է սահմանված կույսերի համար: /Ելք, ԻԲ 16-17/: Հայտնի է նաեւ այս դատաստանը, որ խաբողը, երբ հանձն է առել կնության առնել, ըստ օրենքների մահվան չի դատվել, թեպետ եւ կույսը խոսված էր, եւ նա, ով բռնաբարեց, գլխագին տալով կնության է վերցնում, իսկ եթե աղջկա հայրը չկամենա, այդժամ տույժ լինի, ըստ խաբելու պարագայի:

...Ապա, եթե երիտասարդը կամ նրա յուրայինները չկամենան աղջկան կնության վերցնել, այդժամ կրկնակի տույժ լինի, ըստ օրենքների:

ԳԼՈՒԽ ՁԲ
ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՐ ԻՐԵՐ ԵՆ ՓՈԽ ՏԱԼԻՍ

Եթե քո եղբորը արծաթ ես փոխ տալիս եւ նա քեզանից աղքատ լինի, մի՛ շտապիր նրա մոտ եւ մի պահանջիր նրանից տոկոսներով:

Հին կտակարանները եւ նորերը այս մասին միաբանվելով՝ դուրս են հանել վաշխն ու տոկոսները: /Ելք, Իբ 25, Ղուկաս, Զ 34-35 եւ այլուր/: Գիտեցողների համար ավելորդ է կրկնել, թե երբ օրենքը շտապել չի հրամայում, որչա՞փ եւս շնորհը /Նոր Կտակը/: Եվ երբ փոխ ասվեց, նույնչափով հատուցվի: ...Եվ որդիները հայրերի մահվանից

հետո, չլինի թե վաշխ հատուցեն, այլ միայն՝ փոխ տվածը, այլ կերպ, ըստ իրավունքների չի լինի: Եվ այդ եւ օրենսդրություն է եւ միեւնույն ժամանակ՝ դատաստան:

ԳԼՈՒԽ ՁԳ
ԳՐԱՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մեկը գրավ վերցնի մեկից տուն կամ այգի, կամ հող, եւ այսպիսի այլ ինչքեր, այսպես հաշվեն. ամբողջական հաշիվը անվաշխ լինի եւ ամբողջական հաշիվը հատուցի: Եվ եթե ամբողջականից ավելին է կերել՝ այդ եւս հատուցի: Եվ ինչ որ գրավից ծախսած լինի՝ հավելյալ հաշիվը տա, եւ եթե ծախսվածը գրավի տիրոջ անձեռնհասությունից չի գալիս, կամ թե ծախսվել է գրավը վերանորոգելու համար՝ այդ հաշվի առնվի: Նույնի նման լինի՝ ինչ որ կենդանիներին է վերաբերում: Եթե հանդերձանք եւ սրանց նմաններն են գրավ դրվել, եւ մաշվել են, ամբողջական հաշվից մաշվածության չափ պակասել է:

Եվ եթե ոսկեղեն կամ սրանց նմանները գողացվել են կամ կորել, եթե կորուստը նենգված չէ, երդմամբ այդ հաստատել, եւ տիրոջ կորուստն է, իսկ եթե նենգված է, քառապատիկ տույժը լինի: Իսկ եթե ձեռքին է եւ ստում է՝ կրկնակի տույժը լինի: Իսկ եթե ավարի տարված՝ կորուստը տիրոջը լինի: Եթե հատված ծառ կա, այրված այգի կամ ցանք, տունը կամ այլ ինչքեր՝ գրավի ժամանակ վնասվել են, ապա թե, տիրոջ պատճառով եղած լինեն, վնասը տիրոջը լինի, իսկ եթե գրավառուի պատճառով է եղել՝ վնասը նրանը լինի: Վայրապար վնասները, բեկումն անասնոց՝ գրավառուն հատուցի, իսկ ընդհանուր համաճարակների պատճառով վնասները՝ տիրոջ վրա լինեն: Եթե օրենքը թույլ չի տալիս, աղքատի գրավը / Ելք, ԻԲ 26, Բ Օրենք, ԻԴ 13/ մինչեւ մութն ընկնելը պահել, ապա որչափ եւս հրաժարեցրել է վաշխով գրավից:

ԳԼՈՒԽ ՁԴ
ՏՈՒՆ ԱՅՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մեկն իր կամքով տուն վառի եւ եթե կրակից մարդ մեռնի, վառող ձեռքը խրատել /կտրել/, թեպետ, ըստ օրենքների մահվան է արժանի, թերեւս խրատով ապաշխարության հասնի: Եվ տույժ լինի, եւ եթե կարող լինի՝ նրանից արյան բովանդակ գին պահանջվի, ապա, եթե՝ ոչ, այնքան, որքան կարող լինի: Տույժի դեպքում խրատը /ձեռքը կտրելու պատիժը/ չի կիրառվում ոչ այս եւ ոչ այլ դեպքերում, միայն անառակներինն է խրատը /ձեռքի կտրելը/, որոնց նկատմամբ տուգանքի տույժ չի կիրառվում, այլ, ըստ արժանվույն խրատը կիրառեն: Իսկ եթե անասուններից են վառվել, ապա փոխարենը քառապատիկ հատուցի: Իսկ եթե ամբարված խոտ, ապա կրկնակիի չափով տույժը լինի: Նույնը լինի ցանքսերի եւ նման բաների համար:

ԳԼՈՒԽ ՁԵ
ՏՆԿԻՆԵՐ ՀԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մեկը սատանայի ցասմամբ շարժվելով տնկիներ հատի եւ ճշտությամբ հայտնի դառնա, այդժամ տունկ կտրողի համար դատաստան լինի: Եվ իր տնկիների տարիների չափով, որքան որ դրանք անպտուղ լինեն, այդքան տուժի: Իսկ եթե հատողը տնկիներ չունի, այդժամ տույժը ըստ հատված տնկիի գնի լինի: Որովհետեւ օրենքները / Բ Օր. Ի 19-20/ հրամայում են անգամ գրված երկրների տնկիները չկտրել:

ԳԼՈՒԽ ՁԶ
ԱՎԱՆԴՆԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվ Տերը խոսեց Մովսեսին ու ասաց. «Ով մեղք գործի եւ ով արհամարհի խախտելով Տիրոջ պատվիրանները եւ մերձավորին խաբելով իրեն պահ տված ավանդի կամ որեւէ իրի համար կամ որեւէ այլ մի վնաս հասցնի իր մերձավորին եւ կամ կորած մի բան գտնի, բայց ուրանա, որ գտել է, եւ դրա համար սուտ երդում տա, այսինքն անի այն ամենը, որով մեղք գործած է լինում, բայց գիտակցի, որ մեղանչել եւ հանցանք է գործել, նա պիտի հատուցի իր հասցրած վնասի համար, իրեն պահ տված ավանդը կորցնելու համար, կորած բանը գտնելով՝ ուրանալու եւ սուտ երդում տալու համար: Իր հասցրած ամեն վնաս նա պետք է հատուցի ամբողջությամբ, դրան ավելացրած վնասված իրի արժեքի մեկ հինգերորդը: Նա թող Տիրոջը հատուցի հենց իր մեղքը

գիտակցած օրը: /Ղեւտ. Զ 1-5/: Աստվածախոս այս դատաստանը հաստատուն մնա նաեւ եկեղեցում, քանի որ նույն Տիրոջից է: Բայց խոյի քավությամբ /Ղեւտ. Զ -6/ ցույց տրվեց, որ նրանք, ովքեր մի անգամ դատաստանի են ենթարկվել, ապա անհրաժեշտ է, որ ապաշխարեն: Քանի որ կանոններն ու դատաստանները միմյանցից այն բանի համար են բաժանվում, որ ծածուկ եղած հանցանքները, որոնց որ պետք է տույժ լինի, կանոններով հրամայում է ողորմության տակ առնել: Իսկ դատաստանը, որով տույժ է լինում, այդ չի վերացնում ապաշխարությունը: Սակայն իմաստուններին, որոնք ունեն ներումներ եւ փորձառություն, այդ ապահով պատճառով ապաշխարության դատաստան անելու յուրաքանչյուր իրականացում՝ կանոններով թողեցինք նրանց:

ԳԼՈՒԽ ԶԷ
ԵԿԵՂԵՑՈՒՑ ՊՏՈՒՂՆ ԱՐԳԵԼՈՂՆԵՐԻ ԿԱՄ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՊՏՈՒՂ ՁՏՎՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մեկն անգիտությամբ ուտի սրբություններից, այդժամ, թող որ իր կերածի արժեքի վրա ավելացնի մեկ հինգերորդը եւ վերադարձնի քահանային: Թող նրանք չպղծեն սրբությունների սրբությունը, որ Իսրայելի որդիներն առանձնացրել են Տիրոջ համար: Եվ իրենց վրա անօրենության հանցանքներ չկուտակեն, որովհետեւ ես եմ Տերը, որ /այդ սրբությունով/ սրբագործում եմ նրանց: /Ղեւտ. ԻԲ 14-16/: Աստվածային այս նշանակված դատաստանը անփոփոխ մնա սուրբ եկեղեցու համար:

ԳԼՈՒԽ ԶԸ
ՀԱՅՀՈՅԱՆՔ ՏՎՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իսրայելցիների մեջ մի մարդ էր ապրում, որը որդին էր եգիպտացի մի տղամարդու, բայց մայրը իսրայելցի էր: Բանակատեղում կռիվ արեցին իսրայելցի կնոջից ծնված այս մարդն ու մի իսրայելցի: Իսրայելցի կնոջ որդին տվեց Տիրոջ անունն ու հայհոյեց. նրան բերեցին Մովսեսի մոտ: Նրա մոր անունը Սալամիթ էր: Նա ցեղից Դաբրիի դուստրն էր: Այդ մարդուն հսկողության տակ պահեցին, որ Աստծո հրամանով դատեն նրան: Եվ Տերը խոսեց Մովսեսի հետ ու ասաց. «Հայհոյող այդ մարդուն հանեցեք բանակատեղիից դուրս, եւ նրանք, ովքեր լսել են այդ հայհոյանքը, որպես վկա թող ձեռքերը դնեն նրա գլխին եւ ամբողջ ժողովուրդը թող քարկոծի նրան: Իսկ դու կխոսես Իսրայելի որդիների հետ եւ կասես. «Ով որ կհայոյի Աստծուն՝ իր մեղքի պատիժը կկրի: Իսկ ով որ հայհոյի Տիրոջ անվանը, թող մահապատժի ենթարկվի եւ ամբողջ ժողովուրդը թող քարկոծի նրան: Աստծուն հայհոյողը օտարական լինի, թե տեղաբնակ, մահապատժի թող ենթարկվի: Եվ հանեցին հայհոյչին բանակից դուրս եւ ժողովրդով քարկոծեցին: Եվ Իսրայելի որդիներն այնպես արեցին, որպես որ Տերը Մովսեսին պատվիրեց: /Ղեւտ. ԻԴ 10-16,23/:

Իրավացի է այս դատաստանը վերափոխել այսպես. եթե որեւէ մեկը կռվի մեջ սատանայից շարժվելով հայհոյեց անունը Քրիստոսի, կամ խաչը կամ եկեղեցին կամ քահանային եւ կամ մկրտությունը, եթե կռվողներից մեկն օտարազգի է, ինչպես որ Մովսեսի ժամանակ պատահեց, եւ քարկոծելը եւ սպանելը արժան է: Իսկ եթե քրիստոնյան է հայհոյել՝ պատահմունքը քննելով՝ մահվան դատաստան լինի:

Ծ.Թ. Ինչպես տեսնում ենք, այս հոդվածը քրիստոնեական դատավճռով չի վերջանում: Եթե ոչ՝ անտեսված կլիներ հայհոյողին էլ, թեկուզ մասնակի փրկելու առումով Քրիստոսի Փրկիչ լինելը, որ ըստ Ավետարանի հայհոյողին էլ է մասնակիորեն փրկում մահվան դատաստանից, տալով նրան ապաշխարության հնարավորություն՝ իր հանցանքն ապաշխարելու: Որովհետեւ Տերն ասաց. «Ով որ հայհոյի Հորը եւ Որդուն, պիտի ներվի, իսկ ով որ հայհոյի Սուրբ Հոգուն, նա պիտի չներվի՝ ոչ այս աշխարհում եւ ոչ այն»:

Այսինքն, այս հոդվածի դատաստանը ստուգապես՝ Սուրբ Հոգուն հայհոյողներին է վերաբերվում, որ հարկ է մանրամասն ու անաչառ քննության առնելով բացահայտել, պարզել:

ԳԼՈՒԽ ԶԹ
ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ՍՊԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվ ով որ անասուն սպանի, անասունի տիրոջը հատուցի նույնպիսի անասունով /Ղեւտ. ԻԴ 18/: Եվ այս հայտնի տեսությամբ մեզ եւս լինի աստվածային դատաստան անել այս հարցում: Սակայն դատաստանից առաջ քննության առնվի անասունի սպանելու դրդումը:

ԳԼՈՒԽ Ղ
ՀՈՂԸ ՎԱՃԱՌՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե քո եղբայրը, որ քեզ մոտ է ապրում, աղքատանա եւ վաճառի իր կալվածքներից, ապա նրա մերձավորը կարող է գալ եւ իր եղբոր վաճառածը ետ գնել, փրկել: Իսկ եթե արտ վաճառողը ունեւոր ազգականներ չունենա եւ հետո ինքն ի վիճակի լինի ետ գնել, ապա կարող է իր կալվածքը ետ գնելով փրկել:

Նա պետք է հաշվի եւ հանի վաճառքից անցած տարիները եւ ապա մնացածը վճարի եւ իր կալվածքը նորից կպատկանի իրեն: Իսկ եթե նրա ձեռքում հարկավոր գումարը չլինի հատուցում անելու, ապա վաճառվածը կմնա նրան, ով գնել էր, մինչեւ որ թողության տարին լրանա: Իսկ երբ լինի թողության տարին, այդժամ նրա կալվածքը իրեն վերադարձվի: /Ղեւտ. Իե 25-28/:

Ըստ Ավետարանի հրամանների Տիրոջից առավելություններ հրամայվեց ամենայն ինչում, նույնպես եւ դատաստաններ անելու մեջ: /Մատթ. Ե 21-22, Է, 2: Հովհ. Է 24/:

Եվ որովհետեւ այժմ ոչ առավելությամբ եւ ոչ էլ հավասարությամբ ենք վարվում, պարտավորություն է մեզ համար ետ գնելով փրկելու իրավունքը պահել: Եվ եթե աղքատության պատճառով է կալվածքը վաճառվել, թող նրա ազգուտոհմը իրավունք ունենա ետ գնել մինչեւ յոթ տարի ժամանակում: Իսկ եթե չկարողանա փրկել յոթ տարում, ապա, այդժամ միայն վաճառքը հաստատվի:

ԳԼՈՒԽ ՂԱ
ՏՈՒՆ ՎԱՃԱՌՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մեկը պարսպավոր քաղաքում տուն վաճառի, իր տունը կարող է ետ գնել մեկ տարվա ընթացքում, հաշված վաճառքի օրվանից: Իսկ եթե մեկ տարվա ընթացքում ետ գնել չկարողանա, տունն հաստատվի գնողի անվանը եւ նրա ազգին: Եվ դա արդեն ետ գնելու ենթակա չէ, անգամ ազատագրման տարում: /Ղեւտ. Իե 29-30/:

...Սակայն պարիսպ չունեցող քաղաքների տները եւ ավանների տները թող ագարակներ համարվեն եւ դրանք միշտ ենթակա են ետգնման, իսկ ազատագրման տարում նման տունն ազատվում է եւ տունն առած բնակիչները տնից պիտի դուրս գան: /Ղեւտ. Իե 31/: Եվ թեպետ թողության տարի մեզանում առայժմ չկա, սակայն մեկ տարում ետ գնելը հաստատուն մնա:

ԳԼՈՒԽ ՂԲ
ՏՈՒՆ ԳՆՈՂ ՈՒ ՎԱՃԱՌՈՂ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեւտացիների քաղաքների տները, որոնք որ հենց իրենց կալվածքներն են այդ քաղաքներում, վաճառված տները կարող են միշտ ետ գնվել Ղեւտացիներից: Իսկ եթե մեկը Ղեւտացուց տուն գնի, ապա թողության տարում տնից դուրս գա, որովհետեւ այդ կալվածքները Ղեւտացիներինն են: Իսկ քաղաքամերձ ագարակները վաճառքի ենթակա չեն, քանի որ դրանք նրանց հավիտենական կալվածքներն են /Ղեւտ. Իե 32-34/:

Հարկ է այս դատաստանը այսպես իմանալ, որովհետեւ քահանաները իրենց տները կարող են վաճառել միայն քահանաներին եւ միշտ փրկանքով ետ գնելու առավելությունն ունեն, քան աշխարհականների վաճառքներն են: Եվ ագարակները եւ այլ ստացվածքները, որ եկեղեցիների մերձակայքում են, չվաճառվեն, քանի որ նրանց հավիտենական կալվածքներն են: Այս իրավունքն էլ այսպես լինի, թեպետ թողության տարի մեզանում առայժմ չկա: Նաեւ բոլոր դատաստանները ծախքն ստացողին ցույց տրվի փրկագնելու ժամանակ:

ԳԼՈՒԽ ՂԳ
ՋՐԱՂԱՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվ եթե աղքատության պատճառով է ջրաղացը վաճառվել, ապա մեկ տարի ետ գնելու փրկության իրավունքի մեջ լինի նրա եւ նրա ազգականների համար: Իսկ այլազգիների /ոչ քրիստոնյաների/ համար, նույն տարում վաճառքն հաստատվի:

ԳԼՈՒԽ ՂԴ
ԱՆԱՍՈՒՆ ԳՆՈՂ ԵՎ ԾԱԽՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվ եթե մեկը չորքոտանի է վաճառում, ապա երեք վկաների կողմից հաստատի, թե՝ գողացված չէ, կամ հիվանդ չէ եւ կամ ոտքով հարվածող չէ: Մեկ տարում վաճառողն իրավունք ունի ետ գնել, գնից հանե-

լով, ըստ արժանվույն: Իսկ եթե գողոն լինի, ամեն ժամ իրավունք է ետ դարձնել եւ գինն էլ վաճառողից վերցնել: Ըստ արտաքին այլ պատճառների, գնվածը մինչեւ յոթ օր փորձվի, ապա նոր վճիռ կայացվի եւ եթե վաճառքը ետ չդարձվի, ապա հաստատվի: Իսկ վաճառողի համար սահմանված է, ըստ արժանվույն վաճառել: Եվ վաճառքի սահմանը հարկ է պահել որպես վաճառողի, նույնպես էլ գնորդի համար:

ԳԼՈՒԽ ՂԵ
ԵԶՆԵՐ ԾԱԽՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվ երեք վկաներով հաստատեն, հերկում փորձված լինելու, նաեւ կալում եւ որ՝ տարբեր հիվանդություններ չունի, որ՝ հարվածող է, թե՝ ոչ եւ որ՝ գողոն չէ: Մինչեւ մի տարի փորձվի նման բաների ճշտությունը, ետ դարձնել լինի այդ ժամանակում, իսկ գողոն լինելու դեպքում ամեն ժամ ետ դարձնել, իսկ այլ պարագաներ ճշտելու համար՝ յոթ օր փորձվի: Եվ այլ անբավարարություններ ունենալիս՝ ետ դարձվի, բացի լծի, հերկի մեջ, սայլին եւ կալում աշխատանքից, որոնց պատասխանը փորձելով արդեն հայտնի է լինում: տես նաեւ հոդված ՂԴ/:

ԳԼՈՒԽ ՂԶ
ԿՈՎ ԾԱԽՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նույնպես եւ կով վաճառելիս վկաների միջոցով հաստատվի /ինչ որ վերում խոսվեց/ նաեւ, որ յուրաքանչյուր տարի ծնում է: Այս ամենից բացի, մեկ տարվա ընթացքում կարելի է ետ դարձնել, ըստ արժանվույն գինը հաստատելով: Եվ այլ պարագաների համար յոթ օր փորձվի:

ԳԼՈՒԽ ՂԷ
ՓԵԹԱԿՈՎ ՄԵՂՈՒՆԵՐ ԾԱԽՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեղունները վաճառել աշնանը, ըստ մեղրատվության չափի լինի գինը, վաճառվի սերմի հետ: Ըստ պիտանության կարելի է անկշիռ եւ կամ կշռով վաճառել՝ փեթակներով, եւ եթե վաճառքից հետո պարզվի, որ կշիռը պակաս էր, լրացվի վաճառողի կողմից, եթե ոչ, ապա նման պատիր վաճառքը չկայացվի: Իսկ եթե կշռից ավել է եւ խաբեությամբ

չէ, ետ չվերադարձվի, որովհետեւ դրա հույսով է գնում: Եվ գարնանը մեղունների դրած սերմերի վաճառքը տասից քսան օր փորձելուց հետո լինի եւ վճիռը վկաներով հաստատվի, երբ մեղունների մտնելն ու ելնելը ուղիղ ցույց տրված լինի: Ապա թե օրերի թյուրությամբ վճիռը կայացվի, նման է լինում գողության եւ վերադարձվի վաճառողին:

Այդ օրերը ոչինչ համարելը գնողին վնաս է բերում: Մննդի պատճառով սատկածները եւ այդ տարի անպտուղ մնացածները՝ գնողի վրա լինի:

ԳԼՈՒԽ ՂԸ
ԿԱՐԱՍ ԿԱՄ ԱՅԼ ՏԵՍԱԿԻ ԱՆՈԹՆԵՐ ԾԱԽՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվ կարաս գնելու ու վաճառելու դեպքում, հաստատել, որ երբ լցված է լինում, կարող է պահել ինը տարի: Ապա եթե կարծվի, որ նման արժեք չունի թրծման որակի պատճառով, ապա գինը կորցնի եւ կարաս գործածողն առնի՝ վնասի կեսի չափ տուժելով:

Իսկ եթե կարծր չլինելու պատճառով կոտրվի եւ թաղելու ժամանակ այդ լինի, վաճառողն անտույժ լինի: Իսկ եթե այդ նախապես երկբայելի է եղել, ապա միայն վաճառողը տուժի: Նույն կերպ լինի թե փոքր եւ թե մեծամեծ կարասների եւ ամանների համար:

ԳԼՈՒԽ ՂԹ
ԱՅԳԻ ԵՎ ԴՐԱԽՏ ԿԱՊԱԼՈՎ ՎԵՐՑՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Շատերն են այգիներ գնում եւ վաճառում, տարվա պտղից հույսով շահելու համար: Եվ եթե պատահի, որ պտուղը պակաս լինի, արժան է, որ վաճառողը ամբողջ գլխավոր գինը պահպանի, ոչ միայն հույսի համար, այլ նաեւ այն աշխատության, որ կատարել է այգում:

Եվ եթե գնորդը շահ ստանա, որ խաբեությամբ չլինի, իր ստացած շահը վաճառողին չլինի թե վերադարձնի, որովհետեւ հաջողությամբ կատարված վաճառքները բազմապատիկ շահ են տալիս: Այս վաճառքի կապակցությամբ փորձի օրերը տասն օր են՝ երեք վկաների ներկայությամբ. իսկ նման պարագաների դատաստանները ցույց են տրված ըստ իրավունքների:

ԳԼՈՒԽ Ճ
ՋՐԱՂԱՑՆԵՐ ՎԱՐՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այսպիսի բաներ վարձով վերցնելիս՝ վկաների միջոցով հաստատումն անել: Շահ ստանալը վարձով տվողի համար առանց զեղչի լինի եւ շահի դիմաց չվճարի տուգանք: Եվ իր վրա լինի պակաս բաները պատրաստելը, եթե ոչ, ապա այդ պակասների պատճառով եղած վնասները նույնպես վարձի գինը որոշելիս՝ տվողի վրա լինի, իսկ անպատրաստությունից եղած վնասները՝ վերցնողին լինի՝ քարի, նավի, երկաթի եւ այլ բաներում, նաեւ գողացվածները:

Իսկ այրվածը, եթե տիրոջ պատճառով լինի՝ վնասը նրանը լինի, իսկ եթե վարձով վերցնողի պատճառով է՝ նրանը:

Ըստ այդմ դատաստան անել նաեւ նման այսպիսի հարցերում:

ԳԼՈՒԽ ՃԱ
ՀԱՅՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱԺԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մովսեսի մոտ եկան Հովսեփի որդի Մանասեից սերված Մաքիրիի որդի Գաաղադի որդի Ոփերի որդի Սաղպաադի դուստրերը, որոնց անուններն էին՝ Մաաղա, Նվա, Էգղա, Մեղքա եւ Թերսա: Նրանք կանգնելով Մովսեսի, Եղիազար քահանայի, իշխանների եւ ողջ ժողովրդի առաջ, վկայության խորանի դռանը, ասացին. «Մեր հայրը մեռավ անապատում: Նա Կորխի՝ Տիրոջ դեմ ընդվզած ամբոխի մեջ չէր: Նա մեռավ իր այլ մեղքի համար՝ առանց որդիներ ունենալու: Արդ թեպետ նա որդի չունեցավ, բայց մեր հոր անունը, թող չջնջվի մեր ցեղի միջից՝ այն բանի համար, որ որդի չունեցավ: Մեզ բաժին տվեք մեր հոր եղբայրներին հավասար»: Մովսեսը նրանց պահանջը ներկայացրեց Տիրոջ առաջ: Տերը խոսելով Մովսեսի հետ, ասաց. «Ճիշտ են ասում Սաղպաադի դուստրերը: Նրանց նույնպես բաժին տուր իրենց հոր եղբայրներին հավասար: Իրենց հոր հասանելիք բաժինը կհատկացնես նրանց եւ Իսրայելին բացատրելով, կասես. «Եթե մեռնող մարդը որդի չի ունենում, նրա ժառանգությունը պետք է անցնի իր դուստրերին: Եթե նա դուստր չունի, նրա ժառանգությունը տվեք իր եղբորը: Եթե նա եղբայր էլ չունի, նրա ժառանգությունը տվեք իր հորեղբորը: Եվ եթե հորեղբայրներ էլ չունի, նրա ժառանգությունը տվեք մերձավոր ազգականին: Նրա ունեցածը իր ցեղից թող որեւէ մեկը ժառանգի: Դա Իսրայելի համար դատաստանական օրենք թող լինի, ինչպես Տերն է հրամայել Մովսեսին»: /Թվեր, ԻԷ 1-11: Այս հատվածի թարգմ. վերցրեցինք արեւելահայերեն Աստվածաշնչի 1994թ. հրատարակությունից/:

Անլուծանելի են այս իրավունքները բոլոր հավատացյալների համար էլ եւ լինեն հիմք նաեւ դատաստանի վճիռ կայացնելիս: Որովհետեւ հարկ է որդին ժառանգությունն ստանա, իսկ եթե որդի չլինի՝ դուստրը, այն, որ տանն է եւ անպսակ է դեռ: Իսկ պսակված աղջիկները, երկու քույրով մեկ որդու բաժին ստանան, բայց չեն կարող նրանք ժառանգ լինել: Եվ այս այն բանից է հայտնի, որ չթողեցին Սաղպաադի դուստրերին օտար ցեղի տղամարդկանց կին լինել, որպեսզի չլինի թե ժառանգությունը օտարներինը լինի:

Իսկ երբ դուստր չլինի՝ եղբայրները ժառանգեն:

Իսկ եթե պսակված աղջիկը կամենա իր որդիներով եւ ամուսնու հետ գալ եւ հայրականը ժառանգել, նրանցը լինի եւ ոչ եղբորը, այն դեպքում, երբ եղբայրը որդի չունենա, իսկ եթե չկամենա գալ, առնի թող դստեր համար սահմանված բաժինը եւ ժառանգությունը /մեռնողի/ եղբորը լինի:

Իսկ երբ եղբայր էլ չլինի, հորեղբայրը ժառանգի:

Եվ թե հորեղբայր էլ չլինի, որ ժառանգի, այդժամ նրա հոր ցեղից ընտանի մի մերձավոր ժառանգի: Կարելիին մերձավոր լինի, որովհետեւ ընտանիքի հեռավորի համար չի հրամայվում, եւ հոր ցեղից ժառանգավորը լինի եւ ոչ մոր, եւ մինչեւ դուստրն է հրահանգ ժառանգ լինելը:

Իսկ երբ հորեղբորն է հրամայում ժառանգ լինել, հայտնի է, որ հայր պիտի լինի, որպեսզի հորեղբայրը ժառանգի, իսկ եթե մայր լինի, քույր կամ կին՝ սրանք չեն ժառանգում, այլ մասեր են ստանում, ինչպես որ ցույց է տրված՝ կնոջը դանգ, քրոջը՝ դանգ եւ կես, իսկ մորը՝ երեք թասու: /Ոսկի դահեկանը վեց դանգ է, պողպատինը՝ երեք, թասուն դանգի մեկ քառորդն է: 2 դահեկանով կարելի էր արտ գնել: Իսկ ծանոթագրություններից մեկում էլ ասվում է, թե մեկ դահեկանը՝ 9 գրամ ոսկու արժեք ունի/: Եվ ընտանի մերձավոր ենք համարում նրանց, որ ինչպես օրենքն է հրամայում, թե՝ մինչեւ չորրորդ զարմը մերձավորներից կին չառնել, ուստի, մինչեւ չորրորդ զարմն էլ՝ ընտանի մերձավոր-

ներն են այս դատաստանի ժամանակ: Իսկ չորրորդից հետո ժառանգ-ներ չեն, այլ ժառանգավորության վիճակն այդ դեպքում մնում է, որ դատավորները որոշեն այնպես, ինչպես գրված է Ա հոդվածում:

Իսկ եղբայրը, եթե նույն մորից չէ, նրան կես դանդ պակաս է հաս-նում, սակայն նույն հորից եւ մորից ծնվածների հետ ժառանգորդ լինի: Այս նույն բանը Աբրահամ նահապետն էլ գործադրեց, որովհե-տեւ իր ամենայն ինչքերը Իսահակ իր որդուն տալու հետ մեկտեղ նաեւ իր հարճերի որդիներին էլ պարգեւելով՝ արձակեց նրանց /Ծննդոց ԻԵ 5-6/: Եվ եթե մեկն ասի, թե մի դեպքում օրհնության պսակ էր, մյուս դեպքում՝ Քետուրան նահապետի երկրորդ կինն էր, սակայն ժառանգությունը եղավ օրհնության պսակից ծնվածին, իսկ երկրորդ կնոջից ծնվածին նույնպես եղավ՝ սակավ պակասով, իսկ օ-րենքը անդրանիկներին է տվել ավագության պատիվը, նույնպես եւ ժառանգության դեպքում է այդ պատիվը /Բ Օրենք, ԻԱ 16-17/: Ըստ այս օրինակի էլ հորեղբայրների համար լինի:

Աստվածային օրենքներով հանդիմանվում են մահմեդականների դատաստանները, որովհետեւ դուստրերին իրենց հայրերի համար ժառանգ չեն համարում, այլ որպես ընտանիքի են մասնավորում, կարգեր, որոնց պետք չէ հետեւել, այլ ընդունելին Աստվածային օրենքների դատաստաններն են, որոնցով վարվեն ամենայն իրա-վունքներով:

ԳԼՈՒԽ ՃԲ
ՈՐԴԻՆԵՐԻՆ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐԻՆ
/ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ/ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Եվ նախ այս ասենք. եթե երկու դուստրեր, որ այրեր առած լինեն՝ երկուսով մեկ որդու բաժին առնեն /Ղեւտ. ԻԵ 1-5/: Եվ այս վկայված է թե կանոններում եւ թե նշանակված օրենքներում:

Խոսեց Տերը Մովսեսի հետ եւ ասաց. խոսիր Իսրայելի որդիների հետ ու ասա նրանց, որ ով ուխտ անի, որ անձի գինը իր Տիրոջը տա, արուների համար այդ լինի քսան տարեկանից մինչեւ վաթսուն տարեկանում եւ այդ լինի հիսուն երկդրամյան արծաթ, ըստ սրբու-թյան սկեղի, իսկ էգի համար այդ գինը լինի երեսուն երկդրամյան:

Իսկ եթե լինեն հինգից քսանամյան, ապա գինը լինի՝ արվի համար՝ քսան երկդրամյան, իսկ էգի համար՝ տասը երկդրամյան /Թվեր, ԻԷ 8/:

Նաեւ այս ասում է կազմվածքը էգի տեսնելով..., որ /Ադամի/ մեկ կողից վերցվեց, եւ անունն իսկ այդ մասին է ասում, որովհետեւ «կին» անունն իսկ մարմնի կեսի անվանում է:.. Այդ բանի համար էլ, ըստ կազմվածքի արվի գինը կրկնակիով ավելի է: Այստեղից էլ հաստատ-վում է երկու դստերը մեկ որդու չափով ժառանգություն տալը: Սակայն հարկ է դիտել, որ խոսքը ամուսնացած դուստրերի մասին է եւ ոչ տանը գտնվող, որ եղբորն հավասար բաժին է առնում...իսկ երբ որդի չլինի, դուստրն է դառնում ժառանգորդ: Եվ այս Տիրոջ հրամա-նով ցուցանվեց, որ երկու /ամուսնացած/ դստեր բաժնի չափ է մեկ եղ-բոր բաժինը, այն որդու, որ տանն է:

...Ինչպես եկեղեցու ավանդապահները այրերն են եւ ոչ թե կանայք, այդպես եւ քույրերը թեպետ ժառանգակիցներն են իրենց եղբայրների, սակայն ժառանգությունը պահողները եղբայրներն են:

...Դստեր որդին ժառանգություն չի ստանում եւ ոչ էլ մասն է ստա-նում, բայց ժառանգություն թողնողը, քանի դեռ կենդանի է, կարող է գրով ժառանգություն թողնել նրան. նույնը լինի նաեւ խորթերի համար: Ուրեմն իշխանություն ունի իր կենդանության օրերին ժառանգորդեցնել նրանց, եթե կամենա, իբրեւ օտարների: Եվ թե խոր-թը եւ դստեր որդին իր տանն աշխատած լինեն, իբրեւ վարձկան՝ վարձ առնեն եւ ոչ թե մաս ստանան, որովհետեւ առաքյալը որդիների կար-գին չի համարում նրանց, ասելով՝ խորթ էիք եւ ոչ որդիներ /Եբրայե-ցի. ԺԲ 8/: ...Ով որ հոր սերմից չէ, ժառանգորդ չէ: Որովհետեւ երբ Աբրահամը ոչ իր բոլոր ծնունդ տվածներին արժանի արեց ժառանգորդ լինելու, ապա որչա՞փ առավել օտար ծնունդների համար է լինում:

Նաեւ ժառանգորդներ չեն ոչ մոր եղբայրը, եւ ոչ էլ նրա որդին եւ ոչ էլ քրոջ որդին, եւ ոչ էլ մորաքույրը ու նրա որդին եւ կամ հորաքույ-րը, որ չեն ժառանգում եւ ոչ էլ մաս են ստանում, բացի այն բանից, երբ ժառանգություն կտակողը նրանց կանխավ, գրով չժառանգորդեցնի:

Իշխանություն ունի ծառաներին նույնպես ժառանգություն թող-նել, եթե կամենա, այնպես, ինչպես որ կանոններում են ցուցանվել: Թերեւս ծառաները կարող են ստանալ այն ինչքերը, որ ժառան-գորդները թողնեն:

Իսկ այնժամ, երբ տանը գտնվող դուստրը ժառանգի, այդժամ հորեղբայրն ու նրա որդին չեն կարող ոչ ժառանգություն եւ ոչ էլ մաս ստանալ: Ապա թե դուստրը այր առնի, այդժամ հորեղբայրը մաս առնի, սակայն ոչ հորեղբոր որդին...

Իսկ եթե տղաներ ու աղջիկներ չլինեն մինչեւ չորրորդ զարմ, որ հորից ժառանգորդվեն, այլոք ժառանգորդ չեն, ոչ էլ մոր տոհմակիցները:

ԳԼՈՒԽ ՃԳ
ԿԱՆԱՆՑ ԻՐԵՐԸ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եվ կանանց մահվան ժամին նույնը լինի ժառանգության դատաստանը, ինչպես որ այրերի համար էր տես հոդվածներ ՃԱ, ՃԲ/: Եթե որդիներ եւ դուստրեր չկան, թեկուզ եւ ծնած լինի որդիներ ու դուստրեր եւ դրանք մեռած լինեն կամ թե ի բնե անժառանգ եթե լինի կամ թե պսակից հետո վախճանվել է կուսությամբ. այդպիսի վիճակները դատաստանով են քննվում:

Արդ, այրերի նմանությամբ, թե որդի լինի, նա է մոր ժառանգը, ապա թե որդի եւ դուստր չունենա, այդժամ եղբայրն է, իսկ եթե եղբայր էլ չունենա, այդժամ հորեղբայրն է, իսկ եթե հորեղբայր էլ չունենա, այդժամ հոր ցեղից մինչեւ չորրորդ զարմը ժառանգորդեն: Իսկ եթե հայրը լինի՝ հայրը ժառանգի... Իսկ եթե մորից ծնվածներ լինեն, ամենայն ինչ նրանցն է, որպես որ հոր ժառանգությունն է: Իսկ երբ մանուկը մեռնում է, ժառանգությունը հորն է լինում եւ չի դառնում մորը, որպես ժառանգություն:

Ապա, եթե մայրն եւս մեռնի եւ մորը հայր լինի՝ երկուսինը լինի ժառանգությունը՝ հոր մանկանը եւ հոր՝ մոր մանկանը, նախ պատշաճ ոգի տալով՝ երկու մասի բաժանվի:

Իսկ եթե ի բնե անժառանգ լինի՝ ժառանգությունը հորը լինի, իսկ եթե հայր չկա, այլ ժառանգավորներին լինի, որպես որ ցուցանվել է տես հոդված ՃԲ/: Իսկ ամուսնուն մեկ դանգ լինի՝ միասին կենակցության համար: Իսկ եթե միավորված չլինեն, եւ կինը մեռնի, կնոջից ոչ մի բան ամուսնուն ժառանգություն չլինի: Որովհետեւ ինչպես որ չի տիրել նրա մարմնին, նույնպես էլ չի տիրում նրա ինչքերին: Նույնը լինի եւ կնոջ համար: Իսկ եթե ամուսնացած լինեն եւ ոչ սակավ ժամանակ, նմանապես մեկ դանգ լինի ամուսնուն: Եվ որպես որ հորը ժառանգորդելով որդին, մայրն այդժամ մի դանգ է առնում, նույնպես եւ որդին մորը ժառանգորդելու դեպքում՝ հայրն է մեկ դանգ առնում:

ԳԼՈՒԽ ՃԴ
ՄԵՏԱՔՍԸ ՏՂԱՆԵՐԻ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ըստ բաժանողական արվեստի, այս ժառանգությունը այսպես ուղիղ բաժանես: Ամենայն ինչքերը մի հաշվիր մինչեւ դահեկանը եւ դահեկանը՝ վեց դանգ է: Եթե մեկ որդի լինի եւ մեկ դուստր, որ տանն է, երկու դանգ եւ կես եղբորը եւ նույնը՝ քրոջը եւ մեկ դանգ՝ մորը:

Ապա եթե ամուսնացած քույրեր լինեն՝ երկուսին մեկ եղբոր բաժին լինի եւ երկու դանգ եւ կես եղբորը տաս, երկու եւ կես՝ քույրերին եւ մեկ դանգ՝ մորը:

Իսկ եթե մեկ եղբայր լինի եւ մեկ ամուսնացած քույր, կես դահեկան եւ չորս գարի եղբորը լինի, դանգ եւ կես եւ երկու գարի՝ քրոջը, եւ մեկ դանգ՝ մորը: Իսկ եթե երկու եղբայր եւ մեկ քույր լինեն, որը տանն է, ապա դանգ եւ կես եւ երկու գարի մեկ եղբորը լինի, նույնքան մյուս եղբորը, եւ նույնքան՝ քրոջը եւ մեկ դանգ՝ մորը: Իսկ եթե ամուսնացած քույր լինի, ապա երկու դանգ մեկ եղբորը, նույնքան՝ մյուս եղբորը, մեկ դանգ քրոջը եւ մեկ դանգ՝ մորը:

Ապա եթե մայր չլինի, իրենց մեջ միայն բաշխվի՝ երկու դանգ եւ չորս թասու եւ մեկ գարի եւ չորս դանգ գարուց եւ երեք թասու գարուց՝ մեկ եղբորը լինի եւ նույնչափ մյուս եղբորը լինի, իսկ մեկ դանգ եւ երկու գարի երկու դանգ գարուց, եւ կես դանգ գարուց՝ քրոջը լինի: Կես թասու՝ գարուց, ավելի է լինում քրոջը: Եվ այս ցուցանեցինք նախօրոք, որպեսզի դատաստանի ժամանակ արդարությունը եւ իրավունքը պահվի:

Իսկ եթե երեք եղբայր եւ մեկ քույր լինեն, ապա դանգ եւ կես եւ երկու գարի եւ կես՝ յուրաքանչյուր եղբորը եւ երեք թասու, գարի եւ կես՝ քրոջը...

Ապա թե չորս եղբայր եւ մեկ քույր լինեն, մեկ դանգ եւ մեկ թասու եւ մեկ գարի՝ յուրաքանչյուր եղբորը եւ կես դանգ եւ կես թասու եւ կես

գարի՝ քրոջը: Իսկ եթե հինգ եղբայր եւ մեկ քույր լինեն, ապա յուրաքանչյուր եղբորը մեկ դանգ լինի եւ մեկ գարի, իսկ քրոջը՝ կես դանգ եւ մեկ գարի: Կես գարի այստեղ ավելի է լինուն քրոջը: Իսկ եթե վեց եղբայր լինեն եւ մեկ քույր, ապա երեք թասու եւ մեկ գարի՝ յուրաքանչյուր եղբորը եւ կես դանգ՝ քրոջը:

Ըստ այդմ որքան էլ լինեն, բաժանես: Նմանապես եւ մորը ժառանգություն բաժանես: Իսկ եթե վեց քույր եւ մեկ եղբայր լինեն, չորս բաժնի ժառանգությունը բաժանես՝ երեք եղբոր չափ վեց քույրերի համար լինի: Ըստ այդմ օրինակի էլ այլոք լինեն: Եվ եթե մայր լինի՝ ցույց տրվեց ինչպես անես եւ եթե չլինի՝ նույնպես ցույց տրվեց: Եթե տանը քույր լինի կամ քույր, որ ամուսնացած-գնացած լինի, ըստ այդ զանազանության էլ դատաստանը հաստատես: Ումից որ արժան է, նրանք գտնվեն եւ /նրանցից/ թերին լրացնեն, եւ չլինի պարսավանքի պատճառ, որովհետեւ ըստ մեր կարողության՝ այդքանը ծանուցվեց:

ԳԼՈՒԽ ՃԵ
ՔԱՀԱՆԱ ԿԱՄ ԴԱՏԱՎՈՐ ԱՆԱՐԳՈՂԻ ՄԱՍԻՆ

Եթե արյան դատաստան անելուդ ժամանակ որեւէ բան արդար վճռել չկարողանաս, ապա քո քաղաքից գնա այն վայրը, որ քո Տեր Աստվածն ընտրի եւ հայտնի իր անունը: Կգնաս այնտեղի ղեւտացի քահանաների մոտ եւ այդ օրվա դատավորի մոտ եւ նրանք քո այդ գործը քննելով կհայտնեն վճիռը: Եվ այնպես անես, ինչպես որ նրանք պատվիրեն քեզ, այն տեղում, որ քո Տեր Աստվածն ընտրեց, ոչ աջ եւ ոչ ձախ չխոտորվես նրանց խոսքից, որ ասեն քեզ: Իսկ այն մարդը, որ գոռոզամտությամբ լցված չլսի ու անտեսի Աստծու ծառայող քահանային կամ օրվա դատավորին, մահապատժի թող ենթարկվի: Դրանով դու չարը վերացրած կլինես քո ժողովրդի միջից.. /Բ Օրենք. ԺԷ 8-12/:

Նրանց չանսալը, ում մոտ Տերն ուղարկեց՝ մահ է, այսինքն, նաեւ ոչ այլ ինչ է, եթե ոչ անհնազանդություն Աստծուն՝ որ առաջնորդեց արյան դատաստանը հայտնի անելու /Ծ.Թ. Ըստ Դատաստանագրքի կանոնների, խոտորված դատավորի մահապատիժը փոխվում է՝ պաշտոնից լուծարվելով եւ դարձի գալու ապաշխարության սահմանումով, խրատով, մարմնական պատժով եւ տուգանքներով/:

ԳԼՈՒԽ ՃԶ
ԺՈՂՈՎՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՀԱՆԱՅԻՆ ՏՐՎՈՂ ՊՏՂԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդը, երբ զոհեր անի, ապա քահանային պիտի մատուցի զոհի մարմնի հետեւյալ մասերը. եթե զոհը արջառ կամ ոչխար լինի, ապա քահանային պիտի տալ՝ աջ ոտքերը, ծնոտներն ու փորը: Քահանային պիտի տաս նաեւ քո ցորենի, գինու եւ յուղի առաջին բերքը, քո ոչխարների առաջին խուզից ստացած բուրդը, որովհետեւ նրանց /քահանաներին/ քո ցեղերի միջից է քո Տեր Աստվածն ընտրել, որպեսզի նա ու նրա որդիները հավիտյան կանգնեն ձեր Տեր Աստծու առջեւ, ծառայեն նրան եւ օրհնություն տան նրա անվամբ: /Բ Օրենք. ԺԸ 3-5 /:

Այս իրավունքը այժմ հավատացյալները չեն պահում, իրավունք, որ հարկավոր է առավելացնել, քան օրենքներում է, որովհետեւ հասարակության զոհագործությունների օրինակի հետ օրենսդրվել են նաեւ այլեւայլ պտուղներ, այսինքն, թե խոսքը ընծայվող զոհերի մասին չէ:

Եվ այս կարգը դրեցինք, որպես դատաստան անելու համար իրավունք, եւ քրիստոնյաները այդ բաները տալով եւս քահանաներին պատվեն:

ԳԼՈՒԽ ՃԷ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՐՊԵՍ Է ԴՐՎՈՒՄ

Ընկերոջդ հետ ունեցած այն սահմանները, որ քո հայրերը հաստատեցին, դու մի փոխիր քո ժառանգության մեջ, որ ժառանգություն պիտի ստանաս այն երկրում, որ քո Տեր Աստվածը պիտի տա: /Բ Օր. ԺԹ 14/:

Այս ճառն ասում է անդաստանների եւ այլ բաների համար, եւ եղբայրների, ազգականների եւ օտարների միջեւ հրամայում է իրավացիորեն վարել:

Նա, ով հորից ժառանգության սահման ունի, իրավունք չունենա այդ սահմանը փոխել՝ ընկերոջից մաս հափշտակելով, բայց եթե արդեն այդպիսի զրկում է արել, հարկ է դատ վարել: Եվ ճշմարտությամբ՝ հորից ստացած ժառանգությունը իրավացի չդիտել հոր մահից հետո այլ ժառանգակիցների կողմից փոփոխելը:

ԳԼՈՒԽ ՃԸ
ԴԱՏԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿ ՍՈՒՏ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՏՎՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

...Երկու, երեք վկաների բերանով հաստատվի ամեն բան: Եվ եթե վկան սուտ վկայություն տա կամ չարախոսի... արեք նրա համար այսպես, համարելով, որ չարիք խորհեց իր եղբոր համար /դատաստան արեք նրա համար/ եւ հանեցեք չարը ձեր միջից /Բ օրենքներ, ԺԹ 15-19/: Օրենքների դատաստանը զեկուցվի այս մասին եւ երկու-երեք վկայի ձեռքով խոսքն հաստատվի: Եվ սուտ վկաներին, ըստ նրանց չար կամքի, հրաման տրվի տանջել...:

ԳԼՈՒԽ ՃԹ
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԵՐԲ ՍՊԱՆՎԱԾ Է ԳՏՆՎՈՒՄ ԴԱՇՏԻ ՄԵՋ

Եվ եթե սպանված գտնվի դաշտի մեջ քո երկրում, որ քո Տեր Աստվածը քեզ տվեց որպես ժառանգություն եւ եթե չիմացվի, թե դաշտում ընկածին ո՞վ խոցեց, այդժամ թող ելնեն ծերերը եւ դատավորները քո եւ չափեն սպանվածի ընկած վայրից այն քաղաքների հեռավորությունը, որ գտնվում են շրջակայքում: Եվ այն քաղաքը, որ մոտ է գտնվում սպանվածին, այնտեղից ծերերը թող մի երինջ առնեն /Բ օրենքներ, ԻԱ 1-9/ եւ այդ մասին գրված սուրբգրային օրենքը կատարեն /երինջը զոհագործեն/: Այստեղից հայտնի է դառնում, որ ոչ տուգանք է լինում նման սպանման դեպքում եւ ոչ էլ արյան դատաստան, այլ՝ լինում է քավության պատարագ այնտեղ, եւ այստեղ՝ ապաշխարություն: Այս բաներին հետամուտ են լինում դատավորները, երբ սպանողն անհայտ է, իսկ երբ հայտնի լինի՝ նրանից տուգանքներ վերցվեն եւ լինի նրան արյան դատաստան:

ԳԼՈՒԽ ՃԺ
ԳԵՐՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Եվ եթե պատերազմի ելնես քո թշնամիների դեմ եւ քո Տեր Աստվածը նրանց քո ձեռքը մատնի եւ ավարի առնես ունեցվածքը նրանց եւ

տեսնես, որ ավարի հետ տեսքով գեղեցիկ կին կա եւ եթե ցանկանաս նրան եւ նրան կնության առնես, ապա տանես նրան քո տուն, կածիլես նրա գլուխը, կկտրես նրա եղունգները, կհանես նրա գերության հանդերձները: Նա թող նստի քո տանը եւ իր հոր եւ մոր համար թող լաց լինի մեկ ամիս: Դրանից հետո կմերձենաս նրան ու կապրես նրա հետ եւ նա քո կինը կլինի: Եվ եթե դու նրանից գոհ չլինես, ապա նրան ազատ կարձակես, սակայն նրան չվաճառես արծաթով, քանի որ լկել ես նրան: / Բ Օր. ԻԱ 10-14/:

Եվ այս, ըստ օրենքների եղած պատվիրածները՝ լրացնելով ընդունվեն. ուստի եթե նման բան պատահի քրիստոնյայի հետ, ապա հարկ է, նախ կնոջը մկրտել, ապա կին առնել, ըստ եղած ամուսնության կարգի: Իսկ երբ չհաճի պահել կնոջը, առանց պոռնկության պատճառի, չարձակի:

ԳԼՈՒԽ ՃԺԱ
ՀԱՅՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՐԴԻՆԵՐԻ ԱՆԴՐԱՆԻԿՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Եթե մի այր երկու կին ունենա եւ նրանցից մեկը սիրելի լինի եւ մեկն ատելի եւ նրա համար որդիներ ծնեն սիրելին եւ ատելին եւ անդրանիկ որդին ծնված լինի ատելիից, այդժամ, երբ օրը գա, որ իր ունեցվածքը իր որդիներին ժառանգություն կարգի, իշխանություն չունենա իր սիրելիի որդուն որպես անդրանկի ժառանգություն տալ, զանց առնելով ճշմարիտ անդրանիկ որդուն, որ ատելիից է ծնվել, այլ նրան տա ամեն ինչից կրկնակի՝ ինչ որ ունի, որովհետեւ նա է սկիզբն իր որդիների եւ նրանն է անդրանիկությունը: /Բ Օրենք. ԻԱ 15-17/:

Արդ, այս դատաստանը մեզանում այսպես ենք իրականացնում: Որովհետեւ քրիստոնյաներիս մոտ ընդունված չէ միանգամից ունենալ երկու կանայք, սակայն երբ մի կնոջից ունեցել է որդի եւ երբ երկրորդ անգամ կին առնի եւ նրանից էլ որդի ունենա, չլինի թե սիրո պատճառով կրտսերին ուզենա անդրանիկացնել կամ աչառություն անել վերջին կնոջ որդուն: Այլ թող իր որդիներից առաջնածնին պատվի, ըստ որում Տերն է հրամայել առաջին ծննդին առավել ժառանգություն տալ, բայց եթե պատահի, որ առաջնեկը անպիտան է, այս օրենքը արժանի չէ կիրառել: /Ծ.Թ. Նմանատիպ պարագա էր, երբ Աստված

Եսավի, որ պիղծ էր, անդրանիկությունը տվեց կրտսերին՝ Հակոբին, թողնելով, որ վերջինս մոր խորհրդով հորն անգամ խաբի/:

ԳԼՈՒԽ ՃԺԲ
ԱՆԶԳԱՄ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ովքեր լիրբ եւ անզգամ որդի ունեն, որ ոչ հորն է լսում եւ ոչ մորը եւ երբ խրատում են՝ անտեսում է, ապա նմանին նրա հայրն ու մայրը տանեն իրենց քաղաքի ծերերի մոտ... եւ ասեն, մեր այս որդին լիրբ է, անզգամ եւ հարբեցող, մեր ձայնը չի լսում, բռնադատող է եւ հակառակ բարեսիրության: Եվ քարկոծեն նրան իրենց քաղաքի այրերը եւ թող այդպես մեռնի եւ ձեր միջից թող չարը վերանա: Եվ ուրիշներն այդ մասին լսելով, կվախենան իրենց անզգամ պահվածքից / Բ օրենքներ ԻԱ, 18-21/:

Նա, ով ծնողանարգ է, նրա դատաստանը երկկողմանի է լինում, որովհետեւ, ով ծնողներին է անարգում, նա դրանով անարգում է հասարակությանն Աստծո: Ուստի, երբ այն պատվիրանն է անարգում, թե. «Հարգի՛ր քո հորն ու մորը, որպեսզի երկար ապրես», անզգամ որդին երկու մահվան դատաստանի է ենթակա օրենքով՝ ծնողներին եւ Աստծո հասարակությանն անարգելու համար: Իսկ այժմ անզգամ որդին պարզորեն մեռցվում է միայն առ Աստված ունեցած հանցանքի համար, որովհետեւ ծնողանարգությունը՝ աստվածանարգություն է միաժամանակ: Եվ ինչպես որ հնում էր կիրառվում, երբ մահվան դատապարտելու փոխարեն՝ անզգամին հեռացնում էին ժառանգությունից, նույնը լինի այժմ էլ:

ԳԼՈՒԽ ՃԺԳ
ՄԱՀԱՊԱՐՏ ՄԵՌԵԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մեկին մահապարտություն հասնի եւ պիտի մեռնի, կախեցեք նրան փայտից եւ մի թողեք նրա մարմինը փայտի վրա, այլ թաղեցեք նրան միեւնույն օրը, որովհետեւ Աստծո առջեւ անիծյալ է ամեն ոք, որ կախված է փայտից /Օրենք/:

Որովհետեւ բոլոր օրենքները ոչ միայն ճառեր են, այլեւ բազում

պատճառների հետեւանքներ եւ մեզ հարկ է, որքան որ իրավացի դատաստան անելու համար է, այդքանը վերցնել օրենքներից: Եվ երբ իսրայելցիներին ասվեց, թե՝ թաղեք մարմինը, եւ մեր թագավորներին էլ հրաման չտրվեց սպանել, այլ միայն խրատել /մարմնական պատժով/: Իսկ թե այլազգի պատահի /ոչ քրիստոնյա եւ ընդդեմ մեր վարդապետությանը/ եւ մահապարտության ենթակա լինի, ապա թաղել տալու հրամանը լինի, երբ մեռնի եւ ուր որ լինի:

ԳԼՈՒԽ ՃԺԴ
ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գուցե ճանապարհիդ տեսնես քո եղբոր արջառը կամ ոչխարը մոլորված, անտես մի՛ անիր, այլ դարձրու ետ եւ տար հասցրու քո եղբորը: Իսկ եթե եղբայրդ մոտակայքում չի ապրում կամ դու դեռ նրան չես ճանաչում, ապա հավաքես քո տան մեջ նրա մոլորվածներին, մինչեւ որ քո եղբայրը, որ փնտրում է կորածներին, հայտնվի եւ դու հանձնես նրան: Նույն բանն անես, եթե կորած լինի եղբորդ էշը, հագուստները կամ որեւէ այլ բան... / Բ օրենքներ, ԻԲ 1-3/:

Ճշմարտապես աստվածային է այս օրենքը եւ, բնականաբար, ոչ միայն ընտանի կենդանիներին է վերաբերվում, այլ սրանց օրինակով, խոսում է արդեն հոգեւոր սրբազան իրողությունների, ազնվական ժողովուրդ կազմավորվելու մասին: Գութ եւ խնամք տածել ոչ միայն մերձավորների նկատմամբ, այլեւ Աստծո ժողովրդի ամենայն հեռավորների էլ, նրանց կորցրած բոլոր բաների հանդեպ լինել անվարձահատույց հավատարիմներ, որովհետեւ իրավունքներից դուրս է ընկերոջ կորցրածները վարձով վերադարձնելը:

ԳԼՈՒԽ ՃԺԵ
ԸՆԿԱԾ ԶՈՐՔՈՏԱՆԻՆԵՐԻՆ ՎԵՐ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եթե պատահի, որ տեսնես քո եղբոր /ընկեր, բարեկամ, հիմնականում՝ դավանակից իմաստով/ էշը կամ եզը ընկած է ճանապարհին, ապա դրանց զանց չառնես, այլ հանես ոտի եւ հասցնես քո եղբորը: /Բ. օրենքներ, ԻԲ- 4/:

Անվարձ այդ անես, այդ եւս հրամայվում է: Եվ թեպետ եւ այս օրենսդրություն է, սակայն եւ թագավորների եւ դատավորների համար խրատ է, որ այս հաշվի առնելով մտնեն ատյան:

ԳԼՈՒԽ ՃԺԶ
ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Զլինի, որ տղամարդու հագուստը կնոջ հագուստով փոխարինվի: Կինը տղամարդու հագուստ չհագնի եւ ոչ էլ տղամարդը կնոջ, որովհետեւ նման կերպ հագնվելը պիղծ է քո Տեր Աստծու առջեւ / Բ օրենքներ, ԻԲ 5/: Որովհետեւ դրանով բազում չար դեպքերի պատճառներ են լինում, որի համար էլ հրաժարվել տրվեց մյուս սեռի հագուստ կրելը: Այս խոսքը խրատեն /ուսուցանեն/ դատավորներն ու քարոզիչները:

ԳԼՈՒԽ ՃԺԷ
ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԲՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե հանդիպես թռչունների բների եւ դրանք գետնի վրա լինեն, թե ծառերի եւ լեցուն լինեն ճագերով, թե ձվերով, մորը ճագերի հետ չվերցնես, այլ մորը բաց թողնելով՝ ճագերին վերցնես քեզ, որովհետեւ այդ կլինի բարին քեզ համար եւ երկար օրերի կյանք կունենաս երկրի վրա /Բ օրենքներ, ԻԲ 6-7/: ...Փոքրագույն այս օրենսդրությամբ այժմ տեսնես, որ մեծամեծներն էլ սրա նման կշռես: Եվ մեր օգուտի համար էր հրամայում, թողնենք մորը, որն աճելու /վերստին ձու եւ ճագեր ունենալու պատճառն է/ եւ ճագերն ու ձվերը վերցնենք: Եվ այս պատվերը կատարողներին է Աստված վարձ խոստանում, իսկ չկատարողներին, կյանքի պատճառը սակավեցնելու փոխարեն՝ ապրելու սակավություն: Եվ իրավացի է, երբ թագավորների կողմից տուգանք է դրված երկու տարեկան թռչունների ճագ տալու աճը խափանողներից ստանալ:

ԳԼՈՒԽ ՃԺԸ
ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՏԱՆ ՄԱՍԻՆ

Եթե նոր տուն կառուցես, ցանցով ցանկապատես տանիքի շուրջ եւ բազրիք չինես, որպեսզի չլինի թե մեկն այնտեղից ընկնի եւ այդպես սպանություն գործած կլինես քո տան մեջ /Բ օրենքներ, ԻԲ, 8/:

Կարծվում է, թե այս պատվիրանը նման է դաշտում սպանվածի մասին եղածին, երբ պատարագներով է հրամայվում քավություն կատարել եւ ոչ թե դատաստանով՝ արյան դիմաց արյուն պահանջով... Պատվերն այս զգուշություն է ուսուցանում, իսկ մեզ համար լինում է ապաշխարություն...:

ԳԼՈՒԽ ՃԺԹ
ՓԱԽԱԾ ԾԱՌԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մի՛ մատնիր փախած ծառային իր նախկին տիրոջը, այլ թող բնակվի քեզ հետ եւ ուր էլ տեղափոխվես՝ քեզ հետ գա եւ նրան նեղություն մի պատճառիր: /Բ Օր. ԻԳ 15-16/:

Ոչ միայն այս օրենքը այլազգիների, այլեւ՝ եբրայեցի ծառաների մասին է, ծառան հանդգնելով չի կամեցել մինչեւ ծառայության յոթ տարին լրանալը մնալ տիրոջ մոտ, եւ եթե նախկին տիրոջն հանձնեն՝ վայրապար դատաստան է անում: Այս իրավունքը մեզ համար եւս պահելի է:

ԳԼՈՒԽ ՃԻ
ՀՆՁԻ ԱՐՏ ՄՏՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իսկ եթե մտնես քո ընկերոջ հնձի արտը, քո ձեռքով հասկ քաղես, եւ մանգաղ չգործածես: /Բ Օր. ԻԳ-25/:

Որովհետեւ ողորմությունը վերցնողին է օրենքը կամենում եւ ոչ նրա կամքին, եւ եթե հանդգնի՝ դատաստան լինի եւ իբրեւ հափշտակողի տույժ վերցվի:

ԳԼՈՒԽ ՃԻԱ
ԸՆԿԵՐՈՋ ԱՅԳԻՆ ՄՏՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մտնես քո ընկերոջ այգին, կեր այնքան խաղող, մինչեւ որ հագենաս, բայց ամանի մեջ խաղող մի լցրու հետդ տանելու համար /Բ Օրենքներ, ԻԳ 24/:

Զափ ու օրենք է դրվում այս ողորմության վրա, որպեսզի չլինի թե ուտելը վերածվի թալանի: Նման թալանողին տույժ է հասնում:

ԳԼՈՒԽ ՃԻԲ
ԿԱՆԱՆՑ ԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մեկը կին առնի եւ մերձենա նրան, բայց նրա մեջ անարգության բան նկատի, թող նրան ապահարզանի թուղթ գրի եւ տա եւ արձակի նրան իր տնից: Եթե այս կինն ամուսնանա մեկ այլ մարդու հետ եւ այս մարդն էլ նրան ատի, ապա սա էլ բաժանման թուղթ տա նրան եւ արձակի իր տնից: Իսկ թե մեռնի նրան կնության առած վերջին ամուսինը, ապա նրա առաջին մարդը, որ նրան արձակեց, այլեւս իշխանություն չունենա նրան, նրա պղծվելուց հետո վերստին կնության առնել, որովհետեւ այդ պղծություն է քո Աստծո առջեւ եւ մի պղծեք այն երկիրը, որ ձեր Տեր Աստվածը տվեց ձեզ ժառանգություն: / Բ Օրենք. ԻԴ 1-4/:

Այս նկատի ունենալով է, որ հրեաները պատասխան տվեցին Տիրոջն, ասելով. «Մովսեսը հրամայեց կանանց արձակելու գիր գրել»: Եվ Տերը ցույց տվեց հրեաներին այն պատճառը, որով Մովսեսը պատվիրել էր արձակման թուղթ տալ: «Մովսեսը ձեր խստասրտության համար այդպես պատվիրեց»: Եվ որպեսզի վայրապարորեն չթողնեն կանանց, օրենքով ասաց, որ անարգվածին չառնեն: Որովհետեւ այն ժամանակ ազատ էր առնել այլ մեկի եւ միանգամից տանն երկու կին ունենալ եւ այդ պոռնկություն չէր համարվում: Սակայն, որովհետեւ Նոր Կտակարյալով /Ավետարանով/ մեզ համար այս մերժված է, եւ մեզանում, եթե պատահի, որ մեկը կնոջը թողնի եւ մահու չափ զղջա, որ ատելությամբ են բաժանվել, ապա ապաշխարությամբ միանան: Բայց այս դեպքում էլ գուցե պատահի նաեւ, որ միավորելը արժան չի լինում:

ԳԼՈՒԽ ՃԻԳ
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՆՈՐ ԿԻՆ ԱՌՆՈՂԸ
ՊԱՐՏԱՎՈՐ ՉԷ ՊԱՏԵՐԱԶՄ ԳՆԱԼ

Եթե մեկը նոր է ամուսնացել, ապա թող պատերազմի մեջ չմտնի եւ այս մասին նրանից պարտավորություն չպահանջեն, այլ թող ազատ մնա իր տան մեջ եւ իր կնոջն ուրախացնի /Բ. Օրենքներ, ԻԴ 5/:

Մարդասեր է Աստված եւ կամենում է, որ չլինի թե պատերազմի մեջ մարդն ընկնի եւ սուգ լինի տարաժամ. այս բանի համար սրանք՝ պատերազմին չմասնակցող նոր ամուսնացողները անմեղադրելի են միանգամայն եւ ճշմարիտ չէ ճակատ տալ կամ երկբայել այս պատվերը: Այս իրավունքը հարկ է պահել զորավարներին իրենց բոլոր զորքերում:

/Ծ. Թ. - Մակաբայեցիների գրքում կա այս պատվերի կատարման պատմական օրինակը, երբ պատերազմի մեջ մտնելուց առաջ զորավարները նորապսակներին առանձնացնելով ուղարկում են տուն, ապա նոր են մտնում մարտի մեջ եւ տանում են սքանչելի հաղթանակ: Աստված սիրում է իր պատվերները պահողներին/:

ԳԼՈՒԽ ՃԻԴ
ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԳՐԱՎ ԵՆ ԴՆՈՒՄ
ԿԱՄ ԳՐԱՎ ԵՆ ՎԵՐՑՆՈՒՄ ԱՂՈՐԻՔԸ

Աղորիքի ոչ վերին, ոչ ներքին մասը գրավ մի վերցնի, որովհետեւ այդպիսով նրա տիրոջ հոգին ես գրավ վերցնում/ Բ օրենքներ, ԻԴ 6/:

Այս սպասավորությունն իրականացնելիս հոգուն չես վնասի, հոգին գրավ չես վերցնի: Այս օրինակ է մեզ պահելու համար, որ այն ինչքերը եւ ամեն բան, որ վերջին կարիքները հոգալուն են վերաբերվում, գրավ չվերցվի, իսկ ով դատավորներից հանդգնի այդ անել, նրանից վրեժ լինի առնել:

ԳԼՈՒԽ ՃԻԵ
ՊԱՐՏՔԵՐԻ ԵՎ ԳՐԱՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե քո ընկերը ինչ որ բան է պարտք քեզ, ապա նրա տուն ինչ որ բան գրավ վերցնելու համար չմտնես, այլ կանգնես դրսում եւ պարտք ունեցող մարդը թող ինքը գրավը դուրս հանի: Եվ եթե աղքատ է այդ մարդը, ապա նրա գրավ դրած զգեստը, թող գիշերը քեզ մոտ չմնա, այլ արեւը մայր մտնելու ժամանակ նրա գրավը կվերադարձնես: Նա թող պառկի իր զգեստով եւ օրհնի քեզ եւ այդ քո Տեր Աստծո առջեւ քո կատարած բարությունն ու ողորմածությունը պիտի համարվի: /Բ Օրենք. ԻԴ 10-13/:

Թույլ չի տալիս ներս մտնել եւ գրավ առնել, որպեսզի բռնություն չլինի, այլ իր կամքով դուրս հանի, դարձյալ, որ գրավը գոյատեւման առաջին անհրաժեշտության բան չլինի: Իսկ թե աղքատության պատճառով գոյատեւման համար անհրաժեշտության բան է գրավը, հրամայում է մայրամուտից առաջ վերադարձնել, այս կերպ կամենում է, որ մարդը ողորմածություն դրսեւորի: Այս վարմունքի կատարումն էլ մեզ համար եւս ընտրելին է դատաստանի ժամանակ:

ԳԼՈՒԽ ՃԻԶ
ՎԱՐՁԿԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մի գլանար ժամանակին տալ վարձերը տնանկի, կարիքավոր քո եղբայրների կամ քո քաղաքում եկվոր մարդկանց: Նույն օրն իսկ նրանց վարձերը հատուցես, քանի դեռ արեւը մայր չի մտել նրա վրա, քանի որ տնանկ է եւ իր վարձն ստանալն է հույսը նրա, որպեսզի բողոք չանի քեզնից Տիրոջ առաջ եւ այդ քեզ մեղք չլինի: / Բ Օրենք. ԻԴ 14-15/: Հայտնի է, որ այդ մարդը աղքատության պատճառով վարձկան եղավ՝ օրվա կարիքն հոգալու: Որովհետեւ եթե օրվա նրա արած գործի դիմաց նույն օրը չհատուցես, հարկ է, որ դատաստանով ավելին վերցվի քեզնից, քան վարձն էր եւ այդպես լինի հատուցումը:

ԳԼՈՒԽ ՃԻԷ
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀԱՅՐԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ ՉԵՆ ՄԵՌՆԵԼ ՈՐԴԻՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ ԵՎ ՈՉ ԷԼ ՈՐԴԻՆԵՐԸ՝ ՀԱՅՐԵՐԻ

Թող հայրերը չմեռնեն իրենց որդիների փոխարեն եւ ոչ էլ որդիներն իրենց հայրերի: Յուրաքանչյուրը պիտի մեռնի իր գործած մահացու հանցանքի համար/ Բ Օրենքներ, ԻԴ 16/: Ըստ այս օրենքի է ասվել, որ եթե պատահի մահապարտ որդիներին ապրեցնել, նրանց փոխարեն մահն հանձն առնելով, չթույլատրվի, այլ թող մահապարտ որդին մեռնի եւ այս արդարությունը թող չթյուրվի: Նաեւ դատավորները, երբ չկարողանան մահապարտ որդուն բռնել, իրավունք չունենան հորը կալանել կամ նրան մահվան դատապարտել: Եվ այս օրինապահությունը մեր մեջ հաստատուն պահել:

ԳԼՈՒԽ ՃԻԸ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եկվորի, որբի եւ այրու իրավունքները մի՛ շեղիր /Բ Օրենքներ ԻԴ 17/: Դատավորների համար է օրենքը դրված, որ դատը չվարեն կաշառքներով եւ այլ պատրանքներով /ակնկալիքներով/ եւ օրինակ լինեն ուրիշների համար, իսկ ով իրավունքները շեղի, նա ընկնի իր պատվից:

ԳԼՈՒԽ ՃԻԹ
ԱՅՐՈՒՑ ԻՐԵՐ ԳՐԱՎ ՎԵՐՑՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այրու հագուստները գրավ մի վերցնի: / Բ Օր. ԻԴ 17/: Թեպետ այլոց համար ներում է գրավի սահմաններում, սակայն այստեղ ցույց է տալիս, որ այրուց պիտի գրավ չվերցնել, այդպես իսկ խնամակալություն ուսուցանելով:

ԳԼՈՒԽ ՃԼ
ԳԱՆԱՀԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դատաստանի ատյանում եթե գանահարության արժանին լինի, ըստ օրենքների մինչեւ քառասուն հարված ստանա, սակայն կյանքի համար անվնաս: Արժանի է, որ դատավորները դրանով խրատեն ստահակներին:

ԳԼՈՒԽ ՃԼԱ
ԵՐԲ ԵՐԿՈՒ ԿՌՎՈՂՆԵՐԻՑ ՄԵԿԻ ԿԻՆԸ ԻՐ ԱՄՈՒՍՆՈՒՆ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲՌՆԻ ՄՅՈՒՍ ԱՅՐԻ ԱՄՈՐՁԻՆԵՐԻՑ

Եթե կռվում են երկու այրեր, եւ մեկի կինը հանուն իր ամուսնուն ազատելու, ձեռքով ամուր սեղմում է հաղթող այրի ամորձիները, ըստ օրենքների այդ ձեռքը կտրում են: /Բ Օրենք.11-12/: Իսկ ըստ մեր դատաստանի, /հանցավորը/ ձեռքի գինը տալով՝ ազատում է ձեռքը կտրվելուց, իսկ գինը ցույց է տրված յուրաքանչյուր զգայության համար տրվող տուգանքի կանոններում: Տես գլուխ ԿԳ/:

ԳԼՈՒԽ ՃԼԲ
ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐ ԵՆ ԲԱՑՈՒՄ ԵՎ ՄԵՌՅԱԼՆԵՐԻՆ ԵՆ ԿՈՂՈՊՏՈՒՄ

Դիակողոպտողները երբ բռնվեն, եւ իրենց կամքով խոստովանեն, նրանց մահվան չդատապարտել /Հայրերի կանոններ..., ԺԷ/ ... Ապաշխարությունը որոշվի ըստ կանոնների: /Ծ.Թ. տույժը, փոխհատուցում ու պատիժը, բնականաբար, պիտի որոշվեն գողերին եւ ավազակներին վերաբերող Մատյանում դրված կանոնների համաձայն/:

ԳԼՈՒԽ ՃԼԳ
ԱԿԱՄԱ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մեկը անմեղորեն ճանապարհ է գնում եւ առաջ ոչ մի թշնամի չուներ եւ ամենքին թալանող գողերն ու ավազակները նրան կպչեն, եւ սա սպանի նրանց, եկեղեցին նրան չդատի որպես սպանողի: Բայց նա թող սրբի իր անձը ապաշխարությամբ սակավ օրեր: Մտածել է պետք, թե նրան ակամա կպան /ավազակները/, թեպետեւ Աստծո կողմից էր սրանց մատնությունը՝ իրենց իսկ սպանվելու համար, սակայն ապաշխարությամբ մաքրման եւ սրբման անհրաժեշտությունը կա: /Հայրերի կանոններ, ԺԸ/:

ԳԼՈՒԽ ՃԼԴ
ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ՄԱՍԻՆ

Եկեղեցու հիմնարկեքը միայն եպիսկոպոսը իշխանություն ունի ծրագրել՝ ուղղափառությամբ, իսկ քորեպիսկոպոսը եւ պերտուտը՝ հրամանով եպիսկոպոսի: Ապա եթե առանց եպիսկոպոսի կամ քորեպիսկոպոսի որեւէ մեկն հանդգնի, այդ հիմքն հրաման է քանդել, իսկ եթե թողնվի, սահմանները կարգել են՝ երկրորդել: /Կանոններ հայրերին հետեւորդների, ԻԵ/: Հայտնի է, որ քորեպիսկոպոս երկուսով են, մեկը՝ ձեռնադրված եւ մյուսը՝ ոչ, որ պերտուտ է անվանվում կամ բուտ: Եվ եթե պատահի, որ եպիսկոպոսը զեղչ անի եւ հիմքը վերստին քանդել չտա, ապա, կարգն հրամայում է՝ երկրորդել; Եվ այդ այս մասին դատաստան է հաստատուն:

ԳԼՈՒԽ ՃԼԵ
ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եպիսկոպոսները հարկ է, որ տրված երկրամասի եւ իրենց ընկած վիճակի համար արժանի լինեն, եւ ովքեր արժանի են՝ նրանց նստեցնել աթոռ: Ապա եթե շտապ նշանակելու կամ ընկերների հեռավորության պատճառով կարգել ուզենան, երեք եպիսկոպոսների, որոնք հեռվում են գտնվում, ուղարկած վկայության թղթերով նստեցնեն այդ աթոռին: Բայց պատիվն ու շնորհները տալը կաթողիկոսի ձեռքով է լինում կամ մեծ ժողովի կողմից: /Նիկիական կանոններ, Դ/:

Հրամայում է կարգավորապես ձեռնադրություն կատարել, նախ ընտրություն անել շատերի միջից եւ ամենքի հավանությամբ ձեռնադրությունը կատարվի կաթողիկոսի կողմից եւ կամ նրա հրամանով՝ երկու կամ երեք եպիսկոպոսների:

ԳԼՈՒԽ ՃԼԶ
ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՄԵՐԺՎԱԾ ԵՆ ԻՐԵՆՑ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳԻՑ ԵՎ ԱՂՈԹՔԻ ՊԱՇՏՈՆԻՑ

Նա, ով իր կարգից եւ աղոթքի պաշտոնից մերժվել է, եթե ժողովրդից եղած լինի կամ թե՝ ըստ կարգի պաշտոնյա եւ գնա մեկ այլ տեղ եւ ուզենա կարգի մեջ մտնել, մի՛ ընդունեք:

Եվ եթե այլ մի վարդապետից մեկը բանադրված կամ մերժված է, մեկ այլ վարդապետ նրան չվերականգնի՛ կամ կարգի մեջ չմտցնի՛, մինչեւ որ հավաստի քննություն չկատարվի, եւ վարդապետության խոսքով մինչեւ չբժշկվի եւ մինչեւ բուն վարդապետությանը չհնազանդվի:

Իսկ եթե մեղքերի եւ չար գործերի պատճառով է եկեղեցուց մերժվել, ապա սահմանված ապաշխարությամբ թող բժշկումը գտնի:

Եվ այս բարեկարգությունը Աստվածային դատաստաններով է, որպեսզի ոչ մեկին անգիտությամբ չնդունեն եւ որպեսզի նման պատճառներով վարդապետները չքամահրեն միմյանց, այլ որ անկարգները դարձի գալով՝ իմաստությամբ բժշկվեն:

ԳԼՈՒԽ ՃԼԷ
ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եգիպտոսում նախնիների սովորույթի համաձայն՝ Ալեքսանդրիայի եպիսկոպոսը ամենքի վրա է իշխում, Հռոմի եպիսկոպոսը նույն սովորությամբ է վարվում, նույնպես եւ Անտիոքացիներինը, իսկ այլ իշխանություններ եկեղեցիների ունեցած պատիվն ու առավելությունն են պահպանում: Եվ ամենքին էլ թող հայտնի լինի, որ եթե մեկը ըստ կաթողիկոսի կամքի եպիսկոպոս չի, այնպիսին մեծ ժողովը լուծարի, եւ այլեւս նա եպիսկոպոսություն չի կարող անել:

Իսկ եթե ժողովում, ամենքով միաբան, ըստ եկեղեցու կարգերի նրան ընտրելով արժանի գտնեն, եւ եթե երկու կամ երեք անձինք անզգամությամբ կամ հակառակությամբ դեմ լինեն, ապա ձայների մեծամասնությամբ ընտրությունը հաստատվի: /Նիկիական Կանոններ, Զ/: Եվ նախնիների կարգով սովորություն կար, որ Երուսաղեմի եպիսկոպոսը պատվվի, պատիվ ընդունի, եւ մայրաքաղաքների վրա իր արժանի պատիվը պահպանի:

Եվ կաթողիկոսն ինքն է եպիսկոպոս նշանակում ու հաստատում: Եվ ըստ չորս ավետարանիչների է նրանց /եպիսկոպոսներին/ նշանակում եւ հոգեւոր այլ իշխանություններին նույնպես, եւ առաքելական աթոռներ լինեն, թե ոչ՝ կաթողիկոսի հրամանով են լինում: Եվ Հովհաննեսի աթոռը Եփեսոսից Բյուզանդիա տեղափոխվեց առավել պատվի համար եւ ոչ թե կաթողիկոսության պատճառով:

Իսկ նրանք, ովքեր կաթողիկոսի կամքով /նրա կողմից/ չեն ձեռնադրվում, ապա նրա հրամանով են ձեռնադրվում կամ ընտրվում մեծ ժողովի միջոցով: Իսկ թե պատահում է, որ կաթողիկոսի կողմից չեն ձեռնադրվում, այլ շատերի ընտրությամբ, ապա ճշմարտությամբ ընդունելի են, ինչպես որ կաթողիկոսի կողմից ձեռնադրվածները:

ԳԼՈՒԽ ՃԼԸ
ԱՅՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԵՎ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԱՅԼՈՑ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԵՆ ՄԻՄՅԱՆՑԻՑ ՀԱՓՇՏԱԿՈՒՄ

Բազում հուզումներ եւ մեծաթիվ ամբոխներ, ահա այսպես է լինում, երբ եպիսկոպոսները ջանում են իրենց պաշտոնակիցների վիճակն հափշտակել եւ կամ նրանք, ովքեր երեցներ են, սակայն այլ քաղաքի ժողովրդին են ցանկանում հափշտակել: Նման պարագաներում, երբ մեծ ժողով լինի, այդժամ այնպիսիների գործունեությունը դադարեցնեն: Իսկ եթե նմանը բռնությամբ կամ կաշառքներով այդ գործը գործի, եւ ընդդեմ ելնի առաքելական կանոնին կամ մեծ ժողովին, այդպիսին իր աթոռից եւ քահանայության կարգից հանեն եւ ամբողջությամբ մերժեն պաշտամունքներին նմանի մասնակցությունը եւ այդքանից հետո, նա քեզ համար լինի իբրեւ մեկը անզգամներից /Մատթ. ԺԳ 12/, որովհետեւ ում տրված է՝ նրան պիտի տրվի եւ ավելացվի, իսկ նա, որ՝ իրեն տրվածը, ըստ Տիրոջ կամքի չգործադրի՝ իր ունեցածն էլ պիտի վերցվի իրենից եւ տրվի ավելին ունեցողին...

ԳԼՈՒԽ ՃԼԹ
ԱՆԿԱՐԳԱԳՈՐԾ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նրանք, ովքեր եկեղեցու ուխտի կարգի եւ կանոնների մեջ լինեն եւ ընկնեն ագահության կամ կաշառակերության մեջ, վարձով արծաթ տան եւ տոկոսով ետ պահանջեն եւ մոռանան Աստվածային գրերի զգուշացումները, որ ասում է. արծաթը յուրայիններին հանուն վարձ ստանալու չտալ եւ այլն, եւ, մանավանդ պաշտամունքի մեջ մեղկ, ծույլ եւ պղերգ լինեն եւ աղոթքների մեջ թուլասիրտ, այնպիսին գրվածքն ասում է՝ վա՜յ նրան, ով մանկության ուսումը թողնի եւ Աստվածեղեն ուխտը մոռանա /Առակներ, Բ 17/: Եվ երբ մեծ ժողովներ լինեն, այնպիսիներին մերժել՝ իրենց կարգերից հանելով եւ կամ բարեսեր կամքով ուղղության հրավիրեն: Լսեն թող քահանաները վճիռները կանոնական դատաստանների եւ զարհուրեն, ապա թե ոչ, նրանք պիտի դատվեն վերջին եւ անաչառ դատաստանի ժամանակ:

ԳԼՈՒԽ ՃԽ
ԵՐԲ ԱՐԴԵՆ ՆՇԱՆՎԱԾ ԱՂՋԻԿ ԵՆ ՀԱՓՇՏԱԿՈՒՄ

Նա, որ արդեն խոսված աղջիկ էր, եւ ավելին՝ արդեն նշանված, եւ այս բանից հետո, եթե այլոք նրան հափշտակեն, կամ լինի որ, հափշտակելուց հետո ետ տան նրան, ում կողմից, որ աղջիկը խոսված էր, թեեւ բռնության մեջ է աղջիկը գտնվել, սակայն նրան /աղջկան/ նշանածը չթողնի: /Անկյուրիայի կանոններ, ԺԲ/:

Արդեն նշանվածն ու խոսվածը նույնը չեն եւ հափշտակողից ետ դարձնել, թեեւ անգամ պսակված լինի հափշտակողի հետ:

ԳԼՈՒԽ ՃԽԱ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ՄՍԱԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նրանք, որ եկեղեցու ուխտի մեջ լինեն՝ երեցներ կամ սարկավագներ կամ այլ ոք պաշտոնյաներից եւ հեռու լինեն մսակերությունից եւ եթե նրանց մեջ միտք առաջանա միս ճաշակել, ապա համարձակությամբ ուտեն եւ ոչ թե գաղտնիորեն եւ այնժամ, թե կամենան մսակերությունից պահք պահել, այդժամ պահեն: Իսկ եթե որեւէ մեկը բանջարն ու հացը պիղծ համարի, որ մսի հետ խառն /այլոք եւ ոչ թե ինքը/ ուտում են, նրան չընդունել եկեղեցու կարգի մեջ: /Անկյուրիայի կանոններ, ԺԵ/:

...Արդ բարի է /միս/ չուտելը, քան ուտելը, բայց առանց բամբասանքի, ինչպես, որ մեզանում կան բազում /մսակերությունից/ պահք պահողներ, որ բամբասում են ուտողներին: Եվ դատաստանի ենթակա է միմյանց դատելը:

ԳԼՈՒԽ ՃԽԲ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՆՁՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Այն իրերը, որ եկեղեցական են, ինչ էլ որ լինեն, առանց եպիսկոպոսի իմացության, եթե երեցները վաճառեն, ապա իշխանություն լինի ետ պահանջել, բայց եպիսկոպոսը կշռի իրավն ու անիրավը, արժա՞ն է, որ որեւէ մեկն առներ, եթե ոչ, ապա ետ դարձնել վաճառվածը /Անկյուրիայի կանոններ, ԺԶ/:

Կանոնական հրամանները կամենում են եկեղեցական ինչքերի անվաճառելիությունը եւ իշխողն այս հարցում՝ եպիսկոպոսն է, եւ ոչ թե քահանան, եթե հարկ է վաճառքի գինը որոշել կամ ետ դարձնելը՝ եպիսկոպոսը որոշի... Ի դեպ, եկեղեցին ոչ քրիստոնյաներին որեւէ բան չի վաճառում, բայց եթե անպատշաճ բաներ վաճառի, այդ նույն գնով, թող անկարեւոր բաներ գնի... Այդ ընդունելի դատաստան է եկեղեցու համար:

ԳԼՈՒԽ ՃԽԳ
ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՐ ԽՈՍՏԱՆՈՒՄ ԵՆ /ԱՍՏԾՈՒՆ/ ԿՈՒՅՍ ՄՆԱԼ, ԲԱՅՑ ՍՏՈՒՄ ԵՆ

Նրանք, ովքեր արդեն չափահաս են եւ խոստանում են /Աստծուն/ կուսությունը պահել եւ դրժում են իրենց խոստումը եւ շնության մեջ են ընկնում, այնուհետեւ էլ չեն կարող կույս լինել, այլ համարվեն այն մարդկանց նման, ովքեր երկու կին են առել եւ նրանց համար սահմանված կարգերով էլ դիտվի նրանց ապաշխարությունը, երկու տարի լինեն եկեղեցու դռանը՝ հսկողության ձեռքի տակ եւ, այնուհետեւ, մեկ տարի թող մտնեն-ելնեն եկեղեցի՝ ընդհանուր ապաշխարողների հետ: Եվ նրանց ապաշխարության ջերմեռանդությունը, երբ տեսնվի, այդժամ հաղորդ դարձնեն սուրբ եկեղեցու օրենքներին, բայց նրանք քահանայության օծման թող չմոտենան: /Անկյուրիայի կանոններ, Ի/: Այլ մի կանոնում ասվում է, նա, ով ամուսնանա եւ շնանա, հայտնի է, որ իր շնությունն է ապաշխարելու, եւ քանի որ ամուսնությունն երկակցա է, ուստի չի կարող քահանա լինել, իսկ երկրորդ անգամ ամուսնանալը, իբրեւ երրորդ է համարվում: Բայց թող տեսնեն խոստովանողի վկայությունները եւ այդպես դատեն: Այս բանն այսպես լինի: Այս մասին կգտնես նաեւ Լուսավորչի կանոնների երեսուներորդ գլխում:

ԳԼՈՒԽ ՃԽԴ
ՀՂԻ ԿԱՆԱՆՑ ՄԿՐՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հղի կանանց արժան է մկրտել, երբ կամենան, որովհետեւ այսպիսի դեպքում ծնող լինելն ու մկրտությամբ ծնունդը նույնահավասար չեն,

այլ արժան է մկրտության բոլոր կարգերի համաձայն եւ մկրտվողի հոժար կամքով խոստովանություն իրականացնել՝ մկրտություն ընդունելու համար: /Նիկեսարիայի կանոններ, Զ/: Եվ այս մահվան երկյուղի պատճառով, այն բանի համար, որ երկունքի ժամանակ կարող է լինել եւ այս անելով մկրտվածն ու մկրտողը խղճմտանքի պարտքն են փակում: ...Հավանելի է այս իրավունքը եկեղեցում:

ԳԼՈՒԽ ՃԽԵ
ՊՈՌՆԻԿ ԿՆՈՋՆ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եթե մեկն իր կնոջն արձակի պոռնկության պատճառով եւ կամ այլ չարագործության, որի մասին ոչ միայն այրը, այլեւ ուրիշ շատերն են վկայում, թող արձակի կնոջը, կանոններով այդ ընդունելի է... եւ եթե կամենա՝ կին առնի, իսկ կինն այլ այր իշխանություն չունենա առնել, քանի դեռ նրա այրը կենդանի է: /Նիկեսարիայի կանոններ/:

Եվ այս, թեպետ գրված է մեզ համար դատաստան անելու, երկրորդեցինք, որովհետեւ ոչ միայն պոռնկության պատճառով, այլեւ այլ չար գործերի համար էլ է հրամայվում կնոջը թողնել, ինչպես կախարդության, թույն տալու եւ նման այդպիսի դեպքերի...

ԳԼՈՒԽ ՃԽԶ
ԿՆՈՋՆ ԱՏԵԼՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իսկ եթե պոռնկության պատճառով չէ, որ թողել են կնոջը եւ ոչ էլ նրա չար գործերի պատճառով, այլ սակավ բարի լինելու համար, որպես թե ուրիշ մեկի վրա աչքդ դրած լինի, այսպիսի բաժանություն կանոնները չեն ընդունում, մինչեւ որ բաժանված տղամարդը ետ ընդունի իր կնոջը եւ յոթ տարի ապաշխարության մեջ մնա, որից հինգը / եկեղեցու/ դրսում, երկուսը՝ ներսում: Իսկ եթե իր կնոջը չդառնա, իր տան մեջ եղածը բաժանի, կեսը իր կնոջը տա եւ նաեւ՝ տուգանք՝ եկեղեցուն, որովհետեւ օրհնության պսակը, որ ամուսնությամբ ստացել էր եկեղեցում, անարգեց: Եվ ինքն իր կյանքի օրերում պոռնիկ կոչվի եւ չմտնի Աստծո եկեղեցին, այլ եկեղեցու դրսում աղոթքի կանգնի, եւ ողորմություն բաժանի տնանկներին, ջերմեռանդ արտասուքներով, հետին պարգեւ առնելով: Եվ երբ կինը մեռնի եւ այրն էլ

կին չառնի եւ ապաշխարության դա, հինգ տարի /եկեղեցու/ դրսում մնա եւ երեք տարի էլ հսկող ձեռքի տակ՝ աղոթքներով, եւ ապա նոր, ողորմության ձեռքի քավությամբ՝ հաղորդություն առնի:

ԳԼՈՒԽ ՃԽԷ
ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ԿԱՆԱՆՑ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նա, որ պատրաստվել է քահանայության եւ կին ունի...թե կինը չնանա, թող արձակի կնոջը, նրա այրը չիշխի լինել եւ ապա մտնի քահանայության: Իսկ եթե կամենա կնոջ այրը մնալ, չի կարող քահանա լինել, որովհետեւ նրան չի ընդունի եկեղեցին եւ ոչ էլ կանոնները կթույլատրեն: Աշխարհական կանայք կարող են ամուսնանալ իրենց մարդու մահվանից հետո, իսկ նման /չնացած/ կանայք՝ ոչ: Բայց ընդունելի վիճակը կպարզաբանվի դատաստանի ժամանակ:

ԳԼՈՒԽ ՃԽԸ
ՊՂԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԿԱԾ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քահանան եթե պղծության մեջ գտնվի եւ իրողությունը հայտնեն, եւ եթե չխոստովանի, հայտնապես չեն կարող նրան հանդիմանել եւ նրա կամքին թողնեն խոստովանելն ու չխոստովանելը, նաեւ՝ առաջին հերթին՝ նրա եպիսկոպոսի կամքին, նույն կանոնը նաեւ սարկավագներին է վերաբերվում:... Եպիսկոպոսներն են դատավորները քահանաների եւ սարկավագների /Նիկեսարիայի կանոններ/:

ԳԼՈՒԽ ՃԽԹ
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՔԱՆԻ՞ ՏԱՐԵԿԱՆՈՒՄ Է ԱՐԺԱՆ ԵՐԵՑ ՁԵՌՆԱԴՐԵԼ

Ինչպես բոլոր մեծ ժողովների ժամանակ է եղել՝ մինչ երեսուն տարեկանը քահանա մի՛ օծեք, որ փորձվի եւ պղծի ու սրբի ընտրությունը պարզ երեւա, քանի որ մեր Տերը երեսուն տարեկան էր, երբ մկրտության օծումն ստացավ եւ սկսեց նույն օրինակը ամենքին սովորեցնել՝ մկրտել ութ օրականին, եւ քահանա օծել՝ երեսուն տարեկանին /Նիկեսարիայի կանոններ, ԺԶ/...:

ԳԼՈՒԽ ՃԾ
ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՀԱՐԿԱԴՐՎԱԾ ԵՆ ԳԱԼԻՍ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ

Նրանք, որ նեղության մեջ են ընկնում կամ ծանր հիվանդության եւ կամ բռնավորներից գերվելով, եւ նեղության պատճառով մկրտվեցին եւ կամ՝ մեկն առաջ քրիստոնյա էր ու իր գործով վատթար եւ ապա նեղության պատճառով հավատի մեջ է հաստատվում, այնպիսին ընդունի եկեղեցին ոչ թե կատարելապես, որովհետեւ հավատքն անկամայնությամբ է: Այսպիսի ներման միջնորդության մասին գրվածքն ասում է /Սաղմոս, ԻԹ 10/. Մի՞թե հո՞ղը խոստովանության է կանգնում քո առաջ:

Եվ այս մարդասիրությունը Տիրոջից է առակով ցույց տրվել /Ղուկաս, ԺԵ 11-32/, բայց անկատարը ըստ դատաստանի է ընդունվում:

ԳԼՈՒԽ ՃԾԱ
ԳԱՎԱՌԻ ԵՐԵՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գավառի երեցները, երբ լինեն քաղաքի եկեղեցիներում, պատշաճ չէ, որ իրենք պատարագ մատուցեն կամ հաց /ագապի/ բաժանեն: Իսկ եթե քաղաքի երեցները զբաղված լինեն եւ գավառի երեցները հրաման ստանան, այդժամ թող ագապի տան, իսկ ինչ որ չահ լինի՝ թողնեն այդ եկեղեցուն /Նիկեսարիայի կանոններ, ԺԸ/: Որովհետեւ եթե քաղաքի այրերն ավելի պատիվ ունեն գավառների այրերի նկատմամբ, որչափ եւս առավել քաղաքի եպիսկոպոսները եւ քահանաները: Եվ բնականաբար, երբ նրանք զբաղված լինեն, այդժամ, երբ գավառի երեցները հրաման ստանան քաղաքի եկեղեցում այս կամ այն գործն անել, անե՛ն:

ԳԼՈՒԽ ՃԾԲ
ՔՈՐԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվ քորեպիսկոպոսներն են, ըստ օրինակի եւ կարգի յոթանասուն /աշակերտների/ օրինակով, որ որպես լծակից ու գործակից էին՝ հանուն փրկության, որ աղքատների համար է կատարվում /Նիկեսարիայի կանոններ, ԺԹ/:

Գավառական տեսուչը՝ քորեպիսկոպոս է թարգմանվում եւ ձեռնադրող է խոնարհագույն աստիճանների տվյալ քահանայության վայրում: Հակառակ դատաստանի գրվածքների աշխարհականներին էլ կարող են քորեպիսկոպոս վերցնել եւ կամ տգետ քահանային, որպես աղքատներին կոփող, ամրացնող եւ ոչ թե տեսուչ, որովհետեւ եւ եպիսկոպոսն է տեսուչ թարգմանվում եւ թե նրա գործակիցները /քորեպիսկոպոսները/:

ԳԼՈՒԽ ՃԾԳ
ԵԿԵՂԵՑՈՒՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՊՏՂԻ ՄԱՍԻՆ

Նրանք, ովքեր եկեղեցուն հասանելիք պտուղը կամենում են եկեղեցուց դուրս վերցնել կամ տալ եւ ոչ թե կամքով եպիսկոպոսի կամ նրա կողմից այդ բանի համար ձեռնադրվածի, եւ նրա կամքով չվերցնեն կամ չգործեն՝ նզովյալ լինեն /Գանգրայի կանոններ, Է/: Լսեն թող գլացողները եւ զարհուրեն, եւ, որպեսզի այլ մեկի չտան: Եվ թե այսքան բանի համար նզովք է հասնում, ապա որչա՞փ առավել՝ եկեղեցին միմյանցից հափշտակողներն են լինում նզովապարտ: Եվ այստեղ դատաստանով են նզովքները, որովհետեւ ով եկեղեցուց եկեղեցու պտուղն է օտարացնում, նա ինքն օտարանում է եկեղեցուց:

ԳԼՈՒԽ ՃԾԴ
ԱՅՆ ՀԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԹՈՂՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՈՐԴԻՆԵՐԻՆ

Նրանք, ովքեր թողնում են իրենց որդիներին եւ նրանց չեն սնուցում, այնքան, որքան որ ձեռնհաս են եւ խրատ չեն առնում Աստծո կարգերից, այն է, սնունդ տալ մինչեւ պահեցողության օրերը եւ վանական կյանքն են արհամարհում եւ դրան վերաբերվում անփութությամբ, այդպիսիները թող նզովյալ լինեն /Գանգրայի կանոններ, Ժե/: Եվ այս կանոնի սահմանը թեպետ աղանդի սաստելու համար է....Սակայն Աստվածային գրերի հրամանն է՝ ըստ Աստծո՛ կամքի որդիներին սնուցելը եւ այդպես նրանք Աստծո օրենքներից չէին հեռանա: Եվ թեպետ նմանները կարծում էին իրենց Աստծոն մերձավորներ, այդ բանը դատաստանով պիտի որոշվի, որովհետեւ պատճառ եղան, որպեսզի իրենցից ծնվածները իրենց իսկ անգթության պատճառով՝ հեռանան Տիրոջից:

ԳԼՈՒԽ ՃԾԵ
ԱՅՆ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԹՈՂՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՀԱՅՐԵՐԻՆ

Եթե որեւէ որդի, որի ծնողը առավել հավատացյալ է եւ առաքինի եւ Աստծո կարգերի մեջ, նրանից հեռանա աստվածապաշտության պատճառով եւ նրան արհամարհի եւ ծնողներին արժանի եւ իրավացի պատվի դիմաց չհատուցի, թող լինի նզովյալ: /Գանգրայի կանոններ, ԺզԺ/: Եվ այս մասին կարեւոր պատվեր կա սուրբ Գրերից, որ հիշյալ ա-ղանդին առավել է վերաբերվում, նրանց, որ աստվածապաշտությունը պատճառ բռնելով, արհամարհել էին տալիս իրենց ծնողին: Որովհետեւ Տերը աստվածապաշտությունը խափանո՛ղ ծնողներին հրամայեց թող-նել, իսկ սրանք աստվածապաշտների՛ն են թողնում: Այդ բանի համար էլ, իրավացիորեն սրանց վրա նզովք կարգվեց:

ԳԼՈՒԽ ՃԾԶ
ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ ՈՒՏՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե ոմանք քառասունքը սուրբ պահեն եւ զատկի հինգշաբթի օ-րը, օրենքներով հաղորդվելուց եւ սուրբ բաժակը խմելուց առաջ, ա-վել որեւէ բան համարձակվեն ուտել, պահքը, որ պահել էին, դառնում է ընդունայն եւ մեծ ժողովի կողմից նզովյալ լինի: /Գանգրայի կանոն-ներ, ԻԱ/: Այս մասին Նիկիայի ժողովում էլ հանձնարարեցին սակավ ուտել եւ ուտել չոր ուտելիք...:

ԳԼՈՒԽ ՃԾԷ
ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀՆԱԶԱՆԴՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Յուրաքանչյուր իշխանության մեջ գտնվող եպիսկոպոսները իմա-նան, որ մայրաքաղաքների եպիսկոպոսները թիկունք են իրենց համար եւ հոգաբարձու, եւ յուրաքանչյուրը նրանցից, ինչ պատասխան, որ կամենում է ստանալ, նրա /մայրաքաղաքի եպիսկոպոսի/ մոտ գնա, թե արքունի հարկերի համար, թե իշխանների հետ կապված՝ եկեղեցու ի-րերի, թե հասարակական կարգերի համար: Եվ առանց մայրաքաղաքի եպիսկոպոսի իշխանություն չունենան գործել, որպեսզի ամեն գործ պատվով ընթանա, ինչպես որ մեր նախնյաց՝ հայրերի սովորությամբ էր, որոնք կարգեցին կանոնները: Եվ իշխանության մեջ գտնվող եպիս-կոպոսները իշխանություն ունեն գործել իրենց իշխանության տակ գտնվող գյուղերում կամ գավառներում՝ քահանաներ օծել կամ իր գավառի եւ իշխանության վարքը բարելավել-բարձրացնել, իսկ արտա-քո գործերում ձեռնամուխ պիտի լինեն միայն մայրաքաղաքի եպիսկո-պոսի կամքով: Սակայն առանց կաթողիկոսի հավանության եպիսկո-պոսները որեւէ ինչ չգործեն /Անկյուրիայի կանոններ, ԺԲ/: Հայտնի է այս հոգեւոր դատաստանը եւ այժմ էլ բնավ չի լուծարվել եւ եպիսկո-պոսները թող չզայրանան մեզ վրա, /երբ մերժվեն/, քանի որ խնդրում են անարժանին ձեռնադրել եւ իրենց իսկ անձի կամքով շարժվելով՝ ախտ են սերմանում եւ նրանք գավառի ախտին /հետամուտ/, ընծայա-կան թղթերով են վկայողներին դեմ գնում:

Թեպետ հայրապետներին հայտնի է, թե իրենց անձերից մղված ով-քեր համարձակվեցին եւ իրենց կամքով պատրեցին: Եվ այդ պատճա-ռով նրանց հակառակությունը ընդդեմ հայրապետների՝ «Ոչ Տիրոջից» կոչվեց...

ԳԼՈՒԽ ՃԾԸ
ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՆԱԴՐՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե որեւէ մեկն իր եպիսկոպոսի կողմից բանադրվի՝ երեց լինի, թե սարկավագ եւ եպիսկոպոսի արած դատաստանը հանձն չառնի եւ ժո-ղովի մեջ իր հարցով շարունակ ճանճրացնի շատերին, որպես թե ինչ-ինչ իրավունքներ ինքն ունի, թող բազմաթիվ եպիսկոպոսների առջեւ իր խնդիրն ասի եւ նրանցից արդար դատաստանի վճիռ առնի: Իսկ ե-թե նրանցից էլ սրտնեղելով եւ նրանց անդոսնելով համարձակվի թա-գավորին դիմել եւ ճանճրացնել, այդպիսիին արժանի չհամարել թո-ղության կամ ընդունելության կամ որեւէ հույս տալու... /Անտիոքի կանոններ, ԺԲ/:

Արդար է այս դատաստանը, որովհետեւ մեկ-երկու անգամ հանդի-մանվելուց հետո էլ հանդգնեց: Որովհետեւ եթե կարծում էր, թե իր ե-պիսկոպոսը նախանձից է հանել իրեն, մի՞թե բազում եպիսկոպոսներն եւս նախանձեցին: Այլ թող զղջա, եւ նրա զղջումն եւս տեսնեն:

ԳԼՈՒԽ ՃԾԹ
ԱՅԼՈՑ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂՆԵՐԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՁՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եպիսկոպոսներից ոչ մեկը չհամարձակվի իշխանություն դրսեւորել մեկի իշխանության տակից մեկ ուրիշի իշխանության տակ մտնելով ձեռնադրություն անել եւ որեւէ մեկին այդպես մերձեցնել աստիճանակարգի եւ ոչ էլ բազմությամբ այլ իշխանության տակ մտնել, այլ միայն համարձակվի թղթով դիմել մայրաքաղաքի հոգեւոր իշխանությանը եւ եպիսկոպոսներին, որոնք էլ մուտքի իրավունք կարող են տալ նրան: Իսկ եթե ոչ այդպիսի թույլտվության իրավունքի դիմի ստահակության՝ ձեռնադրություն անելով, ապա նրա ձեռնադրությունը չհաստատվի եւ նա պարտավոր լինի իր ստահակության դիմաց հատուցել եւ անմիտ իր ձեռնադրության համար արժանի դատաստանն ընդունի եւ սուրբ ժողովով իր տեղից /վարած պաշտոնից/ մերժվի /Անտիոքի կանոններ, ԺԳ/: Բազում կանոններում եւ գրեթե ամենքի կողմից այս գրվեց, թե նման արարքը չար է եւ անկարգություն: Ասում է՝ նման ձեռնադրությունը անհաստատ լինի, որովհետեւ նրա կողմից ձեռնադրվածը եթե արժանավոր լինի եւ զղջացած, ապա այդժամ հաստատվի օրհնությամբ՝ պատշաճ եպիսկոպոսի կողմից, եւ ըստ կարգերի ապաշխարություն ցույց տա, եթե ոչ՝ մերժված լինի ընդմիշտ:

ԳԼՈՒԽ ՃԿ
ԱՄԲԱՍՏԱՆՎԱԾ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մեկը եպիսկոպոսներից ինչ որ բանում հանցավորվել եւ մեղադրության է դատապարտվում եւ ապա պատահի, որ նրա պատճառով անմիաբանություն լինի...թող սուրբ ժողով լինի այն մայր քաղաքում, որտեղից եպիսկոպոսն է եւ մերձավոր գավառներից եւ իշխանություններից ուրիշների էլ կանչելով, դատ անեն եւ կեղծավորությունն ու հակառակությունը բացահայտեն...

Տես, թե որքան ստույգ է հրամայվում, որ կաթողիկոսները դատ անեն եւ ոչ թե պատրանքի ենթարկվեն ագահության պատճառներով թյուրելով ճշմարիտ դատաստանները:

ԳԼՈՒԽ ՃԿԱ
ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՆ ԵՎ ԲԱՐԻ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՁՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պարտավորություն չէ գավառի եկեղեցու վաղնջական սովորությունները նորաձեւել /Երկրորդ Նիկիական կանոններ, Զ/:

Եվ եթե հայրապետներից մեկը փոփոխություն կամենա անել, ապա պարտավոր է ժողովի միջոցով այդ անել, որ ըստ դատաստանների գրվածքների՝ անվտանգ է:

ԳԼՈՒԽ ՃԿԲ
ԵԿԵՂԵՑՈՒ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԵՐ ՁՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Պարտավորություն չէ եկեղեցու օրհնության սրբությունները այլ եկեղեցի ուղարկել/ Երկրորդ Նիկիական կանոններ, ՁԹ/:

Այլ եկեղեցու նշխար տալը խափանի՛ր, որպեսզի ամբոխվելու պատճառ չլինի, որովհետեւ ամենայն ուղիղ դատաստանի համար զգուշացնում են կանոնները:

ԳԼՈՒԽ ՃԿԳ
ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ՀԵՏ ԽԱՌՆԱԿՎՈՒՄ ԵՆ ԽՆԱՄՈՒԹՅԱՄԲ

Մեր եկեղեցուց չլինեն այնպիսիները, որ տեսակ-տեսակ ցոփ հարսանիքներով այլազգիներին մերձեցնեն իրենց զավակներին, կին տան նրանց կամ կին առնեն նրանցից: /Լավոդիկիայի կանոններ, Ժ/:

Նմանների դատաստանը ըստ կանոնների կամքի այսպիսին լինի, եթե /աղջկան/ հեթանոս այլազգիի տան եւ զրկվի հաղորդությունից, այդժամ հաղորդությունից զրկվեն նաեւ նրա ծնողները:

Եվ եթե հերձվածողներին տան, որոնց հետ մենք չենք հարաբերվում, դատաստանը թող ծնողների խղճին թողնվի, որպեսզի ծնողները հատուցեն:

ԳԼՈՒԽ ՃԿԴ
ԱՅՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ԵՆ ԿՈՂՈՊՏՈՒՄ ԻՐԵՆՑԸ ԶԱՐԴԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Եպիսկոպոսը, որ իշխանություն ունի բազմաթիվ գավառների վրա, իրավունք չունենա այլ եկեղեցիներից վերցնելով իր եկեղեցին զարդարել, որովհետեւ դրանով աչառություն արած կլինի՝ իր անձի դատապարտության համար: Այդպիսին եթե չկամենա դարձ ապրել, լուծարվի իր պաշտոնից եւ այն եկեղեցիները, որոնցից կողոպտելով իր եկեղեցին կառուցեց, նրան չանվանեն որպես իրենց վարդապետ:/ Կղեմիայի կանոններ/:

Հայտնի է այս հոգեւոր դատաստանը եւ հավաստիորեն պահելի եկեղեցու պատշաճությունը կարգավորելու համար:

ԳԼՈՒԽ ՃԿԵ
ՊԱԿԱՍԱՄԻՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԻՆՔՆԱՍՊԱՆ ԵՆ ԼԻՆՈՒՄ

Հարցում- Նա, ով պակասամիտ է եւ գահավեժ լինի կամ մեկ այլ մահով եթե մեռնի, պարտավո՞ր է նրա վրա պատարագ մատուցել, թե ոչ:

Պատասխան- Պարտավորություն է նախ իրավիճակը քննության առնել, արդյո՞ք իսկապես պակասամիտ էր եւ այդ պատճառո՞վ այդ քայլին դիմեց, որովհետեւ բազում անգամներ են եղել, որ մերձավորները ստում են, թե պակասամիտ էր, որպեսզի նրա վրա պատարագ մատուցվի: Հարկ է, ուրեմն քննել, գուցե բռնությունի՞ց այդ քայլին դիմեց, որովհետեւ ինքնասպանի համար պատարագ չի մատուցվում: Եվ ամեն բան պարտավոր է ճշմարտությամբ քննել, որպեսզի պատարագ մատուցողի վրա դատաստան չընկնի: /Աթանասի կանոններ, ԺԱ/:

Արդ թեպետ հայտնի է հարցումից ու պատասխանից, սակայն վերակացուները պարտական են ապաշխարել, ըստ ոչ թե դատավորների, այլ վարդապետների արած դատաստանի:

ԳԼՈՒԽ ՃԿԶ
ԴԻՎԱՀԱՐ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ

Հարցում- Եթե մեկի կինը այսահարվի եւ նրա այրը ասի, թե չեմ կարող ժուժկալել եւ կամենա այլ կին առնել, օրե՞նք է, թե ոչ:

Պատասխան- Շնություն է... ի՞նչն է պարտավորություն կամ արժանին անել, այդ մասին չգիտեմ: /Աթանասի կանոններ, Ժբ/:

Ներումից ելնելով այս գրեցինք. որպես որ կամենան, այդպես ընկալեն դատավորները եւ մեզ անպարսավ թողնեն այդ բանից:

ԳԼՈՒԽ ՃԿԷ
ՆՐԱ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՅՐ ԶԼԻՆԻ

Հարցում- Եթե որեւէ այր զուրկ լինի այրության գործի մեջ եւ կինն իրենից հեռանա, եթե որեւէ մեկը նման դեպքում այլ կին առնի... Կամ եթե այրը կնոջը չարձակի եւ այսպես ասի՝ եթե ինձ Աստծուց մաս է հասնում /դու ես/, մնա եւ պաշտիր ինձ, մենք ի՞նչ պատասխան տանք:

Պատասխան- Արժանի չէ արձակել եւ ոչ էլ թողնել:

Այսպես է եղել կանոնական դատաստանի մեջ. ներմամբ, յուրաքանչյուրին ապաստան տալն է հաճելին, նույն կերպ էլ եկեղեցու դատավորները դատեն:

ԳԼՈՒԽ ՃԿԸ
ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀԱՇՄՎԱԾ ԵՆ

Հարցում- Եթե կինն հաշմվել եւ ասում է ամուսնուն, այլեւս արժան չէ ինձ կնություն անել, այլ կին առ քեզ, որ պիտանի է եւ քո տունը չեն մնա, իսկ ինձ տարվեց տարի հաց ու հանդերձ հատկացրու եւ ես նստեմ եկեղեցու հովանու տակ, մինչեւ իմ ժամանակի վախճանը: Եվ այրն այս ամենը հանձն առնի, ինչպե՞ս վարվել, այլ կին առնի՞, թե վնասակար է:

Պատասխան- Վնասակար է, չի կարող այլ կին առնել, քանի դեռ իր կինը կենդանի է: /Աթանասի կանոններ, ԻԳ/:

ԳԼՈՒԽ ՃԿԹ
ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՊՂԾՎՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարցում. Եթե մի այր պղծվել է անասունների հետ եւ պղծվելուց հետո զղջացել եւ ապաշխարել, որպես որ վարդապետներն են հրամայում եւ նրա կինը այդ պղծության պատճառով, հանցանքից հետո

չկամենա նրան կնության մնալ, եւ այրն այսպես ուզի թե՝ կամ առաջին կինը կրկին դառնա եւ կամ այլ կին կամենա առնել:

Պատասխան- Կինն իրավունք ունի հեռանալ, իսկ այրը՝ նոր կին առնել: /Աթանասի կանոններ, ԻԶ/: Տես նաեւ հոդված ԺԱ:

ԳԼՈՒԽ ՃՀ
ԱՅՆ ՔԱՀԱՆԱՅԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՈՐԵՎԷ ՄԵԿԻՆ ՍՊԱՆԻ

Հարցում. Եթե պատահի, որ քահանաներից մեկին ավազակները վրա տան եւ պատահի, որ քահանան նրանցից ոմանց սպանի իր եւ ընկերոջ անձը ապրեցնելու համար, պարտավո՞ր է նրան քահանայության կարգի մեջ պահել, թե ոչ:

Պատասխան. Արժան չէ քահանայության կարգի մեջ մնալը, որովհետեւ արժան չէ, որ քահանան որեւէ մեկին սպանի, եթե անգամ իր անձն է կորցնում: Այս դատաստանից այս լսեցի. եթե իր անձի համար պարտավոր չէ որեւէ մեկին սպանել, այլ իր ընկերոջ անձի փրկության համար՝ լավ է, որ սպանի, սակայն այնժամ, եթե ավազակները այլազգիներ լինեն: Եվ մնա քահանայության մեջ, թե ոչ, ըստ դիպվածի քննության, թող վարդապետները տեսնեն: տես նաեւ հոդված ՃԼԳ եւ ՃՀԴ/:

ԳԼՈՒԽ ՃՀԱ
ԴԻՎԱՀԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՄԱՐԴ ԵՆ ՍՊԱՆՈՒՄ

Հարցում. Եթե մեկը դիվահարվելիս մարդ է սպանում, այնժամ, երբ դեւից սրբվի, իբրեւ սպանող պարտավո՞ր է ապաշխարել, թե ոչ:

Պատասխան. Փոքր-ինչ, որովհետեւ արածը չարից է եղել: /Աթանասի կանոններ, ԼԴ/:

Նույնը լինի նաեւ այլ մտախաբկանքների մեջ ընկածների համար: Եվ հոգեւոր դատաստանի համաձայն, եթե նմանները իրենք իրենց վնասեն եւ կամ այլոց, ապա առանց ապաշխարության չմնան: Սակայն այս դատաստանը մարմնավոր /աշխարհիկ/ դատավորների համար չէ:

ԳԼՈՒԽ ՃՀԲ
ԿԱՆԱՆՑ ԱՄԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հարցում. Եթե մեկն իր կնոջ ամլության պատճառով նրան թողնի եւ ծննդական կին առնի եւ ապաշխարություն խնդրի նոր կնոջ հետ, ի՞նչ է պարտավոր անել:

Պատասխան. Շնացող է: /Աթանասի կանոններ, ԾԹ/:

Այս դատաստանն եւս քննությամբ անել տես հոդված ԺԱ եւ ՃՂԶ/: Դատավորների համար պատշաճ է սրբությամբ պահել հրամանները եւ կամ կանխավ դատելը եւ մեզ բամբասանքներից, այդպես, ազատ թողնել: Սուրբ Բարսեղն այս հարցը ներմամբ է դիտում /Բարսեղի կանոններ/:

ԳԼՈՒԽ ՃՀԳ
ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԵՎ ԱՅԼՈՑ ԿՈՂՄԻՑ ԱԿԱՄԱ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հարցում. Եթե քահանաներից մեկն իր անդաստանը կամ պարտեզը մաքրելիս քարը դուրս նետի եւ քարը կպչելով որեւէ մեկին սպանի նրան, ի՞նչ է պարտավոր անել, արժա՞ն է մնա քահանայության կարգի եւ պաշտամունք մատուցելու մեջ: Կամ թե աշխարահականներից որեւէ մեկը նման ակամա սպանություն դիպվածով կատարի, որպե՞ս է պարտավոր ապաշխարել:

Պատասխան. Սպանող է, ապաշխարի, իսկ եթե քահանա է՝ քահանայության ու պաշտամունք մատուցելուն մոտ չթողնել:

Նույնպես եւ, երբ հայրը որդուն կամ վարդապետը իր աշակերտին խրատելու համար հարվածի նրան ու նա մեռնի եւ նմանօրինակ այդպիսի դեպքեր, որ ըստ սովորության կարող են լինել տես Աթանասի կանոններ, ՀԳ/: Նույն օրինակի դատաստանի է ենթակա, երբ քահանան փախած ծառայի ետեւից խստությամբ այլ ծառաներ ուղարկի /եւ սրանք մահվան վնաս տան/: Նույնպես եւ, երբ ամբոխի միջով քահանան ձի վարելիս ձիու կողը հարվածով կպչի մեկին ու սպանի: Այդժամ գա ու խոստովանի եւ լուծարվի քահանայությունից, խոստովանի նաեւ նա, ով քահանա չէ եւ նույն բանն արեց: Սակայն եթե պարզվի,

որ ամբոխի պատճառով եղավ, ներում լինի: Այսօրինակ նման ակամա սպանությունների մասին դատեր են օրենքները ուսուցանում, օրինակ, երբ աշխատանքի պահին կացնի գլուխը թռչելով մեկին հարվածի ու սպանի, նմանօրինակ ակամա սպանությունների դեպքում օրենքով կային ապաստան քաղաքներ, եւ ակամա սպանություն գործածներից ով ընկնում էր նման քաղաք, ազատվում էր մահապատժով դատվելուց եւ ապրում էր, եւ այս օրինակը երկրորդ մահվան խորհուրդն ունի:

Կամքով եւ միեւնույն ժամանակ ակամա սպանություններ են համարվում, երբ որս անելիս նետ է արձակվում եւ նետը կպչելով մեկին՝ սպանում է, եւ ըստ այս օրինակի, երբ նետը կպչի արձակողի թշնամուն եւ նա այդ բանի համար ուրախանա՝ սպանությունը խառն է դիտվում՝ թե կամքով, թե ակամա: Իսկ թագավորների ձեռքով կատարվող դատաստանների մեջ կա, որ երբ այլազգին քրիստոնյայի է ակամա սպանում, դատվում է որպես կամավոր սպանություն, որովհետեւ նրանք իրենց բնությամբ խնդում են մեր կորստյան վրա: ...Իսկ կամքով եւ ակամա սպանությունները տարբերելը /առավել/ սովորիր Բարսեղ Կեսարացու Ե կանոնից:

ԳԼՈՒԽ ՃՀԴ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Իսկ նրանք, որ պատերազմների ժամանակ մահ են գործում, մեր հայրերը ամենեւին սպանություն չհամարեցին: Ըստ որի եւ մեզ եւս հաճելի է այդ նույն խորհրդին հետեւել: Բայց, որպեսզի /պատերազմից եկածի/ ձեռքը սրբվի, բարի է, որ այդպիսիները երեք տարիներ հաղորդությունից հեռու մնան /Բարսեղի կանոններ/: ...Եվ միայն ասում է, թե՝ հաղորդությունից հեռու մնան: Սրանից սովորեն դատավորները եւ չլինի թե վրիժառություն լինի:

ԳԼՈՒԽ ՃՀԵ
ՈՐԴԻՆԵՐԻՑ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Որդիները, երբ չեն հնազանդվում իրենց ծնողներին, նրանք, ինչ իրենց ինչքերից որդիներին հասնում է՝ տալիս են սիրով՝ եւ առանձին

են նստեցնում նրանց...: Եվ երբ որդիները կանայք առնեն, ծնողները նույն կերպ անեն /առանձնացնեն/, քանի որ այդպես է հաճելի Աստծուն եւ Պողոս առաքյալն այդպես հրամայեց:

Թերեւս այն է հիշելի այստեղ, որ հայրերին է ասվում՝ Սիրեցե՛ք ձեր որդիներին... եւ այլն /Տիմոթեոսին Ե-31, Զ-4, Կող. Գ 21/: Եվ այս խոսքն ընտրելով, կամենում է ներմամբ մոտենալ խնդրին:

ԳԼՈՒԽ ՃՀԶ
ՆԵՐՔԻՆԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մեկը ներքինի լինի կամ անդամը հատած եւ կեղծավորությամբ կին առնի, իշխանություն է թե քանդել այդ կապը, թե կապել: Եվ եթե քանդվի, ապա նրա կինը լինի նրան, ում որ կինը կամենա: Այդժամ այրի ինչքերի կեսը առնեն եւ որպես տուգանք վճարեն՝ պսակն ու եկեղեցին անարգելու համար եւ երեք տարի ապաշխարի պիղծ այդ այրը /Բարսեղի կանոններ, ԽԴ/:

ԳԼՈՒԽ ՃՀԷ
ՈՐԵՎԷ ՏԵՂԻՑ ԿՈՂՈՊՏԵԼՈՎ ՈՒՏՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մեկը որեւէ տեղից ուտի /Բարսեղի կանոններ, ՁԴ/, մեկին չորս հատուցի, ապա եթե ոչ՝ ըստ կանոնների ապաշխարի կամ աղքատներին բաժանի:

ԳԼՈՒԽ ՃՀԸ
ՀՐԴԵՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մեկը արդար վաստակ հրդեհի, մեկին երեք պիտի տուժի, եթե ոչ, ապաշխարի տաս տարի / Բարսեղի կանոններ, ՁԸ/:

Այս դատաստանը ցուցանվեց եւ ըստ օրենքների է:

ԳԼՈՒԽ ՃՀԹ
ՀԱՓՇՏԱԿՈՂ ԱՐՎԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արվեստավորները, որ այլոց ինչքերն են հափշտակում, մեկի դիմաց չորսն հատուցեն, ապա թե ոչ՝ ապաշխարեն, ըստ վարդապետի

հրամանի /Բարսեղի կանոններ, ՃԵ/:

Հայտնի արվածի ու դատաստանի բերվածի համար, ասում է՝ հատուցում անել, եւ ովքեր որ կարող են՝ հատուցեն, իսկ ովքեր որ չունեն կարողություն հատուցում անելու, կամ իրենց արարքը ծածուկ է մնացել, թող ապաշխարեն:

ԳԼՈՒԽ ՃԶ
ՀԱՅՐԱԿԱՆ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ ՈՐԴԻՆԵՐԻՆ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐԻՆ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Եթե մեկը վախճանվի եւ ունենա որդիներ ու դուստրեր, ապա ծնողների ինչքերը երկու քույրերին մեկ եղբոր բաժին տան՝ հավասարապես: Ըստ օրենքների նախօրոք գրեցինք այս դատաստանները եւ դրեցինք /Հոդվածներ՝ ՃԱ, ՃԲ, ՃԴ-ում/, տան մեջ գտնվող դուստրն առնում է մեկ եղբոր բաժին, իսկ տնից ելած դուստրերը՝ երկուսով մեկ եղբոր բաժին...

Եվ հոր տունը սովոր են կրտսեր որդուն տալ, բայց տեսնվի, որ տկարինը լինի, որի համար հոր բնակատեղին բավական է ունենալ: Իսկ անդրանիկներին պատիվ լինի, որպես որ ծանուցված է ՃԺԱ հոդվածում: Ըստ այդմ, եթե հավասար է բաժանվում որդիներին, ապա անդրանիկին, ըստ պատվի՝ առավելը լինի:

ԳԼՈՒԽ ՃԶԱ
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՔԱՆԻ՞ ՏԱՐԵԿԱՆ ՊԻՏԻ ԼԻՆԻ ՏՂԱՆ, ՈՐ ԲԱԺԻՆ ԱՌՆԻ

Աստվածային օրենսդրությունն ու կանոնական հրամանները անդամ սաղմի փչացվելու դեպքում են արյան դատաստան պահանջում /տես Ելք, ԻԱ 22-23 եւ հոդված ԿԲ/ եւ այն, որ առաջիկայում ծնվողը անվնաս լինի: Բայց ժառանգ լինելը թեպետ Մահմեդի աշակերտները սնոտի իմաստասիրելով տեսնում են մանկան աստղի մեջ, սակայն մեզ համար հավատարիմ է մեր Տիրոջ խոսքը, որ ասում է՝ կինը չի հիշում ծննդյան ցավերի նեղությունները իր ուրախության պատճառով, որովհետեւ աշխարհի մեջ մարդ ծնեց /Հովհաննես, ԺԶ 21/ եւ դարձյալ՝

մարմնից ծնվածը մարմին է... /Հովհաննես, Գ 6/, եւ մարմնից ծնվածը մարմնի ժառանգ լինի, որպես որ Աստծուց ծնվածը՝ Աստծու ժառանգ:

Իսկ եթե կինը հղի է եւ պատահի, որ այրը մեռնի, դատավորները ծննդյանն ակնառեն եւ մանկան ծննդից հետո ժառանգությունն հաստատեն: Եվ թե նույն օրն իսկ, որ կինը ծնեց ու այրը մեռնի, մանուկը, որ ժառանգ է, ապա մանկանից /նրա բաժնից / ժառանգեն այլոք եւ ոչ թե հորից:

Եվ թե մայրը մանկան մեռնի թե ծննդյան ժամանակ, թե հետո եւ թե նույն օրը, մանուկը մոր ժառանգն է եւ մանկանից /նրա բաժնից/ հայրը ժառանգի:

Ինչպես ասվել է՝ որդիներն ու դուստրերը ժառանգներ լինեն, եւ եթե որդի եւ դուստր չլինեն, /հայրը/ ում որ կամենա՝ ժառանգեցնե՝ կամ ազգատոհմի կամ ծառայի. ինքնիշխան է այդպես ժառանգեցնել:

Այլ, եթե մահվան ժամանակ, մեկը չհաստատեց կտակը, ապա տոհմի մերձավորները /եւ ոչ հեռավորները/ ժառանգեն, որպես որ դատվել է, ըստ օրենքների /Թվեր, ԻԷ 1-11, հոդված ՃԱ/:

ԳԼՈՒԽ ՃԶԲ
ՀԱՇՄ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե պատահի, որ զավակը հաշմ լինի, այնպիսին, որպես թե ամբողջովին անմիտ է, այդպիսին ժառանգ չի համարվում, որովհետեւ ոչինչ չգիտի, որով հայրական ժառանգությունը գործի մեջ դնի եւ ի ծնե է այդպես պատահել: Իսկ եթե հետագայում ախտը բժշկելի դիտվի, թե առողջանա, այդժամ ժառանգորդ դառնա, իսկ եթե ոչ, ովքեր որ ժառանգներն են, նրանք էլ հանձն առնեն նրա խնամքը մինչ ի մահ:

Իսկ թե այլազգին լինի կույր կամ կաղ կամ այսահար, կամ բորոտ, որ ամբողջովին ապականված չլինի, կամ լինի անդամալույծ, բայց իմաստուն եւ նման այսպիսի դեպքերում, իրենց սպասավորներն ունենալով՝ կարող են հայրականը ժառանգել, նմաններին չզրկեն իրենց ժառանգությունից, իսկ նրանց վիճակը, որ նշվածին չի բավարարում, ապա մյուս ժառանգների կողմից խնամվեն մինչեւ մահ, ինպես որ ցույց տրվեց:

Իսկ օրենքների դատաստանից այս գիտենք, որ անարատներն էին

իրավունք ստանում Աստծո պաշտամունքի սեղանին նվեր մատուցել, իսկ արատավորները միայն հասարակության մեջ կարող էին զոհ մատուցել: Այսպես. անարատները հոգով եւ մարմնով մարդկանցից ընծա եւ ժառանգորդ էին լինում Աստծուն, իսկ արատավորները՝ մարդկանց ժառանգորդներ:

ԳԼՈՒԽ ՃԶԳ
ԿՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվ կտակն այնպես լինի, ինպես կանոններն են ուսուցանում. իր հիվանդության երրորդ օրը հիվանդը կանչել տա քահանային եւ եկեղեցու ժառանգավորներին եւ երեք վկաների ներկայությամբ կտակն անի, եւ ամեն բան հոգալու, թաղման եւ տան մասին խոսի, ըստ իր կամքի: Եվ եթե պատահի, որ նույն օրը մեռնի, կտակը հաստատուն լինի, մեզանում այնպես չէ իսկությունը, ինչպես Մահմեդի չեղած իմաստուններն են ասում, թե՝ քառասուն օր, եթե հիվանդն ապրի, այդժամ միայն նրա կտակը հաստատվի...

Եվ եթե պատահի, որ հիվանդն առողջանա եւ կամենա կտակը փոխել՝ իշխանություն ունի փոխելու, որովհետեւ կտակը ետմահու է հաստատվում, ինչպես որ առաքյալն է ասում. տես Եբրայեցի Թ 17/:...Եվ կտակում ինչ մահից առաջ գրել էր, մահից հետո կատարեն: Եվ եթե փոխելու լինի կտակը, իշխանություն ունենա ավելացնել եւ ոչ նվազեցնել:

Եվ արդ, այսպես է այդ դատաստանը:

ԳԼՈՒԽ ՃԶԴ
ՄԵՌՆՈՂԻ ԽՈՍՔՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ
ԱՐԺԱՆԱՎՈՐ ԵՂԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Եթե միասին այրը եւ կինը երկար ժամանակ են ապրել եւ որդիներ են ծնել եւ իրենց մեջ ստացվածքների զանազանություն չկա, այս ինչքերի միաբանությունից մեռելությը /հագուստները եւ այլն/ լինի: Իսկ եթե հայտնապես ստացվածքը /մեռնող/ կնոջն է՝ /մեռելությը/ ժառանգավորներինը լինի: Եթե կինը ձեռնհաս լինի այրին մեռելությը փոխանցի, եթե ոչ, յուրայիններինը լինի, այդժամ ամուսնուն ժառանգություն չլինի:

Եվ թե ամուլ կին պատահի եւ երկար ժամանակներ միասին ապրած լինեն, մեռելությը լինի ամուսնուն, իսկ ժառանգությունից այրը մաս չունենա, այլ կնոջ կողմից ժառանգեն: Երբ քիչ ժամանակ է կին եղել եւ առանց ամուսնության մեռել է, յուրայինները ժառանգեն եւ ոչ թե ամուսինը: Իսկ եթե որդի եւ դուստր է ծնել, եթե նրանք կենդանի լինեն կամ մահացած, այդժամ մեռելությը եւ ժառանգության մաս լինի ամուսնուն:

Եվ այդ նույն եղանակով եւ օրինակով լինի առաջին եւ երկրորդ ամուսնության պարագաներում:

Իսկ երբ այրն է մեռնում, ինչ որ ասվեց /կնոջ իրավիճակում/, այդ ամենը յուրայիններինը լինի:

...Ամուլ կնոջից այրը, բացի սակավ նշան մասից, ժառանգություն չի առնում, սակայն ամուլ կինը, թեպետ եւ սակավ ժամանակ տղամարդու կինը եղած լինի, ամուսնուց ժառանգություն է ստանում՝ տնտեսությունը վարելու համար: Եվ երբ վաղ է մահանում ամուսինը եւ կինը կույս է մնացած լինում, ամուսնուց ժառանգություն չի առնում, իսկ այն կինը, որ զավակներ է ծնել, եւ նրանք կենդանի լինեն, թե մեռած՝ ժառանգություն է առնում տղամարդուց, թեկուզ եւ երկար ժամանակ չեն միասին ապրել:

Մաշված հանդերձները /ժառանգության/ բաժանման ժամանակ յուրաքանչյուր կողմից էլ՝ չհիշատակվեն, հիշատակվեն միայն գործածականները: Այլ պարգեւները, որ միմյանց են արել, եթե մաշված լինեն, չհիշատակվեն, այլ /հիշատակվեն/ ոսկին եւ ինչ որ կայուն մնացած լինեն, իսկ դրանք էլ /կամ դրանց դիմաց/ իրավական դատաստանով վճարում լինի:

Եվ հարսանիքի ծախսերը չհիշատակվեն...

Բայց ինչ որ արժան է, իրավամբ տեսնեն դատավորները, ըստ իրավիճակի եւ պատահման եւ ըստ գավառի սովորության, որովհետեւ դատաստանները, որ դրեցինք՝ իրավացի կարծիքներով են: Ապա եթե /մեր նշածներից բացի/ արտաքին այլ ճշմարիտ իրավունքներ լինեն, դրանցով ուղղություն վերհաստատել, եւ այդժամ մեզ սիրով ներեն՝ մեր պակաս տված պատճառով եւ կորովի տեսությամբ թերին լրացնեն:

ԳԼՈՒԽ ՃՁԵ
ՎԱՃԱՌՔԻ ՄԵՋ ԿԱՏԱՐԱԾ ՎԱՃԱՌՈՂԻ ՆԵՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եթե որեւէ մեկն իր արատավոր իրը վաճառի ընկերոջը եւ նենգությամբ ուղարկելով նրան խաբի սուտ երդմամբ եւ ինքն իրեն գովի ընկերոջը զրկելու համար՝ նզովյալ լինի /Բարսեղի կանոններ, ՄԲ/:

Եվ որպեսզի նզովքի տակ չընկնեն այդպիսի վաճառողները, այս խոսքից իմանան դատաստանները:

Արատավորը տալ նշանակում է, թե՝ հարվածող լինել.... դատաստանով վաճառողը վնասները վճարի: Իսկ եթե այլ ազգ լինի, ու պարծենա, եւ վկաներ լինեն, վաճառքը ետ դարձվի, եւ որքան որ արժան է՝ ուղղություն արվի:

Վաճառելիս վաճառողը իրի ամենայն թերությունն ասի /շնչավոր կենդանիներինը՝ նույնպես/...այդպես կանոնական նզովքից ազատվի, ապա թե ոչ՝ գողերի եւ հափշտակողների հետ ապաշխարությունը լինի:

ԳԼՈՒԽ ՃՁԶ
ՍՈՒՏ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՏՎՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մեկը գնա եւ սուտ վկայություն տա եւ նրա սուտ վկայության պատճառով որեւէ մեկն ընկնի մահվան որոգայթի կամ գանահարության տակ, նմանը հինգ տարիներ ունկնդիրների հետ անցկացնի, ապա մեկ տարի ձեռքի /հրամանի/ տակ, աղքատներին տուրքեր բաժանելով ապրի, հետո թող միայն արժանի լինի հարաբերվելու օրենքներին /Բարսեղի կանոններ/:

Այս դատաստանը, ըստ օրենքների դրեցինք եւ երկրորդեցինք այժմ կանոնական իրավունքներով: Ասում է՝ մահվան որոգայթ կամ գանահարություն եւ ոչ թե մեռնելու կամ տուգանքով ազատվելու մասին է խոսքը, իսկ այսպիսի օրինակների դատաստանն այսպես լինի՝ որքան որ վնասեց, այդքանը հատուցի եւ ըստ այնմ, որ խորհեց անել, այդպիսի դատ լինի եւ նրան տես Բ օրենք. ԺԹ, 15-19, հոդված՝ ՃԸ/:

Կամ, եթե այստեղ տրված վիճակներից դուրս է, ապա, թող ըստ կանոնների ապաշխարի:

ԳԼՈՒԽ ՃՁԷ
ԿՈՒՅՍԻ ԵՎ ԵՐԿԱԿԻ ՄԱՍԻՆ

Եթե մեկը կույս մնալ խոստացած լինի, իսկ հետո ամուսնանա եւ կինը մեռնի եւ կրկին հանդգնի ամուսնանալ, ապաշխարությունը երեք կին ունենալուն լինի, իսկ պսակող քահանան լուծարվի:...Այս ուսուցումը ներմամբ այսպես ծանուցվեցինք հայտնել, որ՝ երկուսին էլ /քահանային եւ ամուսնացողին/ ապաշխարություն լինի:

Եվ քահանան պարտավոր է այս կանոնը ուսուցանել, որպեսզի դատապարտություն չլինի՝ աչառություն անելու պատճառով:

ԳԼՈՒԽ ՃՁԸ
ԽՈՍՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Եվ եթե կինը խոսված է եւ հաստատված քահանայի կողմից եւ երկու կամ երեք վկաների մասնակցությամբ, մի համարձակվիր նրան թողնել եւ այլ կին առնել, բացի պոռնկության եւ մարմնաախտի պատճառներից /Բարսեղի կանոններ, ՄԹ/:

Քանի որ խոսված կինը արդեն քահանայի եւ վկաների միջոցով երաշխավորված է, եւ միայն պոռնկության պատճառով իշխանություն կա նրան թողնել եւ նոր կին առնել, երբ նրա՝ փեսայի տանը չէր, որ հանցանքը գործեց: Եվ մարմնաախտի դեպքում, երբ կինը մարմնով ապականված է, վերքեր ունի անբժշկելի, եւ ըստ այդմ, ըստ բժշկության հույսի իշխանություն է թողնել, մեկ ուրիշ կին առնել կամ ոչ: Իսկ այլ պատճառներով արժան չէ խոսվածին թողնել:

ԳԼՈՒԽ ՃՁԹ
ԱԽՏԱԺԵՏ ԱՅՐԵՐԻ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Կինը կամ այրը եթե ցավագար լինի կամ ախտաժետ կամ արվագետ, իշխանություն չունենա ամուսնանալով անարգել պսակն օրհնության եւ եթե նմաններից որեւէ մեկն հանդգնի, ապա ինչքերի կեսը եկեղեցուն տա եւ երեք տարի ապաշխարի:

Եվ այս նաեւ ծնկախտ ունեցողներին է վերաբերվում, որպեսզի

նախ առողջանան եւ հոգեւորով պարապեն, նույնը վերաբերվում է արվագետներին ու անասնագետներին, որպեսզի չլինի պատճառ ապաշխարության մոռացման, այլ որպեսզի սահմանված ժամանակամիջոցում մաքրվեն:

ԳԼՈՒԽ ՃՂ
ԴՈԴԵՐԻ ԵՎ ՊԻՍԱԿՆԵՐԻ, ԽՈՒԼԵՐԻ ԵՎ ՀԱՄՐԵՐԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԿԱՐՈ՞Ղ ԵՆ ԱՐԴՅՈՔ ԿԻՆ ԱՌՆԵԼ

Եվ սրանց մասին դատաստանն այսպես է դրվում. ամուսնանալ կամ ո՛չ: Շնության մասին դրված կանոններից ուսուցանվեցինք /Հայրերին հետեւորդների կանոններ/, որ նրանց ծնունդները ախտակիր են լինում, այս բանի պատճառով նրանց արգելեցին ամուսնանալ, որպեսզի ախտը ծնունդների վրա չտարածվի: Արգելեցին եւ բորոտներին... իսկ ախտավորներին ոչ միայն արգելեցին ամուսնանալ, այլեւ բանակ գնալ՝ տես Ղեւտացի, ԺԴ 46/:

Իսկ կաղը կարող է եւ ուսում ստանալ եւ ամուսնանալ, այս օրենքը ինչպես այրերի, նույնպես եւ կանանց համար լինի: Իսկ կույրի դեպքում, կույր կինը չամուսնանա, որովհետեւ չի կարող իր երեխաներին սնուցանել, իսկ այրը, եթե ժուժկալ է, կարող է ամուսնանալ... Իսկ խուլ կինը, թե ուշիմ լինի եւ որեւէ մեկն հավան լինի առնել, ամուսնանա, նույնը եւ այրի համար լինի: Իսկ համրը՝ որ ասուն չէ, այր լինի, թե կին՝ անասունների շարքին է դասվում, չամուսնացնել...

ԳԼՈՒԽ ՃՂԱ
ՈՉ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԽՈՍՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Եթե մեկի կողմից կնոջից խոսք է առնված, աղջկա նախքան եկեղեցի մտնելը, նրա չար գործերը, երբ հայտնի լինեն, այրն իշխանություն ունի նրան եւ առնել եւ՝ ո՛չ: Իսկ եթե արդեն եկեղեցի է մտել /դարձել քրիստոնյա/ իշխանություն արդեն չունի կնոջն արձակելու, իսկ եթե արձակի՝ անկին մնա եւ երեք տարի ապաշխարի /Բարսեղի կանոններ, ՄԺԱ/:

Այլ մի գլխում հրամայում է՝ Խոսվածին թողնել պոռնկության պատճառով, իսկ այստեղ՝ եկեղեցի է մտել, թե ոչ: Սակայն եթե որդիներ անգամ ծնած լինի, արժան է թողնել պոռնկության պատճառով /Բարսեղի կանոններ, ՄԹ/, իսկ այստեղ՝ եկեղեցին պատվելու համար է: Ուստի, ուրեմն եկեղեցուց դուրս պսակն այստեղ նկատի չի առնվում:

Եվ եթե տղամարդու տնից չսկսվեց իր արատավոր վարքը եւ հետո էլ չզգաստացավ, եւ նույնը շարունակեց, ապա տղամարդը իշխանություն ունի նրան թողնել:

ԳԼՈՒԽ ՃՂԲ
ՏՂԱ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՄԻՆՉ ՀԱՍՈՒՆԱՆԱԼԸ ՊՍԱԿ ՁԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ոչ ոք չհամարձակվի տղա երեխաներին պսակել, մինչեւ նրանց հասունանալը, եւ եթե որեւէ մեկն հանդգնի, քահանայական պաշտոնից լուծարվի եւ... տուգանք տա եկեղեցուն, իսկ տղան, որ չափահաս է, ամուսնանա՝ ում հետ որ կամենա:

Եվ այլ կանոններում էլ ասվում է, թե՝ չպսակել, քանի դեռ տղան ու աղջիկը միմյանց չեն տեսել, որովհետեւ հայտնի չէ, թե միմյանց հետ կուզենա՞ն ամուսնանալ: Եվ նաեւ, եթե չեն հավանում միմյանց, հրամայվում է չամուսնացնել:

Ապա եթե այդպես լինի եւ չափահաս դառնալ չկամենա, որպես ակամա /հանցանք գործածի/ կարգին դասել մեղավորին եւ այդպես դատել: Այս դատաստանը հավանելի լինի Աստծո եկեղեցում:

ԳԼՈՒԽ ՃՂԳ
ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՈՐ ՄԵԿ ՄՈՐ ԿԱԹՈՎ ԵՆ ՍՆՎԵԼ

Հարցում. Նրանք, որ մեկ մոր կաթով են սնվել, բայց օտար են միմյանց, երբ արդեն հասուն հասակում լինեն, արժա՞ն է նրանց ամուսնանալ, թե՝ ոչ:

Պատասխան. Արժան չէ, քանի որ ծնողը եւ ստնտուն նույնն են /Թադեոս առաքյալի կանոններ, Է/:

ԳԼՈՒԽ ՃՂԴ
ՍԱՀՄԱՆ ՓՈՓՈԽՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարցում. Նա, որ ընկերոջ սահմաններն է հափշտակում, ի՞նչ դատաստան լինի:

Պատասխան. Ինչպես որ Մովսեսը գրեց Աստծո հրամանով՝ թո՛ղ նզովյալ լինի եւ իր կյանքի մեջ եւ մահվան /Թադեոս առաքյալի կանոններ, ԼԲ/:

Լսեն թող սահմաններ հափշտակողները եւ զարհուրեն, որովհետեւ դատաստանն Աստվածային է: Եվ եթե լինի հակառակություն անդաստանների համար, վկաների միջոցով հարցը լուծվի, որովհետեւ այս ավելի հավաստի է կարծեմ, քան մեկ խաչն ու մեկ Ավետարանը հանելը /երդվելու համար/, որովհետեւ բազում խաբեություններ են լինում, եւ որովհետեւ երդումն էլ է, ըստ այդ օրինակի, որ չհրամայվեց անել:

ԳԼՈՒԽ ՃՂԵ
ԻՐԵՆՑ ԿԱՆԱՆՑ ԴՈՒՐՍ ԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մեկն իր կնոջը թողնի, որ իր որդիների մայրն է եւ թողնի առանց պոռնկության կամ կախարդության պատճառի եւ կամ առանց կնոջ մարմնական արատի եւ անի այն բանի համար, որ շնաբարո է եւ աչք ունի ուրիշի վրա, դատաստանը այս լինի, որ որդիներն ու ամենայն ինչք, որ ունի, բաժանեն ըստ օրենքների: ... Բաժանման ժամանակ արքունի հարկն եւս տան: Եվ այրը, որ կնոջը թողեց՝ յոթ տարի ապաշխարի եւ եկեղեցուն հարյուր դրամ տուգանք վճարի / Ծ. Թ. Մեկ դրամը մոտ չորս ու կես դրամ ոսկի է հաշվվել/ եթե ազատ է՝ երեք հարյուր դրամ, իսկ եթե շինական՝ գանահարվի եւ հարյուր դրամ տա եկեղեցուն, օրհնության պսակը խոտելի դարձնելու պատճառով: Ապա եթե այս պատիժներից եւ տուգանքներից հետո, եթե որեւէ կին հանդգնի այս կնաթողին կին լինել, երբ հայտնի է, որ թողել է առաջին կնոջը եւ մի տարի անցած չլինի այդ պատիժներից եւ տուգանքներից, հանդգնող կինն եւս մեկ տարվա աշխատանքի ծառայությամբ՝ աղախնությամբ պատժվի, իսկ եթե ազատ է եւ չկամենա աղախնություն՝ հարյուր դրամ տուգանք տալով պատժվի:

ԳԼՈՒԽ ՃՂԶ
ԱՄՈՒԼ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Եթե մեկը կին առնի եւ կինն ամուլ լինի եւ այրը նրան հեռացնի ամլության պատճառով, այդժամ ինչ որ կինն իր հետ բերել էր ամուսնու տուն՝ թե աղախին, թե հանդերձ, թե անասուն, թե արծաթ, իշխանություն ունի այդ ամենը իր հետ վերցնել-գնալ: Եվ եթե ամլությունից բացի այլ արատ կինը չունենա, այրը նաեւ տուգանք տա կնոջը՝ նրան անարգելու համար. թե ազատ է՝ հազար երկու հարյուր դրամ, թե շինական է՝ վեց հարյուր դրամ: Եվ ապա, երբ այս դատաստանների եւ տուգանքների մեջ լինեն եւ մի տարի անցած չլինի եւ որեւէ կին հանդգնի կնաթողին կին լինել, ապա այս կնոջը մեկ տարի աղախնության տան, իսկ եկեղեցուն էլ հարյուր դրամ տուգանք վերցնեն, որովհետեւ բուն ամուսնությունը իր պատճառով խոտելի եղավ եւ նրա պատճառով այրն իր առաջին կնոջը թողեց:

Իսկ եթե կինն ազատ է եւ չկամենա աղախնության գնալ՝ այդ բանի համար էլ հարյուր դրամ տուգանք տա, ըստ հարկին: Իսկ թե առաջնային խորհուրդն այրինն էր, թե իմը թողնեմ քեզ առնեմ եւ կամ պոռնկության խայծով եղած լինի, ապա այրը հարյուր դրամ տուգանք տա եկեղեցուն եւ ապաշխարի՝ երեք տարիներ ունկնդիրների հետ եւ հավելյալ մեկ տարի՝ հսկող ձեռքի տակ, ապա մտնի եկեղեցի: Եվ ով իր որդիների մորը թողնի առանց պոռնկության կամ այլ արատի պատճառի, ապա այր եւ կնոջ պատիժ տուգանքը լինի եւ ըստ կանոնների ապաշխարություն իրականացվի /Շահապիվանի կանոններ, կանոն Ե/:

Եվ որպես որ կար, նույն դատաստանը մենք եւս դրեցինք եւ որոնք որ ըստ կանոնների էին՝ այդ եւս դրոշմեցինք, որպեսզի դատավորները յուրաքանչյուրին իր արարքի համեմատ արժանի դատաստան եւ ուղղությամբ վճիռ հանեն: Եվ որովհետեւ մենք չափավորապես դատաստան դրեցինք յուրաքանչյուրին, ապաշխարությունը թողեցինք կանոններին:

Եվ այս եւս ծանուցանենք, որպեսզի իմանաս, որ ամենայն դատաստան, ուր որ ապաշխարություն է անհրաժեշտ, ապաստան թողեցինք կանոններին:

ԳԼՈՒԽ ՃՂԷ
ԻՐԵՆՑ ԱՅՐԵՐԻՆ ԹՈՂՆՈՂ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Եթե որեւէ կին իր այրից հեռանա, վերադարձնեն իր այրին... Իսկ եթե այրը չարաբարո լինի կամ պոռնիկ կամ հարբեցող եւ կամ խեղաւկան վիճակի այլ ինչ ունեցող, գանահարությամբ եւ խրատով կշտամբեն նրան եւ հնազանդեցնեն, հաշտեցնելով երկուսին: Եթե ազատ է՝ տուգանքներով եւ խրատներով այրին կարգի հրավիրեն: Եվ եթե այրը բարությամբ չրջի, կինն այդժամ նրան ծառայի /Շահապիվանի կանոններ, Զ/: Եվ թե ինչ պատճառներից ելնելով է, որ կինը կարող է իր այրից հեռանալ, այդ մասին տես հոդված ԺԲ-ում, որն էլ իրագործվելու է մեծ երկյուղով եւ /ամուսինների համար/ մեծ էլ վնասով: Նաեւ այս գլխով էլ կամեցանք կանոնական հրամանները եւ սրբերի խոսքը դնել, թե՝ անզգամ կնոջը հրամայվում է խրատել, ինչպես եւ անզգամ այրին: Եվ հայտնի արեցինք, թե մեր կամքը կանոններին հակառակ չէ եւ դատավորները կամք ունենան վերցնել այն ինչ, որ տվեցինք /ԺԲ-ում/, իսկ եթե ոչ, ապա թող հաստատուն մնան կանոնների մեջ:

ԳԼՈՒԽ ՃՂԸ
ՆՐԱ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՌԵՎԱՆԳՎԱԾԻՆ Է ԱՌՆՈՒՄ

Նրանք, որ առեւանգվածին են առնում, կին դարձնում եւ ապա ետ են դարձնում ծնողներին, անարգելու փոխան տուգանք տան, եթե անարգողն ազատ է՝ հազար երկու հարյուր դրամ, թե չինական է՝ վեց հարյուր դրամ: Նրանք, ովքեր հրոսակության գնան, որպես օգնականներ սուտ փեսային, նրանցից յուրաքանչյուրը հարյուր դրամ /մեկ դրամը՝ 4,5 գ. ոսկի/ տուգանք տա, որի կեսն եկեղեցուն լինի, կեսը՝ կարոտյալներին: Իսկ եթե սուտ փեսան աղջկա հետ պոռնկացավ առանց պսակ դնելու, եկեղեցին տուգանք առնի նմանից, որովհետեւ օրհնության պսակ չընդունեց, ուրեմն, այդժամ ապաշխարության մեջ մնա երեք տարի: Իսկ եթե երեցը գաղտնի պսակ դրած լինի, առանց աղջկա ծնողների, երեցը չկարողանա քահանայությունը շարունակել եւ հարյուր դրամ տուգանք տա, որ բաշխեն կարոտյալներին, եւ պսակը, որ դրեց՝ անվավեր լինի: Իսկ եթե այս խռովություններից եւ տուգանքներից հետո դարձյալ աղջկա եւ նրա ծնողների կամքով հավանություն լինի, առաջ ավելի, քան պոռնկելը, պսակը մի՛ օրհնիր, այլ իբրեւ երկու կին ունեցածի՝ տյառնագրված ուռ դնեն նրանց գլխին, իսկ եթե կույս են մնացել, այդժամ միայն ըստ օրենքի օրհնվեն: Եվ թե ազատի, թե չինականի համար կանոնը նույնը լինի /Տես հոդված ԾԳ/:...Եվ ուսուցվեն եպիսկոպոսները, որպեսզի պոռնկացողների տուգանքները աղքատներին տան, որ է հրաման...

ԳԼՈՒԽ ՃՂԹ
ԱՎԱԳԵՐԵՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քահանաները գահասիրությամբ չլինի թե միմյանց հակառակեն, որովհետեւ, ում որ Աստծո շնորհն ընտրեց նախ քահանայության համար, նա է ուրեմն նախագահը եկեղեցու / Ներսեսի... կանոններ, Ժ/:

Եվ այս ասում է նրանց, որ առաջինը լինելու պատիվն են կամենում: Եվ ուղիղ դատաստանով է, որ առաջինն, եթե առաջադեմ է, օծվեց առաջին լինել, ապա եթե այլոց կողմից ընտրված չլինի, եպիսկոպոսի կամքով առաջին դարձնեն, որպեսզի բարեկարգությամբ լցվի եկեղեցին, մանավանդ, այնպիսին ընտրել, որ հյուրասիրության կողմից վկայված անձ լինի:

ԳԼՈՒԽ Մ
ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻՑ ԱՐՎՈՂ ՄՈՒՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Ժողովրդականներից որեւէ մեկը չհրապուրվի եկեղեցուն արված մուտքերն իր կամքով բաժանել, որ դառնում է խռովության պատճառ, այլ պտուղներն ու այլ մուտքերը ժողովրդականները միաբանությամբ եկեղեցուն հատուցեն ամենայն հոժարությամբ եւ անխափան եւ առանձին դասերի համար բաժին չպատրաստեն, վնաս է այդպես վարվելը: Եվ քահանաները սուրբ եկեղեցուն մատուցվածները բաժանեն հետեւյալ կարգով, որ եւ օրենք է. գլխավոր քահանային երկու եւ կես մաս տան, այլ քահանաներին՝ երկու մաս, սարկավագներին՝ մեկ-մեկ մաս, դպիրներին՝ կես մաս եւ այրի կանանց, եթե պարկեշտ են՝

մեկ մաս, առանց որեւէ հակառակության: Իսկ եթե մեկը լինի, որ հակառակի եւ խռովություն անի, այնպիսին դատապարտյալ լինի իր կարգի կողմից եւ նրա ընկերները իշխանություն չունենան նմանի հետ հաղորդվել եւ ոչ էլ ժողովրդականները նրան իրենց որպես քահանա վերցնեն:

ԳԼՈՒԽ ՄԱ
ԵԿԵՂԵՑՈՒՆ ՍՊԱՍԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պաշտոն վարելու եւ պատարագի պիտույքները եւ եկեղեցու սպասքները գլխավոր քահանայի տանը լինեն, որպես որ առաջուց կարգվել է /Սահակ Պարթեւի կանոններ, ԺԸ/: Գլխավոր քահանան չհամարձակվի եկեղեցին թողնել իր տան գործերով պարապելու համար, այլ մշտնջենավոր եւ սուրբ եկեղեցում մնա, որովհետեւ պաշտոնն ու աղոթքները եւ ցերեկվա եւ գիշերվա ժամերի պիտի իրականացնի անխափան եւ տեսչությունը ժողովրդականների վրա չխափանի...Քահանաները միակամ լինեն օրհնել միաբանությամբ եւ միաբանությամբ հանել սուրբ եկեղեցուց /անարժանին/ /Ներսեսի կանոններ, ԺԴ/:

Բարեկարգությամբ ցույց տրվեց հասու դատաստանները եւ սպասավորությունը քահանաների՝ սուրբ կանոններով, նրան, ով կամենում է ճշմարտությամբ լինել քահանայության գործում, ապա եթե ոչ, անպարտ են դատաստանները եկեղեցու եւ հեղգացածներից սպասավորությունը վերցնեն:

ԳԼՈՒԽ ՄԲ
ՎԱՆՔԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հակառակություններ են լինում աշխարհական քահանաների եւ վանքերի քահանաների միջեւ: Այս առումով հարկ է խորհրդածել սուրբ Սահակի կանոնների համաձայն /Սահակի կանոններ, ԼԶ -ԽԲ/, թե որքան գեղեցիկ եւ ըստ արժանավոր կարգի է բաժանում վանքերը եւ եկեղեցիները, որ աշխարհում են, եւ պարտականությունների, եւ իրավունքների եւ տոների մասին հրահանգում, որ այժմ չփոթված եւ ապականված է ամեն բան՝ այդ դրվածքներից հեռանալու պատճառով: Այն բանի համար լռեցինք այսպիսի դատաստանների վերաբերյալ, որովհետեւ սրբերի խոսքերից չեն պատկառում, որքա՞ն առավել մեր խոսքից /չեն պատկառելու/: Եվ եթե այս առնչությամբ որեւէ մեկը դատաստան անել կամենա, նրանց է արժան վարել /ըստ Սահակի կանոնների/ եւ ոչ այլազգիներին:

ԳԼՈՒԽ ՄԳ
ՆՆՋԵՑՅԱԼՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՄԱՍԻՆ

Ննջեցյալների հիշատակը նրանց ընտանիքներում կատարելու համար, ըստ քրիստոնեական կարգի օրենքների, հրամայեցին սուրբ հայրերը, դրանք կատարել ի մխիթարություն ննջեցյալների հոգիների հանգստյան, եւ կամ քառասունքն ու ադապին նրանց հանգստյան, կամ հոգու տուրքերը, որ հրամայել է վախճանվածը, այս արարողությունները իշխանություն չլինի այլ եկեղեցիների կամ այլ կրոնավորների կողմից անել, այլ այդ գյուղի երեցն ու վանականները իրականացնեն, որովհետեւ այդ կարգերը նրանց կամ իրենց տան երեցին է հասնում կատարել, քանի որ այդտեղ է ննջեցյալը սուրբ ավազանի շնորհներով վերստին ծնվել, պսակվել, կենաց հացով կերակրվել, ուստի եւ այդտեղից էլ, հուղարկավորվելով՝ առ Աստված երթա:

Իսկ այն ժամանակ, երբ իր /ննջեցյալի/ եկեղեցու հարկավոր բաները կատարյալ հատուցեն, եւ /ընտանիքում/ կամենան ավելորդ այլ բաներ էլ այլ եկեղեցիների կամ կրոնավորների, կամ աղքատների տալ, ապա համարձակություն ունենան այդպես անելու /Պարտավի կանոններ, ԺԸ/:

Այս դատաստանը ուղղիղ է, որ նախ իր /ննջեցյալի/ եկեղեցու հարկավոր բաները տալուց հետո է միայն, այլոց կամ այլ կրոնավորների տալը: Կամ եթե պատահի, որ անձեռնհասության պատճառով եւ կամ հեռավորների հանդեպ հույսի համար հարկավորը տրվի /այլոց/, ապա այդ լինի տան երեցի հավանությամբ եւ տեղավայրի վանքի առաջնորդի հրամանով, նախ սրանց ըստ կարողության շահելով, եւ այդժամ ներելի են եւ այլ ձեռնարկումները, իհարկե, երբ դրանք չլինեն տեղավայրի /եկեղեցուն/ արհամարհելու հետեւանք:

ԳԼՈՒԽ ՄԴ
ԲԱՆԱԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Եթե ժողովրդականներից մեկը տարբեր սխալների պատճառով բանադրված լինի եպիսկոպոսներից, եւ այդպես թե մեռնի, քահանան նրան թող չթաղի եւ եթե բանադրվածը երեխա լինի՝ նրան չմկրտի: Իսկ եթե այդպիսիին երեխա հասնի եւ կամ մեռել ունենա, ապա քահանան մկրտի երեխային եւ թաղի մեռելին եւ այլ կարգերը կատարի, սակայն բանադրանքի պնդությունը թողնելով չլուծարված /Պարտավի կանոններ, ԺԹ/: Իրեն՝ բանադրվածին հրամայում է չթաղել, եթե մեռնի, կամ եթե երեխա է՝ չմկրտել, սակայն տան մեջ եղած մեռելին թաղելը եւ երեխային մկրտելը՝ հրաման է: Ուրեմն բանադրվածի տան մեջ գտնվողները ազատ են բանադրանքից եւ դրա հետեւանքներից:

ԳԼՈՒԽ ՄԵ
ԵԿԵՂԵՑԻ ՓԱԿՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քորեպիսկոպոսները իշխանություն չունենան աստվածային աղոթքի ժամը խափանել, որեւէ մի հանցանքի համար, նման մեղք գործողները կբանադրվեն /Պարտավի կանոններ, ԻԱ/: Կարծվում է, թե այլ հանցանքների պատճառով հրամայվում է եկեղեցին փակել, սակայն ասվում է, որ որեւէ մի հանցանքի համար ոչ թե փակել եկեղեցին, այլ սաստել հանցավոր սպասավորներին, եթե նրանք փակել կամենան եկեղեցին կամ առանց հրամանի այդ եկեղեցուն հակառակ մի եկեղեցի կառուցեն... Նույն սաստը դրվում է նաեւ գյուղական ավագանու վրա՝ հանդերձ նզովքներով:

ԳԼՈՒԽ ՄԶ
ԳԵՐԻ ՏԱՐՎԱԾ ԱՅՐԵՐԻ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Եվ մեր մեղքերի պատճառով, բազում այրեր եւ կանայք, երբ գերության մեջ էին, նրանց ամուսիններն այստեղ առանց վարդապետների հրամանների իրենց համար կանայք առան եւ կանայք այլ այրերինը եղան: Այդպիսիների համար այսպես սահմանեցինք: Մինչ զուգակիցը գերության մեջ է, նա, ով յոթ տարուց ավելի վաղ այլ մեկին առնի, այնպիսիին պոռնկություն գործող համարեն եւ նմանները գան ու իրենց պատուհասը կրեն ինքնակամ եւ նրանց ինչքերից եւ ստացվածներից առնեն ու աղքատներին տան եւ նոր զուգավորվածներին զատեն միմյանցից եւ նրանք ապաշխարեն յոթ տարի: Եվ յոթ տարուց հետո, եթե նրանց ամուսինները դառնան գերությունից, յուրաքանչյուր ոք իր ամուսնուն առնի, ապա եթե չդառնան, այդժամ կարող են առնել նրան, ում առել էին: Իսկ նրանք, որ յոթ տարուց հետո վերադառնան, ամուսնանան այլ կանանց ու այրերի հետ, սակայն կրկնակի ամուսնության պատճառով՝ ապաշխարություն լինի: Իսկ նա, որ համբերեց յոթ տարի եւ ավելին, ուրիշին առնի՝ առանց տուգանքի եւ պատուհասի, սակայն կրկնակի ամուսնության համար՝ նրանց վրա ապաշխարություն լինի: Նույնպես եւ նրանք, ովքեր յոթ տարի հետո գերությունից դառնան, եթե կամենան, այլ կին առնեն կամ այլ այր առնեն, եւ նույնպես, կրկնակի ամուսնության համար՝ նրանց վրա ապաշխարություն լինի:

Այս իսկ վերցրած է վերջին կանոնների հրամանների համաձայն, որ մենք չափավորապես, ըստ զանազանության, դրեցինք մեր /գրքում/:

ԳԼՈՒԽ ՄԷ
ԵԿԵՂԵՑՈՒ ԺԱՌԱՆԳԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Որեւէ այր կամ կին, որ սուրբ եկեղեցուց է, եթե անորդի մեռնի, ապա, երբ իր կենդանության օրոք իշխանություն ուներ ամենայն ինչի, իր անցնելուց հետոյի համար իշխանություն չունենա մերձավորներից հեռացնել հողը, ջուրը եւ ժողովուրդը: Եվ եթե մերձավորները բազում են եւ կամենա նրանցից մեկից որդի վերցնել, իշխանություն ունենա վերցնելու...: Իսկ եթե որդեգիրներից քահանայության ձեռնադրի՝ կամ գյուղի վկայությամբ կամ անձից ելնելով, որին դեռ քահանայություն չէր հասնում, այդժամ ինքը կես շնորհով մնա իր պաշտոնին եւ իր ձեռնադրված լինելու պատճառով հարկերից ազատ լինի: Իսկ մյուս կես-շնորհի հողն ու ջուրը սուրբ եկեղեցու ծառայողներին թողնի: Եվ մեռյալ քահանայի եւ նրա կնոջ ամենայն շնորհները ողջ եկեղեցու ծառայողներինը լինեն, որովհետեւ չի վայելում սուրբ եկե-

ղեցու ժառանգությունը ծառայողներից հեռացնել եւ տալ հեռավորներին եւ օտարներին: Բայց եթե ծառայողների կամավոր համաձայնությունը լինի, շնորհները /հող, ջուր/ մեռնողը կարող է թողնել մի չինականի, որը սուրբ եկեղեցու ուխտից լինի, որ թեպետ հեռավորներից էլ լինի, իշխանություն ունենա նրան մերձավորեցնել: Իսկ եթե գյուղը կամենա երեցի ժառանգությունը վերցնել, ապա իմանան, որ երեցի ժառանգությունը սուրբ աթոռինն է, եւ որին որ /սուրբ աթոռի/ վարդապետը կամենա ժառանգորդ դարձնել՝ իշխանություն ունի այդ անել: Եվ այս սահմանադրությունը Հերակլի եւ Խոսրովի կողմից դրված լինելով, այժմ էլ լինի: ...Եվ նրանց /Հերակլի եւ Խոսրովի/ ժամանակից մինչեւ այժմ եւ հավիտյան՝ այս գիրը հաստատուն մնա, եւ ոչ ոք այս սահմաններից չանցնի /Դունայի կանոններ, Ը/:

Տեսնենք եւ այս հոգեւոր դատաստանը, որովհետեւ իշխանություն ունի յուրայիններին տալ՝ ում որ կամենա, իսկ եկեղեցու ծառայողներից չհեռացնել, իսկ եթե պատահի, որ տա հեռավոր ծառայողներին կամ օտարների, որոնցից որդեգիր վերցրեց, եւ նա /որդեգիրը/ քահանայացավ, ապա պատվիրի, որ իր մերձավոր ծառայողների հետ լինի, եւ եթե պատահի, որ մերձավորներից կամենան քահանայանալ, թող քահանայանան, ապա թե ոչ, առաջնորդը երեցությունը օտարին տալու իշխանություն ունի, որը, սակայն, քահանայության տնից է, որպես սուրբ եկեղեցու ժառանգորդ:

Այս բաների մասին հավելում անելը անհրաժեշտ էր, որովհետեւ ոչ միայն ժառանգավորները, որ հանվում են եկեղեցու /պաշտոնից եւ սուրբ աթոռի կողմից է այդ ուղղությունն անելը/, այլեւ պատահում են ծառայողներ, որ անարժան են լինում, եթե քահանա լինեն կամ ոչ, որովհետեւ իշխանություն է քահանաներից արժանավորին /երեց/ կարգել: Եվ այդ ըստ ճշմարտության է:

ԳԼՈՒԽ ՄԸ
ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԱԶԱՏՆԵՐ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ազատները, երբ իրենց համար մարդ են բաժանում, չարակամության հոլովույթով վերցնում են եկեղեցու մանուկներին եւ փափագում նրանց ծառա դարձնել եւ ստրկության կարգի մեջ պահել, արարք, որ անվայել է քրիստոնյաների համար: Որովհետեւ երիցս երանելի Տրդատ թագավորը սուրբ եկեղեցու ժառանգությունը այլ ազատների տների դասին է կարգել, եւ ազատներ էին որդիները սուրբ եկեղեցու, ազատ էին նրանց հողն ու ջուրը: Եվ Պարսից թագավորության ժամանակում, թեպետ եւ հարկ էին վերցնում, բայց դիվանի տանն հայտնի էր եկեղեցու որդիների ազատությունը եւ չէին խառնվում չինականների գործերին, բացի արքունիքին հարկ առնել տալուց:

Արդ, եթե որեւէ մեկը ագահությամբ աչք դնի եկեղեցու ազատ մանուկների վրա եւ ծառայության բաժնի եւ վիճակի մեջ գցի նրանց, այնպիսին մեր ժողովի օրհնությունից հեռու լինի եւ վարդապետն ու քահանան իշխանություն չունեն այդպիսիին պատարագներին օրհնել: Այլեւ ոմանք Ոզիայի ախտով են վարակվում /Բ Մնացորդ. ԻԶ/, եւ ըստ յուրաքանչյուրն իր կամքի եւ ձեւի՝ բաժանում են սուրբ եկեղեցու շնորհները եւ որպես կամենում են, մատակարարում են, եւ վարդապետի հրամանին եւ օրենքներին ուշադրություն չեն դարձնում, այդպիսիները նույնպես մեր օրհնությունից հեռու լինեն, նրանք, որ հանդգնեն այդպիսի բաներ գործել /Դունայի կանոններ, Թ/:

Լսեն թող ազատները, որովհետեւ այսպես են լուծվում ուղիղ եւ կանոնական դատաստանները:

ԳԼՈՒԽ ՄԹ
ՎԱՆՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Տանուտերերից եւ ազատներից ոմանք վանքերի վրա իշխանություն են սահմանում եւ վանականներից ում կամենան՝ հանում են, ում կամենան՝ նշանակում, եւ այդ անում են՝ ժլատությունից ելնելով: Այլ կան նրանցից ոմանք էլ, որ վանքերում են նստում, որպես թե տանը հաց չունեն ուտելու եւ Աստծո եկեղեցին են արհամարհում իրենց անպատկառ անամոթությամբ: Այդպիսիներն եթե ուղղության գան եւ թողնեն, որ եպիսկոպոսները ուղղությամբ տեսչություն անեն սրբերի լույսով եւ պաշտամունքներն ու դպրոցը կարգավորեն, այնպիսիներին մեղքերի թողության շնորհում լինի եւ ժողովի մեջ օրհնյալ լինեն: Եվ ժողովրդով, եւ օրհնությամբ, եւ պտղաբերությամբ, եւ ուխտադրությամբ ընթանան եւ աղոթեն վանքի համար, որպես որ պարտավոր է՝

իրենց հայրերի վաստակների եւ աղոթքների նման լինելով, բայց ժլատանալով որեւէ մեկին պաշտոնից հանելու իշխանություն չունենան: Ապա եթե որեւէ բանում հակառակ մնան իրենց հայրերի հրամաններին, եւ մեր պատվերներին, այդպիսիք մեր օրհնությունից հեռու մնան եւ սուրբ վկաներից հատուցումն ստանան /Դունայի կանոններ, Ժ/:

Որպես որ գրված է, սրանց համար վրեժխնդրություն լինի ազգի մեջ եւ հանդիմանություն լինի ժողովրդի կողմից /Միքիա, Ե 14.../:

ԳԼՈՒԽ ՄԺ
ՏԿԱՐԱՆՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ոմանք տկարանոցներից իշխանություն են վերապահում հարկեր գանձել եւ հագուստ, կերակուր ու ըմպելիք են պահանջում բռնությամբ եւ իրենց գործակալներին էլ են այդ ամեն անօրենության վրա գումարում եւ կոռով կամ հսկողությամբ նեղում են եւ ողորմելի եղբայրներին, այդպես, չարչարում են՝ անխղճաբար, որոնց առավել հարկավոր էր դարմանել, երբ ամենայն քրիստոնյաներն են պարտավոր վիրակապել նրանց վերքերը /Դունայի կանոններ, ԺԱ/: Արդ եթե որեւէ մեկը հանդգնի ինչքեր վերցնել տկարանոցներից, անողորմ դատաստանով պիտի դատել նրանց, քանի որ իրենք ողորմություն չեն անում:

ԳԼՈՒԽ ՄԺԱ
ԲՌՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՆՔԵՐՈՒՄ ԻՋԵՎԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ոմանք՝ ազատներից, որ հեծյալ են, եւ գյուղերի մոտ հասնելով, ուր վանքեր կան, փոխանակ գյուղերում իջեւանելու, իրենց կանանցով ու նաժիշտներով իջեւանում են վանքերում, այդպես ոտքի կոխան անելով սուրբ հայրերի կանոնները եւ, գուսաններ վարձելով սրբության եւ պաշտամունքի վայրերում, ընթրիք են անում, բան, որ սոսկալի է քրիստոնյաների համար լսելն անգամ, ուր մնաց տեսնել նման անօրենություն: Արդ, վերում գրված կանոնները լսելով, այդպիսիների հետ այդպես՝ ըստ կանոնների խոսեն վանքերի երեցները. եթե լսող լինեն եւ գնան գյուղերն իջեւանեն՝ բարի վարված կլինեն, ապա եթե անհնազանդության մեջ մնան, այդպիսիները եւ մեր օրհնություններից հեռու լինեն եւ սրբերի վրեժխնդրությանն արժանանան: Որովհետեւ վանքերը սրբերի հանգստարան են կոչվում եւ օթեւան եպիսկոպոսների, քահանաների, աբեղաների եւ աղքատների համար: Եվ ազատները, եւ կանայք, եւ հեծյալները հարկ է, որ մեծ երկյուղով պարտավորված աղոթեն եւ հաղորդվեն պաշտամունքներին, որպես որ վայել է Աստծո Տանը /Դունայի կանոններ, ԺԲ/:

Այս առնչությամբ օրենսդրական դատաստանները հայտնի են ամենքին էլ:

ԳԼՈՒԽ ՄԺԲ
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՔԱՆԻ ՍԵՐՈՒՆԴ /ԶԱՐՄ, ԱԶԳ/ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆ ՊՍԱԿՎԵԼ ՄԻՄՅԱՆՑ ՀԵՏ

Որովհետեւ բոլոր մեր աթոռակիցներին հարկ եղավ գրել նույն նյութի շուրջ, Որմիզդի որդի Խոսրովի տերության տասներորդ տարում, եւ այժմ սրբությունդ պահելու համար հարկադրվեցինք /քեզ համար էլ/ գրել՝ պինդ պահելու համար պատվերը Սուրբ Հոգու, որ եղավ ձեռքով Օրենքների եւ Մարգարեների, որոնք առաքելական կանոններով հաստատեցին նաեւ սուրբ եւ ուղղափառ վարդապետները: Որպեսզի առավելագույնս զգուշանանք մերձավորների, որոնք ազգակցությամբ մոտ են. անիծյալ ամուսնությունից, որոնք այնքա՜ն են կործանաբեր այդ չարության պատճառով, քանի որ այդպիսիք ոչ միայն խառնակություն են գործում տոհմածառի հաշվի մեջ, այլեւ ագահություն, որ ամենայն չարի արմատն է /Ա Տիմոթեոս, Զ 10/, ասում է առաքյալը, Անաստված են հեթանոսների օրենքները... որովհետեւ երբ բերանն Աստվածային անիծում է այն մարդկանց, որոնք փոխում են իրենց ընկերոջ դրած սահմանները /Բ Օրենք, ԺԹ 14/, ապա Արարչի բոլորին տրված սահմաններն ու պատվերները ոտնակոխ անողներն ու բռնատիրողները, բոլոր արհամարողները, մեծ բարկությամբ պիտի դատվեն: Եվ հնուց հայտնի է, որ ըստ ելքի, Աստված այսպես ասաց. Թե եգիպտացիների եւ քանանացիների կրոններով մի՛ ընթացեք, Ե՛ս եմ ձեր Տեր Աստվածը: Եվ խայտառակություն անվանեց մերձավորների /խառնակման/ անկողինները /Ղեւտ, ԺԸ 6-18/, որով ամբարիշտներն էին ընթանում: Աստված Հրաժարեցրեց առաջին

ազգակցից, ապա երկրորդից եւ հասավ այնտեղ, որ մենք խորթ ենք կոչում եւ ասում է, մի զուգակցվիր, որովհետեւ մեկ մորից է, քույր է: Նաեւ ասաց՝ քո որդին քո կնոջ դստեր /խորթ դստեր/ ամոթությքը չբանա: Նույն օրենքը վերաբերվում է հորաքույրերին ու մորաքույրերին, նաեւ նրանց երեխաներին...

Ապա վերնագույնն է նշանակում, քան այս, որ մեզանում երրորդ զարմ է կարծվում, ասելով՝ ամոթությքը քո դստեր որդու, քո դստեր՝ դստեր մի բանա: Բայց չլինի թե, որեւէ մեկը ասվածը կարծի թե միայն ծնողին է վերաբերվում, այլ նաեւ նրանց, որ ծնողի արյունակիցներն են՝ մինչեւ չորրորդ զարմ, որովհետեւ չկա եղբայր, առանց հոր կամ քրոջ, այլ եթե հորաքրոջ կամ մորաքրոջ որդի է, այդժամ էլ է նույն ազգակցությունը, նույնն է նաեւ նրանց որդիների համար: Որովհետեւ, երբ առաջին, երկրորդ կամ երրորդ զարմ են ասում, եղբորորդիների կամ այլոց համար միմյանց հանդեպ առաջին զարմ են, եւ երկրորդը, եւ երրորդը, եւ քառորդը նույնպես ազգ / զարմ/ են ասում: Եվ մեծ աստվածային Օրենքներն ուսուցանում են, թե նրանք միմյանց ամոթությքը չբացեն եւ դստեր դստերը եւ դստեր որդուն՝ մի՛ առնիր /Ղեւտացի, ԺԸ 15/: Եվ այս օրինակն է ցուցանվում. Որպես թե մեկի որդին մեռել է եւ նույն այրը մեկ այլ կնոջից որդի է ունեցել եւ նրա /առաջին/ կինը ամուսնանալով այլ այրի հետ՝ դուստր է ծնել: Այս որդին եւ դուստրը ամուսնանալ չեն կարող, այդ, քանի որ անբարշտություն գործել կլինի...Իսկ Սուրբ Հոգին Օվսե Մարգարեի միջոցով ամենայն չարաչար մեղքերը փոքր համարեց /արյան խառնման/ հանցանքի հանդեպ... որովհետեւ ճշմարտությունը հեռանում է /մարդկանցից/ եւ դատաստանն է Աստծո մնում աշխարհի բնակիչների վրա, եւ ողորմության, եւ Աստծո գիտության փոխարեն՝ երկրի վրա իշխում են անեծքներն ու ստությունը, գողությունն ու շնությունը, եւ սպանությունը, որոնք հեղեղված են երկրի վրա: Իսկ ավելի ամբարշտություն ու կսկծալի մեղք է, երբ արյունը արյանն են խառնում, որ ազգականների ամուսնությունն է: Եվ հատուցմանն այդ հանցանքի, պատմվում է, որ երկրին սուգ է պատում եւ նվազում են ամենայն բնակիչները, անգամ գազաններն անապատի, նվազում են եւ սողունները, եւ թռչուններն երկնքի, որովհետեւ ոչ ոք չկար, որ հանդիմաներ կամ դատեր /այդ անօրենությունը/: Եվ այդպիսիների վերաբերյալ է Բանն հանդիմանության եւ

դատաստանի, որ ձեզ հավատացվեց, վստահորեն հենվի՛ր այդ խոսքին եւ դատապարտի՛ր: Եվ եթե արյունը արյանը թույլ չտաս խառնեն, մինչեւ այն զարմը, երբ արյան մերձավորությունն սպառվի, այդժամ արդարությամբ կատարյալ՝ կզարդարես քո վիճակը: Իսկ Սուրբ Հոգուն ընդդեմ հանդգնողների եւ այս Բանի դեմ պատերազմել սիրողների համար կանոնի խոսքն է դրված, որ երանելի հայրերին Քրիստոսով է տրվել ու հաստատվել, Նրա, որ մինչեւ այժմ արդարությունը որպես անչեջ արեգակ է պահում:

Ավանդի՛ր ուրեմն այս, որ արյան մերձավորության սպառման սկիզբը հինգերորդ զարմին նախորդողն է... քանի որ անասունների բնության մեջ էին սովոր ընկնել, նրանց համար ողորմություն արարվեց սահմանումներով մեղմացնող, բայց ամենալավը բուն /Օրենքներով ու կանոններովն/ է, որին տեղյակ է քո սրբությունը:

Ամենայն կանոններով դրանց մասին սահմաններ դրվեց, իսկ լիովին սահմանները մենք վերցրեցինք Օրենքից եւ Մարգարեներից: Եվ մեզ համար սրանցով քննելի է դառնում, թե ո՞ր հավելվածն եղավ ըստ Նորի՝ կանոնների ձեռքով: Քանզի Օրենքն հրաժարեցրեց հոր, մոր, մոր դստեր ամոթությքները ի հայտ անել... Իսկ կանոնները հրամայում են նաեւ, թե՝ մի տուր խորթերին միմյանց եւ չլինի թե նրանց ամոթությքից ծնունդներ լինեն՝ մինչեւ երրորդ զարմը, ապա խորթ ծնողներից ծնվածները մինչեւ որդիների թոռան որդիները, որոնցով լինում է հինգերորդ զարմ, այդժամ կարելի է ամուսնություն թույլ տալ:

Իսկ միմյանց խորթերի եւ խորթակիցների համար հրամայում է մինչեւ երրորդ զարմը, հայտնի է, որ երրորդ զարմ ասելով՝ չորրորդին ի նկատի ունի, քանի որ խորթ ծնողներից ծնվածների համար՝ մինչեւ որդին է երրորդ ասում, այդժամ խորթերը լինում են չորրորդ, իսկ ծնողները՝ հինգերորդ: Եվ այս ասում է այսպես՝ եթե պատահի, որ մեկը խորթ լինի եւ մեկը ծնողներից խորթ, եւ կամ խորթ ծնողներից եւ չորրորդը լինեն, եւ ծնողները հինգերորդը, ապա այդժամ ամուսնանան:

Օրենքները հորաքրոջն ու մորաքրոջն են հիշում, իսկ կանոնները նրանց ծնունդներին եւ ծնունդը եղբոր մոր եւ այլոց, որոնց միապես հրաժարեցնում է: Խորթերից եւ թոռներից, որ որդուց են կամ դուստրից եւ եղբորից ծնունդ, կանոնները եւ օրենքները միօրինակ հրաժարեցնում են ամուսնանալ:

ԳԼՈՒԽ ՄԺԳ
ԴԱՐՁՅԱԼ ՆՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

Գիտենք, որ կանոնները հրամայում են, թե՝ ո՛չ ոք իշխանություն չունենա խնամություն անել մինչեւ չորրորդ եւ հինգերորդ զարմը: Նույնն օրենքներն են ասում. երբ երրորդ ծնունդի հարազատությունը հրամայում է չառնել, նշանակում է՝ չորրորդին հրամայում է առնել, սակայն, որն առնում է, ինքը լինում է հինգերորդ: Եվ այս ամենայն ընտանիքներին է պարտավոր իմանալ, որ այս էր չորրորդն ու հինգերորդը...

Եվ դարձյալ, խոնարհագույն մի բան ասենք, որ չորրորդ զարմը /ծնունդը/ մեկ կողմի համար է ասում, իսկ եթե մյուս կողմին մեկ ծնունդ պակաս լինի՝ վերստին կարելի է... Երրորդին հրաման չի տալիս, չորրորդն է առնում, հինգերորդը առնողն է: Նույնն է եւ ըստ կանոնների: Եվ որքան մեկ կողմից է, մյուսինը եթե նույնն է, այդ առավելություն է:

Եվ արդ, ըստ օրենքների եւ կանոնների այսպես ամուսնանան նրանք, ովքեր թե եղբայրների ծնունդ են եւ թե այլոց, հիշենք, որ որպես առաջին զարմ՝ ծնողները հաշվի մեջ չեն մտնում, այլ իրենցից է հաշվվում չորրորդ եւ հինգերորդ զարմերը:

...Եվ եթե պատահի, որ հինգ զարմ լինի արյան հեռավորությունը՝ բարի է. եւ որքան որ մեկ կողմում է, մյուսում եւս նույնը լինի՝ առավելություն է: Ապա, եթե ոչ, այնպես լինի, ինչպես որ ցուցանվեց:

Եվ եթե երեք մեկ կողմից լինի, երկուսը մեկ, այս եւս լինելի է, որովհետեւ, որպես որ օրենքները հրամայեցին՝ չորրորդն առնի հինգերորդին, որ երբ առնի, մնում է որպես երրորդ: Նույնը լինի նրանց որդիների համար էլ, որովհետեւ հեռավորության նույն օրինակով պիտի դիտվի:

Նույնպես, եթե երեք մեկ կողմից լինի եւ երեք մյուս կողմից, ամուսնանալով՝ չորրորդ զարմն է լինում, զույգն իսկ դառնալով հինգերորդ զարմ:

Այսպես. ամեն խնամություն ըստ այս ցուցումների լինի՝ առնվազն երեք կամ չորս զարմի տարբերությամբ: Բայց հինգերորդ զարմի հեռավորություն լինի միայն քահանաների համար, իսկ չորրորդը բոլոր աշխարհականների:

Իսկ եթե երեք մեկ կողմից է, մեկ՝ մյուս, լինելի չէ նման ամուսնությունը: Նույնպես, երբ երկու մեկ կողմից է, երկու՝ մյուս, կրկին լինելի չէ: Եթե որեւէ մեկն հանդգնի խախտել, ապա ապաշխարությամբ ուղղության բերվի:

...Միայն չլինեն կաշառքներով կուրացածներ, հայտնի է, որ օրենքները վրեժխնդիր են նմանների նկատմամբ եւ որքան որ ձեռքերը լի լինեն կաշառքով, այնքան սաստիկ դատաստանով պիտի հատուցում ստանան:

ԳԼՈՒԽ ՄԺԴ
ԽՈՐՏԱԿՎԱԾ ՆԱՎԻ ՄԱՍԻՆ

Խորտակվող նավը մերձակայքում գտնվող քաղաքի օգնությամբ փրկվի, որովհետեւ որ նախկինում վայելում էր նավի բերած օգուտներից, իսկ օտար նավի դեպքում նրանից ավար առնելը՝ դատաստանի է ենթակա: Եվ եթե ձրի կամենան փրկել, այդ դեպքում, /փրկվածները/ որքան հնարավոր է, այդքան վարձ տան, նաեւ օրենքի մասին խորհրդածելով եւ այն խորհուրդը նկատի ունենալով, որ ասում է՝ ընկած գրաստը հասցնել իր տիրոջը /Բ Օրենք, ԻԲ 1-4/: Այլ ագահությունների եւ հափշտակումների համար կամ ավարը թափելու դեպքում այսպիսի դատաստան լինի, տասանորդ կամ մեկին հինգ վճար տրվի:

Եվ այս մասին սակավ դատաստան դրեցինք, որովհետեւ հռոմեացիները իրավունքների դեմ խստորեն են գործում նման հարցերում, եւ որ չլինի թե մեր ավագները /ավազակությամբ/ ծովին տիրանան:

ԳԼՈՒԽ ՄԺԵ
ԽԱԲԵԲԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվ բազում են նրանք, որ խաբեբայություններով շրջում են սուրբ եկեղեցու եւ վանքերի անվան տակ եւ շատերին են պատրանքների մեջ գցում, երբ դյուրին չէ հսկողություն սահմանել չարի պատրվակների վրա, քանզի սրանք սովոր են ընծայական թղթեր առնել եւ այլ ձեւեր ստանալ կեղծավորությամբ: Արդ, երբ պատահի, իշխելով հսկել սրանց վրա եւ գտնել խաբեությունը, եւ այլ մի եկեղեցու անունով սրանց ժողոված ինչքերը առնել եւ թե կարողանաս, յուրաքանչյուր

եկեղեցու առաքիր այն, որոնցից խաբեբաները վերցրել են: Եվ թե այս հնարավոր չլինի, հավաքվածը ուղարկիր եպիսկոպոսներին կամ նրանց փոխարինողներին: Եթե /խաբեբայության/ դրդապատճառը եկեղեցի կառուցելը լինի եւ գումարը բավական լինի, կառուցեն, իսկ եթե բավական չլինի, օգտագործեն եկեղեցու պետքերի համար: Եթե դրդապատճառը գերությունն է եղել, գումարի օգտագործումը այդ առումով վարել: Եվ ըստ այն օրինակի լինի, եթե դրդապատճառները այլ լինեն:

ԳԼՈՒԽ ՄԺԶ
ՆՈՐ ԳՅՈՒՂ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվ երբ նոր գյուղ սարքեք, արժան չէ առանց բավականաչափ բնակչության հավաքվելու հողի եւ ջրի եւ այլ այսպիսի բաների սահմանների հաստատուն բաժանումն անել, եւ երբ բնակիչներն հավաքվեն, այդժամ բաժանումն հաստատեն:

Իսկ եթե ավերակ գյուղ է վերակառուցվում եւ շատ հին չէ, ապա, յուրաքանչյուրին անդաստանի սահմաններ հատկացնելուց առաջ, դիտել արդեն եղած սահմանները եւ ըստ առաջին բնակիչների դրած սահմանների, բաժանումն անել: Իսկ եթե վերակառուցվող գյուղը հին ժամանակների է եւ անդաստանների բաժանման սահմանները չեն երեւում, եւ տերերի փոփոխություն է եղել, ապա նոր բաժանումը հավասարադատությամբ անել՝ նախ եկեղեցունը եւ ապա մյուսներինը, իսկ նրան, ով որ գյուղի գլխավորը լինի՝ մի մաս ավելի տալ, այն բանի համար, որ հոգում է մյուսներին էլ:

ԳԼՈՒԽ ՄԺԷ
ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՄԵՏԱՔՍ ԿԱՄ ԱՅԼ ԻՆՉՔ ԵՆ ԳՆՈՒՄ ՈՒ ԾԱԽՈՒՄ

Վաճառքներն այն ժամանակ հաստատվեն, երբ վաճառողի մերձավորները համաձայնվեն, որ մերձավորների կամքով եւս լինի:

Ըստ այս բանի, եթե հայրը վաճառի, պարտավոր է իր որդիների եւ դուստրերի կամքը հարցնել, համաձայնություն առնել եւ նաեւ եղբայրների, որոնք ժառանգներ են: Նույնը լինի, երբ որդիները վաճառեն՝ հոր, եղբայրների եւ քույրերի կամքն հարցնեն: Ապա եթե մերձավորների կամքի համաձայնությունն առանց ստանալու վաճառեն, իշխանություն լինի թե վաճառքը, թե գրավը ետ վերադարձնել: Եվ երբ միասին, գրով, վկաներով վաճառեն եւ աղքատության պատճառով եթե լինի, եւ սահմանով, որ վաճառողը դնի կամ, ինչպես որ նախօրոք ցույց տրվեց /տես հոդվածներ՝ Ղ, ՂԱ/, եւ եթե փոշմանեն, ապա իշխանություն ունեն վաճառածը վերադարձնել, իսկ եթե անպատճառ լինի վաճառելը, այդժամ հաստատուն լինի:

Արդ այդպես, արժանվույն կամ վերադարձնեն, կամ հավանության արժանացնեն: Իսկ հաստատության գիրը եպիսկոպոսի կամ ճշմարիտ դատավորի նշանով /կնիքով/ լինի... Եվ թեպետ գիրն այլոց ձեռքով գրեն, սակայն եպիսկոպոսի եւ ճշմարիտ դատավորի ձեռքով վաճառքի գրերն հաստատվեն, նրանց նշաններով, որպես որ թագավորական տներում են անում, գիրը գրում են, սակայն հաստատում արքունի կնիքով: Նույն կերպ էլ՝ այստեղ լինի:

ԳԼՈՒԽ ՄԺԸ
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՏՆԻՑ ԻՆՉ ԲԱԺԻՆ Է ՀԱՄՆՈՒՄ ՀԱՐՍԻՆ

Եվ երբ եղբայրները միմյանցից բաժանվեն, նախ հարսների բաժինները առանձնացնեն՝ յուրաքանչյուրինը իրեն հատկացնելով, ապա սկսեն բաժանել հայրական ժառանգության իրենց հասանելիքը: Իսկ եթե եղբայրների կողմից մյուսի բաժնից ինչ չափով որ ծախված լինի, ապա ամբողջությունը վերականգնի, քանի որ յուրաքանչյուրն իր բաժնի տերն է: Այս հասարակ դատաստանն է խորհուրդ տրվում քաղաքակիրթ աշխարհում:

ԳԼՈՒԽ ՄԺԹ
ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՐ ԾԱՌԻՑ ԿԱՄ ԵԿԵՂԵՑՈՒՑ ՎԱՅՐ ԵՆ ԸՆԿՆՈՒՄ

Ծառից ընկնելով մեռածի մասին էիր հարցրել: Եվ կամ ծառից կախված-խեղդվածի: Մեղանչում չունեն տնկիները, որովհետեւ անշունչ են

եւ անզգա եւ ոչնչով չեղան նրանց մահվան պատճառը, որ իբր այդպես պատահեր: Այլ եթե վերցնեն օրենքները Մովսեսի, որտեղ Աստված անասունների մասին ասում է՝ եթե նրանց մեջ պղծության ոգուց բռնված-ներ լինեն՝ անասնագետ մարդկանց մարմիններից վարակված, նրանց կաթից մի՛ կերեք, եւ եթե այլազգիի կենդանի լինի եւ անասունին քար-կոծ անեն, միսը թող չները ուտեն /Ելք, ԻԲ 31/: Նույնպես եւ երբ եղջե-րավոր անասունները հարվածեն մարդուն եւ մարդը մեռնի, նրա միսը մի՛ կերեք /Ելք, ԻԱ 28/: Ոչ այն բանի համար, որ մեղավոր է, այլ որով-հետեւ մեղքերով պղծության եւ սպանության անոթ եղավ:

Ըստ այս օրինակին հետեւելով՝ այդ տունկը կտրում են, որպեսզի նրա պտղից չուտեն, բայց եթե նրա արմատից այլ մեկը բուսնի եւ պտուղ տա՝ այդժամ անխտրական ուտեն /Դավիթ Սլավկա որդու կա-նոններ, ՂԶ/:

Ըստ օրենքների, նույն հավաստումները նույնպես եւ եկեղեցին է ընդունել:

Այլ, երբ մեկն եկեղեցուց վայր ընկնի եւ մեռնի եւ կամ խոնարհ-ված եկեղեցուց քար ընկնի մեկի գլխին ու սպանի, անվնաս է եկեղե-ցին եւ նրա մեջ պատարագ մատուցվի, որպես որ Տերն է կամենում /Ղուկ. Գ 12- 13/: Եվ նման դեպքում, պատահարի օրերին, եկեղեցին, ինչպես մայրն իր մահացած ծնունդների վրա, սուգ պահի եւ այս, որ-պես որ կամենան, այդպես անեն:

ԳԼՈՒԽ ՄԻ
ԳՈՂԵՐԻՆ ՓԱՅՏԻ ՎՐԱ ՀԱՆԵԼՈՎ՝ ՄԱՀԱՊԱՏԺԻ ՄԱՍԻՆ

Գողերին փայտի վրա հանելով մահապատժի մասին էիր հարցրել: Եթե այլազգի լինի եւ կամ քրիստոնյա եւ քրիստոնյային հրամայեն փայտի վրա հանել՝ մահապատժի: Եթե հնար ունենա, քրիստոնյան թող խույս տա այդ տեղից, ապա թե ոչ՝ դրամ տալով ազատվի: Իսկ եթե այդ բաները չօգնեն, ապա տերերի հրամանը հարկադրաբար պարտավոր է կատարել, եւ ոչ թե առավելությամբ, որպես որ Հով-հաննեսն է հրամայում զինվորներին, թե ձեզ հրամայվածից ավելին մի՛ արեք, քանզի Աստված սրտերին է նայում, իսկ մարդն՝ երեսին, որ-պես որ հրամայեց Տերը Սամվելին:

ԳԼՈՒԽ ՄԻԱ
ԱՅՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՄԱՐԴ ԵՆ ՍՊԱՆՈՒՄ

Եթե մարդը ջորի ունենա, որ խումար լինի եւ կամ ձի ունենա, որ աքացի է տալիս կամ մարդակեր է, ինչպես որ Ալեքսանդրի ձին է եղել, կամ հարվածող եզ ունենա, եւ մարդն իմանա այդ մասին եւ ազգակիցներն էլ ցույց տան կենդանու բերած վնասները, եւ մարդն անհոգ մնա եւ չհնազանդվի նրանց՝ անելու որպես արժան էր, եւ կեն-դանին, որ կծի կամ խփի մեկին եւ նա մահանա, նրա տերը մահա-պարտ է, իսկ անասունն՝ սպանվի: Իսկ եթե տերը չգիտեր, որ իր անա-սունը այդպիսին է, անպարտ է դատաստանում: Եթե անասունը անսուրբ լինի՝ ձի կամ ջորի, կամ թե էշ, մեռածի տիրոջը տան, որպես-զի իրենց պետքերը հոգալու համար ծախեն /Դավիթ Սլավկա որդու կանոններ/, սակայն պատճառը հայտնեն ու նոր վաճառեն:

Եվ այս դատաստանը մի ժամանակ դրվել է, ըստ օրենքների /Դավիթ Սլավկա որդու կանոններ, ԽԲ/ եւ այդ կանոնները վերստին հաստատել կամեցանք, մասամբ ավելացնելով /Ծ.Թ. Խոսքն արյան գի-նը տալու, խեղած անդամի համար վճարելու, բժշկության ծախսերի, խրատի պատժի եւ ապաշխարության մասին է, որոնց դատաստաննե-րի մասին հրահանգված են Դատաստանագրքում/:

ԳԼՈՒԽ ՄԻԲ
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԵՐԲ ՄԵԿԸ ՄԱՐԴՈՒ ՃԱՆԱՊԱՐՀ Է ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՎ ՆԱ ՄԵՌՆՈՒՄ Է

Երբ մեկը մեկ ուրիշի ճանապարհ է ուղարկում, այս առումով բա-զում օրինակներ կան, որ պիտի տեսնվի խղճի եւ անխղճության տեսա-կետից: Որովհետեւ կան ոմանք, որ մշակության գործին են կարգված իրենց տերերի կողմից, կան, որ՝ այգեգործության, կան, որ՝ զինվորու-թյան, այլոք էլ՝ այլ գործերի, որպես որ մեր հասարակության կյանքի համար օրենքով պատրաստված է: Սրանք, եթե իրենց գործի ժամանակ մահվան որոգայթի հանդիպեն, նրանց տերերը անպարտ են մնում, մա-նավանդ նրանք, ովքեր պատրաստվածության պատվերը նախօրոք են կատարել իրենց առաքած ենթակաների համար: Իսկ եթե մեր հասա-

բակական միաբանության սիրո եւ խաղաղության ընդդեմ տերերը հրամայեն ծառաներին գործել եւ այնտեղ նրանցից որեւէ մեկի մահը լինի, կամ սպանություն, նրա տերը մահապարտ է: Դարձյալ. եթե մեկը ծանուցանի տիրոջը սպասվող վնասի մասին, եւ տերը անհոգ մնա եւ ծառաներին անպատրաստ ուղարկի գործի, եւ մահ լինի, այնժամ ուղարկողը արյան պարտական է: Դատաստանը լինի ըստ համապատասխան կանոնների:

ԳԼՈՒԽ ՄԻԳ
ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ՈՒՍՈՒՑԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ըստ կանոնների հրամանի, հարկ չէ երեխաներին վարձով ուսուցանել:

Եթե երեխաները որբ լինեն, ըստ անհրաժեշտության ամենայն խնամք տանեն նրանց վրա: Իսկ եթե որբ չեն, ապա երեխաների յուրայինները միայն նրանց ուտելիքի եւ հագուստի համար հոգան: Իսկ եթե /ծնողները/ կարողություն ունենան եւ իրենց իսկ հոժարությամբ ուսուցանողներին ընծաներ տան, արժանի է, որովհետեւ արժան է հոգեւորը սերմանողներին մարմնավորը հնձել, իսկ եթե ծնողներն աղքատ են, նրանցից ընծա չի պահանջվում:

Այլ եթե որեւէ մեկն հակառակի, նման արարքի դատաստանը այսպես է՝ ուսուցանողը մանկան վրա ինչ որ ծախսել է, այդ միայն հատուցվի եւ ոչ հոգեւոր շնորհների համար /Դավիթ Սլավկա որդու կանոններ/:

Նման հարցերի համար դատավորների մոտ գնալը հոգեւորապես արժան է:

ԳԼՈՒԽ ՄԻԴ
ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եվ հարբեցողությունից շատերն են անգիտանում առաջնորդների դրած սահմանների եւ եկեղեցու սպասավորության մեջ:

Արդ, հարկ է սահման դնել նրանց համար: Հարբեցումը, ըստ ստուգաբանության, մարմնի հագեցումն է, իսկ ժայթքումը /փսխելը/ բազում անգամ է մարմնին պատահում: Իսկ եթե սահմանը հարբեցողության հագեցումն է, ապա սահմանը ոչ հարբելու՝ անհագեցումն

է: Որ դարձյալ նշան է, թե հարբեցողությունը մարմնավորի եւ բանականի միջեւ տարուբերումն է: /Ծ. Թ. Սուրբ Հայրերի կանոններում հարբեցողների մասին նաեւ այսպիսի մի կանոն կա, որ նրանք դատվելու են մարդասպանների կարգում, իսկ Տերն Ավետարանում, նկատի ունենալով իր հանկարծակի գալուստը, զգուշացնում է, որ եթե իր ծառաներին գտնի ուտել-խմելու մեջ, իրենց սուրբ ծառայական վարքից ընկած, ապա՝ մեջտեղից երկու կես է անելու/:

ԳԼՈՒԽ ՄԻԵ
ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԹԱԳԱՎՈՐԻ ՏԱՆ ՄԱՍԻՆ

Ի՞նչ գործի է մարդուն Աստվածապաշտությունը ծանուցում: Այն, որ արժան է մարդուն քննել իր պաշտոնակիցներին, նրանց նայելով ջանալ լինել մաքուր եւ զվարթ՝ եւ այդպես հասու դառնալով, ապա մոտենալ եկեղեցու եւ թագավորների կարգերին:

Եվ ահա, ինչպես հայտնի է, երկու արարծներ եղան բանավոր եւ խորհրդածող՝ հրեշտակներն ու մարդիկ, մեկը պարզ եւ անխառն բնությունից, իսկ մյուսը շատերից գոյացված:

Եվ Մովսեսն ի սկզբանե հրեշտակների մասին չգրեց, այլ պատմեց մարդկանց մասին, ասելով. Աստված մարդուն երկրի հողից ստեղծեց եւ նրա երեսին, կենդանության շունչ փչեց եւ եղավ մարդը հոգի կենդանի /Ծնունդ, Բ 7/:

Ապուշները, այսինքն՝ տգետները կարծում են, թե Աստված իր բերանով եւ այլ գործերով վարվեց /մարդ ստեղծելիս/ եւ անբովանդակելին զգայությունների մեջ բովանդակեց, այլ հայտնի է, որ՝ փչելով կենդանացրեց եւ հոգիացրեց: Նույնպես եւ դիտի՛ր հողը երկրի, եւ ոչ մեկին հայտնի չէ հողը, /թե ինչ է/, այլ բովանդակ է չորս բնություն ունենալով՝ ցամաքն ու խոնավը, ջերմությունն ու սառնությունը՝ հողմի հետ խառն: Որպես որ բժիշկ մանուկներն են բաժանում՝ հողի ցամաքությունից /մարդու/ ոսկորները, խոնավության ջրերից՝ մարմինը եւ ջրից՝ երակների արյունը, ցրտության հողմից՝ շնչառությունը, որ հրի ջերմությամբ խառնվում են այդ ամենքով իրար: Այլ նաեւ մարմինը արականի եւ իգականի են բաժանում՝ միսն ու մորթը՝ իգական է ասելով: Իսկ այս ամենի մասին Մովսեսը ոչինչ չասաց եւ չա-

սաց նաեւ հրեշտակների բնության մասին, սակայն այդ ամենը կան:

Իսկ արդ՝ անե՞ղ են /հրեշտակները/ կամ ինքնե՞ղ / իրե՞նք իրենց ստեղծեցին/ կամ ավելի՞ առաջ էին, քան արարածների ստեղծվելը, որի մասին նույնպես Մովսեսը չասաց, թե՝ Աստված արարեց հրեշտակներին, այլ ասաց, թե՝ հրամայեց սերովբեներին՝ բոցեղեն սրով պահպանել ճանապարհը կենաց ծառի: Թե այդ այդպես է, ապա պարտավոր ենք իմանալ եւ նույնը ջրի մասին, որովհետեւ ասաց. ի սկզբանե Աստված արարեց երկինքն ու երկիրը եւ չասաց, թե ջուրը, այլ ասաց, թե՝ երկիրն էր աներեւույթ ու անզարդ եւ Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրա /Ծնունդ, Ա 1-2/:

Այլ իմանալի է մեզ ասելը, թե մինչեւ Աստված արարեց երկինքն ու երկիրը, նրանց հետ արարեց նաեւ երկնքի ամենայն զորությունները, նաեւ ջուրը, նաեւ՝ քարը, եւ ամենայն ինչ, որով երկիրն էր, որովհետեւ երկիրը միայն ընդհանրական հող բառով է ասում, ըստ եբրայեցիների բարբառի: Նույնպես եւ ջրերը, ուրեմն, երկրի հետ արարվեցին, որպես որ Դավիթն է ասում՝ Նրանն է ծովը եւ Նա արարեց նրան եւ ցամաքը՝ նրա ձեռքերով ստեղծվեցին: Եվ երկնի հրեշտակների արարվելու մասին ասում է՝ ո՞վ արարեց հրեշտակներին իր Հոգով եւ պաշտոնյաներին իր կրակի բոցից /Սաղմոս, ՃԳ 4/: Բայց Մովսեսը, այսպես, ծածկաբար, ոչ միայն հրեշտակների դասերը չհայտնեց, այլեւ նրանց անգամ ի սկզբանե չհիշեց, այլ հետո ասաց, որ եկան Աբրահամի մոտ եւ նաեւ թե՝ հրեշտակը Հագարին գտավ անապատում եւ դարձյալ ասում է՝ հրեշտակները Սոդոմ եկան: Եվ նրանց կերպարանքի մասին այլ բան չասաց, քան, որ նրանք երեւացին այրերի տեսքով: Եվ ոչ միայն սրանց, այլ քերովբեների եւ սերովբեների կերպարանքների մասին ոչինչ չասաց: Իսկ Հակոբն իր տեսիլքի մեջ տեսած հրեշտակների կերպարանքի մասին ասում է այնպես, ինչպես Ակյուղասն է ցուցանում, եւ ասում է՝ տեսնում էր մի սանդուղք, որ հաստատված էր երկրի վրա եւ որի գլուխը հասնում էր երկինք եւ թեւավոր մարդկանց բազմությունը այդ սանդուղքով ելնում էր ու իջնում: Թվում է ինձ, թե յոթանասուն էին... եւ այդքանն իսկ բավական համարելով՝ կերպարանքները չեն հիշում:

Նույնը լսում ենք քերովբեների մասին, որոնց կերպարանքը նոճու փայտից շինեց Սողոմոնը եւ ոսկով պատեց եւ դրեց տաճարում, եւ

Մովսեսը, որպես վկայության տապանակին հովանի՝ ոսկուց կոփած երկու երկթեւ քերովբեներ դրեց: Նաեւ Սողոմոնը տաճարում քերովբեները պատկերել տվեց առյուծների, եզների հետ միասին: Նաեւ կառքի նմանվող անիվներ պատկերել տվեց, եւ մարդու ուսի նմանությամբ ձուլածո պատկերներ եւ ընդհանուր քանդակի վրա, շուրջանակի, միմյանց դիմաց կանգնած քերովբեներ, առյուծներ եւ արմավենիներ: Եվ ստույգ քերովբեների դասերի մասին չեն խոսում, այլ միայն նմանությունն են պատկերում...

Իսկ Միքիան երկնքի զորքերի մասին ասում է, որ հավաքվել էին Աստծո աթոռի շուրջ եւ ոչ նրանց դասի թիվը եւ ոչ էլ անուններն է անվանում: Բայց Եսային անվանում է սերովբեներին, որոնք վեցթեւյան էին եւ փառաբանում էին Արարչին: Իսկ Եզեկիելը այլ դասերի մասին է հայտնում, անվանելով նրանց չորս կերպարանքներ եւ չորս թեւեր ունեցողներ եւ նրա հայտնածը նման է մեքենովթյան տաճարում պատկերվածին, բայց այնտեղի արմավենիների փոխարեն, այստեղ արծիվներ են, եւ թեպետ նույն խորհուրդն է հիշեցնում, բայց արտահայտման կերպով տարբերվում է: Եզեկիելը տեսնում է նաեւ անիվներ, սայլեր, եւ ոչ մեքենովթյան տաճարինի նման, այլ՝ անիվն անիվի մեջ, նորոդ եւ հրաշալի /Եզեկիել, Ժ 10/: Այս այլ դաս է ինձ թվում, որովհետեւ անիվներն անձնականացնում է, որովհետեւ կենդանի ոգի կա նրանց մեջ: Եվ այլ դասերի մասին էլ է ասում, որ բազմաթիվ աչքեր ունեն եւ մեկ այլ տեղ՝ քերովբեների մեջտեղում կրակ կար բորբոքված...:

Թեպետ այս ամենի մասին ասացին մարգարեները, սակայն ծածկատեսությամբ եւ ոչ յուրաքանչյուր դասի մասին հայտնապես: Նաեւ Ավետարանի Տերը /Ավետարանում/ այլ բան չհայտնեց, բացի միայն հրեշտակների գնդերից /Մատթեոս, ԻԶ 53: Հովհաննես, Ա 51 ..../:

Բայց սուրբ առաքյալ Հուդան պարզ եւ հայտնի ցույց է տալիս մեզ յոթ դասեր՝ յուրաքանչյուր դասին անվանելով՝ Հրեշտակներ, Հրեշտակապետեր, Իշխանություններ, Տերություններ, Սերովբեներ, Քերովբեներ, Պետություններ /Թուղթ Հուդայի/:

Իսկ սուրբ Դիոնեսիոս Արիսպագացին՝ պարծանքն աթենացիների, Պողոս առաքյալի աշակերտն ու հետեւորդը, ինը դասերի մասին ասաց եւ թվեց ինը դասերն ստուգությամբ եւ այսպիսի կարգավորու-

թյամբ, որից եւ մենք ուսանելով, պատմենք քեզ՝ հարցասիրությանդ բավարարելով.

Ներքին դասերը հրեշտակների, սրանք են պատգամավորներ եւ հրամանատարներ, որոնք փառաբանում էին՝ փառք բարձունքներին Աստծո, եւ որը /փառաբանությունը/ հովիվները լսեցին /Ղուկաս, Բ 14/:

Երկրորդ դասը հրեշտակապետերինն է եւ նրանց փառաբանությունն այս է՝ Տե՛ր, ողորմի՛ր քո արարածներին, որ Զաքարիասը լսեց /երբ հարցրեց թե/. մինչեւ ե՞րբ չպիտի ողորմես Երուսաղեմին եւ Հուդայի քաղաքներին /Զաքարիա, Ա 12/:

Երրորդ դասը իշխանություններինն է, նրանք են, որոնք Աստծո իշխանությունն են փառաբանում, ասելով՝ հեթանոսներին տվեց քեզ, որպես ժառանգություն եւ քեզ իշխանություն տվեց երկրի բոլոր ծագերի վրա /Սաղմոս, Բ 8/:

Չորրորդ դասը Զորություններինն է, նրանք են, որոնք Աստծո զորություններին են փառաբանողներ, ասելով. Տերը հզոր է պատերազմում /Սաղմոս, ԻԲ 9/:

Հինգերորդ դասն Աթոռինն է, նրանք են, որոնք փառաբանողներն են Աստծո Աթոռի, ասելով՝ Աթոռը Քո, Աստվա՛ծ, հավիտյանս հավիտենից է /Սաղմոս, ԽԴ 8, Եբր. Ա 8/:

Վեցերորդ դասը Պետությանն է, նրանք են, որոնք փառաբանում են քահանայությանն Աստծո, ասելով՝ Դո՛ւ ես քահանա հավիտյան /Սաղմոս, ՃԹ 4/:

Յոթերորդ դասը՝ Տերությանն է, այդ նրանք են, որոնք փառաբանում են Տերությունն Աստծո, ասելով՝ Արքայությունը Քո Արքայություն է հավիտենից /Սաղմոս, ՃՊԽԴ 13/:

Ութերորդ դասը՝ Սերովբեներն են, այդ նրանք են, որոնք հրեղեն բերաններով սուրբ երրորդությանն են փառաբանում, որոնց լսեց Եսայի մարգարեն, որ ասում էին՝ սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ /Եսայի, Զ- 3, Հայտն. Հովհաննեսի, Դ 8/:

Իններորդ դասը Քերովբեներն են, որոնք գովում են մեծությունն Աստծո, ասելով՝ Տե՛ր զորությունների, լի՛ են երկինք ու երկիրը փառքով Քո /Եսայի, Զ 3/:

...Եվ արդ ինչ երկնային դասերի մասին էր հարկ իմանալ, այսչափը բավական լինի:

Իսկ եկեղեցին, որպես հարս մի գեղեցիկ, որ պահպանվում է՝ ըստ իր մեծ փեսայի՝ թագավորի որդու եւ իր սենյակն է ստեղծում կարգավորությամբ, որպեսզի արքունական կարգերի նմանագույն միջոցներով հարդարի այն, որպես պատիվը թագավորի որդու: Նույնպես եւ երկնային եկեղեցու դասերին թագավորն իր ընտանության նմանությամբ կարգեց՝ ինը թվով դասեր, քանզի խորանին ծառայող ղեւտացիների եւ պաշտոնյաների ինը դաս ենք տեսնում, որովհետեւ ամենքը մեկ բանում արժանավոր չէին ծառայել, այլ ըստ իրենց արժանավորության չափով միայն սպասավորության իրավունք ստացան:

Առաջին դաս՝ Մովսեսն ու Ահարոնը եւ նրա որդիները /Թիվ, Դ 38/:

Երկրորդը՝ գունդն Ամրամի /Թիվ, Դ 19, 27/:

Երրորդը՝ գունդը Սահառի:

Չորրորդը՝ գունդը Քերովնի:

Հինգերորդը՝ գունդը Ոզիելի:

Վեցերորդը՝ դասը Ռուբենի /Ծնունդ, ԽԶ 9/:

Յոթերորդը՝ դասը Սեմեի /Թիվ, Դ 21...:

Ութերորդը՝ գունդը Մոողի /Թիվ, Դ 20, 33/:

Իններորդը՝ գունդը Մուսեայի:

... Սուրբ Հոգու պարգեւները առաքյալը հիշատակում է նույնպես ինը կարգերի՝ իմաստնության խոսք, գիտության խոսք, հավատ, բժշկության շնորհներ, զորությունների մեջ հաջողության, մարգարեություն, հոգիների զանազանություն, ազգերի լեզուների իմացության շնորհ, լեզուների թարգմանության:

Դարձյալ Պողոս առաքյալը ցույց է տալիս եկեղեցու ինը դասերը, ասելով. Նրանց, որ Աստված կարգեց եկեղեցում. սրանք են.

Նախ՝ առաքյալներ,

Երկրորդ՝ մարգարեներ,

Երրորդ՝ վարդապետներ,

Չորրորդ՝ զորություններ,

Հինգերորդ՝ բշժկության շնորհներ,

Վեցերորդ՝ օգնություններ,

Յոթերորդ՝ վարչության,

Ութերորդ՝ լեզուներ խոսելու,

Իններորդ՝ լեզուների թարգմանության,

Որոնք եկեղեցում սրանք են՝

Առաջին դասը՝ եկեղեցու պատրիարքն է, որ հայրապետ է թարգմանվում, նրան է տրվում չորս ավետարանիչների աթոռը:

Եվ արդ, տես խորհուրդների զորությունը, որովհետեւ Հովհաննեսի Հայտնության եւ Եզեկիելիի մարգարեության մեջ նշված չորս կենդանիների փոխարեն՝ չորս ավետարանիչներին է նշանակում: Այսպես: Մատթեոս նշանակում է Մարդու դեմք: Որովհետեւ, որպես մարդ ծնվեց Հիսուս՝ Բեթղեհեմից:

Մարկոս՝ նշանակում է առյուծի դեմք, քանզի նա է ասում, թե ելավ Քրիստոսը Հորդանանից՝ որպես առյուծ: Եվ Սատանային նույնպես առյուծ է ասում, նրա գազանության եւ մյուս կենդանիներին հոշոտելու պատճառով: Իսկ մեր Փրկչին առյուծ է անվանում՝ իր զորության եւ բոլոր կենդանիների վրա թագավորելու համար: Նույն բանն է Մարկոսն ասում՝ Ելավ Քրիստոսը Հորդանանից, ինչպես առյուծ: Այսինքն՝ ելավ թագավորելու:

Ղուկաս՝ նշանակում է՝ եզի դեմք, որովհետեւ նա է ասում, որ Քրիստոսը աշխարհի փոխարեն մորթվեց:

Իսկ Հովհաննեսը՝ արծվի դեմք, որպես որ Քրիստոսի համար ասում է՝ ոչ երկրից եւ մարմնից սկսվեց... այլ երկնքից էր, նման էր արագաթեւ արծվի եւ նրա նման սրընթաց էր: Եվ ասում է՝ Նա սկզբից էր. Սկզբից էր Բանը եւ Բանը Աստծո մոտ էր եւ Բանը Աստված էր, որով եղավ ամենայն ինչ, որ եղան... Հիրավի, անվանում է Փրկչին՝ արծվի նման բարձրաթռիչ, որպես երկնային թռչուն /արքան թռչունների/:

Արդ, ահա ցույց տրվեց երկնքի փոխարեն՝ եկեղեցին եւ չորս կերպարանքներով կենդանիների փոխարեն՝ չորս ավետարանիչները. եւ նրանց փոխարեն՝ հայրապետների դասն ու նրանց աթոռները: Ավագ ու մեծ աթոռն Անտիոքի՝ Մատթեոսինն է, Ալեքսանդրիայինը՝ Մարկոսինը, Հռոմինը՝ Ղուկասինը, Եփեսոսինը՝ Հովհաննեսինը:

Այս կարգավորությամբ վարվեց եկեղեցին մինչեւ Հուստիանոս թագավորի օրերը, ըստ չորս կերպարանքներով կենդանիների եւ ըստ Եդեմից չորս գետերի բխման, եւ ըստ տիեզերքի չորս ծագերի աշխարհը բաժանվեց չորս ավետարանիչներին: Իսկ երբ թագավորեց Հուստիանոսը, այդժամ աթոռների փոփոխություն եղավ եւ սուրբ Հովհաննեսի աթոռը Եփեսոսից տեղափոխվեց Կոստանդուպոլիս: Եվ ժողովի հավանությամբ սուրբ Մատթեոսի աթոռը Անտիոքից տեղափոխվեց Երուսաղեմ... Եվ քանի որ Երուսաղեմը քաղաքն է երկնային թագավորի, սուրբ Հայրերը ժողովում հրամայեցին, որ Երուսաղեմի եպիսկոպոսը իր դերով ավելի վեր նստի մյուսներից:

Ահա ասացինք, որ եկեղեցու առաջին դասը՝ հայրապետներն են, որոնք ունեն առաքելական զգեստ եւ եմիփորոն /ուսնոց/, որ զարդարված է հինգկրկին խաչերով: Եվ Հայրապետների գործն է արքեպիսկոպոսներ ձեռնադրելը, որոնք վիճակվել են տիեզերքի չորս բաժիններին: Եվ Հայրապետներն են հրաման տալիս ժողով անելու:

Եկեղեցու երկրորդ դասը՝ արքեպիսկոպոսներն են: Նրանց համար կարգ է սպիտակ հանդերձները, որ ծածկում է մինչեւ կրունկները, կրում են նաեւ ժամաշապիկ եւ շուրջառ եւ չորեքկրկին խաչերով զարդարված եմիփորոն: Նրանց գործն է մետրոպոլիտներ ձեռնադրելը, այսինքն՝ մայրաքաղաքի համար եպիսկոպոսներ եւ նաեւ օրհնում են կնունքի ձեթը եւ ունեն նաեւ իշխանություն պատրիարքներ ձեռնադրելու:

Եկեղեցու երրորդ դասը՝ Մետրոպոլիտներն են, այդպես են կոչում մայրաքաղաքների եպիսկոպոսներին, որոնք ունեն նույն սպիտակ հանդերձները՝ մինչեւ կրունկները, նաեւ շուրջառ եւ եմիփորոն, որ զարդարված է երեքկրկին խաչերով: Նրանց գործն է եպիսկոպոսներ ձեռնադրելը բերդերի եւ գյուղերի վրա եւ օրհնել կնունքի ձեթը՝ առաքելական ձեթին ավելացնելու համար, որ պահում է եկեղեցին առաքելական ժամանակներից՝ վրան ավելացնելով: Եվ երեք Մետրոպոլիտներ միասին իրավունք ունեն իրենց վերադաս արքեպիսկոպոս ձեռնադրել:

Չորրորդ դասը եկեղեցու՝ եպիսկոպոսներն են, որ նույն կարգն ունեն: Նրանց գործն է ձեռնադրել /մնացած/ ամենայն վիճակավորներին: Եվ երեք եպիսկոպոս միասին կարող են իրենց վրա Մետրոպոլիտ ձեռնադրել: Եվ /եպիսկոպոսների/ գործն է՝ սեղան, ավազան եւ օծվելու յուղ օրհնելը:

Հինգերորդ դասը եկեղեցու՝ քահանաներն ու երեցներն են: Քահանաները քաղաքներում են լինում, իսկ երեցները՝ գյուղերում եւ ագարակներում: Երկուսն էլ նույն կարգն են, սակայն անուններով զանազանվում են՝ պատվի տարբերության պատճառով: Սրանք միայն ուրար են գցում իրենց վրա, երկկողմանի ուսնոցներ, նրանք թիկնո-

ցով էլ իշխանություն ունեն բեմում լինել: Եվ նրանց գործն է պատարագ մատուցելը, մկրտությունն, պսակ կատարելը, եւ այնտեղ, ուր եպիսկոպոս չլինի, նրանք իշխանություն ունեն իրենք օրհնելու խաչն ու մատաղը: Եվ եթե հրաման առած լինեն եպիսկոպոսից, այդժամ իրավունք ունեն նաեւ օծելու յուղն օրհնել եւ ձեռնադրել դպիրներ, գրակարդացներ եւ կրոնավորներ:

Վեցերորդ դասն եկեղեցու՝ սարկավագներն են: Եվ նրանց կարգը նույնն է, բայց նրանք գլխաբաց են լինում, գոտիները հանած, ուրարը գցում են ձախ ուսին: Նրանց գործն է Ավետարան կարդալը եւ քարոզելը, սկիհներն ու քշոցը բերելը՝ սենյակից դեպի սեղանը եւ սեղանից արտաքին մաս՝ բաշխումն անելու, նաեւ նրանց պարտականության մեջ է մտնում՝ խունկ ծխել ու առնելու սպասավորությունը եւ չեն նստելու, մինչեւ արարողությունների ավարտը /ժամի արձակումը/, այնժամ, երբ որ քահանաների հրամանը լինի:

Կանանցից նույնպես սարկավագուհիներ կան, ձեռնադրված են կանանց քարոզելու եւ նրանց Ավետարան կարդալու համար, եւ նրանց մեջ այր չի մտնում, եւ նրանք էլ վանքից դուրս չեն գալիս, եւ երանի է տրվում վանքերի կանանց: Սակայն այն ժամանակ, երբ քահանաները մկրտելու լինեն կանանց, կանայք ավազան դան եւ /քահանաները/ ջրով լվանան նրանց եւ վարագույրի ներքո օծեն: Եվ սարկավագուհիների համար կարգ է այն ամենը, ինչ հավատավորների համար, սակայն սարկավագուհիները ավելի ամուր վարքերով լինեն, խաչ ունենան իրենց ճակատին եւ կիսաթիկնոց հագնեն, աջ ուսին՝ ուսնոց ունենան: Եվ նոր կամ, անկարգ բան չհամարեք այս, ո՛վ սուրբ եղբայրներ, այլ այս ամենը սուրբ առաքյալներից մեզ հասած ավանդությունից ենք ուսանել, քանզի ասում է, թե՝ հանձնում եմ ձեզ Փեբե քրոջը մեր, որ սպասավոր է եկեղեցում /Հռոմ. ԺԶ 1/:

Յոթերորդ դասը եկեղեցու՝ այն եպիսկոպոսներն են, որ կոչվում են քորեպիսկոպոսներ, որոնք գլխավորներն են սարկավագների: Եվ նրանց կարգը նույնն է, ուրարը երկու ուսերին են կրում եւ գոտելույծ են ու գլխաբաց եւ իշխանությամբ եպիսկոպոսի՝ օրհնում են եկեղեցին եւ հրամանատարություն ունեն քահանաների եւ եկեղեցականների վրա:

Ութերորդ դասն եկեղեցու՝ եպիսկոպոսների գլխավորներն են, որ կաթողիկոսներն են, որոնք ունեն պատվականագույն աթոռները՝ նման սերովբեներին: Եվ նրանց համար նույնպես կարգ է գլխաբաց եւ գոտելույծ լինել եւ ուրարը կրել երկու ուսերին: Եվ նրանց գործն է ձեռնադրել եպիսկոպոսներին եւ ինքնակամ օրհնել օծության յուղը:

Իններորդ դասը վերնագույնն է, քան մյուս բոլորը՝ Պապիոսն է, որին ֆրանկները պապ են ասում, որ նման են քերովբեներին: Նրանց համար կարգ է լինել գլխաբաց եւ գոտելույծ: Եվ նրանց գործն է կարգել դասերը թագավորների, որովհետեւ, երբ մարդը պատկերն ու փառքն է Աստծո, ապա ուրեմն, ովքեր որ ի Քրիստոս են մկրտվում, Քրիստոս են հագնում, որչափ առավել եւս, ովքեր հավատացյալ թագավորներ են եւ իրենց գլխին կրում են Տերունական նշանը: Պարտավոր են նրանք նմանվել Քրիստոսին՝ ոչ միայն խոնարհ մտածումներով Քրիստոսի չարչարանքները իրենց մարմինների վրա կրեն, այլ նմանվեն Նրա Փառքերին, որոնք քաղցրությունն են ցույց տալիս մեր Տիրոջ ու Փրկչի, որպեսզի հեթանոս թագավորները լսելով՝ հոժարությամբ դան երկրպագելու մեր Տեր Աստծուն:

Եվ այս են նմանությունները երկնավոր դասերի.

Հրեշտակները՝ առաքելական զգեստներով աղոթելիս,

Հրեշտակապետները՝ քղանցքների մոտ,

Իշխանությունները գնդերով եւ առաքելական զգեստներով,

Զորությունները՝ առաքելական զգեստներով,

Աթոռները...

Պետությունները՝ առաքելական զգեստներով,

Տերությունները՝ առաքելական զգեստների պսակներով,

Սերովբեները՝ վեցթեւանի,

Քերովբեները՝ ութթեւանի եւ բազմաչյա:

Այս ամենայնը հաշվի առնելով, սուրբ Կոստանդինոս թագավորը ...երկնային եւ եկեղեցական դասերի կարգը հարմարեցրեց ի պատիվ թագավորության համար եւ /հեթանոսների/ մեջ էլ, յուրաքանչյուր տեղում նույնը հայտնեց, որ սրանք են.

Առաջին դասը պալատի՝ դարպասն է, դարպասում պահապաններն են ոսկե վեղարի: Նրանք հագնում են ոսկեթել կազմով դիպակե զգեստներ եւ ունեն ոսկե գավազաններ: Եվ նրանց գործն է թագավորի առջեւ առաջնորդել նրանց, ում նա պատվիրի:

Երկրորդ դասը՝ արքայի պսակակալներն են: Նրանց զգեստները արծաթաթել դիպակից են, նրանք գաղտնի, զգեստի տակից զենք են կրում /կիսաթրեր/:

Երրորդ դասը նրանք են, որ ոսկե տեգեր ունեն: Նրանց զգեստները ծիրանի դիպակ են ճամկավոր եւ ոսկե մանյակներ են կրում իրենց պարանոցներին:

Եվ այն ժամանակ, երբ արքան ճանապարհ է ելնում, նրանք են սուրբ խաչը վերցնում: Եվ նրանց միջից է, որ չորս այրեր թագավորի զենքերն են կրում /զինակիրներն են/:

Չորրորդ դասը վեղարներ են կրում եւ երկաթե ասպարներ: Եվ նրանք դիպակներ են հագնում, որ աբրեշումից են: Եվ այն ժամանակ, որ արքան վախճանվում է, նրանք են դագաղը վերցնում...

Հինգերորդ դասում մեծ հասակ ունեցողներն են, որ ունեն վահաններ եւ փոքր ասպարներ եւ նրանց զգեստը ողորկ կտավից է եւ վարշամակներ են կրում, ոտքերին՝ կարթապաճույճներ եւ կրկնակի ոսկե գոտիներ եւ նրանցից է, որ լինում են գրագիրները եւ հանձնարարություններ տվողները:

Վեցերորդ դասում ձիապաններն են, որ ձի են թամբում արքայի համար եւ նրան հեծցնում են ձիուն եւ նրանց զգեստը՝ կապա է /կարճ պարեգոտ/, ձեռքներին միասայր թուր ունեն եւ փոքր ասպարներ:

Յոթերորդ դասը՝ պալատի վահանակիրներն են: Զգեստը նրանց կտավից է.. Ունեն նիզակներ եւ սեւ ասպարներ: Եվ նրանցից է, որ լինում են դրոշներ, խորհրդանշաններ եւ զինանշաններ կրողները:

Ութերորդ դասը՝ աղեղնավորներն են... Ասպարներ ունեն: Նրանց զգեստն է՝ այծենի կարմիր եւ հագնում են մուճակներ: Եվ այն ժամանակ, երբ արքան շրջելու ելնի, նրանք են ամբոխին կարգավորում:

Իններորդ դասը՝ հետեւակ սուրհանդակներն են: Եվ զգեստները նրանց բամբակից են... զանգապաններ են կրում, հագնում են հողաթափեր: Եվ սրանք սպասավորներ են, կոչվում են նաեւ նետողներ: Եվ ամենքը գլխաբաց են եւ ունեն ոսկե գոտիներ, բացի սրանցից, միայն սրանք է, որ գոտի չեն կրում:

Այս են դասերը թագավորության պահապանների եւ զինվորների...

Իսկ սրանք իրենց թվով արձակ են, ոչ դաս ունեն, ոչ էլ չափ ու քանակ, ոչ էլ որեւէ տեղում մշտական են մնում, երբեմն շատ են, երբեմն՝ սակավ.

Պատգամավորներ,

Թագավորի առջեւ կարդացողներ,

Թագավորի ձեռքերին ջուր լցնողներ,

Բաղնիք պատրաստողներ, որ լվանում են արքային,

Տաճարապետներ, որ արքայի առջեւ հաց են մատուցում,

Նշանագիրներ,

Եկեղեցու կողմից արքային սպասավորողներ,

Դասերի կցորդներ կամ արձակ պաշտոնյաներ,

Քաղաքի կրոնավորներ, որոնց գործն է հոգեւոր պաշտոն մատուցելը եւ ըստ կանոնների երգելը,

Իսկ աբեղաներն ու կուսակրոնները, որոնք իրենց վարքով խարազանազգեստ են՝ իրենց կամքով են գալիս պալատական պաշտոնի,

Նաեւ՝ մենակյացներ եւ ապաշխարողներ,

Հավատադիրք ունեցողներ, որոնք աստվածաբանություն են սովորում եւ վարժվում եկեղեցական կարգերի մեջ,

Սրանք ամենքը, ըստ եկեղեցու ինը դասերի չեն... ոչ ամբիոն են բարձրանում, ոչ բեմ, այլ ամենքով փառաբանողներ են, որ կարգված են Տիրոջ տանը:

Եվ սրանց խառնորեն չհիշեցինք այս գրքում, նաեւ կուզենայինք, որ իմանաք, թե արքայատան այս կարգավորումների համար պարտ ենք հռոմեացիներին եւ ֆրանկներին եւ հիշեցինք այնպես, որպես որ աղվաններին են պատմությունը եւ այլոք, այս մասին ուսուցանել: Այս կարգերը եկեղեցում հարկ է, որ հայրապետները կարգեն, եւ եթե անփույթ անեն, միշտ պարտավորություն լինի այդ ամենը ցույց տալը դատաստանի ատյանում: Քանի որ՝ մեր Լուսավորչից սկսած եկեղեցում պաշտամունքի այս դասերը կան, ընդ որում, Եղիշեի Պատմության մեջ էլ են այս դասերը հիշվում, ասելով. ձեր մեջ կան գրակարդացներ եւ սաղմոսասացներ: Նմանապես եւ կանոններում սարկավագներն են հիշվում անուններով եւ այլ տեղերում:

Արդ, կարեւոր է եկեղեցու ավերումները խափանել այս կարգերը եւ այլոք էլ գործադրելով, որոնք ուղղում, ազատում են ամենայն հեղգությունից: Որոնց /ավերումների եւ հեղգությունների/ մասին ինչ պատճառներ էլ հորինվեն, սակայն արդարացնել չեն կարողանա:

Եվ եթե այլ ազգերի համար է այս ամենի մասին հիշատակվում՝ սուրբ Դիոնեսիոսի գրվածքներում..., ուր ամբողջության թիվը պահում են, ուստի եւ երկբայելի չեն: Արդ, ըստ ճշմարիտ դատաստանի՝ եկեղեցին վարելի է այսպիսի կարգով՝ ըստ երկնայինների, որովհետեւ, եթե տունը երկրավոր թագավորի, ըստ այս օրինակի է ստեղծվում, որչա՞փ եւս երկնավոր թագավորի՝ Քրիստոսի: Եվ Նրան փառք հավիտյանս. ամե՛ն:

ԳԼՈՒԽ ՄԻԶ
ՆՐԱ ՄԱՍԻՆ, ՈՐ ՕՏԱՐ ՄԱՐԴՈՒ Է ՈՒՂԱՐԿՈՒՄ ԳՈՐԾԻ ԵՎ ՆԱ ՄԵՌՆՈՒՄ Է

Եվ եթե մեկը գործ անելու է առաքում իրեն ոչ յուրային մեկին եւ այնտեղ ուղարկվածը որոգայթի է հանդիպում՝ արյան պարտավորություն ունի /Դավիթ Սլավկա որդու կանոններ, ԽԳ/:

Կանոնները հրամայում են զգուշություն, որ որեւէ մեկը վայրապարորեն իրեն ոչ յուրայինին գործ անելու չառաքի, որովհետեւ առաքվածի մահվամբ վնասվելու դեպքում արյան դատաստան կա:

Եվ այդ ցույց է տրված թե հոգեւոր եւ թե մարմնավոր դատաստանով: Սակայն քննություն լինի, առաքողի երախտիքները հիշվի եւ մահվան պատահմունքի կամավոր եւ ակամա հանցապարտությունը որոշվի:

ԳԼՈՒԽ ՄԻԷ
ՆՐԱ ՄԱՍԻՆ, ՈՐ ՎԱՐՁՈՎ ՈՐԵՎԷ ՄԱՐԴՈՒ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ԳՈՐԾԵԼՈՒ

Իսկ երբ մեկը վարձկան լինի եւ իր տանտիրոջն ասի, թե ինձ գործ տուր կամ գործի ուղարկիր, իսկ տանտերը առաջուց ծանուցանի, որ այդ գործին գնալուց կարող է մահվան որոգայթի հանդիպել, իսկ վարձկանը իր կարողությունից ելնելով հանձն առնի, այդժամ, եթե մահ պատահի, նա՝ տանտերը անպարտ է: Իսկ եթե չզգուշացնի եւ բազում վկաների զգուշացնող պնդումներից հետո էլ կրկին հրամայի վարձկանին այդ գործը գործել, եւ մահվան որոգայթ լինի, ապա տանտերը արյան դատաստանի է պարտավոր /Դավիթ Սլավկա որդու կանոններ, ԽԳ/:

Այս կանոնական դատաստաններով հայտնի է: Եվ վարձկանի կամքով, եթե նա գործ անելու գնա եւ մահվան հանդիպի, անպարտ է մնում առաքողը, իսկ երբ հարկադրաբար ուղարկի կամ սպասվող վնասի մասին վկայություններ ուշ չդնելով ուղարկի, արյան դատաստանի է պարտավոր, թեպետ եւ վարձկան է մեռնողը:

ԳԼՈՒԽ ՄԻԸ
ԵԿԵՂԵՑՈՒՆ ՀԱԿԱՌԱԿ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑՈՂԻ ՄԱՍԻՆ

Եվ եկեղեցուն հակառակ եկեղեցի կառուցողի մասին էիր հարցրել /Դավիթ Սլավկա որդու կանոններ, ԽԳ/, այս մասին գրված է, ով հայրական ցանկն է քանդում, օձն է հարձակվում նրա վրա եւ սպանում /Ժողովող, Ժ 8/, այսինքն հրաման ու կարգ է, որ մարգարեները դրեցին, նաեւ առաքյալները եւ վարդապետները եկեղեցու: Արդ, եթե մեկը մեր հայրերի դրած կարգն է խափանում, եւ եկեղեցուն հակառակ եկեղեցի է կառուցում, նրանք եպիսկոպոսներից եւ երեցներից նզովվում են թե իրենց կյանքի մեջ եւ թե մահվան եւ ամենայն քահանայական կարգից լուծարվում են, իսկ նրանց կամակիցները նրանց նույն պատիժը կրեն, իսկ կառուցած եկեղեցին իրավամբ թողնեն տեղի ժառանգավորներին: Իսկ եթե մարդասիրությամբ վարվեն, նրանց աշխատության գինը տան նրանց, իսկ եթե այս չլինի, քանդեն եկեղեցին հանդարտությամբ, բայց չայրեն: Իսկ եթե ողջ բազմությունը եպիսկոպոսների, քահանաների՝ ժողովրդի հետ միաբան կառույցը կամենան, որեւէ մեկը չվիճաբանի միաբանության հրամաններին: Իսկ եթե մեկն հանդգնի եւ կրակ դցի եկեղեցին կամ ավագների կաշառքով բռնություն մեջտեղ բերի եւ քանդի եկեղեցին, այդպիսիք աստվածամարտ են եւ /Քրկչին/ խաչը հանողների թվին դասվեն, իսկ եթե զղջան, մինչ ի մահ ապաշխարեն /Դավիթ Սլավկա որդու կանոններ, ԿԱ/ եւ իրենց մահվան վերջին օրը հաղորդվեն:

Ամենայն ճշմարտությամբ է դրված այս կանոնական դատաստանը, որովհետեւ հակառակ եկեղեցի կառուցելը՝ ագահությունից դրդված է լինում եւ խափանելի է, սակայն կարող է հաստատվել եպիսկոպոսի

եւ այլոց միաբան կամքով, որպեսզի չլինի թե որեւէ մեկը եկեղեցին որպես ժառանգություն վերցնի / տես հոդվածներ, Գ, Ե, Մէ/... եւ եպիսկոպոսներինն է ժառանգությունը եկեղեցու եւ ոչ քահանաների-նը, ըստ նրանց իսկ կամքի հաճոյության:

ԳԼՈՒԽ ՄԻԹ
ԵԿԵՂԵՑՈՒՑ ԱՔՍՈՐՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվ եթե արժանավորներից մեկն աքսորվելու ենթակա լինի, նրանց համար, որ արդեն եկեղեցական կարգի մեջ են, ըստ իրավունքների այսպես լինի. սարկավագները կամ քահանաները լուծարվեն եպիսկոպոսի կողմից, որովհետեւ նա է նրանց ձեռնադրել, սարկավագուհիները՝ սարկավագներից են /ձեռնադրվել/ եւ աշխարհականները, եւ հավատավորները եւ կրոնավորները եւ նրանք, որ քահանայից են ձեռնադրվել՝ քահանայի կողմից էլ լուծարվեն, եպիսկոպոսները՝ իրենց ձեռնադրողից /լուծարվեն/, կաթողիկոսը՝ կաթողիկոսի ձեռքով կամ իրեն ձեռնադրող եպիսկոպոսների կողմից, իսկ վարդապետները իրենց հրաման տված վարդապետներից: Այլ վարդապետների համար ըստ իրավունքների չէ քահանաների աքսորել կամ նրանց կարգից հանել, բայց կարող են որոշում հանել, յուրաքանչյուրին խրատել, հանդիմանել, եւ ուղղության հրավիրելու իշխանություն դրսեւորել, իսկ աքսորելու իրավունքը նրանց իշխանավորներին է պատկանում, այսինքն՝ ձեռնադրողներին, որ խոսքով իշխում են սրանց՝ ամենքին: Իսկ հայրապետները ամենքին են իշխում եւ ոչ թե ամենքով նրան, բացի նրան ձեռնադրողներից / Տես հոդված Դ/:

ԳԼՈՒԽ ՄԼ
ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻՆ ԱՔՍՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թագավորները, որ Աստծուց են կարգված, որպես որ Իսրայելում էր, Աստծոց էլ հանվում են կամ աքսորվում, իսկ եթե մարդկանցից են նշանակված, ապա նրանց կողմից էլ աքսորվում են: Եթե իշխանի թագավորեցնեն եւ ոչ ըստ արժանվույն վարի թագավորությունը, կարգողների կողմից էլ աքսորվի...

Իսկ թագավորությունը սեփական լինի՝ հորից անցնելով որդուն:

Իսկ իշխանը, որին թագավորն է իշխան կարգում, նրա կողմից էլ աքսորվի կամ խրատվի: Իսկ թագավորին խրատելը, եթե դրանով է հարկ լինում խաղաղությունը պահպանել, այլ մի թագավորի կամքով լինի եւ հայրապետի եւ ամենքի հավասար հավանությամբ: Իսկ եթե իշխաններն ու ազատները իրենք իշխան կարգեն, նրանց միաբան կամքով էլ աքսորվի կամ խրատվի: Իսկ թագավորից կարգված իշխանը՝ թագավորից աքսորվի կամ խրատվի:

Իսկ իշխանների իշխանը՝ իշխանին կարող է խրատել կամ աքսորել եւ ազատը, թե նրանց կողմից է կարգված, նրանց միաբանությամբ էլ վարվի, իսկ թե թագավորի կամքով է ազատ, ապա թագավորի կամքով էլ վարվի:

Իսկ ազատները զինվորներին խրատել չեն կարող, այլ կարող են իրենց միջից հեռացնել: Զինվորներին կարող են իշխանները խրատել:

Նույնպես եւ զինվորները չինականներին չեն կարող խրատել կամ աքսորել, այլ կարող են նրանց աքսորել ազատները, իսկ խրատել՝ իշխանները:

Այս ամենը որպես իրավացի կարգ գիտեմ թագավորական տներում դատաստան անելու համար:

ԳԼՈՒԽ ՄԼԱ
ԱՆԱՍՈՒՆԻՆ ՎՆԱՍՈՂԻ ԵՎ ՍՊԱՆՈՂԻ ՄԱՍԻՆ

Եթե կենդանիներ, սրանք սուրբ լինեն, թե անսուրբ, մտած լինեն մեկի անդաստանը կամ այգին, այլ այսպիսի տեղեր, կամ խոտի դեզից ուտեն, եւ տերը չարությամբ զարկի եւ սպանի, դատաստան լինի եւ եղած վնասը վճարմամբ հատուցվի... Իսկ եթե խրտնեցրել էր եւ փախչելիս ընկավ եւ մեռավ, այդ ակամա սպանություն է, որովհետեւ մեռնելը չէր կամենում, այլ փախցնելը. նման դեպքերը, որ ակամայից են՝ կես գնով հատուցվեն: Ըստ հարվածի տեսնեն հարվածողի դիտավորությունը: Իսկ եթե հարվածը բժշկելի լինի, ապա խափանվածի համար եւ բժշկության համար հարվածողը վճարի, իսկ եթե անբժշկելի լինի/ ոտը կամ այլ անդամներ/, այդժամ ամբողջ գինը տա: Եթե սուրբ կենդանի լինի՝ գինը լրիվ տա եւ կենդանին էլ մնա կենդանու տիրո-

ջը, իսկ եթե անսուրբ կենդանիներից լինի, միայն գինը հատուցի: Եթե կուրացրել է, կամ ատամն է ջարդել կամ կողը կամ եղջյուրը, թեպետ եւ սրանք բժշկվում են, սակայն ամբողջ կեդանու գինը չորսի բաժանելով, մեկ մասը որպես վնասի հատուցում տա: Եվ այդ լինի թե ուտելի անասունների, թե անուտելիների համար: Իսկ թե պոչը կտրած լինի, ապա մեկ քառորդ գնի մասը որպես վնաս հատուցի:

Իսկ եթե անասունի տիրոջը բազում անգամ ասել են վնասների մասին, բայց նա անփութության է մատնում, այդժամ հաշվի առնելով այդ, ըստ այդմ դատեն: Իսկ եթե ոտի կաղությունը մնա, տուգանքը ամբողջ գնի մեկ չորրորդ մասը լինի: Իսկ վայրապար սպանողների համար առավելապես տուգանքը լինի, բոլոր այս քննարկված ընդունելի սահմաններից:

ԳԼՈՒԽ ՄԼԲ
ՆՐԱ ՄԱՍԻՆ, ՈՐ ԳՐԱՍՏԻՆ ԽՐՏՆԵՑՆՈՒՄ Է ԵՎ ՄԱՐԴՆ ԸՆԿՆՈՒՄ Է ԵՎ ՎՆԱՍՎՈՒՄ

Եթե մեկը չար կամքով այդ բանն անի, եւ ընկնող մարդը մեռնի, ապա արյան դատաստան լինի եւ հատուցի, ինչպես որ գրված է հոդվածներ ԿԵ եւ ՀԲ-ում, իսկ կոտրվածքներ ունեցողի բժշկության ու դարմանման բոլոր ծախքերը խրտնեցնողը հոգա՝ մինչեւ առողջանալը, իսկ զգայությունների վնասվելու դեպքում, ինչպես որ գրված է, այդպես հատուցի /հոդվածներ Բ եւ ԿԳ/, իսկ բժշկությամբ ոչ լիակատար առողջացման դեպքում, զգայությունների վնասման կեսի չափով հատուցի:

Իսկ եթե խաղի ժամանակ լինի, դատաստանը եւս նույնն է, որովհետեւ նման արարքը ոչ թե խաղի, այլ զարհուրանքի էր արժան, սակայն ներվի, ըստ սովորության աշխարհի եւ վնասի կեսն հատուցի կամ երեքից մեկը: Նույն օրինակով եւ ապաշխարություն լինի, եթե դատաստանի տակ գործը չմտնի: Իսկ եթե երեխա լինի, նախ տեսնվի հասակը, ինչպես ավելի առաջ գրել ենք հոդված ԻԲ-ում եւ ըստ այդմ դատվի, թե չարակամությամբ արվածը, թե խաղի մեջ: Ճշմարտությամբ տեսնվի կամա եւ ակամա հանցանքի տարբերությունը: Ակամայի դեպքում զեղչ լինի:

Այլ, եթե գրաստն ինքը, մեկին տեսնելով խրտնած լինի եւ մահվան վնաս լինի, եթե գրաստը այլազգի թշնամիներինը լինի, որովհետեւ որ նրանք իրենց բնությամբ ուրախանում են մեր կորուստների համար, ապա ուրեմն՝ կես արյան դատաստան լինի, իսկ եթե քրիստոնյա թշնամի է տերը, ապա արյան դատաստանի կեսի կեսը, իսկ, ըստ ապաշխարության՝ կեսը լինի, որի դեպքում՝ ընկնելու, զգայությունների վնասվածքների համար դատաստան լինի:

Իսկ եթե /գրաստի տերը/ թշնամի չլինի եւ /գրաստը/ իր ահից վնաս հասցրած լինի, չլինի թե տերն անպարտ մնա դատաստանից, որպեսզի հետո զգուշություն պահպանի: Իսկ եթե գրաստը ըստ կարգի, համեստ ընթացքով, գնալիս է եղել, տուգանքների դատաստան չլինի, բայց տիրոջ խղճմտանքի եւ կամքի համաձայն էլ որոշվի նրա ապաշխարությունը:

ԳԼՈՒԽ ՄԼԳ
ԿԱՄԱ ԵՎ ԱԿԱՄԱ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ակամա սպանությունները բազմաթիվ օրինակներով են լինում, եւ ակամա լինելը ըմբռնելու համար բերում ենք նշան օրինակները:

Եթե մեկը փայտ է կտրում եւ կացինը ձեռքից դուրս թռչելով կպչում է մեկին ու սպանում: Եվ կամ փոքր բարձունքներից կամ լեռներից երբ փայտ կամ քար է ցած գլորում եւ կպչում է մեկին ու սպանում: Եվ կամ այդուց կամ բանջարանոցից քար է դուրս գցում, կպչելով մեկին սպանում է:

Կամ մեկը ծառից պտուղ վար գցելու համար քար է նետում եւ քարը մեկին կպչելով սպանում է: Կամ ծառից պտուղ թափ տալու ժամանակ, ծառի վրա քար լինի մնացած եւ ընկնելով մեկին սպանում է: Եվ կամ /ծառը թափ տվողի/ գավազանն է ընկնում որեւէ մեկի գլխին ու սպանում եւ նման այսպիսի բաներ, որի պատճառով մահ է լինում:

Կամ երբ վարդապետը աշակերտին ըստ թույլատրելի չափի խրատում է ծեծով, կամ հայրը որդուն կամ մայրը դստերը, կամ սկեսուրը հարսին, կամ եղբայրը եղբորը եւ կամ տերը ծառային եւ կամ տիկինը աղախնուն եւ այլ ոք, նման դեպքերում, երբ վնասը մահ է լինում:

Եվ կամ՝ եթե մեկը հրապարակում երիվարն է վարում կամ այլ մի

կենդանի կամ սայլ եւ ոտի տակ ընկնելով մահ է լինում:

Եվ կամ որսի վրա նետ է արձակում եւ պատահմամբ դիպչում է մեկին ու սպանում: Եվ կամ մեկը քար նետի, կարծելով թե քար չէ ու մահ լինի:

Եվ այլազգիների մեջ ակամա է, երբ եղբայրն եղբորը կամենում է սպանել եւ սա դառնալով նրան է սպանում կամ նման այդպիսի դեպքեր:

Կամ մեկն ավազակների մեջ ընկնելով հարկադրաբար սպանում է եւ սրանք եւ ակամա են լինում, եւ կամավոր: Իսկ պատերազմի ժամանակ սպանելը եւ ակամա է լինում, եւ կամավոր: Եվ եթե մեկը գիշերվա պատճառով, կարծելով, թե թշնամուն է սպանում, բայց հարվածում է բարեկամին ու սպանում, սա նույնպես եւ ակամա է, եւ կամավոր: Եվ եթե մեկը նետն արձակի եւ թշնամուն կպչի ու սպանի, սա նույնպես եւ ակամա է, եւ կամավոր: Իսկ կամավոր է, եթե մեկը գավազանով խստությամբ ծեծում է մարդուն, կարծելով այդպես կարող է ուղղել չարագործին, եւ ծեծում է մինչեւ արյուն հանելը, որից ծեծվողը մեռնում է:

Նույնպես, եթե մեկը քարով կամ փայտով մեկին առավել է չարչարում, քան վերջինս կարող է տանել, նման դեպքերում համարվում է, թե՝ սրով սպանեց: Նման այլ այսպիսի դեպքերն եւս նույն կարգի են դիտվում /Օրենքներ/:

Եվ այն կանայք, որ դեղ խմեցնելով այրերին սովոր են սպանել, նույնպես եւ երբ նախանձի պատճառով մահացու դեղ են տալիս մերձավորին, սրանք /սպանողները/ մահապարտ են համարվում:

Արդ սրանք եւ սրանց նմաններն են կամավոր սպանությունները եւ ակամաները եւ երկուսի խառնությունը, եւ ինչպես ցույց տրվեց՝ բժշկելը /հայտնի անելը/ խոստովանությամբ է:

Այլ դատաստան անելու օրինակ տանք: Որովհետեւ ինչպես թագավորների կողմից արվող դատաստաններում է գրվել, որ եթե այլազգին ակամա քրիստոնյա սպանի, ըստ կամավորի կարգի դատվի արյան գինը: Եվ երբ քրիստոնյան քրիստոնյայի /ակամա/ սպանի, դատաստանը կամավորի է:

Եվ կամավոր է, երբ կնոջ նախանձի կամ ինչքերի, կամ փառքի համար, կամ մեկ այլ նման պատճառով սպանում են: Եվ ինչպես գրված է՝ լրիվ դատաստան արվի: Իսկ եթե ակամա թշնամի է սպանվածը, որի վրա /սպանողը իր սպանման համար/ ուրախանում է, այդ-

ժամ՝ իբրեւ կամավոր սպանող դատվի, կամ ըստ ներման՝ կես պատ-ժով, որպես որ թագավորների կողմից արվող դատաստանների մեջ գրեցինք:

Իսկ եթե ամբողջապես ակամա լինի սպանությունը, ըստ այդմ էլ լինի դատաստանը եւ եթե խառն՝ որ եւ կամավոր է եւ ակամա, ըստ այդմ լինի:

ԳԼՈՒԽ ՄԼԴ
ՋՐՈՎ ՎՆԱՍ ՏՎՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե պատահի, որ մեկը առվով ջուր բերի որեւէ գործի կամ այգին ոռոգելու համար, իսկ այդ պատճառով ջուրը վնասի ընկերոջ այգին կամ անդաստանը, կամ նրա բնակության մեջ որեւէ այլ բան, ապա, եթե նախապես զգուշացրեց, որ ընկերն ուշադիր լինի, եւ ինքն էլ իր հերթին ուշադիր եղավ, եւ ակամա ինչ վնաս որ գործեց, այդժամ վնասի կեսը հատուցի: Իսկ եթե ծուլացավ, անփույթ եղավ եւ չզգուշացրեց, ողջ վնասը վճարի, մանավանդ, եթե թշնամությամբ է արել: Սակայն քննվի՝ ի՞նչ պատճառով էր, թե վարձկանների, մասնակի՞ էր, թե ամբողջությամբ, գիշերո՞վ էր, թե՞ ցերեկով եւ այլն. այդպես դատեն:

ԳԼՈՒԽ ՄԼԵ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բժիշկներից շատերն են բազմաթիվ վնասներ գործում, կամ փորձում են դեղն այլոց վրա, կամ չարակամությամբ սպանում են դեղերով, կամ անգիտության պատճառով վնասակար դեղեր են տալիս, կամ անվարժության պատճառով ցավերը չեն հասկանում, կամ հեղգանում են, երբ իրենց վարձը չեն տալիս, կամ իրենց աշակերտներին նախանձելով՝ ուղիղը չեն սովորեցնում, իսկ նրանք էլ իրենց հերթին, անգիտանալով՝ բազում վնասներ են բերում: Եվ այս ամենը գիտենք, որ կամավոր հանցանքներ են:

Իսկ ակամա հանցանքներ են, երբ հիվանդին տեսնելով, որ անվճարունակ է, հեղգությունով են գործում, կամ որ նրա հրամանի համաձայն, հիվանդին չեն դարմանում, կամ, երբ մեծ անհրաժեշտություն էր, բժիշկը չի գալիս հիվանդի մոտ: Կամ գիտությամբ տված դեղը

հիվանդի կենաց եւ մահու պատճառ է դառնում: Նույնպես եւ անդամահատությունը կամ խարանելը, երբ սխալ ախտորոշմամբ է արվում կամ վատ ավարտով է վերջանում, նույն դատաստանով են դատվում:

Կամավոր հանցանքներով մահերի դեպքում՝ արյան դատաստան լինի, երբ վնասը հայտնի լինի, իսկ թե խոստովանությամբ ի հայտ լինի, այդժամ կամավորի ապաշխարություն լինի:

Իսկ ակամայի դեպքում, կողմերը անպարտ մնան: Իսկ եթե վնասը կամավորի եւ ակամայի միասնությամբ է եղել, այդժամ անպարտ չլինեն յուրաքանչյուրն իր յուրայիններով:

ԳԼՈՒԽ ՄԼԶ
ՆՐԱ ՄԱՍԻՆ, ԵՐԲ ՄԵԿԸ ՄԵԿԻՆ ԳՈՐԾԻ ԴՆԻ ԵՎ ԱՅԴ ՄԱՐԴԸ ՄԵՌՆԻ

Եթե մեկը մեկին անհրաժեշտ մի գործի ուղարկի եւ մահվան վնաս լինի կամ նման, այլ մի բան, եթե ծառից պտուղ թափելուց լինի, կամ գետն անցնելիս կամ գինովցած ձի նստելու, կամ նման այլ դեպքեր, նման պարագաներում արյան դատաստան լինի եւ կամա եւ ակամա դրույթներով, առավել դատ լինի բռնադատողների համար... /տես հոդվածներ ԼԵ, ՄԻԲ, ՄԻԶ, ՄԻԷ/:

ԳԼՈՒԽ ՄԼԷ
ՄՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

...Արդ չլինի թե որեւէ մեկը անիրավությամբ զրկանք գործի, այլ իրավունքով բաժանումն անի ընկերոջ հետ: Իսկ եթե նրանց մեջ գող գտնվի, ապա, կրկնակի տույժ կրի, իսկ, ըստ օրենքների՝ քառակի է տույժը /Ելք, ԻԲ 1/, որովհետեւ ինքն իր վաստակը եւ ոչ թե ուրիշինն է անիրավում: Իսկ վարձով աշխատող մշակները եղանակից կախված առատության եւ նվազության չափով դատվեն:

Առավելի դեպքում՝ նվազ դատաստան լինի, պակասի դեպքում՝ առավելը: Նույն կերպ եւ տարբեր չափով /բերրի/ տեղավայրերի համար լինի:

ԳԼՈՒԽ ՄԼԸ
ՀՈՎԻՎՆԵՐԻ ԵՎ ՀԱՆԴԱՊԱՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվ, հովիվները, եւ հանդապահներն ըստ գավառների սովորության, տարբերվում են իրենց ստացած վարձերով, սակայն ճշմարտությունն այն է, որ ինչպես նրանց համար կարգել են արդեն, այդպես լինի նրանց համար:

Քաջությամբ լինեն եւ զգոն ու զգույշ: Եվ եթե պատահի հոտի մեջ գազանաբեկ լինի, երբ հովվի ծուլությունից այդ չլինի, որպես վկայություն գազանաբեկի դին ներկայացնի եւ ինքը անպարտ լինի դատաստանից: Եվ եթե ինքը մոտակայքում չէր եւ անհոգությունն էր պատճառը կամ նման այլ մի բան, որ եթե մոտակայքում լիներ, վնաս չէր լինի, այդժամ դատաստան լինի վճարել գազանաբեկի համար կամ ամբողջապես կամ՝ կիսով չափ: Ամբողջապես, եթե վնասը անփութությունից եղավ եւ կիսով չափ, եթե խառը հանգամանք կար: Եթե վնասն ակամայից է եղել, իրենց վարձերից չզրկվեն:

Իսկ եթե ծուլությունից եւ նման այլ պատճառներից է, որ գողանան, դատաստանով պարտավոր են վճարել: Իսկ գողացվածը եթե ի հայտ է արվել, հարկ է ըստ օրենքների՝ մեկին չորս եւ հինգ վճարել /Ելք, ԻԲ 4/: Հարվածով սպանվածների համար վճարվի՝ քարով եղած լինի, թե գավազանով, նաեւ պակասորդի պատճառով վճարվի, նաեւ, եթե այդ վայրում եղած ծնունդը մեռնի եւ ինքն՝ հովիվն անփույթ էր ու մոտակայքում չէր: Նույն այս դատաստանը լինի նրանց համար, ովքեր ձի եւ ջորիներ են արածեցնում:

Իսկ եթե անասունները միմյանց հարվածելով սպանել են, դատաստանը ըստ օրենքների լինի:/ Տես Ելք, ԻԱ 35-36, նաեւ հոդված ԿԶ/:

ԳԼՈՒԽ ՄԼԹ
ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՏՈՒՆ, ԱՅԳԻ ԵՎ ԱՅԼ ԻՐԵՐ ԵՆ ՏԱԼԻՍ

Եթե պատահի, որ ավեր եկեղեցուն նվիրատվություն անեն /վերականգնելու/ եւ թե վանականներ, թե աշխարհականներ վերցնեն եւ ուտեն տրվածը, նվիրողներին իշխանություն լինի, որ ետ վերցնեն ինչ

տվել էին եւ այլ եկեղեցու տան եւ իրենք էլ սպասավորեն մինչեւ կառուցվի եկեղեցին, ավարտվի եւ ավարտ կառույցը նվիրեն, որովհետեւ Աստծո բաժինն է:

Իսկ եթե պատահի, որ ավեր եկեղեցու ժողովուրդը վերցվի եւ մեկ այլ եկեղեցու տրվի, այնժամ, երբ ավեր եկեղեցին կառուցվի, եպիսկոպոսը ժողովրդին ետ դարձնի իր նախկին եկեղեցուն:

Իսկ եթե ժողովրդի միջից մեկը կամենա հակառակվելով եկեղեցի կառուցել, եպիսկոպոսը թույլ չտա, իսկ եթե /ժողովրդով/ ըստ /եկեղեցի ունենալու կարիքի/ պահանջեն, ապա եպիսկոպոսի հրամանով թող կառուցվի:

ԳԼՈՒԽ ՄԽ
ՎԱՃԱՌՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվ վաճառքը քաղաքներում, ըստ թագավորի հրամանի կարգեն եւ կամ իշխանների՝ թագավորի հրամանի համաձայն՝ թե քաղաքներում, թե ավաններում եւ գավառներում: Եվ նախադրությամբ չափն ու կշիռը, զույգը՝ նրանք հաստատեն՝ տեսնելով զորությունը վաճառքի: Նաեւ հսկիչներ կարգեն, որպեսզի չլինի թե նենգություն լինի վաճառքում:

Խարդախների խրատը իշխանների հրամանով լինի:

Գողին դատաստանով ստիպեն գողացածի մեկ չափ ու կշռի դիմաց չորսն հատուցել եւ նաեւ հանդիմանությամբ նշավակեն նրան՝ մյուսների համար որպես խրատ ու զարհուրանք:

Անօրեն դրամ հատողների կամ ճուլողների ձեռքը կտրեն՝ իշխանների հրամանով:

Մաքսը իրավամբ վերցնել, երբ քաղաք կամ գավառ գան վաճառքի: Եվ չլինի, թե հանցավոր ճանապարհով մաքս լինի, եթե ոչ՝ վաճառքի իրավունք չունենան... Եվ մաքսը թագավորի հրամանով լինի կամ թագավորի հրամանի համաձայն՝ իշխանների հրամանով:

Եվ վաճառքում խաբողները, որ տգետներին են խաբում, հատուցում ստանան, ըստ գողերի՝ մեկի դիմաց՝ չորս կարգի եւ նշավակման հետ:

Իսկ հացի եւ գինու եւ այլ այսպիսի բաների գինը, ըստ տարվա առատության կամ այլ պատճառներից, կամ, ըստ տարվա նվազության եւ այդպիսի պատճառներից ելնելով, փոփոխվի՝ վեր կամ վար: Եվ այդ, ըստ թագավորի հրամանի լինի եւ իշխանների՝ հայտարարվելով գավառապետներին ու ժողովրդապետներին...

ԳԼՈՒԽ ՄԽԱ
ԳՈՂ ԱՐՎԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արվեստավորները եթե նյութն ապականեն, ապականվածը, ըստ իր արժանվույն գնով լրացնելուց հետո միայն հասու լինեն իրենց վարձին, իսկ եթե ոչ, իրենց վարձից պակաս ստանան, եւ դատավորները ինչպես որ տեսնեն, վճիռն այդպես իրագործեն:

Իսկ գողերն, ըստ օրենքների հատուցեն ու կորուստների դիմաց էլ վճարեն: Իսկ եթե նյութը վնասած լինեն այն երկար ժամանակ պահելու պատճառով կամ մի այլ վնասով, դատաստանով հատուցեն, որովհետեւ նյութը գործելու եւ ոչ թե ապականելու համար տվեցին:

Այլ եթե նրանցից տվածը գողանան եւ իրենց ունեցածներն էլ գողացած լինեն, եւ եթե այդ բանը ճշմարտությամբ հավատարմվի, թե այդպես էր, այդժամ անպարտ լինեն...

Ավարի ենթարկվելու դեպքում՝ անպարտ լինեն դատաստանում:

Գրավ դրված եւ կորցրածի համար վճարեն:

Իսկ հասարակաց թշնամու ձեռքով հրով այրվածի համար հատուցում չանեն...

ԳԼՈՒԽ ՄԽԲ
ԳՈՐԾ ԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՐԵՎԷ ԱՆՈԹ ՎԵՐՑՆԵԼՈՎ ՎՆԱՍՈՂԻ ՄԱՍԻՆ

Վարձկանները, որ իրենց տերերի գործերն են վարում, որպես երկրագործներ, գործիքների վնասվելու դեպքում, ըստ սովորության՝ անպարտ են, իսկ եթե իրենց գործն են վնասում, ապա տերերին դիմացը պիտի վճարեն: Իսկ երբ իրենք իրենց գործերն են վարում որպես հնձողներ /եւ վնասեն/, վնասն իրենցն է լինում, իսկ եթե տիրոջից գործը վարձու վերցնեն եւ վնասեն, վնասը տիրոջն է լինում / եւ պիտի

հատուցեն/: Եվ այլ մի բան տիրոջից երբ վերցնեն եւ վնասեն, դիմացը վճար լինի եւ եթե չար կամքով /միտումնավոր/ վնասեն, այդժամ լիարժեք վճարեն:

ԳԼՈՒԽ ՄԽԳ
ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Դատաստանների դատաստանի մասին այսպես ենք պարտավոր իմանալ: Որովհետեւ այն ժամանակ երբ սպանողի կամ չարագործի պատիժը կրկին հարկ լինի ցուցանել, այդժամ արժան է քննել եւ երբ արյան գին վերցնեն, ապաշխարություն եւս լինի: Թեպետ արյան գին վերցնելը առանց ապաշխարության չանես, որովհետեւ մարդու համար որեւէ գին գոյություն չունի /տես հոդված Բ/, բացի փոխարենը սպանողի մեռնելը, ըստ օրենքների /ելք, ԻԱ 12, Ղեւտ., ԻԴ 17/ նաեւ՝ ըստ կանոնների տես հոդված Բ/: Եվ թեպետ արյան գին է վերցվում, սակայն չկա գին մարդու համար, ուստի եւ ապաշխարությամբ է լրացվում պակասը, քանի որ գինը, ըստ կարողության եղավ եւ ոչ ըստ արժանվույն: Այդ բավական լինի, որ չլինի թե չարն ըստ իր սովորության գործի եւ հետո կրկին նույնպիսի վնասներ անի, ապա այդժամ խրատի համար նրա ձեռքը թող հատեն: Իսկ եթե աղքատ լինի, բավական լինի խրատը /ձեռքը հատելը/:

Իսկ տուգանքները արքունիքի համար դրվեց՝ ըստ կարողության, իսկ ավարը լինի տուգանքի փոխարեն եւ արյան գինը յուրայիններին տրվի: Այս դատաստանները հայտնի եղածների վերաբերյալ լինեն, իսկ անհայտները խոստովանությամբ ուղղվեն իրենց դատաստանների սահմաններով:

Միանգամայն, ամենայն դատաստան, ըստ իր քննության լինի:

Իսկ պատիժը վնասի համեմատ լինի, որպես որ չարագործներին խրատի համար անդամներ հատելը, նմանվելով աստվածային դատաստանին, ըստ այնմ, յուրաքանչյուրն հատուցի ըստ իր գործերի, որպես որ մեծատան օրինակում /Ղուկաս, ԺԶ 19-31/, ջուր չխմեցվեց պահքում, եւ չար ցանկացողները հրին մատնվեցին /Մատթեոս, Ե 22, ԺԳ 40-42, ԺԸ 8-9.../. Եվ անողորմները դրվեցին տանջանքների մեջ /Մատթեոս, ԻԵ 46/, եւ լույսի գիտության ատողներին նետեցին խավարի մեջ /Հովհաննես, Գ 19/ եւ էլ որ է, ըստ այս դատաստանների դրվեց: Սրանց նման լինեն եւ մեր դրած դատաստանները:

ԳԼՈՒԽ ՄԽԴ
ՋՐԱՂԱՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ջաղացպանները իրենց արհեստի մեջ փորձառու լինեն, երկյուղ ունենան, որ հանկարծ չլինի թե կերակուրը ապականեն: Այդպիսի վնասարարների դատաստանն այս է. «Լույսն աշխարհ եկավ, սակայն մարդիկ խավարը սիրեցին... » /Հովհաննես, Գ 19/: Եվ նմանների ոչ միայն վարձը չպիտի տալ, այլ նաեւ պիտի տուժեն տված վնասի համար: Իսկ եթե պատճառը աղունի խոնավությունից լինի, ջաղացպանները անպարտ մնան, սակայն ջուր քաշած ալյուրի դիմաց վճարեն: Գողացածի համար մեկին չորս վճարեն...

ԳԼՈՒԽ ՄԽԵ
ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԵՐԲ ՄԵԿԸ ԳՐԱՍՏ Է ՏԱԼԻՍ ԱՐՈՏԻ, ԳՈՐԾԻ ԵՎ ՎՆԱՍՎՈՒՄ Է

Բազում անգամներ են պատահում, երբ երիվար կամ այլ գրաստ են տալիս որեւէ գործի համար, որոնք վնասվում են կամ ջուրն ընկնելով, կամ արոտատեղում, կամ ընթանալու ժամանակ: Եթե գրաստը խիստ բնույթ ուներ եւ տերը չզգուշացրեց կամ բռնադատելով ստիպեց իր գրաստը վերցնել, եւ հեծնողը նրա վրայից ընկավ եւ մեռավ, կամավոր սպանության դատաստան լինի, իսկ եթե խիստ բնույթ չուներ եւ տերն էլ չբռնադատեց, այդժամ՝ ակամա սպանության դատաստան լինի:

...Եթե հեծնողը հասուն տարիքով էր, ակամայի դեպքում գրաստի տերը անպարտ լինի, իսկ եթե երեխա էր՝ անպարտ չլինի: Իսկ եթե ընկավ ու չմեռավ, ապա բժշկության եւ նման բաների ծախսերի համար դատ լինի, նաեւ առողջության տկարանալու եւ զգայության վնասի դեպքում դատ լինի: Իսկ եթե երիվար կամ այլ մի հեծնելու կենդանի հեծյալները վնասեն՝ կամ նրանց ոսկորը ջարդելով կամ սպանելով: Եթե կենդանուն հեծյալը վարել է սովորական հրահանգներով կամ

պատվիրատու առաքողի հրահանգի համաձայն, այդժամ հեծյալն անպարտ լինի, երբ հավաստիացնի, թե այդպես էր: Իսկ եթե արշավել է եւ ոչ ըստ պատվիրանի է վարել եւ վնասել, այդժամ հեծյալը տոժի: Եվ տույժը մեկ մասից պակաս լինի, իսկ կամավոր մեղքի դեպքում՝ ամբողջ տույժ լինի:

ԳԼՈՒԽ ՄԽԶ
ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՀՈՂԱԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ

Հողադրամ, ըստ կանոնական հրամանների՝ չկա: Արդ, դրամ են վճարում կապալավոր քահանային՝ գերեզմանատեղերի համար, նաեւ Ավետարանին հաղորդվելիս են դրամ վերցնում:

Բայց քրիստոնյաները հույսի համար են հողի համար դրամ վճարում, իսկ նրանք, որ այս հարցով բռնադատում են կամ գայթակղեցնում, պիտի եւ հաշիվ տան Աստծուն, եւ ինչպես որ այլ քահանաների սովորեցին վճարել, ապա սովորեցին նաեւ վճարի դիմաց պահանջել: Հարկ չէ, որ քահանան առանց կանչվելու, գնա մեկի մահվան դեպքում մահացածի ինչքերից վերցնելու, իսկ եթե սիրելի մարդ լինի մեռնողը կամ աղքատ, ապա առանց կանչվելու թող գնա, սգի է գնում եւ ոչինչ չվերցնի:

Իսկ քահանան, որ մեռավ եւ չունի ժառանգ, նրա ինչքերը եպիսկոպոսներին լինի, եւ եպիսկոպոսն իր հասույթն առնի՝ հանդերձներ, անկողին, որովհետեւ ինքն է ձեռնադրել քահանային, իսկ ժողովուրդն ըստ իրենց կամքի տրվի այլ քահանայի, իսկ եթե /մեռած/ քահանայից հետո արժանի ժառանգորդ քահանա կա, այլ քահանայի չտան /ժողովրդին/... Յուրաքանչյուրն իր ձեռնադրողի իրավասության տակ մնա: Իսկ հայրապետները, որ բազմաց կողմից են ձեռնադրվում, բազմաց իրավասության տակ լինեն...

Իսկ խաչը, գիրքը, շուրջառը, որ հայրապետը տալիս է եպիսկոպոսին, նրա մահից հետո նույն բաները ետ վերցնի, իսկ երբ ինչքեր եւ հոգեւոր գործածության այլ բաներ էլ լինեն, որ եպիսկոպոսն ինքն է ստեղծել, եպիսկոպոսարանը ում որ կամենա՝ նրան շնորհի: Նույնպես եւ ժառանգավոր քահանայի նկատմամբ եպիսկոպոսը նույնն անի:

ԳԼՈՒԽ ՄԽԷ
ՍԻՆՈՌԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԵՆ

Սահմանները գավառների՝ լեռներով, գետերով եւ արձաններով հաստատվեն, նույնպես հաստատվեն գյուղերի սահմանները: Եվ գյուղերը, որ կառուցված են երկու կամ երեք գավառների սահմանների վրա, զույգ բաժանվեն՝ առավելությամբ կամ նվազությամբ, նույնկերպ եւ անդաստանները եւ այն, որ գյուղերի սահմաններում են, նույնպես եւ ծառերը, որ անդաստանների սահմաններում են: Եվ այդու ցանկը զույգ՝ երկու կողմին տան... Ըստ այդմ լինի տների, որմերի եւ այդպիսի բաների համար էլ:

ԳԼՈՒԽ ՄԽԸ
ԴԻՎԱՀԱՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կենդանիների այսահարությունը գտնված է արդեն, որ իրենցից չէ, որովհետեւ մեղքի հետեւանք է, իսկ նրանք իրենք իրենցից ոչինչ չեն մեղանչում: Եվ կենդանիների այսահարությունն եղավ հանուն մեզ խրատելու, ինչպես որ Ավետարանում հիշատակված գերգեսացիների խոզերի երամակը /երբ Տերը թույլ տվեց, որ դեւերը մտնեն խոզերի մեջ ու ամբողջ երամակը խրտնելով ծովը նետվեց եւ խեղդվեց/: Որովհետեւ դեւերը ուխտ դրեցին՝ մեր Տիրոջը չտեսնել: Արդ, հայտնի է, որ անասունների վրա դեւն իշխանություն չունի, այլ այդ Աստված է թույլ տալիս՝ նրանց տերերի զարհուրելու համար: Արդ, եթե անասունների դիվահարության դեպքեր լինեն, հարկավոր է, որ նրանց տերերը զգուշանան, որովհետեւ տերերին խնայելով բարեգութն Աստված թողել է, որ նրանց կենդանիները այսահարվեն, ապա եթե տերերը անփույթ մնան, գուցեեւ դեւերը նրանց մեջ մտնեն: Անասնոց դիվահարության դեպքեր, երբ ի հայտ լինեն, նրանց տերերը խոստովանեն միմյանց իրենց մեղքերը, լինեն տեւական աղոթքի եւ պահքերի մեջ, ըստ կարողության՝ երեք տարի շարունակաբար քառասնօրյա պահքը պահելով եւ խաչով ու Ավետարանով խաչակնքվելով, թերեւս հաճենա Աստված եւ հալածի դեւերին եւ բանականները ազատվեն չքոտիներից:

Իսկ թե անասունները դիվահարությունից չբժշկվեն, մորթեն եւ այ-

լազգիներին վաճառեն: Իսկ եթե բժշկվեն, ապա երեք տարիների հարկն այլեւս չկա եւ եթե մորթեն ուտեն կամ քրիստոնյաներին վաճառեն՝ Տիրոջ կամքով անվնաս լինի: Այս, երբ դեպքը տիրոջ տնից է լինում: Իսկ եթե կենդանուն գնած եղած լինեն, հարկ է վկաներով հավատարմեցնել, թե ու՞մ տանն է անասունը դիվահարվել՝ վաճառողի՞, թե գնողի: Եթե վաճառողի տանը, ապա անասունը ետ վերադարձնեն:

Իսկ թե գնելուց հետո դեպքը լինի՝ չվերադարձնեն: Նույն դատաստանը խելագար անասունների համար լինի:

Իսկ չուտվողներն ու չբժշկվածները այլազգիներին վաճառեն, բժշկվածները՝ քրիստոնյաներին; ետ դարձնելը նույն պայմանով լինի, որ հիշատակվեց: Այս դատաստանը կանոնական է /Բարսեղի կանոններ, ՄԽԴ-ՄԿԵ/: Երբ հաճո երեւա, այդպես հաստատուն մնա...:

ԳԼՈՒԽ ՄԽԹ
ՓՈՔՐ ԱՂՋԿԱՆ ՄԵԾ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ ՊՍԱԿՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կանոնական հրաման է տղա երեխաների պսակը չօրհնել՝ ընութեամբ նրանց դեռեւս անկարող լինելու պատճառով: /Սահակ Պարթեւի կանոններ, ԻԷ, ԻԸ/: Իսկ եթե պատահի, որ կինն է իր հասունութեամբ անկատար, իսկ այրը կատարյալ, կրկին չար է, որովհետեւ ինչպես ուսուցանվեցիք խոստովանությունից, ամուսնանալը կապ միջոց է, որով հատվում են երկու վտակներ, որից այս պարագայում մահ է լինում: Արդ, այդպիսի վնասի համար էլ կանոնական դատաստան լինի եւ կամավոր սպանողի կարգում երեցը դնի հարսի եւ փեսայի ծնողներին, իսկ պսակող քահանային հարկ է իր կարգից լուծարել եւ խնամախոսներին եւս անպարտ չթողնել, այլ ակամա սպանության կարգով դատաստան անել: Եվ պարտավորություն է եպիսկոպոսներին այդպիսիներին ժամանակին սաստել: /Տես հոդված ՃՂԲ/:

ԳԼՈՒԽ ՄԾ
ՈՒԽՏԵՐԻ ՄԱՍԻՆ

Ուխտատեղիները, եթե վկայարաններ են, եւ այլ տեղեր էլ՝ աստվածային շնորհների վայրեր եւ կամ տեղ, ուր խաչի նշանն է հաստատված, սրանք եպիսկոպոսի վիճակի մեջ են մտնում եւ որ գյուղին որ մոտ են՝ եպիսկոպոսը այդ գյուղի երեցին տա, որի սահմանում, որ ուխտագնացությունը կատարվում է, որպեսզի /երեցը/ զգուշավորությամբ սպասավորություն անի, եթե մանավանդ ուխտագնացները հեռավոր տեղից լինեն: Իսկ եթե ուխտատեղին երկու գյուղերի սահմանում լինի, ապա երկու կողմերի քահանաներն էլ սպասավորություն անեն եւ շնորհի հասանելիք վարձերը սպասավորության գործին ծառայեցնեն, սակայն իրենք եւս վայելեն՝ առանց որեւէ հակառակության: Եվ ընծաների համար, որ բժշկությունների համար է լինում՝ չպատերազմեն, իսկ եպիսկոպոսի ժառանգությունը այն բանում լինի, որ բարվոք սպասավորությունն իրականացնի:

Իսկ եթե /քահանաները/ սուրբ տեղերից հարկ վերցնեն եւ եպիսկոպոսի խրատները հաշվի չառնեն, աստվածային շնորհներն ունայնանալով, այդժամ պարտական լինեն այն ամենի համար, որ պակասեցրել են շնորհներից եւ որի համար հաշիվ պիտի տան, իբրեւ իրենց կողմից գործված հակառակություն Աստծո եւ սրբերի բարի կամքի հանդեպ, որոնք ձրի բարեխոս են լինում միշտ աշխարհում: Այսպիսի /քահանաներին/ արժան է, որ եպիսկոպոսները քարոզ կարդան, որպեսզի տրված ընծաները չտանեն, այլ որպեսզի ընծաները իրենց շեների աղքատներին բաժանեն եւ իրենք էլ գնալով աղոթեն, որպեսզի եկեղեցու շնորհները այլազգիներին չանցնի: Քանզի խորհուրդներ են կրում ամեն տեսակի ընծաները, դահեկանն, օրինակ՝ անախտ ընութեան համար է եւ խորհուրդն է աստվածությանը Քրիստոսի, իսկ փրկչական պատկերի խորհուրդը, այդ մեր պատկերն է, որով եւ առաջնագույնին /Ադամին/ իր պատկերը տվեց, ըստ այսմ էլ՝ տվեք կայսրինը կայսրին, իսկ Աստծունը՝ Աստծուն:

Իսկ վեց դանգը խորհուրդն է Քրիստոսի գալստյան ժամանակի, իսկ չորս թասուն, խորհուրդն է չորս տարրերի եւ չորս ավետարանիչների, դանգից տրված տասներկու գարին խորհուրդն է տասներկու առաքյալների, իսկ դահեկանից յոթանասուներկու գարին, խորհուրդն է յոթանասուներկու առաքյալների, իսկ դրամը, խորհուրդն է մեր ընութեան, որովհետեւ ՄԱՐԴ տառերի անդրադարձությամբ է արտահայտությունն ստացել:

Իսկ այլ նյութերը, որպես որ խորանի նվերներն են եւ տաճարին

ընծայվածները, սրանց մասին տես Գ թագավորների Զ եւ Է գլուխներում: Իսկ սրանցից ինչ որ ընծա չէ, անխորհուրդ է մնում:

Արդ, խորհրդի համար եկածները չլինի թե անխորհուրդ մնան այլազգիների հետ, ապա եթե նման քահանաները հանդգնեն անխորհուրդ համարել խորհուրդները, եպիսկոպոսի կողմից լուծարվեն իրենց կարգերից:

Իսկ խաբեբաներին ամբողջովին հալածել, որոնք գալիս են կրոնավորներին նմանվելով, ապրում են ուխտատեղիների վայրերում եւ բազում գայթակղություններ են գործել տալիս պարզամիտներին, սրանք՝ որորովայնամոլներ եւ այլ ախտակիրներ են, որ ստությամբ երազների պատմիչներ են ձեւանում եւ շատ շատերին են մոլորեցնում:

ԳԼՈՒԽ ՄԾԱ
ԱՎԱՐ ՎԱՃԱՌՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վաճառված եւ գնված ավարը ետ չվերադարձվի, որպես գողացվածի դեպքում է արվում, եւ այդ օրինավոր գործը թագավորներինն է եւ իշխաններինը, ուստի եւ /ավարը/ կանոններն ընդունում են որպես պատարագի ընծա, իսկ գողացվածն ու հափշտակվածը չեն ընդունում: Տես հոդված Բ:



ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԻ ԳԼՈՒԽՆԵՐԸ

ԳԼՈՒԽ ԺԲ - ԹԵ ԿԻՆԸ ԻՆՁ ՊԱՏՃԱՌՆԵՐԻՑ ԵԼՆԵԼՈՎ ԿԱՐՈՂ Է ԻՐ ԱՅՐԻՑ ՀԵՌԱՆԱԼ 51
ԳԼՈՒԽ ԺԳ - ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՅՐ ԵՎ ԿՆՈՋ ՄԻՄՅԱՆՑ ԹՈՂՆԵԼՈՒ ԵՎ ՎԵՐՍՏԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ 52
ԳԼՈՒԽ ԺԴ-ԵՐԲ ԱՅՐԸ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ՄԵԿ ԱՅԼ ՊԱՏՃԱՌՈՎ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ Է ԵՎ ԵՐԲ ԵՏ Է ԴԱՌՆՈՒՄ ԿԻՆՆ ԱՅԼ ԱՅՐ Է ԱՌԱԾ ԼԻՆՈՒՄ 52
ԳԼՈՒԽ ԺԵ - ԵՐԲ ԱՅՐԸ ԿՌՎՈՒՄ Է ԿՆՈՋ ՀԵՏ ԵՎ ՎՆԱՍՈՒՄ Է ՆՐԱՆ 53
ԳԼՈՒԽ ԺԶ - ԱՅՐ ԵՎ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀԻՄԱՐՈՒԹՅԱՄԲ ԹՈՂՆՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ 54
ԳԼՈՒԽ ԺԷ - ՈՒՐԱՑՈՂ ԱՅՐԵՐԻ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ 54
ԳԼՈՒԽ ԺԸ - ԵՐԲ ԱՅՐՆ ՈՒ ԿԻՆԸ ՄԻՄՅԱՆՑ ՀԵՏ ԿՌՎՈՒՄ ԵՆ ԵՎ ՈՒՐԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻՆ ԵՎ ՀԱՎԱՏՔԸ 54
ԳԼՈՒԽ ԺԹ - ԱՅՐ ԵՎ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ, ՈՐ ՍՊԱՆՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ 55
ԳԼՈՒԽ Ի - ԱՅՆ ԻՇԽԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԻՐԵՆՑ ԹԱԳԱՎՈՐԻ ԵՎ ԱՅԼՈՑ ԱՌՋԵՎ ՀԱՆՑԱՎՈՐ ԵՆ 55
ԳԼՈՒԽ ԻԱ - ՇԻՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 55
ԳԼՈՒԽ ԻԲ - ՄԱՆԿԱՆՑ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 56
ԳԼՈՒԽ ԻԳ - ԱՅՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ԽԱՂԻ ԺԱՄԱՆԱԿ ՎՆԱՍՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ 56
ԳԼՈՒԽ ԻԴ - ԱՅՆ ՄԱՆԿԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՋՐՈՒՄ ԽԵՂԴՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ 56
ԳԼՈՒԽ ԻԵ - ԱՅՆ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՐ ԳՐԱՎԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՍՊԱՆՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ 57
ԳԼՈՒԽ ԻԶ - ԱՅՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՎԱՅՐԱՊԱՐ ԳՐԱՎ ԵՆ ԴՆՈՒՄ 57
ԳԼՈՒԽ ԻԷ - ԳԻՆԻՈՎ ՀԱՐԲԵՑՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՎՆԱՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ ... 57
ԳԼՈՒԽ ԻԸ - ՇՆԱՑՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՁԱՐԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ 58
ԳԼՈՒԽ ԻԹ - ԱՅՆ ԿՈՒՅՍԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑԻՑ ԽՈՍՔ ՉԻ ԱՌՆՎԵԼ 59
ԳԼՈՒԽ Լ - ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԲԱՄԲԱՍՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԿԱՆԱՆՑ, ԹԵ ԿՈՒՅՍ ՉԵՆ ԳՏԵԼ 59

ԳԼՈՒԽ ԼԱ - ԳԱՎԱՌՆԵՐԻ, ԳՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ 60
ԳԼՈՒԽ ԼԲ - ԳԱՆՁ ԳՏՆԵԼՈՒ ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 61
ԳԼՈՒԽ ԼԳ - ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԿՌՎՈՒՄ ԵՎ ՄԻՄՅԱՆՑ ՄՈՐՈՒՔ ԵՆ ՓԵՏՈՒՄ 61
ԳԼՈՒԽ ԼԴ - ՍԵՐՄԱՅՈՒ ՊԱՀՎՈՂ ՀՈՐԵՐԻ ՄԱՍԻՆ 61
ԳԼՈՒԽ ԼԵ - ՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՇԻՆԱԿԱՆՆԵՐԻ ՎՆԱՍՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ 62
ԳԼՈՒԽ ԼԶ - ՍՈՒՏ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՆԻՐԱՎ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ 62
ԳԼՈՒԽ ԼԷ - ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ ԵՆ ԱՆԱՐԳՈՒՄ 63
ԳԼՈՒԽ ԼԸ - ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ 63
ԳԼՈՒԽ ԼԹ - ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԻՆՁՔԵՐԻ ՄԱՍԻՆ 64
ԳԼՈՒԽ Խ - ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՐԵՐԻ ՎՐԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ 64
ԳԼՈՒԽ ԽԱ - ԱՅՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԵՎ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԺԱՌԱՆԳԱՎՈՐՆԵՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԱՆԵՐԸ ՁԵՆ ՏԱԼԻՍ 65
ԳԼՈՒԽ ԽԲ - ԱՅՆ ԺԱՌԱՆԳԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԿՌՎԻ ՄԵՋ ՍՊԱՆՈՒՄ ԵՆ ԿԱՄ ՎՆԱՍՈՒՄ 65
ԳԼՈՒԽ ԽԳ - ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՁԵՌՆԱԴՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ 65
ԳԼՈՒԽ ԽԴ - ԵԿԵՂԵՑՈՒՑ ԳՈՂԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 66
ԳԼՈՒԽ ԽԵ - ԱՄԲԱՍՏԱՆՎԱԾ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ 66
ԳԼՈՒԽ ԽԶ - ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՎԿԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ 67
ԳԼՈՒԽ ԽԷ - ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՅՈՒՐԱՅԻՆՆԵՐԻՆ ՁՁԵՌՆԱԴՐԵՆ ԱՌԱՆՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՄՔԻ 67
ԳԼՈՒԽ ԽԸ - ԱՅՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԻՐ ԱՆՁԸ ԳՅՈՒՄ Է ԵՐԿՐԱՎՈՐ ՀՈԳՍԵՐԻ ՄԵՋ 67
ԳԼՈՒԽ ԽԹ - ԵՐԵՑՆԵՐԻ ԿԱՄ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԾԱՌԱՆԵՐԻՆ ՕՐՀՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ 68
ԳԼՈՒԽ Ծ - ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻՆ ԵՎ ԻՇԽԱՆՆԵՐԻՆ ԱՆԱՐԳՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 68
ԳԼՈՒԽ ԾԱ - ԱՅՆ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵՐԵԽԱ ԵՆ ԿՈՐՑՆՈՒՄ 69
ԳԼՈՒԽ ԾԲ - ԳՈՂԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 69
ԳԼՈՒԽ ԾԳ - ԱՂՋԿՆԵՐԻՆ ԱՌԵՎԱՆԳԵԼՈՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՊՍԱԿՎՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 69

ԳԼՈՒԽ ԾԴ - ԾԱՌԱՆԵՐԻՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԱՋԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ 70
ԳԼՈՒԽ ԾԵ - ԴՍՏԵՐՆ ԱՂԱԽՆՈՒԹՅԱՆ ՎԱՃԱՌՈՂԻ ՄԱՍԻՆ 70
ԳԼՈՒԽ ԾԶ - ԱՅԼԱԶԳԻ ԾԱՌԱՆԵՐԻ ԵՎ ԱՂԱԽԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 71
ԳԼՈՒԽ ԾԷ - ԻՐԵՆՑ ՀՈՐՆ ՈՒ ՄՈՐՆ ԱՆԱՐԳՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 71
ԳԼՈՒԽ ԾԸ - ՏՂԱՆԵՐ ԳՈՂԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 71
ԳԼՈՒԽ ԾԹ - ԻՐԵՆՑ ՀՈՐՆ ՈՒ ՄՈՐԸ ԲԱՄԲԱՍՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 72
ԳԼՈՒԽ Կ - ԿԱՏԱԿՈՎ ՄԻՄՅԱՆՑ ՎՆԱՍՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 72
ԳԼՈՒԽ ԿԱ - ԱՅՆ ՏԵՐԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԻՐԵՆՑ ԾԱՌԱՆԵՐԻՆ ԵՆ ՍՊԱՆՈՒՄ 72
ԳԼՈՒԽ ԿԲ - ԱՅՐԵՐԻ ԿՌՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՀՂԻ ԿԱՆԱՆՑ ՀԱՐՎԱԾԻ ԵՆԹԱՐԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ 73
ԳԼՈՒԽ ԿԳ - ՀԱՐՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ 73
ԳԼՈՒԽ ԿԴ - ՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐՎԱԾԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԾԱՌԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ 74
ԳԼՈՒԽ ԿԵ - ԵՐԲ ՅՈՒԼՆ ՀԱՐՎԱԾԻ ՏՂԱՄԱՐԴՈՒ ԿԱՄ ԿՆՈՋ 74
ԳԼՈՒԽ ԿԶ - ԵՐԲ ՅՈՒԼՆ Է ՅՈՒԼԻՆ ՀԱՐՎԱԾՈՒՄ 75
ԳԼՈՒԽ ԿԷ - ՀՈՐԵՐԻ ԵՎ ՋՐՀՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԵՐԲ ՆՐԱՆՑ ՄԵՋ ԿԵՆԴԱՆԻ ԸՆԿՆԻ 75
ԳԼՈՒԽ ԿԸ - ՀՈՐԵՐԻ ԵՎ ՋՐՀՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԵՐԲ ՆՐԱՆՑ ՄԵՋ ՄԱՐԴ ԸՆԿՆԻ 76
ԳԼՈՒԽ ԿԹ - ԵԹԵ ՅՈՒԼՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ Է ՀԱՐՎԱԾՈՒՄ 76
ԳԼՈՒԽ Հ - ԳՐԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՄԻՄՅԱՆՑ ՀԱՐՎԱԾՈՒՄ ԵՆ 76
ԳԼՈՒԽ ՀԱ - ԱՅՆ ԳՐԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀԱՐՎԱԾՈՒՄ ԵՎ ՎՆԱՍՈՒՄ ԵՆ ՄԱՐԴՈՒՆ 77
ԳԼՈՒԽ ՀԲ - ԱՅՆ ԳՐԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՆՐԱ ՏԻՐՈՋ ՅՈՒՐԱՅԻՆՆԵՐԻՑ ՈՐԵՎԷ ՄԵԿԻՆ ՀԱՐՎԱԾՈՒՄ ԵՆ 77
ԳԼՈՒԽ ՀԳ - ԱՅՆ ԳՈՂԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՈՁԽԱՐՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ ԵՆ ԳՈՂԱՆՈՒՄ 77
ԳԼՈՒԽ ՀԴ - ԱՅՆ ԳՈՂԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՏՈՒՆ ԵՆ ԿՏՐՈՒՄ 78
ԳԼՈՒԽ ՀԵ - ԵԿԵՂԵՑՈՒՑ ԳՈՂԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 78
ԳԼՈՒԽ ՀԶ - ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԱՐՏԵՐՈՒՄ ՈՒ ԱՅԳԻՆԵՐՈՒՄ ԵՆ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ ԱՐԱԾԵՑՆՈՒՄ 78
ԳԼՈՒԽ ՀԷ - ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՀՐԴԵՀԵԼՈՎ ՎԱՍՏԱԿՆԵՐ ԵՆ ԱՅՐՈՒՄ 78

ԳԼՈՒԽ ՀԸ - ԵՐԲ ԻՐ ԵՆ ՊԱՀ ՏԱԼԻՍ ՄԱՐԴՈՒՆ, ԻՍԿ ՆԱ ԿՈՐՑՆՈՒՄ Է ԿԱՄ ԳՈՂԱՆԱԼ Է ՏԱԼԻՍ 79
ԳԼՈՒԽ ՀԹ - ԶՈՐՔՈՏԱՆԻՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ 79
ԳԼՈՒԽ Զ - ՆՐԱ ՄԱՍԻՆ, ՈՐ ՈՐԵՎԷ ԲԱՆ, ՈՐԵՎԷ ԻՆՉՔ ՎԵՐՑՆԵԼՈՎ՝ ՎՆԱՍՈՒՄ Է 80
ԳԼՈՒԽ ԶԱ - ԽՈՍՔ ԱՌՆՎԱԾ ԿՈՒՅՍԻՆ ԽԱԲՈՂԻ ՄԱՍԻՆ 80
ԳԼՈՒԽ ԶԲ - ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՐ ԻՐԵՐ ԵՆ ՓՈԽ ՏԱԼԻՍ 80
ԳԼՈՒԽ ԶԳ - ԳՐԱՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ 81
ԳԼՈՒԽ ԶԴ - ՏՈՒՆ ԱՅՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 81
ԳԼՈՒԽ ԶԵ - ՏՆԿԻՆԵՐ ՀԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 82
ԳԼՈՒԽ ԶԶ - ԱՎԱՆԴՆԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 82
ԳԼՈՒԽ ԶԷ - ԵԿԵՂԵՑՈՒՑ ՊՏՈՒՂՆ ԱՐԳԵԼՈՂՆԵՐԻ ԿԱՄ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՊՏՈՒՂ ԶՏՎՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 83
ԳԼՈՒԽ ԶԸ - ՀԱՅՀՈՅԱՆՔ ՏՎՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 83
ԳԼՈՒԽ ԶԹ - ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ՍՊԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 84
ԳԼՈՒԽ Ղ - ՀՈՂԸ ՎԱՃԱՌՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 85
ԳԼՈՒԽ ՂԱ - ՏՈՒՆ ՎԱՃԱՌՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 85
ԳԼՈՒԽ ՂԲ - ՏՈՒՆ ԳՆՈՂ ՈՒ ՎԱՃԱՌՈՂ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ 86
ԳԼՈՒԽ ՂԳ - ԶՐԱՂԱՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ 86
ԳԼՈՒԽ ՂԴ - ԱՆԱՍՈՒՆ ԳՆՈՂ ԵՎ ԾԱԽՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 86
ԳԼՈՒԽ ՂԵ - ԵԶՆԵՐ ԾԱԽՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 87
ԳԼՈՒԽ ՂԶ - ԿՈՎ ԾԱԽՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 87
ԳԼՈՒԽ ՂԷ - ՓԵԹԱԿՈՎ ՄԵՂՈՒՆԵՐ ԾԱԽՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 87
ԳԼՈՒԽ ՂԸ - ԿԱՐԱՍ ԿԱՄ ԱՅԼ ՏԵՍԱԿԻ ԱՆՈԹՆԵՐ ԾԱԽՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 88
ԳԼՈՒԽ ՂԹ - ԱՅԳԻ ԵՎ ԴՐԱԽՏ ԿԱՊԱԼ ՎԵՐՑՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 88
ԳԼՈՒԽ Ճ - ԶՐԱՂԱՑՆԵՐ ՎԱՐՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ 89
ԳԼՈՒԽ ՃԱ - ՀԱՅՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱԺԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 89
ԳԼՈՒԽ ՃԲ - ՈՐԴԻՆԵՐԻՆ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐԻՆ /ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ/ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ 91
ԳԼՈՒԽ ՃԳ- ԿԱՆԱՆՑ ԻՐԵՐԸ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ 93
ԳԼՈՒԽ ՃԴ - ՄԵՏԱՔՍԸ ՏՂԱՆԵՐԻ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ 94
ԳԼՈՒԽ ՃԵ - ՔԱՀԱՆԱ ԿԱՄ ԴԱՏԱՎՈՐ ԱՆԱՐԳՈՂԻ ՄԱՍԻՆ 95
ԳԼՈՒԽ ՃԶ - ԺՈՂՈՎՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՀԱՆԱՅԻՆ ՏՐՎՈՂ ՊՏՂԻ ՄԱՍԻՆ 96
ԳԼՈՒԽ ՃԷ - ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՐՊԵՍ Է ԴՐՎՈՒՄ 96
ԳԼՈՒԽ ՃԸ - ԴԱՏԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿ ՍՈՒՏ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՏՎՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 97
ԳԼՈՒԽ ՃԹ - ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԵՐԲ ՍՊԱՆՎԱԾ Է ԳՏՆՎՈՒՄ ԴԱՇՏԻ ՄԵՋ ... 97
ԳԼՈՒԽ ՃԺ - ԳԵՐՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ 97
ԳԼՈՒԽ ՃԺԱ - ՀԱՅՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՐԴԻՆԵՐԻ ԱՆԴՐԱՆԻԿՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ 98
ԳԼՈՒԽ ՃԺԲ - ԱՆԶԳԱՄ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ 99
ԳԼՈՒԽ ՃԺԳ - ՄԱՀԱՊԱՐՏ ՄԵՌԵԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ 99
ԳԼՈՒԽ ՃԺԴ - ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ 100
ԳԼՈՒԽ ՃԺԵ - ԸՆԿԱԾ ԶՈՐՔՈՏԱՆԻՆԵՐԻՆ ՎԵՐ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ 100
ԳԼՈՒԽ ՃԺԶ - ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ 101
ԳԼՈՒԽ ՃԺԷ - ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԲՆԵՐԻ ՄԱՍԻՆ 101
ԳԼՈՒԽ ՃԺԸ - ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՏԱՆ ՄԱՍԻՆ 101
ԳԼՈՒԽ ՃԺԹ - ՓԱԽԱԾ ԾԱՌԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ 102
ԳԼՈՒԽ ՃԻ - ՀՆՉԻ ԱՐՏ ՄՏՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 102
ԳԼՈՒԽ ՃԻԱ - ԸՆԿԵՐՈՋ ԱՅԳԻՆ ՄՏՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 102
ԳԼՈՒԽ ՃԻԲ - ԿԱՆԱՆՑ ԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 103
ԳԼՈՒԽ ՃԻԳ - ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՆՈՐ ԿԻՆ ԱՌՆՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ ՉԷ ՊԱՏԵՐԱԶՄ ԳՆԱԼ 103
ԳԼՈՒԽ ՃԻԴ - ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԳՐԱՎ ԵՆ ԴՆՈՒՄ ԿԱՄ ԳՐԱՎ ԵՆ ՎԵՐՑՆՈՒՄ ԱՂՈՐԻՔԸ 104
ԳԼՈՒԽ ՃԻԵ - ՊԱՐՏՔԵՐԻ ԵՎ ԳՐԱՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ 104
ԳԼՈՒԽ ՃԻԶ - ՎԱՐՁԿԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 105
ԳԼՈՒԽ ՃԻԷ - ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀԱՅՐԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ ՉԵՆ ՄԵՌՆԵԼ ՈՐԴԻՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ ԵՎ ՈՉ ԷԼ ՈՐԴԻՆԵՐԸ՝ ՀԱՅՐԵՐԻ 105
ԳԼՈՒԽ ՃԻԸ - ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ 106
ԳԼՈՒԽ ՃԻԹ - ԱՅՐՈՒՑ ԻՐԵՐ ԳՐԱՎ ՎԵՐՑՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 106
ԳԼՈՒԽ ՃԼ - ԳԱՆԱՀԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ 106
ԳԼՈՒԽ ՃԼԱ - ԵՐԲ ԵՐԿՈՒ ԿՌՎՈՂՆԵՐԻՑ ՄԵԿԻ ԿԻՆԸ ԻՐ ԱՄՈՒՍՆՈՒՆ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲՌՆԻ ՄՅՈՒՍ ԱՅՐԻ ԱՄՈՐՁԻՆԵՐԻՑ 106

ԳԼՈՒԽ ՃԼԲ - ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐ ԵՆ ԲԱՑՈՒՄ ԵՎ ՄԵՌՅԱԼՆԵՐԻՆ ԵՆ ԿՈՂՈՊՏՈՒՄ 107
ԳԼՈՒԽ ՃԼԳ - ԱԿԱՄԱ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 107
ԳԼՈՒԽ ՃԼԴ - ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ՄԱՍԻՆ 107
ԳԼՈՒԽ ՃԼԵ - ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ 108
ԳԼՈՒԽ ՃԼԶ - ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՄԵՐԺՎԱԾ ԵՆ ԻՐԵՆՑ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳԻՑ ԵՎ ԱՂՈԹՔԻ ՊԱՇՏՈՆԻՑ 108
ԳԼՈՒԽ ՃԼԷ - ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 109
ԳԼՈՒԽ ՃԼԸ - ԱՅՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԵՎ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԱՅԼՈՑ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԵՆ ՄԻՄՅԱՆՑԻՑ ՀԱՓՇՏԱԿՈՒՄ 110
ԳԼՈՒԽ ՃԼԹ - ԱՆԿԱՐԳԱԳՈՐԾ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 110
ԳԼՈՒԽ ՃԽ - ԵՐԲ ԱՐԴԵՆ ՆՇԱՆՎԱԾ ԱՂՋԻԿ ԵՆ ՀԱՓՇՏԱԿՈՒՄ 111
ԳԼՈՒԽ ՃԽԱ - ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ՄՍԱԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 111
ԳԼՈՒԽ ՃԽԲ - ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՆՁՔԵՐԻ ՄԱՍԻՆ 111
ԳԼՈՒԽ ՃԽԳ - ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՐ ԽՈՍՏԱՆՈՒՄ ԵՆ /ԱՍՏԾՈՒՆ/ ԿՈՒՅՍ ՄՆԱԼ, ԲԱՑՑ ՍՏՈՒՄ ԵՆ 112
ԳԼՈՒԽ ՃԽԴ - ՀՂԻ ԿԱՆԱՆՑ ՄԿՐՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ 112
ԳԼՈՒԽ ՃԽԵ - ՊՈՌՆԻԿ ԿՆՈՋՆ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ 113
ԳԼՈՒԽ ՃԽԶ - ԿՆՈՋՆ ԱՏԵԼՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 113
ԳԼՈՒԽ ՃԽԷ - ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ԿԱՆԱՆՑ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ 114
ԳԼՈՒԽ ՃԽԸ - ՊՂԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԿԱԾ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ 114
ԳԼՈՒԽ ՃԽԹ - ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՔԱՆԻ՞ ՏԱՐԵԿԱՆՈՒՄ Է ԱՐԺԱՆ ԵՐԵՑ ՁԵՌՆԱԴՐԵԼ 114
ԳԼՈՒԽ ՃԾ - ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՀԱՐԿԱԴՐՎԱԾ ԵՆ ԳԱԼԻՍ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ 115
ԳԼՈՒԽ ՃԾԱ - ԳԱՎԱՌԻ ԵՐԵՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ 115
ԳԼՈՒԽ ՃԾԲ - ՔՈՐԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ 115
ԳԼՈՒԽ ՃԾԳ - ԵԿԵՂԵՑՈՒՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՊՏՂԻ ՄԱՍԻՆ 116
ԳԼՈՒԽ ՃԾԴ - ԱՅՆ ՀԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԹՈՂՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՈՐԴԻՆԵՐԻՆ 116
ԳԼՈՒԽ ՃԾԵ - ԱՅՆ ՈՐԴԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԹՈՂՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՀԱՅՐԵՐԻՆ 117
ԳԼՈՒԽ ՃԾԶ - ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ ՈՒՏՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 117
ԳԼՈՒԽ ՃԾԷ - ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀՆԱԶԱՆԴՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ 117
ԳԼՈՒԽ ՃԾԸ - ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՆԱԴՐՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ 118
ԳԼՈՒԽ ՃԾԹ - ԱՅԼՈՑ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂՆԵՐԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՁՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ 119
ԳԼՈՒԽ ՃԿ - ԱՄԲԱՍՏԱՆՎԱԾ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ 119
ԳԼՈՒԽ ՃԿԱ - ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՆ ԵՎ ԲԱՐԻ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՁՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ 120
ԳԼՈՒԽ ՃԿԲ - ԵԿԵՂԵՑՈՒ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԵՐ ՁՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ 120
ԳԼՈՒԽ ՃԿԳ - ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ՀԵՏ ԽԱՌՆԱԿՎՈՒՄ ԵՆ ԽՆԱՄՈՒԹՅԱՄԲ 120
ԳԼՈՒԽ ՃԿԴ - ԱՅՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ԵՆ ԿՈՂՈՊՏՈՒՄ ԻՐԵՆՑԸ ՁԱՐԴԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ 121
ԳԼՈՒԽ ՃԿԵ - ՊԱԿԱՍԱՄԻՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԻՆՔՆԱՍՊԱՆ ԵՆ ԼԻՆՈՒՄ 121
ԳԼՈՒԽ ՃԿԶ - ԴԻՎԱՀԱՐ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ 121
ԳԼՈՒԽ ՃԿԷ - ՆՐԱ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՅՐ ՁԼԻՆԻ 122
ԳԼՈՒԽ ՃԿԸ - ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀԱՇՄՎԱԾ ԵՆ 122
ԳԼՈՒԽ ՃԿԹ - ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՊՂԾՎՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 122
ԳԼՈՒԽ ՃՀ - ԱՅՆ ՔԱՀԱՆԱՅԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՈՐԵՎԷ ՄԵԿԻՆ ՍՊԱՆԻ 123
ԳԼՈՒԽ ՃՀԱ - ԴԻՎԱՀԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՄԱՐԴ ԵՆ ՍՊԱՆՈՒՄ 123
ԳԼՈՒԽ ՃՀԲ - ԿԱՆԱՆՑ ԱՄԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 124
ԳԼՈՒԽ ՃՀԳ - ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԵՎ ԱՅԼՈՑ ԿՈՂՄԻՑ ԱԿԱՄԱ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 124
ԳԼՈՒԽ ՃՀԴ - ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 125
ԳԼՈՒԽ ՃՀԵ - ՈՐԴԻՆԵՐԻՑ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ 125
ԳԼՈՒԽ ՃՀԶ - ՆԵՐՔԻՆԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ 126
ԳԼՈՒԽ ՃՀԷ - ՈՐԵՎԷ ՏԵՂԻՑ ԿՈՂՈՊՏԵԼՈՎ ՈՒՏՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 126
ԳԼՈՒԽ ՃՀԸ - ՀՐԴԵՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ 126
ԳԼՈՒԽ ՃՀԹ - ՀԱՓՇՏԱԿՈՂ ԱՐՎԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ 126
ԳԼՈՒԽ ՃՁ - ՀԱՅՐԱԿԱՆ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ ՈՐԴԻՆԵՐԻՆ ԵՎ

ԴՈՒՍՏԵՐԻՆ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ 127
ԳԼՈՒԽ ՃՁԱ - ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՔԱՆԻ՞ ՏԱՐԵԿԱՆ ՊԻՏԻ ԼԻՆԻ ՏՂԱՆ, ՈՐ ԲԱԺԻՆ ԱՌՆԻ 127
ԳԼՈՒԽ ՃՁԲ - ՀԱՇՄ ՁԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 128
ԳԼՈՒԽ ՃՁԳ - ԿՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 129
ԳԼՈՒԽ ՃՁԴ - ՄԵՌՆՈՂԻ ԽՈՍՔՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՐԺԱՆԱՎՈՐ ԵՂԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ 129
ԳԼՈՒԽ ՃՁԵ - ՎԱՃԱՌՔԻ ՄԵՋ ԿԱՏԱՐԱԾ ՎԱՃԱՌՈՂԻ ՆԵՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 131
ԳԼՈՒԽ ՃՁԶ - ՍՈՒՏ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՏՎՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 131
ԳԼՈՒԽ ՃՁԷ - ԿՈՒՅՍԻ ԵՎ ԵՐԿԱԿԻ ՄԱՍԻՆ 132
ԳԼՈՒԽ ՃՁԸ - ԽՈՍՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ 132
ԳԼՈՒԽ ՃՁԹ - ԱԽՏԱԺԵՏ ԱՅՐԵՐԻ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ 132
ԳԼՈՒԽ ՃՂ - ԴՈԴԵՐԻ ԵՎ ՊԻՍԱԿՆԵՐԻ, ԽՈՒԼԵՐԻ ԵՎ ՀԱՄՐԵՐԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԿԱՐՈ՞Ղ ԵՆ ԱՐԴՅՈՔ ԿԻՆ ԱՌՆԵԼ 133
ԳԼՈՒԽ ՃՂԱ - ՈՉ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԽՈՍՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ 133
ԳԼՈՒԽ ՃՂԲ - ՏՂԱ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՄԻՆՉ ՀԱՍՈՒՆԱՆԱԼԸ ՊՍԱԿ ՁԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ 134
ԳԼՈՒԽ ՃՂԳ - ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՈՐ ՄԵԿ ՄՈՐ ԿԱԹՈՎ ԵՆ ՄՆՎԵԼ 134
ԳԼՈՒԽ ՃՂԴ - ՍԱՀՄԱՆ ՓՈՓԽՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 135
ԳԼՈՒԽ ՃՂԵ - ԻՐԵՆՑ ԿԱՆԱՆՑ ԴՈՒՐՍ ԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 135
ԳԼՈՒԽ ՃՂԶ - ԱՄՈՒԼ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ 136
ԳԼՈՒԽ ՃՂԷ - ԻՐԵՆՑ ԱՅՐԵՐԻՆ ԹՈՂՆՈՂ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ 137
ԳԼՈՒԽ ՃՂԸ - ՆՐԱ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՌԵՎԱՆԳՎԱԾԻՆ Է ԱՌՆՈՒՄ 137
ԳԼՈՒԽ ՃՂԹ - ԱՎԱԳԵՐԵՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ 138
ԳԼՈՒԽ Մ - ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻՑ ԱՐՎՈՂ ՄՈՒՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ 138
ԳԼՈՒԽ ՄԱ - ԵԿԵՂԵՑՈՒՆ ՍՊԱՍԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ 139
ԳԼՈՒԽ ՄԲ - ՎԱՆՔԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ 139
ԳԼՈՒԽ ՄԳ - ՆՆՋԵՑՅԱԼՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՄԱՍԻՆ 140
ԳԼՈՒԽ ՄԴ - ԲԱՆԱԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ 141
ԳԼՈՒԽ ՄԵ - ԵԿԵՂԵՑԻ ՓԱԿՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 141
ԳԼՈՒԽ ՄԶ - ԳԵՐԻ ՏԱՐՎԱԾ ԱՅՐԵՐԻ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ 141

ԳԼՈՒԽ ՄԷ - ԵԿԵՂԵՑՈՒ ԺԱՌԱՆԳԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ 142
ԳԼՈՒԽ ՄԸ - ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԱԶԱՏՆԵՐ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ 143
ԳԼՈՒԽ ՄԹ - ՎԱՆՔԵՐԻ ՄԱՍԻՆ 144
ԳԼՈՒԽ ՄԺ - ՏԿԱՐԱՆՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ 145
ԳԼՈՒԽ ՄԺԱ - ԲՌՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՆՔԵՐՈՒՄ ԻՋԵՎԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 145
ԳԼՈՒԽ ՄԺԲ - ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՔԱՆԻ ՍԵՐՈՒՆԴ /ՁԱՐՄ, ԱԶԳ/ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆ ՊՍԱԿՎԵԼ ՄԻՄՅԱՆՑ ՀԵՏ 146
ԳԼՈՒԽ ՄԺԳ - ԴԱՐՁՅԱԼ ՆՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ 149
ԳԼՈՒԽ ՄԺԴ - ԽՈՐՏԱԿՎԱԾ ՆԱՎԻ ՄԱՍԻՆ 150
ԳԼՈՒԽ ՄԺԵ - ԽԱԲԵԲԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ 150
ԳԼՈՒԽ ՄԺԶ - ՆՈՐ ԳՅՈՒՂ ԿԱՌՈՒՅՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 151
ԳԼՈՒԽ ՄԺԷ - ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՎՔԵՐ ՄԵՏԱՔՍ ԿԱՄ ԱՅԼ ԻՆՉՔ ԵՆ ԳՆՈՒՄ ՈՒ ԾԱԽՈՒՄ 151
ԳԼՈՒԽ ՄԺԸ - ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՏՆԻՑ ԻՆՉ ԲԱԺԻՆ Է ՀԱՍՆՈՒՄ ՀԱՐՍԻՆ 152
ԳԼՈՒԽ ՄԺԹ - ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՐ ԾԱՌԻՑ ԿԱՄ ԵԿԵՂԵՑՈՒՑ ՎԱՅՐ ԵՆ ԸՆԿՆՈՒՄ 152
ԳԼՈՒԽ ՄԻ - ԳՈՂԵՐԻՆ ՓԱՅՏԻ ՎՐԱ ՀԱՆԵԼՈՎ ՄԱՀԱՊԱՏԺԻ ՄԱՍԻՆ 153
ԳԼՈՒԽ ՄԻԱ - ԱՅՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՄԱՐԴ ԵՆ ՍՊԱՆՈՒՄ 154
ԳԼՈՒԽ ՄԻԲ - ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԵՐԲ ՄԵԿԸ ՄԱՐԴՈՒ ՃԱՆԱՊԱՐՀ Է ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՎ ՆԱ ՄԵՌՆՈՒՄ Է 154
ԳԼՈՒԽ ՄԻԳ - ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ՈՒՍՈՒՑԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 155
ԳԼՈՒԽ ՄԻԴ - ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 155
ԳԼՈՒԽ ՄԻԵ - ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԹԱԳԱՎՈՐԻ ՏԱՆ ՄԱՍԻՆ 156
ԳԼՈՒԽ ՄԻԶ - ՆՐԱ ՄԱՍԻՆ, ՈՐ ՕՏԱՐ ՄԱՐԴՈՒ Է ՈՒՂԱՐԿՈՒՄ ԳՈՐԾԻ ԵՎ ՆԱ ՄԵՌՆՈՒՄ Է 167
ԳԼՈՒԽ ՄԻԷ - ՆՐԱ ՄԱՍԻՆ, ՈՐ ՎԱՐՁՈՎ ՈՐԵՎԷ ՄԱՐԴՈՒ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ԳՈՐԾԵԼՈՒ 167
ԳԼՈՒԽ ՄԻԸ - ԵԿԵՂԵՑՈՒՆ ՀԱԿԱՌԱԿ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՅՈՂԻ ՄԱՍԻՆ 168

ԳԼՈՒԽ ՄԻԹ - ԵԿԵՂԵՑՈՒՑ ԱՔՍՈՐՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ 169
ԳԼՈՒԽ ՄԼ - ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻՆ ԱՔՍՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ 169
ԳԼՈՒԽ ՄԼԱ - ԱՆԱՍՈՒՆԻՆ ՎՆԱՍՈՂԻ ԵՎ ՍՊԱՆՈՂԻ ՄԱՍԻՆ 170
ԳԼՈՒԽ ՄԼԲ - ՆՐԱ ՄԱՍԻՆ, ՈՐ ԳՐԱՍՏԻՆ ԽՐՏՆԵՑՆՈՒՄ Է
ԵՎ ՄԱՐԴՆ ԸՆԿՆՈՒՄ Է ԵՎ ՎՆԱՍՎՈՒՄ 171
ԳԼՈՒԽ ՄԼԳ - ԿԱՄԱ ԵՎ ԱԿԱՄԱ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 172
ԳԼՈՒԽ ՄԼԴ - ՋՐՈՎ ՎՆԱՍ ՏՎՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 174
ԳԼՈՒԽ ՄԼԵ - ԲԺԻՇԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 174
ԳԼՈՒԽ ՄԼԶ - ՆՐԱ ՄԱՍԻՆ, ԵՐԲ ՄԵԿԸ ՄԵԿԻՆ ԳՈՐԾԻ
ԴՆԻ ԵՎ ԱՅԴ ՄԱՐԴԸ ՄԵՌՆԻ 175
ԳԼՈՒԽ ՄԼԷ - ՄՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 175
ԳԼՈՒԽ ՄԼԸ - ՀՈՎԻՎՆԵՐԻ ԵՎ ՀԱՆԴԱՊԱՀՆԵՐԻ ՄԱՍԻՆ 176
ԳԼՈՒԽ ՄԼԹ - ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՏՈՒՆ, ԱՅԳԻ
ԵՎ ԱՅԼ ԻՐԵՐ ԵՆ ՏԱԼԻՍ 176
ԳԼՈՒԽ ՄԽ - ՎԱՃԱՌՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ 177
ԳԼՈՒԽ ՄԽԱ - ԳՈՂ ԱՐՎԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ 178
ԳԼՈՒԽ ՄԽԲ - ԳՈՐԾ ԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՐԵՎԷ ԱՆՈԹ
ՎԵՐՑՆԵԼՈՎ ՎՆԱՍՈՂԻ ՄԱՍԻՆ 178
ԳԼՈՒԽ ՄԽԳ - ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ 179
ԳԼՈՒԽ ՄԽԴ - ՋՐԱՂԱՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ 180
ԳԼՈՒԽ ՄԽԵ - ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԵՐԲ ՄԵԿԸ ԳՐԱՍՏ Է ՏԱԼԻՍ
ԱՐՈՏԻ, ԳՈՐԾԻ ԵՎ ՎՆԱՍՎՈՒՄ Է 180
ԳԼՈՒԽ ՄԽԶ - ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՀՈՂԱԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ 181
ԳԼՈՒԽ ՄԽԷ - ՍԻՆՈՌԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԵՆ 182
ԳԼՈՒԽ ՄԽԸ - ԴԻՎԱՀԱՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 182
ԳԼՈՒԽ ՄԽԹ - ՓՈՔՐ ԱՂՋԿԱՆ ՄԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ
ՊՍԱԿՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 183
ԳԼՈՒԽ ՄԾ - ՈՒԽՏԵՐԻ ՄԱՍԻՆ 183
ԳԼՈՒԽ ՄԾԱ - ԱՎԱՐ ՎԱՃԱՌՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ 185